

Մեր գեյ Զհանգիւրյան


Ղարաղաղ-Մելասար

ՀԱՅԳՈՒՄԻ ՃԱՄԱՆԱԿՆԵՐԻՉ
ՄԻՆՉԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ



9197 323
Ն-67

ՍԵՐՎԵյ ՄԻՇԱյԻ ՉԸԱՆԳԻՐՄԱ



Գարադադ-ՍԵԼԱՍԱՐ

ՀԱՅԳՈՐԻՆ ՃԱՄՆԱՍԿՆԵՐԻՃ ՄԻՆՉԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ

ԴԻ ԳՆՆԻ ԱԿՏԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ԻՆՎԵՍՏԻՄԵՆՏԱԿԱՆ ՏՐԱՎԱԿՆԵՐԻ
ԱՄԵՆԱՑՄԱՆ ԳԼԵՆԿ

8169



ԵՐԵՎԱՆ 2021

Գրախոս՝ Գրիշա Սմբատյան

Խմբագիր՝ Բ.Գ.Թ. Դոցենատ ՄՀեր Քոմաննց

Ջհանգիրյան Սերգեյ Մ.

Ղարադաղ-Սևասար. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը /
Ս. Մ. Ջհանգիրյան.-Երևան.: Անտարես, 2021-512 էջ:

Մյունիք, Արցախ, Վասպուրական և Փայտակարան նահանգների միջակայքում ծվարած հայոց կորսված Սևասարին (Ղարադաղ) նվիրված սույն աշխատությունը առաջինն է, որ ժամանակագրական առումով ամփոփում է գավառի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Այստեղ կարելի է հանդիպել Սևասարի հայկական բնակավայրերի և նրա բնակիչների մասին բազմաթիվ տեղեկություններ, որ առաջին անգամ են հրատարակվում: Աշխատությունը կարող է օգտակար լինել ոչ միայն հայոց պատմության, հայ գաղթօջախների պատմության մասնագետների, այլև ընդհանրապես հայագիտությանը զբաղվողների համար:

Գիրքը նախատեսված է նաև ընթերցողների լայն շրջանակի համար:

ISBN 978-9939-76-822-9

Գրքում տեղ գտած լուսանկարները հավաքվել են հեղինակի կողմից: Տարբեր աղբյուրներից նյութեր քաղելիս պահպանվել են հեղինակային իրավունքները:



Անտարես

© Ջհանգիրյան Ս., 2021

ԳԻՐՔԸ ՆՎԻՐՎՈՒՄ Է

Սևասարի Քեյվան գավառակից և Մինջվան գավառակի

Քարագլուխ գյուղից սերված պապիս ու տատիս՝

ՍԵՐԲԻԱ ԶՀԱՆԳԻՐՅԱՆԻ և ԱՐՀԱԼՈՒՅՍ ԳԱԼՍՏՅԱՆԻ

Հիշատակին



Ղարադաղ-Սևասարը մեզ համար առեղծվածային աշխարհ է, մի տեսակ «Թաքուն աշխարհ», որի անցյալի էջերը խամրած ու մոռացված են: Թվում էր՝ այդ երկրամասին վիճակված չէր պատմություն դառնալ, այլ կմոռացվեր ու կմնար սփռված զանազան վավերագրերում, հուշագրություններում, կմոռացվեին մարդիկ, իրադարձությունները, տեղանունները: Այս երկրամասի անցյալի պատմությունը գրելը պահանջում է գիտելիքներ, համառ աշխատանք ու անսահման նվիրվածություն: Արդյունքը կա. մեծ աշխատանք է կատարվել. գրվել է բավական բարդ, արժեքավոր, ժամանակագրական առումով ընդգրկուն, դարադադրիների, դարադադրյան ծագում ունեցողների, սյունեցիների համար ցանկալի գիրք... **Իմ երազած գիրքը լույս աշխարհ է բերել մեր կորուսյալ հայրենիքի անցյալը, որի համար պիտի գնահատել հեղինակին:** Գիրքն արժևորել է նաև ազգագրագետ Հրանուշ Խառատյանը. «Արժեքավոր աշխատանք... Ավելի արժեքավոր է կոնկրետ տարածքի անցյալը ներկային կապող դեպքերի և երևույթների շղթան վերականգնելու իմաստով: Կարծում եմ՝ ընթերցողը այս աշխատանքով լավ կպատկերացնի հայրենագրկումը: Կան նաև առանձին շատ արժեքավոր վերականգնումներ, ինչպես, օրինակ, Աղաղան գյուղի բնակչության ջարդի մանրամասները՝ իբրև Հայոց ցեղասպանության թերևս անհայտ դրվագ, որն իր հերթին ըստ էության ներկայացնում է ոչ միայն կոնկրետ տարածքի իրավիճակը, այլև Հայոց ցեղասպանության աշխարհագրությունը»:

Կապանում յուրահատուկ սեր ու ակնածանք կա Ղարադաղի հանդեպ, որ գալիս է մարդկանց մանկության ու պատանեկան շրջանից: Աչքի առաջ են Ղարադաղի լեռները, որոնք խորհրդավոր են դառնում և իրենց են ձգում, երբ լսում են տարեցներից զանազան պատմություններ ու գրույցներ: Այդպես է հավանաբար ծագումով դարադադրի տ.գ. թեկնածու Սերգեյ Ջհանգիրյանի դեպքում, որի հայրենի Մոդես (Մոզք) գյուղն ու լեռնաաշխարհը բաժանում է Արաքսը: Ղարադաղը այստեղից՝ ավիդ մեջ է. մտորելու, երազելու, տխրելու շատ բան կա: Հուսով ենք՝ Ղարադաղ - Սևասարի մասին պատմող գրքով Սերգեյ Ջհանգիրյանը սկիզբ է դնում երկրամասի պատմության խորությամբ ուսումնասիրությանն ու իմաստավորմանը:

ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, պատմաբան, ազգագրագետ

Գ. Սմբատյան

«Ղարադաղ-Սևասար. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» վերտառությամբ աշխատության շարադրանքի հենքը կազմում են Ղարադաղին վերաբերող գիտական գրականության մեջ և մամուլի էջերում ընդգրկված, գաղթական դարադաղցիներից հավաքագրված հաղորդումները: Հնագույն ժամանակներից մինչև XX դարի 50-60-ական թվականները հայերով բնակեցված Ղարադաղ-Սևասարի մասին սույն աշխատությունը առաջինն է, որ տեղեկություններ է հաղորդում հայոց կորսված գավառակների պատմության, աշխարհագրության, ժողովրդագրության, ազգագրության, դպրոցների, սրբավայրերի, ականավոր դարադաղցիների կյանքի և գործի մասին: Այսբանով չի սահմանափակվում այս հրաշալի գրքի բովանդակությունը: Աշխատանքում արժևորված են հայկական ծրագրերը: Դրանց վերաբերող գնահատականներից ակնհայտ է դառնում, թե որքան կարևոր էր Ղարադաղը հայոց պետականության համար, մասնավորապես Սյունիքի և Արցախի մերօրյա խնդիրների առումով:

Հայոց Սևասարում բնիկ հայերի փոխարեն թյուրքական տարբեր ցեղերի բնակեցման չխոչընդոտելը, դարադաղցիներին օգնության ձեռք չմեկնելը հայ և պարսիկ ժողովուրդների պատմական դիվանագիտության մեծագույն սխալներից են:


Ղարադաղից սերող ընտանիքի գավակ Սերգեյ Ջհանգիրյանը թեև մասնագիտությամբ տնտեսագետ է, բայց հայագետին բնորոշ մանրախնդրությամբ և հմտությամբ է կազմել սույն աշխատանքը: Աշխատությունը գիտական ուղղվածություն ունի, բայց այն հանրամատչելի է թե՛ շարադրանքի, թե՛ արծարծված նյութի ընտրության առումով:

«Ղարադաղ-Սևասար. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» գիրքը լինելու է նաև թյուրքական պատմության ահագնացող կեղծիքի պատիժը և աշխարհասփյուռ դարադաղցիների հիշողության ընծան:

Մ. Քումուսյան

Մաս 1. ՄԵՎԱՍԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ (աշխարհագրությունը, անվանումը, հիշատակումները)	3-84
ՄԵՎԱՍԱՐԸ ՀՆԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ	19-35
ԹՅՈՒՐԲՄԱԿԱՆ ՑԵՂԵՐԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ	36-63
ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՐԱԴԱՂԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ	64-84
<i>Ներդիր 1</i> ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ	-
Մաս 2. ՄԵՎԱՍԱՐ-ՂԱՐԱԴԱՂԸ XIX-XX ԴԱՐԵՐՈՒՄ	85-250
ԹՈՒՐԲՄԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ ՀԵՏՈ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ	86-107
ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ	108-120
ԱԶՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԱՇԽՈՒԺՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ	121-129
ՂԱՐԱԴԱՂԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ XX ԴԱՐԱՍԿԶԲԻՆ	130-137
ՂԱՐԱԴԱՂԸ ԻՐԱՆԻ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ	138-166
ՂԱՐԱԴԱՂԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ	167-178
ՕՍՄԱՆՅԱՆ ՋՈՐՔԸ ՂԱՐԱԴԱՂՈՒՄ ԿԱՍ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՂԱՐԱԴԱՂՅԱՆ ԷՋԸ	179-192
ՂԱՐԱԴԱՂԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՆ ՀԱԶՈՐԴՈՂ ՏԱՐԻՆԵՐԻՆ	193-212
ՂԱՐԱԴԱՂԸ ՓԱՀԼԱՎԻՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ. ԳԱՎԱՌԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՀԱՅԱԹԱՓՈՒՄԸ	213-250
<i>Ներդիր 2</i> ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ	-
Մաս 3. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՂԱՐԱԴԱՂՈՒՄ	251-282
<i>Ներդիր 3</i> ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ	-

Մաս 4. ՆՇԱՆԱՎՈՐ ՂԱՐԱԴԱՂՑԻՆԵՐԸ	283-338
Ներդիր 4 ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ	-
Մաս 5. ԳԱՎԱՌԱԿՆԵՐ, ԳՅՈՒՂԵՐ	339-464
Ներդիր 5 ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ	-
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	465-476
ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ	477-483
ԱՆՎԱՆԱՑԱՆԿԵՐ	484-505
Հավելված 1 (կցված) ՈՂԱՆՑԻ ԹՈՒՍԱՆՑԱՆՑՆԵՐԻ ՏՈՀՄԱԾԱՌԸ	-
Հավելված 2 (կցված) ՄՈՒՍՈՒԴԱՐՈՒՆՑԻ ԵԳԱՆՑԱՆՆԵՐԻ ՏՈՀՄԱԾԱՌԸ	-



ՄԵՎԱՍԱՐԻ ՊԼՏՄՈՒԹՅՈՒՆԸ

(Աշխարհագրո-բյու-նը
 Լնվանո-մը
 Հիշարակո-մեերը)

Սևասարը կամ Ղարադադը գտնվում է Վասպուրական նահանգի արևելյան և Փայտակարան նահանգի արևմտյան մասում որպես ինքնամիտի լեռնային տարածաշրջան: Այն Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման մեջ իբրև առանձին գավառ հանդես չի գալիս¹: Սևասարը արևմուտքից սահմանակից է Մարանդ գավառին, հյուսիսից՝ Գողթն գավառին, Սյունիք և Արցախ նահանգներին, արևելքից՝ Փայտակարան նահանգի Վարդանակերտ, Քոեկյան և Պիճան գավառներին, իսկ Հարավից՝ Ատրպատականին:

¹ Հայոց պատմություն, հատ. II, գիրք I, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, «Ջանգալ» հրատ., Երևան, 2018 (քարտեզ՝ «Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի», հեղինակ՝ Հարությունյան Բ. Հ.):

Գավառի զգալի մասը լեռնային է և անտառածածկ: Սևասարի տարածքի լեռները կազմում են Հայկական Տավրոսի շարունակությունը, որ Ստրաբոնի² կողմից անվանվում է Հայկական³: Կարելի է կարծել, որ սա Ստրաբոնի կողմից տրված պայմանական անվանում է, քանի որ ո՛չ տեղացիները, ո՛չ էլ Հայ մատենագիրները այդ անվանումը երբևէ չեն օգտագործել: Գավառի լեռները, գտնվելով Արաքս գետի և Ուրմիա (Կապուտան) լճի միջև, կազմում են ինքնամիտի բարձրագիր Ղարադաղի շրջանը կամ Հին Հայկական Արտավանյան և Ալևան գավառները: Հայկական լեռների գագաթներից Հայտնի է Հաշտասարը (2954մ): Էրատոսթենես Կիրենացին⁴ այս

լեռներում Հիշատակել է Դրոնք Հայոց լեռնանցքը, որը XIV դարի պարսիկ Հեղինակ Համդալլահ Ղազվինին⁵ անվանել է «Արմինիյան անցք»: Այս լեռնանցքից ճանապարհը տանում է դեպի Քարավազի կամուրջը (Խուդափերինի կամուրջը)⁶, որի հյուսիսային եզրին՝ Արաքսի ձախ ափին՝ Սյունյաց աշխարհի Մյուս Բաղը կամ Քաշունիք գավառում, գտնվում էր Սյունիքի Ակորզ կամ Նակորզան

⁵ Համդալլահ Ղազվինի (1281-1350): Պարսիկ մատենագիր: Գրել է տարբեր բնույթի ստեղծագործություններ: 1340թ. ավարտած «Սրտերի զվարճությունը» պատմաաշխարհագրական սովոր աշխատությունը կարևոր սկզբնաղբյուր է նաև Հայաստանի XIII-XIVդդ. տնտեսության և աշխարհագրության ուսումնասիրության համար:

⁶ Սյունիքի պատմական տարածքում է գտնվում Քարավազի կամ Խուդափերինի պատմական կամուրջները: Նրանք երկուսն են՝ հին և նոր: Հին կամուրջը քանդված է, իսկ նոր կամուրջը կանգուն է, բայց չի օգտագործվում: Պատմական Սյունիքի Աղահեճք գավառը, իսկ հետագայում Արցախ աշխարհի Դիզակի մելիքությունը Արաքս գետով հարևան Իրանին կապող կամուրջը դարեր շարունակ եղել է Խուդափերինը (պարսկերենից նշանակում է Աստվածաստեղծ) կամ Քարավազը, որն ունեցել է 11 թռիչք, 130մ երկարություն, 6մ լայնություն, ջրի մակարդակից բարձր է 12մ: Արաբական և պարսկական աղբյուրներում կամուրջը վկայված է Հուդափերին, Խուդափերին անուններով (ավելի մանրամասն տե՛ս՝ Քումունց Մ., **Ըոթոյան Ջ.**, Քարավազ (Խուդափերին). կամուրջը և պատմական տարածքը, Գիտական ընթերցումներ (հոդվածների ժողովածու) թիվ 1, Արցախի պետական համալսարան, Ստեփանակերտ, 2016):

² Ստրաբոն (մ.թ.ա. 64(63)-մ.թ. 23(24)): Հույն պատմիչ և աշխարհագրագետ: Ծնվել է բարձրաշխարհիկ ընտանիքում: Սովորել է Նյուսայի և Հռոմի ճարտասանական դպրոցներում: Ստացել է փիլիսոփայական կրթություն: Ստրաբոնը ճանապարհորդել է Հունաստանում, Փոքր Ասիայում, Հայաստանում, Իտալիայում և Եգիպտոսում: Գրել է «Պատմական հիշատակարաններ» խորագրով աշխատությունը՝ բաղկացած 43 գրքից (<https://www.encyclopedia.am>):

³ Հայ ժողովրդի պատմություն, հատ. I, ՀՄՄՀ ԳԱ հրատ., Պատմության ինստիտուտ, Երևան, 1971, էջ 17:

⁴ Էրատոսթենես Կիրենացի (մ. թ. ա. 276, Կիրենա – 194, Ալեքսանդրիա): Հելլենիստական դարաշրջանի հույն աշխարհագետ, աստղագետ, մաթեմատիկոս և բանասեր: Մուսեյոնի գրադարանի հիմնադիր, Պտղոմեոս IV Փիլոպատոս արքայի դաստիարակ:

քաղաքը⁷: Ղարաղաղը Մարանդից բաժանվում է մի գեղեցիկ լեռնաշղթայով, որին տեղացիներն անվանում են Սիլվանսար: Լեռնաշղթայի ամենաբարձր գագաթը, որ գտնվում է նրա կենտրոնում, նույն անունն է կրում՝ բրգաձև, ահարկու տեսքով, կարծես թե մի ճոր ձեռք այն բռնել և պտտել է: Դեռ անհիշելի ժամանակներից այդ լեռը տեղացիների Համար պաշտամունքի առարկա էր⁸:

Ղարաղաղի լեռնաշղթան արևելքից եզրափակում է Հայկական լեռնաշխարհի կենտրոնական հրաբխային բարձրավանդակը: Դիզափայտի և Սյունիքի լեռներից Ղարաղաղը բաժանված է Արաքս գետի հունով, որը տեղ-տեղ բավականին նեղ է, որոշ տեղեր էլ՝ լայն ու Հարթավայրային: Մինչև Սյունիքի և Ղարաղաղի լեռներին Համները Արաքսի հունը Հարթավայրային և անկայուն է: Հունի անկայունությունից է, որ երկար չէին դիմանում Արաքսի

վրա հոռմեացիների կառուցած կամուրջները, և այդ պատճառով է, որ Արաքսը հոռմեական բանաստեղծության մեջ անվանված է «կամուրջի չհամբերող»⁹: Համներով հին Ջուղա՝ Արաքսն ուղղվում է դեպի արևելք և ճեղքում Ջանգեզուրի և Ղարաղաղի լեռնաշղթան, կազմում նեղ ու մուսյլ կիրճ: Արաքսը, Մեղրիի մոտ խցկվելով ժայռերի մեջ, կազմում է քարավազներ և ահագին աղմուկ է հանում անձուկ ճեղքվածքների մեջ: Այս ահեղ և վայրենի տեսարանը մի ճանապարհորդ անվանել է «դժոխսաձև» և ավելացրել, որ ուրիշ ոչ մի տեղ հարավոր չէ տեսնել լեռնային արգելքների դեմ այսքան ուժգնությամբ կովող գետ, որ փրփրած այս ու այն կողմ է զարնվում նեղ կիրճը լցնելով ջրային փոշիով¹⁰:

Սևասարի լեռները դեռ մոտ անցյալում Համարյա թե ծածկված էին կուսական անտառներով, որոնք, չնայած անդադար անտառահատումների (ողջ Ատրպատականում մեծ պահանջարկ էր վայելում ղարաղաղցիների պատրաստած փայտածուխը), ներկայումս պահպանվել են բավական չափով: Տեղի անտառները մեծ մասամբ կազմված են կաղնի,

⁷ Ըստ տեղեկությունների՝ Նակորգանը IV դարի վերջին կառուցել է Անդոկ իշխանի որդի՝ Պապ թագավորի մորեղբայր Բաբիկ իշխանը: Այն ունեցել է այլ անուններ ևս՝ Նորակորգան, Նակորգան (այս մասին տե՛ս՝ Movses Dasxuranci, The History of Caucasian Albanians, London, Oxford university press, New York-Toronto, 1961, p. 64):

⁸ Հովհաննես Հ., «Ղարաղաղի հայերը», Ազգագրություն, հատ. I, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, «Գիտություն» հրատ., Երևան, 2009, էջ 15:

⁹ Լեռ, Երկերի ժողովածու, հատ. I, «Հայաստան» հրատ., Երևան, 1966, էջ 129:

¹⁰ Ղեւոնդ Ալիշան, Սիսական, «Հայագիտակ» հրատ., Երևան, 2011, էջ 321:

թխկի, Հացի և այլ լեռնային գոտիներին Հատուկ ծառատեսակներից: Պտղատու ծառերից բավական տարածված են ընկուզենին, կեռասենին, նոնենին, թթենին, խնձորենին, տանձենին և այլն: Անտառային գոտիները Հարուստ են Հատապտղային թփերով ու ծառերով, ինչպես, օրինակ՝ մոշին, վայրի վարդենին, վայրի Հաղարջը, զկեռը, սեզնը, մորին:

Սևասարի անտառները լիքն են եղել վայրի կենդանիներով, սակայն անտառները անխնայորեն Հատելու և տեղացիների մոտ տարածված որսի սովորությունները կենդանական աշխարհին էական վնաս են Հասցրել: Այնուամենայնիվ դեռ կարելի է Հանդիպել արջ, գայլ, աղվես, շնագայլ, խոզ, նապաստակ: Ղարադաղի տարածքից է պարբերաբար Սյունիք և Արցախ անցնում տարածաշրջանի ամենախորհրդավոր և Հազվագյուտ գիշատիչներից մեկը՝ բծավոր բորենին: Թռչնաշխարհը գրեթե նույնն է, ինչպես Սյունիքում և Արցախում: Բավական տարածված են լորը, կաքավը, մրրկահավը: Չնայած խիստ տարածված է կաքավի որսը, այդուհանդերձ նրանց խմբերը Ղարադաղի քարափների մշտական զարդն են կազմում:

Գավառի ջրերի մասին անկարելի է երկու տողով գրել: Լեռներն ու ձորերը բավական Հարուստ են աղբյուրներով: Գետերը թափվում են Արաքս:

Տարածված են նաև Հանքային և տաք աղբյուրները¹¹, որոնց ավելի մանրամասն կանդրադառնանք գավառակներին և գյուղերին նվիրված մասում: Եղանակային պայմանները խիստ բազմազան են, և կլիմայական գոտիները իրար են Հաջորդում բավական կարճ տարածություն վրա՝ Արաքսի Հովտի արևադարձայինից մինչև գավառի լեռների բարեխառն գոտիները: Ձմռանը կիրճերն ու ճանապարհները փակվում են, և գյուղերը կտրվում են իրարից¹²:

Սևասարի ցարաթաշառջանո՛ւմ լաղ ափներ շէն
Ընձնվել կամ չե՛սվ որովել: Գա՛վառը երբե՛տ աշէն շէ
ընկել ցնորեոսական առաջադե՛ր-թյա՛մբ: Լ՛յն
Ընձնականո՛ւմ էղել է ագրարային կազմված
Գյուղական Համայնվներից:

Պատճառն այն է, որ գավառի տարածքով չէին անցնում առևտրային նշանակության ճանապարհներ: Հնդկաստանից, Չինաստանից, Միջին Ասիայից Պարսկաստանի կենտրոնով եկող առևտրային մայրուղիները Հանգուցվում էին Թավրիզում, այնուհետև ձգվելով դեպի հյուսիս-արևմուտք՝ ճյուղավորվում և անցնում էին Սևասարին արևմուտքից

¹¹ «Աղաղան», հունվար, 1912, թիվ 1, էջ 9-10 (հեղինակ՝ Բակունի Բ.):

¹² «Աղաղան», հունվար, 1912, թիվ 1, էջ 27:

սահմանակից Մարանդ գավառի Համանուն քաղաքով: Մի ճյուղը գնում էր Նախիջևանով դեպի Այրարատ նահանգի քաղաքները, մյուս ճյուղը Մարանդից անցնում էր Հեր (Խոյ), Վան՝ շարունակվելով դեպի արևմուտք: Գավառին ամենամոտ գտնվող միջնադարյան նշանավոր քաղաքային բնակավայրերն էին՝ Մարանդը¹³ (գավառի տարածքից մոտ 25 կմ դեպի Հարավ-արևմուտք) և Թավրիզը (մոտ 42 կմ դեպի Հարավ):

? Խորհրդահայ նշանավոր պատմաբան Ս. Երեմյանը ներկայիս Ղարադաղի տարածքը նույնացրել է Անանիա Շիրակացու հիշատակած Վասպուրականի Պարսպատունիք գավառի Հետ:

¹³ XX դարի սկզբին ուներ 10000 մահմեդական բնակիչ, ընդարձակ պարսպապատ շուկա, հին բերդ, մզկիթ, Առաջին համաշխարհային պատերազմից հետո վերածվել է անշուք գյուղի: Մարանդը որպես քաղաք, առաջինը հիշատակել է Մեբեոսը (VII դար): Եղել է բազմամարդ հայաբնակ քաղաք: Ըստ ավանդության առասպելական Նոյ Նահապետի կինը՝ Նոյեմգարը, այստեղ է թաղվել: Մարանդ քաղաքում են թաղված սելջուկյան աշխարհակալ սուլթանության մեծանուն երեք սուլթաններից երկուսը՝ Ալփասլանը (1063-1072) և Մելիքշահը (1072-1092): Որպես գավառանուն՝ Մարանդը առաջինը հիշատակվել է Մովսես Խորենացու կողմից կապված այդտեղ հայոց Արտաշես Արշակունի (Խորենացու հիշատակած Արտաշեսը որոշ պատմաբանների շրջանում նույնացվում է Տրդատ Ա Արշակունու հետ) թագավորի հիվանդանալու և մահանալու հետ:

Հնդ որում, նշանավոր պատմաբանի կարծիքով Բասորոպեդա-Պարսպատունիքը ընդգրկել է 5550 կմ² տարածություն¹⁴: VII դարի Հայ նշանավոր գիտնական Անանիա Շիրակացին Պարսպատունիք անվամբ գավառ հիշատակել է իր «Աշխարհացոյցում»՝ ընդգրկելով Վասպուրական երկրամասի գավառների շարքում առանց տեղորոշված սահմանների¹⁵: Հատկանշական է, որ նախքան Շիրակացին և Շիրակացուց Հետո Պարսպատունիք գավառանունը չեն օգտագործել Հայ մատենագիրներից ոչ մեկը:

Ս. Երեմյանի կարծիքը չի կիսում պատմաբան Բաբկեն Հարությունյանը, որը Ղարադաղը նույնացնում է Վասպուրականի Արտավանյան և Փայտակարանի Ալևան գավառների Հետ: Մասնավորապես՝ նա Արտավանյան գավառը տեղորոշում է Վասպուրականի ծայր արևելքում՝ Արաքս գետի աջ ափին՝ Գողթնի սահմաններից մինչև Ողջի և Արաքս գետերի միախառնման վայրը, որը գրեթե Համլինկնում է Ղարադաղի արևմտյան երկու՝ Դզմար և Հասանով գավառակների տարածքներին: Իսկ Ղարադաղի արևելյան գավառակները՝ Մեշափարա,

¹⁴ ՀԺՊ I, էջ 17:

¹⁵ Անանիա Շիրակացի, Մատենագրություն, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1979, էջ 295:

Մինջվան (Մնջվան), Քեյվան, նշանավոր պատմաբանը նույնացնում է Փայտակարանի Ալևան գավառի Հետ, որը տեղորոշում է Փայտակարանի ծայր արևմուտքում՝ Արաքսի աջ ափին՝ Ողջի գետի միախառնման վայրից մինչև Հորադիզի Հանդիպակաց լեռնազանգվածները¹⁶:

Բ. Հարովթյունյանը մերժում է Բոսորոպեզան Պարսպատունիքին նույնացնելու և Ղարադաղում տեղադրելու տեսակետը: Մերժում է և այն, որ, ըստ «Զորանամակի», 50 զինվոր մարտադաշտ դուրսբերող Պարսպատունիք նախարարական տոհմը չէր կարող տիրել այդպիսի մեծ տարածքի¹⁷: Հակված լինելով այն տեսակետին, որ Պարսպատունիքը պետք է գտնվեր Վասպուրականի արևմուտքում, Բ. Հարովթյունյանը այն տեղադրել է Հերից արևմուտք՝ Կոտոր¹⁸ գետաՀովտում¹⁹: Նա գրում է, որ, դատելով

¹⁶ ՀՊ II, գիրք I, քարտեզ՝ թիվ 1, հեղինակ՝ Հարությունյան Բ.:

¹⁷ Адоицъ Н., Армения въ эпоху Юстиниана, С.Петербургъ, 1908, с. 251.

¹⁸ Կարմիր, Ագչայ, Ակչայ, Աղչայ, Կզլչայ, Ղզըլչայ, Քըզըլչայ, վերին հոսանքում՝ Կոտոր, գետ Հայկական լեռնաշխարհում, Արաքսի աջ վտակը: Երկարությունը՝ մոտ 170 կիլոմետր: Սկիզբ է առնում Կոտուրի (Վասպուրականի լեռներ) լեռնաշղթայի արևմտյան լանջից: Հոսում է նախ դեպի արևելք, ճեղքում Կոտուրի լեռնաշղթան, ապա թեքվում հյուսիս-արևելք, ընդունում ձախից Էլենդ (Աղանդոտ), Աղչայ, իսկ աջից՝ Մա-

«Աշխարհացոյցում» Արտավանյանին Հաջորդող գավառների դիրքով, Արտավանյանն ամենայն Հավանականությամբ գտնվել է Մարդպետական Հատվածում²⁰՝ Կոտոր կամ Կարմիր գետից արևելք ընկած շրջանում²¹: Գավառի անվան ծագումը կապվում է Պարսկաստանում պարթև Արշակունիների Հարստության անկման և Սասանյանների իշխանության գլուխ անցնելու Հետ: Վերջին պարթև Արշակունի Արտավանի Հարազատները և շատ կողմնակիցներ, Սասանյան Արտաշիրից փրկվելով, ապաստան գտան Արշակունյաց Հայաստանում: Ըստ Երևույթին՝ Հայոց արքունիքը նրանց կալվածքներ է տվել Մարդպետական կողմերում՝ ստեղծելով Արտավանյան գավառը: Թե մասնավորապես որտե՞ղ էր այն տեղադրվում, Հեղինակը դժվարանում է ասել, քանի որ ոչ մի Հուշող տեղեկություն չի պահ-

րանդ (Զիբիրչայ) վտակները և Նախիջևանի դաշտում միախառնվում Արաքսին:

¹⁹ Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյցի», Երևանի համալսարանի հրատ., Երևան, 2001, էջ 370-371:

²⁰ Մարդպետական տիրույթները հյուսիսում սահմանակցում էին Արաքս գետին՝ Ջուղայից մինչև Ողջի և Արաքսի միախառնման վայրերը, հարավից՝ Ուրմիա լճին՝ ներառելով Մարանդը (ՀՊ II, գիրք I, քարտեզ N1, հեղինակ Բ. Հարությունյան):

²¹ Հարությունյան Բ., 2001, էջ 373:

պանվել: Ենթադրաբար նա այն տեղորոշել է Ղարադաղում, որտեղ մի քանի տեղանուններ կարծես թե խոսում են դրա օգտին:

Ըստ Հեղինակի՝ Հնարավոր է, որ Երբազանյան գեղանվան Հեթոփեթը պաՀպանո՝մ է Վանապան Գյո՝ղը: Պարբե՝ Երշակո՝նիների այսպեղ Գրե՝վել ո՝ մասին կարող է վկայել Երբաշիր Գյո՝ղը²²:

Այս դեպքում կրկին Հատկանշականն այն է, որ նախքան Հիրակացին և Հիրակացուց Հետո Արտավանյան և Ալևան գավառանունները չեն օգտագործել Հայ մատենագիրներից ոչ մեկը:

Սեր կարծիքով գավառի անվանման Հարցում առավել Հավաստի է Բ. Հարությունյանի տեսակետը, որի Հիմքը «Աշխարհացոյցն» է: Ղարադաղը նույնացվում է Վասպուրականի Արտավանյան և Փայտակարանի Ալևան գավառների Հետ: Դրա օգտին է խոսում նաև այն Հանգամանքը, որ իրենք՝ Ղարադաղցիները, և վաղ շրջանի Հետազոտողներն ու մտավորականները, Ղարադաղը Համարել են Փայտակարան աշխարհի մաս: Չսայած այս ամենին՝ գտնում ենք, որ այդ գավառանունները տեղացիների կողմից երբեք չեն կիրառվել, այլ, այսպես ասած, կենտրոնա-

²² Հարությունյան Բ., 2001, էջ 375:

կան իշխանությունների կամ դրսի աշխարհագիրների կողմից տվյալ տարածքներին տրված անուններ էին: Իսկ որպես ինքնանվանում՝ ծառայել է Սև սար կամ Սևասար անվանումը: Այդ մասին ակնարկ կա XIII դարի Սյունյաց պատմիչ Ստեփանոս Օրբելյանի «Պատմություն Տանն Սիսական» աշխատության մեջ²³, որը, կարծես, աննկատ է մնացել մեր պատմաբանների կողմից: Հետագա ժամանակաշրջանում այդ անվանումը տարածաշրջան ներթափանցած թուրքալեզու ազգությունների կողմից, իրենց սովորության Համաձայն, բառացի թարգմանվել է, և պատճենված անվանումը, արդեն մեր սովորության Համաձայն, տարածում է ստացել:

Կորյունի (V դար), Փավստոս Բուզանդի (V դար), Աեոնդի (VIII դար) աշխատություններում ներկայիս Ղարադաղի տարածքը արևմուտքից սահմանակից Մարանդ գավառի Հետ միասին Հիշատակվել է Մարաց կողմեր անվամբ: Մատենագրական տեղեկությունների Հիման վրա կարելի է եզրակացնել, որ Մարանդ տեղանունը ստեղծվել է Հայկական միջավայրում: Այն, Հավանական է, կազմված

²³ Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն (թարգմ., ներած. և ծանոթ. Ա. Աբրահամյանի), «Սովետական գրող» հրատ., Երևան, 1986, էջ 117:

է մար (ցեղանունից) և Հնդեվրոպական անդ «տեղ, այնտեղ» (ա նախամասնիկ + ն (նա, այն) + * t > d անդ) «մարերի տեղ, վայր, բնակավայր», Համեմատել՝ Մարաստան: -Մնդ տեղանվանական մասնիկը տարածված է եղել Հայոց մեջ՝ Վանանդ, Բագրեվանդ, Եռանդ, Ջարավանդ, Հաբանդ և այլն:


Առաջին անգամ Հայաստան- չեռագրերում գտնվածը Հիշատակվել է Կորյոնի «Վարդ Ս. Մեսրոպ Մաշտոցի» աշխատության մեջ Մարայ կողմեր (ի կողմանս Մարայ) անվանմամբ՝ նկատի ունենալով Մարանդ գավառը և Ղարադաղի քարաշաշտանը²⁴: Հիշատակումը կապված է նախնական գրերի գյո-պը Մեսրոպ Մաշտոցի Գողթան գավառում իրիստենեո-թյան խարոսման և քարաշման ո-ղղո-թյամբ վարած գործունեության հետ, ինչի հետևանքով Գողթանի հեթանոսական իրավիճակը Հայաստանում փախչել էն Արախսի մյուս ափը Մարայ կողմերը:

XIII դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանը, նկարագրելով գողթանցի կրոնավոր Հայր Գյուտի Արաքսի ափին հիմնած վանքի²⁵ կալվածքների սահ-

մանները, որոնք Հատկացվել են Սյունյաց իշխանի կողմից, նշում է, որ դրանք սկսում էին Սևասարից մինչև Թղենու գետը, այնտեղից մինչև ուրկանոցի այգիները²⁶, այնտեղից՝ մինչև Աղավսո գետի պրտոյտները, Նակորզանի եկեղեցու դիմաց²⁷: Սյունյաց պատմիչի նշած Սևասարը, անկասկած, ներկայիս Ղարադաղն է:

Որոշ աղբյուրներում Ղարադաղ անվան ծագումը կապում են գավառի լեռների պարսկական Սիահ Կուհ՝ سیاه کوه (Թարգմանաբար՝ սևսար) անվանման հետ, ինչը, կարծում ենք, նույնպես ճիշտ չէ²⁸: Ավելին, այն նույնպես Հայկական անվանման թարգմանությունն է: Նախ՝ Հայկական անվանումը ժամանակագրական առումով ամենաՀին Հիշատակվածն է, և երկրորդ՝ բավական է նշել այն փաստը, որ դեռ Հնագույն ժամանակներից գավառի բնակչությունը կազմել են Հայերը, իսկ պարսիկներ այդտեղ երբեք չեն բնակվել ո՛չ անցյալում, ո՛չ էլ ներկայումս:

6918



²⁴ Կորյուն, Վարք Մեսրոպ Մաշտոցի, «Հայաստան» հրատ., Երևան, 1994, էջ 40 (ծան. 55):

²⁵ Սա այն վանքն է, որտեղ ճգնել է Երիցակ կրոնավորը, ով հետագայում այդ նույն հայր Գյուտի հրամանով և օժանդակությամբ շինեց Երիցականի Նոր Երուսաղեմ (Սբ. Նախավկա) եկեղեցին ու վանական համալիրը (Օրբելյան 1986, էջ 111):

²⁶ Խոսքը Երիցականքի բորտանոցի տիրույթների մասին է, որը հետագայում հայր Գյուտը հատկացրել է Երիցակ կրոնավորին:

²⁷ Օրբելյան, 1986, էջ 117:

²⁸ Հայկական սովետական հանրագիտարան, հատ. 12, Երևան, 1986, էջ 301, նաև՝ Երեմյան 1963, էջ 80:

Գավառի Սևասար կամ Սևսար անվանումը Հետագա մատենագիրներից Հանդիպում էնք XVIII դարի մատենագիր Ղուկաս Սեբաստացու մոտ «Դավիթ Բեկ կամ պատմություն Ղափանցոց» աշխատությունում²⁹: Ուշ միջնադարի և նոր ժամանակաշրջանի Հայ մատենագիրների՝ Զաքարիա Ազուլեցու³⁰ (XVII դար) և Աբրահամ Կրետացու³¹ (XVIII դար) երկերում մենք արդեն Հանդիպում ենք Ղարադաղ անվանումը:

Այսպիսով՝ կարծում ենք՝ Սևասարի ցարաթաշառջանը նոյնանունով է Ասսարո-բական նաճանգի Երրասվանյան և Փայրակարան նաճանգի Ալեան Գավառներին, շնայած դրան վարչարանակալական առումով այն ավելի շար կապված էր Երրասվանյանի, Երցախի և Այո-նիքի հետ:

²⁹ Ղուկաս Սեբաստացի, Դավիթ Բեկ կամ պատմություն Ղափանցոց, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1992, էջ 22, 23:

³⁰ Զաքարիա Ազուլեցու Օրագրությունը, ԽՍՀՄ ԳԱ Հայկական ֆիլիալ, «Արմֆանի» հրատ., Երևան, 1938, էջ 94:

³¹ Կաթողիկոս Աբրահամ Կրետացին Ղարադաղը հիշատակել է 1736թ. դեպի Մուղանի դաշտավայր կատարած ճանապարհորդության դեպքերը նկարագրելիս. Մուղանի դաշտավայրում նա պետք է մասնակցեր Նադիր Շահի թագադրման արարողությանը (Աբրահամ Կրետացի, Պատմություն, ՀՍՄՀ ԳԱ հրատ., Երևան 1973, էջ 77):



ՍԵՒԱՍԸ ՀՆԱՌՅՆ

ԺԱՄԵԼԿՆԵՐՈՒՄ ԵՒ ՎԸՆ ՄԻՋՆԵԿՆԵՐՈՒՄ



ևասարի տարածքը ընդգրկվել է Վանի Հայկական թագավորության (Բիայնիլի) կազմում. մասնավորապես մ.թ.ա. 747-745թթ. ներկայիս Ղարադաղի տարածքը նվաճվել է Արգիշտի Ա-ին Հաջորդած Սարգուրի Բ-ի կողմից³²: Հիմնվելով սեպագիր արձանագրություններից վերծանված տեղեկատվությանը՝ Սարգուրի Բ-ի՝ մ.թ.ա. 747-745թթ. Վանից դեպի արևելք կատարված արշավանքը անցել է ներկայիս Ղարադաղի տարածքով³³:

Նոր նվաճված և իր պետությանը միացված տարածքում (Փուլուաղի երկրում) Սարգուրի Բ-ն

³² Մովսիսյան Ա., Հայոց Պատմության աշխարհակալությունները, ԵՊՀ հրատ., Երևան, 2008, էջ 40-41, քարտեզներ:

³³ Арутюнян Н. В., Биайнили, АН АССР, Институт археологии и этнографии, Ереван, 1970, с. 256.

թողել է ժայռափոր սեպագիր արձանագրություն, որը Հայտնաբերվել է 1950թ. և պարունակում է որոշակի մանրամասնություններ նշված արշավանքի վերաբերյալ: Արձանագրությունը Հայտնաբերվել է Սեքենդել բնակավայրից հյուսիս՝ Վարզաքան (Հայ. Վարժական) վարչական կենտրոնից 5կմ արևելք: Գիտական Հանրության միջավայրում այն նաև կոչում էն Սըղընի արձանագրություն, քանի որ գտնվում է Ղարադաղի Քեյվան գավառակի նախկին Հայկական Սըղըն գյուղից շկմ հեռավորության վրա՝ Չաղի կամ Կայա անունով լեռան գագաթին: Արձանագրության քարաժայռը կոնսաձև է, ունի 5մ բարձրություն: Այն քանդակված է քարաժայռի Հարավարևմտյան Հարթ կողմի վրա, ունի 115սմ երկարություն, 47սմ լայնություն և կազմված է 10 սողից: Լեռան գագաթին պահպանվել են բերդի պատերի մնացորդներ: Սըղընի ներկայիս թուրք բնակիչները իրենց մեծերից լսածով պատմում են, որ դա Հայկական բերդ էր, և շրջակա գյուղերի բնակիչները երկաթյա իրերն ու գործիքները այստեղից էին ձեռք բերում, քանի որ բերդի Հայ բնիկները Հմուտ երկաթագործներ էին: Լեռան լանջերին կան Հին շրջանին վերաբերող գերեզմաններ, որոնք տեղացիները կոչում են Գյաբուր Ղաբրի կամ Գաբրերի: Այս գերեզմաններից պեղվել են խեցե և բրոնզե իրեր, որոնցից

որոշները Հանձնվել են Թավրիզի պետական թանգարանին: Շրջակայքից Հայտնաբերվել են նաև բազմաթիվ կավե ջրի խողովակների մնացորդներ³⁴:

Վրացի ուրարտագետ Մելիքիշվիլին վերծանել և 1960թ. հրատարակել է Սըղընի արձանագրությունը.

1. Խալտի պարտեռալ մական հատվել ճամփա ընկավ.
2. Սա Հարչակվեց Փոլոստի երկրի արվա
Քաղտիսոնի վրա.
3. Լեռնոս մի շրջան է ամենակարող Խալտի
օգնությամբ.
4. Եյս Հարչակոմը եղավ խալտերի Հյոսր
պարտեռալ մական հատվել.
5. Երգիշտի որդի Սարդոսի միջոցով եղավ.
6. Սարդոսին ասում է. -Ես խանակել բերդ գրավեցի.
7. -Ես մեկ օրոմ խոստանակելիս խալտ գրավեցի
Լիբլիոնի.
8. Թագավոր խալտը և ամրացված խալտը
կովով վերցրի.
9. Սարդոսի Հյոսր արվան և մեծն ըագավորը.

³⁴ Հակոբյան է., Սըղընդուլ գյուղի քարե արձանագրությունը ուրարտական սեպագիր գրությամբ, «Ալիք», Թեհրան, 1985, 4 փետրվարի, թիվ 28:

10. Երկրներն արժան Բիայնա երկրի Բագավոր և Տոշպա Վաղա՛խի Հրամանագրարն է՝³⁵:

Համաձայն այս արձանագրության՝ տարածքը կամ երկիրը կոչվել է Փուլուադի, որի մայրաքաղաքն էր Կիբլոնին: Այն Հավանաբար գտնվում էր Հենց փորագրված արձանագրության շրջակայքում: Վճռական ճակատամարտը տեղական իշխողների Հետ տևել է մեկ օր, որի ընթացքում Վանի Հայկական թագավորության զորքը նվաճել է 21 բերդ կամ ամրություն և գրավել 45 բնակավայր՝³⁶: Մի այլ տեղեկության Համաձայն՝ տարածաշրջանը նվաճելուց Հետո Սարգուրի Բ-ի կողմից այստեղ կառուցվել են նոր բերդեր՝ ի նշան Բիայնիլի Հզորության և Հակառակորդ երկրների Հնազանդեցման՝³⁷:

Սարգուրի Բ-ի այլ արձանագրության մեջ էլ է Հիշատակվում Փուլուադի երկիրը, սակայն մինչև Սրղընի արձանագրության Հայտնաբերումը և վերջինսումը պարզ չէր Փուլուադի երկրի և Կիբլոնի մայրաքաղաքի գտնվելու վայրը:

³⁵ «Ալիք», Թեհրան, 1985, 5 փետրվարի, թիվ 29:

³⁶ Арутюнян, 1970, с. 257.

³⁷ Арутюнян, 1970, с. 318.

Սարդո-րեն՝ Լրգեշյի որդին, ասում է.

« Խալդեի ամենակարող ասպտո ասաջ, Թեշեի ասպտոն, Շիվենի ասպտոն, Բիայնիլի ասպտո- ասաջ աղոթեցի, Հոյսո- նելի ասպաճաների Հովանավոր-Բյամբ Բշնամո- երկրամասերում իմ խնդրանձա ընդունի, ասպաճաները ինչ Համար ճամփան Բայեցին, Ես շարժվեցի Փոլո-ասդի երկրի դեմաց, Բշնամո- Բանակը իմ դեմ եկավ կովի, Ես նրանց Ես մղեցի և մինչև Լիբլոն-նի Վաղա՛խ Հե- րասնեցի, Բագավորանիս Վաղա՛խ Լիբլոն-նին, շնա- յաթ իր ունեցաթ ամրո-Բյո-ններին, կովով Գրավեցի: Այնպեղ Բողեցի արշանագրո-Բյո-ն և Վաղա՛խ այրեցի, ավերեցի և այնպեղի կին ու քղամարդը փախո-սար րվեցի: Ասո-ո-ցեցի մի Բերդ, որդեղ Բիայնիլի երկրի Հսրո-Բյո-նը ցոյց քալո- և Բշնամո- երկրի պար- րո-Բյո-նը նշելո- Համար: Այն երկրամասը, որ Գրա- վեցի, միացրի իմ երկրին»³⁸:

Թերևս այդ արձանագրությունից կարելի է են- թադրել, որ ուրարտացիները այստեղ Հաստատվել են ու այն վերածել ամրություն-բնակավայրի: Հա-

³⁸ Հակոբյան Է., Սրղընդու գյուղի քարե արձանագրությունը ուրարտական սեպագիր գրությամբ, «Ալիք», 1985, 4 փետրվարի, թիվ 28:

ջորդ անգամ սեպագիր արձանագրությունները³⁹ տարածաշրջանը Հիշատակել են մոտ կես դար Հետո՝ Բիայնիլիի ռազմաքաղաքական անկման ժամանակաշրջանում, Սարգուրի Բ-ի թոռան՝ Արգիշտի Բ-ի Հայտնի արևելյան արշավանքի ժամանակ:

Բիայնիլիի անկումից Հետո նշված տարածաշրջանը Հաջորդաբար մաս է կազմել Հայկական թագավորության, Մարաստանի, Աբեմենյան Պարսկաստանի, Ալեքսանդր Մակեդոնացու և Սելևկյան կայսրությունների:

Հայկական նոր թագավորության Հիմնադիր Արտաշես Ա-ն⁴⁰ (մ.թ.ա. 189-160), Հայկական Հողերի վերամիավորումը սկսել է դեպի արևելք կատարած արշավանքներից: Նվաճված և Մեծ Հայքին միացված տարածքների մեջ նշվում է Բոսորոպեդան⁴¹, որը, ըստ Ս. Երեմյանի, Համընկնում է Պարսպատունիք⁴² գավառին⁴³: Տիգրան Մեծից (մ.թ.ա.

³⁹ Արգիշտի Բ-ի հիշատակված արշավանքի մասին պատմում են Արդաբիլից արևմուտք հայտնաբերված երկու արձանագրությունները:

⁴⁰ Միսիանում հայտնաբերված սահմանաքարի վրա Արտաշեսը իրեն անվանում է «Արտաշես արքա Երվանդական Բարի, որդի Զարեհի»:

⁴¹ Հայ ժողովրդի պատմության քրեատոմատիա, հատ. I, Երևան, 1981, էջ 196, նաև՝ Strabo, XI, 14, 5:

⁴² Ինչպես արդեն նշել ենք, այն նույնացվում էր Ղարադաղի հետ:

95-55) Հետո այն շարունակել է Հայկական թագավորության մաս կազմել վերջինիս որդի՝ Արտավազդ Բ-ի (մ.թ.ա. 55-34) թագավորության ներքո:

Մ.թ.ա. 34 թվականին՝ Մարկոս Անտոնիոսի⁴⁴ կողմից Արտավազդ Բ-ի գերեվարումից Հետո, Հայկական թագավորության արևելյան մի շարք տարածքներ, այդ թվում Սևասարը իր շրջակայքով, Հանձնվում է դաշնակից Մարաստանի թագավորին⁴⁵: Բայց սրդեն 4 տարի անց՝ մ.թ.ա. 30 թվականին՝ Մարկոս Անտոնիոսի մահվանից Հետո, Արտավազդ Բ-ի թագաժառանգ Արտաշես Բ-ի (մ.թ.ա. 30-20) կողմից, պարթևական օժանդակ զորքերի օգնությամբ, Մարաստանի թագավորը ջախջախվում է, գերեվարվում, որից Հետո Մեծ Հայքի թագավորությանն են միացվում ոչ միայն նախկինում անջատված արևելյան տարածքները (ներառյալ Սևասարի գավառը), այլև բուն Ատրպատական-

⁴³ ՀժՊ I, էջ 531:

⁴⁴ Մարկոս Անտոնիոս (մ.թ.ա. 83, Հռոմ – մ.թ.ա. 30, Ալեքսանդրիա): Հռոմեական քաղաքական գործիչ, զորավար: Մ.թ.ա. 43-ին հանրապետական գործերի պարտությունից հետո Օկտավիանոսի կողմնակիցն էր: Մարկոս Լեպիդոսի հետ կազմել է II եռապետությունը:

⁴⁵ ՀժՊ I, էջ 623:

Մարաստանը⁴⁶: Այն Հայկական թագավորության կազմում մնացել է նաև Հետագայում՝ Արտաշեսյան թագավորների օրոք⁴⁷:

Արշակունիների Հայկական թագավորության հիմնադրման սկզբնական շրջանում կրկին Սևասարը Հայտնվել է ռազմաքաղաքական իրադարձությունների ճանապարհին: Հռոմեական զորավար Կորբուլոնի⁴⁸ կողմից մ.թ. 58 թվականին՝ Արտաշատը գրավելուց հետո, Տրդատ Արշակունին Հեռանում

⁴⁶ Մանանդյան Հ., Քննական տեսություն, հատ. Ա, ՀՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտ, Երևան, 1945, էջ 285:

⁴⁷ Մ.թ. I դարի սկզբին գրված Պոմպեոս Տրոգոսի «Historiae Philippicae» պատմական երկում գրված է. «Չի կարելի լռությամբ անցնել այնպիսի մեծ թագավորության մասին (ինչպիսին է Հայաստանը), քանի որ նրա սահմանները, Պարթևստանից հետո, իրենց ընդարձակությամբ գերազանցում են բոլոր մյուս թագավորությունների սահմաններին, ընդ որում Հայաստանը Կապադովկիայից մինչև Կասպից ծովը 1100000 քայլ տարածություն ունի, իսկ լայնքով նրա երկարությունն է 700000 քայլ» (Երեմյան Ս. Տ., Հայաստանն ըստ «Աշխարհացույցի», ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1963. էջ 68, ծան. 1): Կարելի է միայն ավելացնել, որ որպես միաձույլ էթնիկական թագավորություն (մեկ ժողովրդով բնակեցված, միալեզու)՝ Մեծ Հայքը այդ ժամանակ Հին աշխարհի ամենամեծ թագավորությունն էր, քանի որ Հռոմեական կայսրությունն ու Պարթևստանը խիստ խայտաբղետ էին այդ առումով:

⁴⁸ Գնեոս Դոմիտիոս Կորբուլոնը (7-67)՝ հռոմեացի նշանավոր զորավարը, Ներոն կայսեր օրոք մասնակցել է Հռոմի կողմից Արևելքում Հայաստանի համար Պարթևստանի հետ վարած պատերազմին, եղել հռոմեական բանակի հրամանատար:

է Մեծ Հայքից դեպի Կապուտան (Ուրմիա) լճի հյուսիսարևելյան ափերին Հարակից երկրամասը⁴⁹, ինչը Համբնկնում է Սևասարի տարածաշրջանին: Վերջինս սկզբնական շրջանում Տրդատի Համար դառնում է Հենակետ ռազմական գործողությունները վերսկսելու և Մեծ Հայքը վերանվաճելու Համար⁵⁰: Ճիշտ է, ինչպես ցույց են տալիս Հետագա իրադարձությունները, Հարձակումը իրականացվում է միայն Հայոց Միջագետքից՝ Տիգրանակերտ և Հռոմեական Ասորիքի⁵¹ ուղղությամբ: Սևասարի գավառը Հետագայում՝ առնվազն երեք Հարյուրամյակ (I-IV դդ.) Արշակունյաց Հայաստանի մասն է կազմել⁵²:

Մ.թ. II դարում Մեծ Հայքի տարածքի վերաբերյալ տեղեկություններ Հաղորդում է նշանավոր Կլավդիոս Պտղոմեոսը⁵³: «Աշխարհագրական ձեռնարկում», որը հրատարակվել է մ.թ. 150-ական թվականներին, ցույց է տալիս Մեծ Հայքի սահմանները,

⁴⁹ ՀԺՊ I, էջ 743, ծան. 37:

⁵⁰ ՀԺՊ I, էջ 743:

⁵¹ Այն Կորբուլոնի նստավայրն էր:

⁵² Մանանդյան Հ., Երկեր, հատ. Բ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1978, էջ 318:

⁵³ Պտղոմեոս Կլավդիոս (100-160): Հույն նշանավոր աշխարհագրագետ, տիեզերագետ, մաթեմատիկոս: Ապրել է Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում, գրել է հունարեն: Նրա կարևոր աշխատություններից է «Աշխարհագրությունը», որից օգտվել են հայ հեղինակները:

որն ընդգրկում էր նաև Սևասարի տարածաշրջանը⁵⁴:

387 թվականին Մեծ Հայքը բաժանվում է Հռոմեական կայսրության և Սասանյան Պարսկաստանի միջև: Մեծ Հայքը ընդմիշտ մասնատվում է և Հետագայում երբեք Հանդես չի գալիս իր նախկին միասնական սահմաններով: Հատ ծայրագավառներ միանում են Հարևան երկրներին՝ Ուտիքը, Փայտակարանը, Մարաց Ամուր աշխարհը, Գուգարքը, Աղձնիքը, Կորդուքը, Նոր Հիրականը, Արցախը: Հայաստանից Պարսկաստանին անցած մասը Հայերը շարունակում էին նախկինի պես անվանել Մեծ Հայք, իսկ Հռոմեացիները՝ Պարսկահայաստան⁵⁵: Արտավանյան և Ալևան գավառները Վասպուրական և Փայտակարան աշխարհների կազմում անցնում են Սասանյան Պարսկաստանին: Դա պարզորոշ երևում է նաև Մեսրոպ Մաշտոցի գրերի տարածման Հետ կապված պատմությունից: Նորաստեղծ պրովինսներ Վաղարշապատում Հայոց արքունիքին ներկայացնելուց Հետո Մաշտոցը Վուամշապուհ Արշակունուց Հրաման է ստանում տարածել Հայոց գրերը նախ

Հեթանոս գավառներում⁵⁶: Կրթական այդ գործունեությունը նա իր Տիրայր և Մուշե օգնականների Հետ սկսում է իրեն արդեն ծանոթ Գողթան գավառից: Հուսով Մաշտոցը Վուամշապուհից Հրաման է ստանում սկսելու սովորեցնել Մարաց «խուժագուժ» կողմերը, որոնք «դժվար մաքշելի էին ոչ միայն իրենց դիվական, սասանայակիր, ճիվաղական (այսինքն՝ Հեթանոսական՝ Ս.Ջ.) Բարձի, այլև խեղճեկագոյնն և կոշտ ու կոպիտ լեզվի պատճառով (Ղարադաղի Հայերի բարբառի առաջին արձանագրված բնութագրումը՝ Ս.Ջ.): Ձեռնի վարենելով և նրանց շատ քարինների թնոնդներին կոկել ու՝ դարչրին նրանց պարսպախոս, Հուեպորաբան, կրթված, սասավածադոս իմաստոս-բյանը Ժանոն»⁵⁷: Մեկ դարից ավել էր, ինչ քրիստոնեությունը ընդունվել էր իշխող վերնախավի կողմից, սակայն դեռ ժողովուրդը (սովյալ դեպքում Մարանդի և Սևասարի տարածաշրջանի Հայ գյուղացիությունը) շարունակում էր դավանել Հեթանոսական Հավատը: Իսկ Սևասարի տարածաշրջանի ժողովրդի «խեցբեկագույն և կոշտ ու կոպիտ լեզուն», մինչև մեր ժամանակները այդպիսին էլ մնաց Հայկական մյուս շրջանների (Թերևս բացա-

⁵⁴ Ptolemy, Asiae tabula tertia, V, 12, 1-9:

⁵⁵ ՀԺՊ II, էջ 113:

⁵⁶ Կորյուն, 1994, էջ 46:

⁵⁷ 1994, էջ 47:

ուովյամբ Արցախի և Սյունիքի) բնակիչների Համար:

428 թվականին Հայ նախարարների Համաձայնուովյամբ ու միջնորդուովյամբ Պարսկաստանի արքունիքը վերացնում է իրենից վասալային կախում ունեցող Մեծ Հայքի թագավորությունը: Վերջին Արտաշես Արշակունի (422-428) թագավորը՝ Վուանշապուհ թագավորի որդին, գաՀրնկեց է արվում: Մեծ Հայքը դառնում է Սասանյան Պարսկաստանի վարչական միավորներից մեկը: 428 թվականից Հետո Սևասար-Ղարադաղը այլևս չներառվեց Հայկական ոչ մի պետականության սահմանների մեջ. ո՛չ Բագրատունիների, ո՛չ Արծրունիների⁵⁸, ո՛չ Չաքարյանների և ո՛չ էլ Հանրապետական ժամանակաշրջաններում, սակայն դեռ Հազար տարուց ավել այն շարունակեց մնալ որպես զուտ Հայկական, Հայաբնակ գավառ օտար տիրակալների կամ վերջիններիս ենթակա Հայ իշխանների կամ մելիքների տիրապետության ներքո:



յապետով՝ Երբաշես Երշակունին վերջին Հայկական թագավորն էր, ում թագավորությունն արթոնջնեբոմ ընդգրկվում էր Սևասարի գարաշաշրջանը: Պարսկաստան այս

⁵⁸ ՀԺՊ III, էջ 78:

Ժամանակահատվածից ի վեր Սևասարի ճակատագիրը ավելի շատ կապվում էր կամ պոգորդում է Լարսայաթանի կամ Հյոսիսային Իրանի պարսկոթյան Հեթ:

VI դարը Սևասարի Համար նշանավորվում է այնտեղ տեղի ունեցած մի մեծ ու արյունալի ճակատամարտով: 590 թվականին Բյուզանդական Մորիկ կայսեր ուղարկած 60000-անոց զորքը գավառի Արաքսի մերձակայքում Հանդիպում է Միհրան Միհրևանդակի կամ Վահրամ Չուբինի պարսկական զորքին, որտեղ պարսիկները պարտուովյուն են կրում⁵⁹: Հատ չանցած՝ 623 թվականին, գավառը կրկին ընկնում է ռազմարշավ իրականացնող բյուզանդական զորքի ճանապարհին, այս անգամ արդեն Հերակլ կայսրի (610-641) առաջնորդուովյամբ⁶⁰: Սա բյուզանդական վերջին արշավանքն էր Սևասարի տարածքով:

Հուտով տարածաշրջանում Հայտնվում են նոր նվաճողներ՝ արաբները: Հետագա տարիներին գավառը պարբերաբար ենթարկվում է սրանց արշավանքներին ու ավարառուովյուններին: 639 թվականին արաբները մտնում են Ատրպատական, գերում ու ասպատակում են Մարանդի ու Սևասարի բնա-

⁵⁹ Լեո II, էջ 211-212:

⁶⁰ Մանանդյան, Ե, էջ 383:

կավայրերը, Գողթն գավառը, Նախիջևան դաստակերտը: Տղամարդկանց սրի են քաշում, այլոց գերեվարում⁶¹: 650 թվականին արաբական մի ջոկատ Ատրպատականից ներս է խուժում՝ Սևասար և թաւանելով ու ավերելով անցնում Արցախ և Աղվանից աշխարհ: Հաջորդ ներխուժումը Ատրպատականից իրականացվում է 685 թվականին՝ Աբդ ալ-Մալիքի (685-705) խալիֆա ընտրվելուց հետո: Արաբները ասպատակում են Արաքս գետի հովիտն ի վեր՝ մինչև Խրամ, Ջուղա և Խոշակունիք: Այս անգամ արաբները Հանդիպում են Հայերի դիմադրությանը՝ Աշոտ Բագրատունի իշխանի գլխավորությամբ:

701 թվականին Աբդ ալ-Մալիք խալիֆի եղբայր Մուհամմադը խոշոր արշավանք է կատարում դեպի Հայաստան: Արշավանքի արդյունքում վերացվում է Հայաստանի կիսաանկախ վիճակը, և Հայաստանի, Վիրքի, Աղվանքի, Մերձկասպյան շրջանների և Դերբենդի տարածքների հիման վրա ձևավորվում է բավական ընդարձակ մի նոր վարչական միավոր՝ Արմինիա նահանգը, որը ղեկավարվում էր արաբ ոստիկանի⁶² կողմից: Սևասարը դուրս է մնում Արմինիա

⁶¹ Ղևոնդ, Պատմություն, Գլուխ Բ, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1982, էջ 20:

⁶² «Ոստիկան» բառը պահլավերենից փոխառյալ է և վաղ միջնադարում նշանակել է թագավորին մերձավոր վատահեղի անձ-

նահանգի սահմաններից և մնում է Ատրպատականի կազմում⁶³:

IX դարի սկզբին Ատրպատականում սկսվում է խուրրամյան⁶⁴ կոչված աղանդավորական շարժումը, որն ընդվզում էր խալիֆայության շահագործման դեմ: Սևասարի գավառը վերածվում է շարժման ամենակտիվ օջախներից մեկի և կրկին ռազմական բախումների թատերաբեմ է դառնում: Այստեղ խուրրամիտները հիմնում են մի շարք ամրություններ: Մասնավորապես՝ Վինայից⁶⁵ քսանչորս կիլոմետր դեպի Հարավ-արևելք՝ Քելեյբար բնակավայրի մոտ՝ ծովի մակերևույթից մոտ 2300 մետր բարձ-

նավորություն, կամ պաշտոնյա (Աճառյան Հ., Հայերեն արևմտական բառարան, Երևանի համալսարանի հրատ, հատ. III, Երևան, 1926, էջ 570):

⁶³ Եղիազարյան Ա. Ս., Հայ Բագրատունիների տերությունը 885-908թթ. (պատմաաշխարհագրական ուսումնասիրություն), Երևան, 2011, էջ 26:

⁶⁴ Խուրրամյանների գաղափարախոսությունը կրոնական քողի ներքո էր տարածվում և ներկայացնում մագդեականության, իսլամի և քրիստոնեության մի խառնուրդ, որի գաղափարաբանությունն էր՝ մարդիկ հավասար են, նրանք միասին պետք է վայելեն աշխարհի բարիքները՝ առանց մասնավոր սեփականության (Լեո IV, էջ 414):

⁶⁵ Հայկական գյուղ Ղարադաղի Մինջվան գավառակում (մինչև 1970 թվականը հայաբնակ, ներկայումս՝ թրքաբնակ):

րուծյան վրա է գտնվում անմատչելի մի ամրոց⁶⁶, որը խուրրամիտների Համար Հենակետ և ամրություն էր ծառայում: Տեղացիները այն անվանում են Բաբեկի⁶⁷ ամրոց, չնայած որ այն կառուցվել է ավելի վաղ ժամանակներում: Հետագայում շարունակել է մնալ որպես պաշտպանական կառույց:

⁶⁶ Իրանի ադրբեջանցիները 1999 թվականից սկսած յուրաքանչյուր հուլիս ամսվա առաջին կիրակի օրը այդտեղ ուխտագնացություն են իրականացնում:

⁶⁷ 817 թվականին Խուրրամյան շարժումը գլխավորում է Բաբեկը (Բաբան), որից հետո ապստամբությունը ընդլայնվում է և սպառնալիք դառնում խալիֆայության համար: Բաբեկը իրար ետևից պարտության է մատնում Աբբասյան խալիֆաներ Մամունի (813-833) և Մութասիմի (833-842) ջոկատներին: Բաբեկի շարժման կենտրոն Բաղդադ անմիջականորեն սահմանակից էր հայկական երկու նահանգների՝ Սյունիքին և Արցախին: Երբ արաբական ամիրայություններից մեկի հետ կռվելու համար Սյունյաց Վասակ իշխանը հրավիրել էր Բաբեկին, սա դրա դիմաց որոշ հավակնություններ հանդես բերեց Սյունիքի նկատմամբ: Բաբեկը կնության առավ Վասակի աղջկան և նրա մահվանից հետո ցանկացավ որպես ժառանգորդ տիրանալ Սյունիքին: Սյունյաց իշխանները դիմադրեցին, և Բաբեկը հարձակվեց Սյունիքի վրա, ասպատակեց Գեղարքունիքի գավառը, կոտորեց 15 հազար մարդ ու քանդեց Մաքենացոց հռչակավոր վանքը: 837 թվականին Բաբեկը ծանր պարտություն է կրում Մութասիմ խալիֆի կողմից ուղարկված Աֆշինի զորքերից և փախչում Արցախ: Արցախի իշխան Սահլ Սմբատյանը Բաբեկին բռնում և հանձնում է արաբներին, որոնք նրան մահապատժի են ենթարկում (ՀՊ II, էջ 339-340):

Լրջակո-նյաց Բագավոր-Բյան անկո-մից մոտ շորսո-կէս դար անց վերականգնվում է Հայկական պետականո-Բյո-նը: Ընդ որ Ը (885-890) և Սմբատ Ը (890-914) Բագրատյո-նիները ջանձ շէին խնայո-մ, որպէսզի իրենց Բագավորական իշխանո-Բյանը ենթարկվի ամբողջ Հայաստանը: Դա այդպէս էլ շահողովեց ո՛չ նրանց և ո՛չ էլ Բագրատյո-նի Հաջորդ Բագավորներին: Մէջ Հայէի արե-էլյան և Հարավարե-էլյան գավառները Լորդպատկանի ենթակայո-Բյան ցան էին: Վերջինս մի ընդարձակ ու զորեղ ամիրայո-Բյո-ն էր, որի կախվածո-Բյո-նը Խալիֆայո-Բյո-նից կրո-մ էր չնական բնո-յէ, և որի Հիմնադիրն էր Սաջյան Սո-Համմատ Ըֆշինը (889-898): Պատմական այդ ժամանակահատվածում Սևասարի ցարաշաքջանը Հաջորդաբար ընդգրկվել է Լորդպատկանի Սաջյան, այնո-Հէսե Սալարյան, Ռավվատյան ամիրայո-Բյո-ններին կապմի մէջ:

Խորասանից Իրանի վրայով դեպի Հայաստան ներխուժող թուրքերի Համար Ատրպատականը դարձել էր գլխավոր Հանգրվան Հատկապես այն պատճառով, որ գաղթող թուրքերի անասունները մնող լեռնային Հովիտները Խորասանի լեռնային արոտներից Համնում էին մինչև Ատրպատական: Բացի այդ, Ատրպատականը դարձել էր Բյուզանդական կայսրության դեմ ռազմական Հենակետեր ստեղծելու Հարմար վայր⁷²: Հետևաբար Հիմնականում Ատրպատականից էին կատարվում սելջուկյան արշավանքները՝ իրենց ճանապարհին Հաճախակի ոտնատակ տալով նաև Սևասարի բնակավայրերը:

⁷² 1054 թվականին սելջուկյան առաջնորդ Տուրքիլին (1038-1063) հաջողվել էր վերջնականապես հպատակեցնել Ատրպատականի տարբեր շրջանների տերերին: 1063 թվականին Տուրքիլին հաջորդող Ալփալանը (1063-1072) իրականացրել է իր առաջին արշավանքը դեպի Անդրկովկաս: Ալփալանը մեծ բանակով գալիս է Սևասարի տարածաշրջանին սահմանակից Մարանդ քաղաքը: Այստեղ նրա շուրջը համախմբվում են Ատրպատականի և Շիրվանի ամիրաները, որոնց հետ Ալփալանը անցնում է Արաքս գետը, գրավում ու ավիրում Անին: Սելջուկյան աշխարհակալությունը շարունակվում է Ալփալանին հաջորդող Մելիքշահի (1072-1092) օրոք, հետո միայն սկսում մասնատվել և քայքայվել (Բոռնազյան Ս. Վ., Հայաստանը և Սելջուկները XI-XII դդ., Հայկական ՄՄՀ ԳԱ հրատ., Երևան, 1980, էջ 95):

Սելջուկյան արշավանքներից Հետո իրար Հաջորդող թուրքական տարրերը աստիճանաբար թրքացնում էին Ատրպատականը: Այս ժամանակաշրջանից սկսած աստիճանաբար սկսվում է փոխվել տարածաշրջանի էթնիկ կազմը: Ատրպատականի իրանական ծագմամբ ժողովուրդները աստիճանաբար ձուլվում են թուրքալեզու ցեղերի Հետ: Տարածաշրջանում աստիճանաբար սկսում են գերակշռող դառնալ թուրքական լեզուն, թուրքական տեղանունները:

1136 թվականին ծագումով ստրուկ Համն ադդին Ելտկուզը, Միջագետքի սելջուկներին Հաղթելով, տիրանում է Ատրպատականին և Հիմնադրում Ելտկուզյան (Իլդիգիզյան) դինաստիան, որը իշխում է Ատրպատականում մինչև 1225 թվականը: Ելտկուզյանների մայրաքաղաքը սկզբում Եկբատանն (Համադան) էր, Հետո՝ Դավրեժը (Թավրիզ)⁷³: Հենց Ելտկուզյանների ժամանակներից սկսած Թավրիզը

⁷³ Թավրիզը առաջին անգամ հիշատակվում է Փավստոս Բուզանդի «Պատմություն հայոց» երկում. «Նույն այդ ժամանակ Պարսից թագավորն էլ (Շապուհ Երկարակյացը) իր բոլոր գույքերով շարժվում գալիս է Հայաստանի վրա սրանց (Արշակ Բ և Վասակ Մամիկոնյան) դեմ. սրանք էլ շտապով հասն Ատրպատական և Պարսից գորքը գտան բանակ դրած Թավրեշում» (Փավստոս Բուզանդ, Պատմություն հայոց, «Հայաստան» հրատ., Երևան, 1968, էջ 194):

ստանձնում է տարածաշրջանի Համար խոշոր վարչաքաղաքական կենտրոնի դերը և այդպիսին մնում է Իլխանուլթյան, կարա-կոյունլուների, ակ-կոյունլուների, Սեֆյան Պարսկաստանի ժամանակաշրջաններում: Այդ պատճառով էլ Հետագա բոլոր պատերազմների ժամանակ Թավրիզը իր շրջակայքով ներառյալ Սևասար-Ղարադաղը, վերածվում է պատերազմական և ռազմական ընդհարումների կիզակետի: Ելբեկո-սլանները փորձեցին էին նաև Նախիջևանին, իսկ Սյո-նիշը, Լրցախը, Գվինը, Անին Հաճախակի աստղադաշտում էին նրանց կողմից: Բացի Լարսադաղից, Ելբեկո-սլաններին էր էնթարկում նաև Ուրիշը Պարսպով, Բայլահան և Գանջակ Վաղաշեներով⁷⁴: 1170 թվականին Հենց Ելբեկո-սլաններն էն վերջ փախն Սյո-նիշի թագավորությունը:

Ելտկուզանների Հատած պղնձե դրամները հյուսիսային Հայաստանում բավական լայն տարածում էին ստացել⁷⁵: Ղարադաղի Քելեյբար բնակավայրի մոտ գտնվող արդեն Հիշատակված ամրոցի (Բաբեկի ամրոցի) պեղումների ժամանակ Հայտնաբերվել են Ելտկուզան (Իլդիգիզյան) բազմաթիվ պղնձե դրամներ:

⁷⁴ ՀԺՊ III, էջ 470:

⁷⁵ ՀԺՊ III, էջ 579:

XII դարի երկրորդ կեսին Հզորացող Վրաստանի Բագրատունիների Համար Ատրպատականի Ելտկուզյան ամիրայությունը ամենավտանգավոր Հակառակորդն էր: Վրաց-Հայկական զորքը՝ Չաքարե և Իվանե Չաքարյանների⁷⁶ գլխավորությամբ, 1208-1211թթ. երկու անգամ արշավել է Ատրպատական, երկու անգամ էլ արշավանքը անցել է Սևասարի տարածքով: Այն, որ Չաքարյան իշխանների արշա-

⁷⁶ Չաքարե Բ Չաքարյան: 1191թ. Չաքարե Բ Մեծը Թամար թագուհուց ստացել է ամիրապատարի, 1203 թվականին՝ մանդատորթուխուցեսի (արքունի կնքապահ և թագուհու թիկնազորի պետ) պաշտոնները, դարձել վրաց Բագրատունիների պետության ազդեցիկ դեմք: Գլխավորելով վրաց-հայկական բանակը՝ եղբոր Իվանե Ա-ի (1191 թվականից մսախորթուխուցես՝ արքունի մեծ վեզիր) հետ Չաքարե Բ-ն ավելի քան 20 տարի ազատագրական կռիվներ է մղել սելջուկյան ամիրությունների դեմ Հայաստանի կենտրոնական և հարավային շրջաններում: Նրանց հաղթական պատերազմների շնորհիվ ազատագրված հայկական տարածքները՝ Արագածոտնը, Շիրակը, Այրարատը, Սյունիքը, Արցախը, Կարսը, Բասենը և այլն, մտել են Չաքարյան իշխանապետության մեջ: Ամրապնդվել է հզորացել է իշխանապետությունը՝ Անի կենտրոնով (1199): Չաքարե Բ-ի մահից (1212) հետո Իվանե Ա-ն ստացել է ամիրապատարի, 1213 թվականին՝ 14-ամյա գահաժառանգ Գեորգի IV Լաշայի (Իվանե Ա-ն նրա դաստիարակն էր) գահ բարձրանալուց հետո՝ նաև աթաբեկի (թագավորահայր) պաշտոնները, դարձել վրաց արքունիքի ամենաազդեցիկ դեմքը: Իվանե Ա-ի մահից (1227) հետո Չաքարյանների տոհմի ավագությունն անցել է Իվանեի որդի Ավագ Չաքարյանին (ծննդյան թվականն անհայտ է - 1250թ.), որը ժառանգել է նաև աթաբեկի պաշտոնը:

վանքը անցել է Սևասարով, երևում է Կիրակոս Գանձակեցու Հետևյալ տողերից. «Բազմաթիվ խաջագործո-թյո-ննե-րից ո- Հաղթո-թյո-ննե-րից Հե-րոս, որ կարարեցին մեծամեծ իշխաններ Զափարեն ո- Իվանեն, մեծ պորտով գնացին Մարանդ խաջախ, Գրավեցին այն ո- ավերեցին նրա շո-րջը Գրնվող Գավառները: Այս գնացին Արարավիլ խաջախ, այն նմանապես Գրավեցին»⁷⁷: Հատ երևույթին՝ այս արշավանքները պատժիչ կամ ավարառուական բնույթ էին կրում, քանի որ Ատրպատականի հյուսիսային գավառները՝ Մարանդը, Սևասարը, որոնք, ինչպես երևում է, Չաքարյանների արշավանքների ճանապարհին էին ընկած, այդպես էլ չներառվեցին Արաքսից հյուսիս ձևավորված Չաքարյան իշխանապետության տարածքի մեջ:

Հետագայում տարածաշրջանը ենթարկվում է մոնղոլական նվաճումներին: 1220 թվականին սրանք պաշարում և ուղղմատուգանքի են ենթարկում Թավրիզը⁷⁸, այնուհետև շարժվում դեպի հյուսիս:

Հաղթելով Գեորգի Լաչայի, Իվանե Չաքարյանի և Վահրամ Գագեցի Չաքարյանի գլխավորած Հայ-

⁷⁷ Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1982, էջ 137:

⁷⁸ Ստեփանյան Հ., Հայ ժողովրդի պայքարը թաթար-մոնղոլական լծի դեմ, Հայկական ԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1990, էջ 30:

վրացական զորքին՝ մոնղոլական զորքը 1221 թվականին վերադառնում է Թավրիզ՝ ճանապարհին ասպատակելով և ավերելով հյուսիսային Ատրպատականի բնակավայրերը: Կիրակոս Գանձակեցին մոնղոլական արշավանքների առիթով գրում է. «Ամբողջ երկիրը Լյուկեյ մեռելների տեղերում, և չկար մեկը, որ թաղեր տրանձ: Կարծես թե խավարով էր պատաս ամբողջ աշխարհը, մարտիկ Գեշերն ավելի էին սիրո-մ, խան ցերեկը, և երկիրը տարարվել էր բնակչո-թյո-նից: Երկիրը թափո-ր տարջավ իր բնակիչներին, իսկ նրա վրա օրաս որդիներ էին շրջո-մ»⁷⁹:

1256 թվականին Մոնղոլական կայսրության կողմից Մերձավոր արևելք է ուղարկվում Հուլավուխանը⁸⁰, որը նույն թվականին հիմնում է մոնղոլա-իրանական պետություն՝ պատմության մեջ Հայտնի «Իլխանություն» անվամբ: Այն տարածվում էր Փոքր Ասիայից մինչև ներկայիս Աֆղանստանի տարածք, սակայն վարչաքաղաքական կենտրոնավայրերն էին Թավրիզի շրջանը, Ղարաղաղը, Մուղանը, Արցախը և Ալաղաղը⁸¹: Մայրաքաղաքը սկզբում Ատրպատականի Մարաղա քաղաքն էր, Հետո՝ Թավրիզը, որը

⁷⁹ Գանձակեցի, 1982, էջ 173:

⁸⁰ Հուլավուխան (1256-1265): Իլխանության հիմնադիր, Չինգիզի խանի թոռը՝ Մանգուխանի (1251-1259) եղբայրը:

⁸¹ Մանանդյան, Գ, էջ 254:

աստիճանաբար առևտրային կենտրոնի դերը խլում էր Ասիից ու Դվինից:

XIV դարի 30-ական թվականներից սրվում են գաճակալական կռիվները Իլխանության ներսում, գերազանցապես՝ Իլխանությունում կարևոր դեր խաղացող Չոբանյաններ և Ջելաիրյաններ մոնղոլական ընտանիքների միջև: Չոբանյան դինաստիան իր տիրապետության տակ է առնում Հյուսիսային Իրանը, Ատրպատականը և գրեթե ամբողջ Հայաստանը⁸²: Օգտվելով Իլխանությունում ստեղծված վիճակից՝ 1357 թվականին Հյուսիսից Ոսկե Հորդանի⁸³ տիրակալ Ջանիբեկ խանը (1341-1357), ում իշխանության օրերին Ոսկե Հորդան Հասել էր իր Հզորության գագաթնակետին, ներխուժում է Ատրպատական: Չոբանյան Մելիք-Աշրաֆը (1343-1357) մազապուրծ փախչում է Մարանդ, ապա՝ Խոյ, սակայն բռնվում և Հանձնվում է Ջանիբեկին: Վերջինս Թավրիզում մահապատժի է ենթարկում Մելիք-Աշրաֆին, որի անունը այդ ժամանակ փոխադրվել էր Հասարակ անվան՝ խորհրդանշելով

⁸² Սրանց օրոք Ջաբարյանները գրկվում են իրենց բոլոր տիրույթներից:

⁸³ Ֆեոդալական պետություն: Հիմնել է Չինգիզ խանի թոռ, Ջուչիի որդի Բաթու խանը XIII դարի կեսին:

դաժան բռնակալություն⁸⁴: 1357 թվականին տարածաշրջանում վերջանում է Չոբանյանների արյունալի տիրապետությունը: 1358 թվականին մեկ տարի տևող պատերազմական գործողություններից Հետո, որոնք տեղի էին ունենում Թավրիզում, Ատրպատականի Հյուսիսային, մերձարաքսյան գավառներում, Նախիջևանում, Արցախում, Ջելաիրյան սուլթան Ուվեյսը (1356-1375) Հաղթանակ է տանում Ոսկե Հորդայի դրածոյի նկատմամբ և միավորում Ջելաիրյանների և Չոբանյանների տիրույթները: Իր մայրաքաղաքը նա Բաղդադից տեղափոխում է Թավրիզ: 1384 թվականին կրկին Հյուսիսից Ատրպատական է ներխուժում Ոսկե Հորդայի 50000-անոց զորքը՝ խան Թոխթամիշի (1380-1395) գլխավորությամբ: Թավրիզը գրավվում ու ավերվում է: Այնուհետև Ոսկե Հորդայի զորքի մի մասը Մարանդի վրայով մտնում է Սյունիք⁸⁵, իսկ մյուս մասը ԱՀարով և Ղարադաղով անցնում է Ղարաբաղ⁸⁶: ԱՀար բնա-

⁸⁴ ՀԺՊ IV, էջ 19-20:

⁸⁵ Ոսկե Հորդայի խանը գրավում է Որոտան ամրոցը և հայրենագուրկ անում Բուրթել Օրբելյանի թոռանը՝ Սմբատ Օրբելյանին: Տուժում է նաև աստվածաբան, փիլիսոփա Հովհան Որոտնեցին, ով իր 60 աշակերտների հետ գաղթում է վայրից վայր՝ շարունակելով իր իմաստասիրական դասախոսությունները:

⁸⁶ Մանանդյան, Գ, էջ 348:

կավայրը, որը ներկայումս քաղաք է, XVI դարից մինչ այժմ համարվում է Ղարադաղի վարչական կենտրոնը: Հայ մատենագրության մեջ այն առաջին անգամ հիշատակվել է 1456 թվականին արտագրված մի ավետարանի հիշատակարանում՝ Սառաճենց գրչի կողմից⁸⁷: Հիշատակարանի բովանդակությունից գալիս ենք այն եզրակացության, որ XV դարում ԱՀարը ունեցել է Հայկական բնակչություն: Հետագա դարերում, ինչպես կտեսնենք սույն աշխատանքից, ԱՀարը հիշատակվում է միայն որպես զուտ թրքաբնակ բնակավայր: Թոխթամիշի զորքերը միավորվում են Ղարաբաղում և վերագառնում Ոսկե Հորդա՝ իրենց Հետ տանելով 200000 գերի, որոնց մեջ կային տասնյակ Հազարավոր Հայեր՝ Պարսկահայքից, Ատրպատականից, Սյունիքից, Արցախից:

1385 թվականին Ատրպատական է ներխուժում Չաղաթայան⁸⁸ մոնղոլական պետության տիրակալ

⁸⁷ Խաչիկյան Լ. Ս., ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս II, ՀՍՍՌ ԳԱ, Պատմության ինստիտուտ, Երևան, 1958, էջ 68:

⁸⁸ Մոնղոլական պետություն, որ կոչվում էր Չինգիզ Խանի որդի Չաղաթայի անունով: Այն ձևավորվել է Միջին Ասիայում 1266 թվականին մոնղոլական կայսրության տրոհումից հետո, և 1370 թվականին բաժանվել է 2 մասի՝ Մոգոլիստան և Մավերանահր (կամ արևմտյան Չաղաթայան ուլուս), 1370 թվականին Լենկ Թեմուրը հենց վերջինիս տիրակալն է հռչակվում:

Լենկ Թեմուրը⁸⁹ (1370-1405): 1386 թվականի գարնանը նա գրավում է Թավրիզը, այնուհետև շարժվելով դեպի հյուսիս՝ անցնում է Արաքսը և մտնում Սյունիք⁹⁰: Ամենուրեք, ուր ոտք դրեցին Լենկ Թեմուրի զորքերը, սփռեցին կոտորած, գերեվարեցին Հազարավոր մարդկանց, ոչնչացրին Հոգևոր և Նյութական մշակութային արժեքներ⁹¹: Լենկ Թեմուրի այս առաջին արշավանքը տևեց երկու տարուց ավել:

Թեմուրի մահվանից (1405) Հետո կայսրության արևմտյան տարածքները գառնում են կովախնձոր նրա ժառանգների միջև: Օգտվելով այդ խառնակ իրավիճակից՝ Հիրվանշահ Իբրահիմը կարճ ժամանակով գրավում է Թավրիզը: Հուստով, սակայն, սասպարեզ է մտնում թուրքմենական կարա-կոյունլու⁹² ցեղի առաջնորդ Կարա-Յուսուֆը (1405-1420), ով 1406 թվականին գրավում է Թավրիզը՝ պարտույթ-

⁸⁹ Լենկ Թեմուր: Միջինասիական գորապետ, ամիրա, բաղասների ազգից, որոնք XIV-XV դարերում թուրքացած մոնղոլական ցեղ էին:

⁹⁰ Товма Мецопеци, История Темуруленга и его приемников, изд. «Наири», Ереван, 2005, с. 24.

⁹¹ Հրի մատնվեց գրեթե ամբողջ Հայաստանը: Սոսկալի էր հատկապես Վանի կոտորածը:

⁹² Կարա-Կոյունլուները (թարգմանաբար՝ սև ոչխար արածեցնողներ) Միջին Ասիայից ներգաղթել էին Հայկական լեռնաշխարհի XIII դարի վերջին, դավանանքով շիա մուսուլմաններ էին:

յան մասնելով Թեմուրի ժառանգներին: Ատրպատականում Հաստատվում է կարա-կոյունլու թուրքմենների տիրապետությունը՝ Թավրիզ մայրաքաղաքով, որը Հարատևում է մինչև 1468 թվականը: Ատրպատականը շարունակում է պահպանել իր քաղաքական կենտրոնի դերը ինչպես սրանց օրոք, այնպես էլ սրանց Հաջորդող ակ-կոյունլուների և Սեֆյանների ժամանակ:

Թեմուրյանների սարսափները ճաշակած բնակիչների Համար Կարա-Յուսուֆի իշխանությունը խաղաղ էր թվում: Այս տարիներին ավելի է ակտիվանում տարածաշրջանի էթնիկ կազմի փոփոխությունները: Քրդական ու թուրքական տարբեր ցեղեր շարունակում էին բնակություն Հաստատել Հայկական լեռնաշխարհի տարբեր մասերում: Արդեն գրեթե ողջ Արևմտյան Հայաստանում, ինչպես և Ուրմիա լճի շրջակայքում կարելի էր Հանդիպել քրդական ֆեոդալական կազմավորումներ: Սակայն Հատկանշական է այն, որ քոչվոր ցեղերին սանձազերծելու Համար կարա-կոյունլու տիրակալները զգալի չափով Հենվում էին բնիկ Հայկական տարրի վրա: Կարա-Յուսուֆը իրեն շահի Արման (Թագավոր Հայոց) էր կոչում և պետական բարձր պաշտոն-

ների էր նշանակում՝ նաև Հայ ֆեոդալական տների ներկայացուցիչներին⁹³: Կարա-կոյունլուների տիրապետության օրոք Թեմուրյանների պետության առաջնորդ Շահուխը (1409-1447) երեք անգամ (այնքան ինչքան իր Հայրը՝ Լենկ Թեմուրը) արշավել է Ատրպատական՝ 1420, 1429 և 1435 թվականներին, և ամեն անգամ էլ պարտության է մատնել կարա-կոյունլուներին⁹⁴: 1435 թվականին Շահուխի օգնությամբ կարա-կոյունլուների պետության գլուխ է անցնում ՋՀանշահը (1435-1467), որի իշխանության տարիներին ինչպես Ղարադաղում, այնպես էլ ողջ Ատրպատականում տիրում է Հարաբերական խաղաղություն:

Կարա-կոյունլու թուրքմենական ցեղերի տիրապետության ժամանակաշրջանում զգալիորեն փոխվում է տարածաշրջանի և մասնավորապես Սեվասարի գավառի էթնիկ պատկերը ի օգուտ թուրքալեզու ցեղերի, և Հենց սրանց ժամանակներից՝ XV դարից, Սևասարը սկսում է առավելապես անվանվել Ղարադաղ:

⁹³ ՀԺՊ IV, էջ 35-36:

⁹⁴ Վերջին արշավանքի ժամանակ զգալի դատարկվում է Սյունիքը: Բեշքեն Օրբեյյանը 6000 տուն հայ բնակչության հետ գաղթում է Լոռի (ՀԺՊ IV, էջ 38):

1468 թվականին տարածաշրջանում գերիշխանությունը անցնում է թուրքմենական մեկ այլ ցեղի՝ ակ-կոյունլուներին⁹⁵, որոնց կարա-կոյունլուների պետության սահմաններում Հիմնած ընդարձակ պետությունը գոյատևում է մինչև 1501 թվականը: 1501 թվականին Սեֆյան շահ Իսմաիլը (1501-1524) Հարուրում ջարդում է ակ-կոյունլուների պառակտված և թուլացած պետության զորքին և Հանդիսավոր կերպով մտնում Թավրիզ⁹⁶:

XVI դարի սկզբներից մինչև XVII դարի երեսուսական թվականները Ատրպատականի հյուսիսային շրջանները կարճատև ընդմիջումներով ռազմական թատերաբեմ են դառնում Հզորացած Օսմանյան կայսրության և Սեֆյան Իրանի միջև: Այս շրջանում պատմական Հայաստանի արևելյան մասերում ֆեոդալական տիրույթներ են ստանում կզբաշ կոչվող թուրքալեզու Ռումլու, Ուսթաջլու, Համլու, Թաքալու, Ղաջար, Քանգարլու, Բայաթ, Ջուկկադար,

⁹⁵ Ակ-կոյունլուները ցեղային միություն էին թուրքական Բայանդուր ցեղի առաջնորդությամբ, Միջին Ասիայից էին ներգաղթել Հայկական լեռնաշխարհ XIII դարի վերջին, դավանանքով սունի մուսուլմաններ էին:

⁹⁶ ՀԺՊ IV, էջ 56:

Մաղլու և քրդական զանազան ցեղերի առաջնորդներ⁹⁷:

Թավրիզը երկու անգամ ընկնում է Օսմանյան թուրքերի ձեռքը՝ 1514 և 1585 թվականներին: 1585-1603 թվականներին Ատրպատականի զգալի մասը՝ ներառյալ Ղարադաղը, Օսմանյան զորքի տիրապետության տակ էր: Սակայն շուտով՝ 1603 թվականին, շահ Աբբասը (1587-1629) վերագրավում է Թավրիզը, անցնում Արաքսը և մտնում Արևելյան Հայաստան: Թուրքերի կարճատև տիրապետության ժամանակահատվածում շատ բնակիչներ և ամբողջական գյուղեր գաղթում են դեպի Պարսկաստանի խորքերը: Հաճ Աբբասը վերանվաճում է գրեթե ողջ Արևելյան Հայաստանը, սակայն, լսելով թուրքերի ռազմական խոշոր նախապատրաստությունների մասին, հրամայում է նահանջել դեպի Թավրիզ, միաժամանակ հրկիզել, ավերել բոլոր բնակավայրերն ու ցանքատարածությունները, ինչպես նաև՝ գաղթեցնել ողջ բնակչությունը: Հաճ Աբբասը վճռեց Պարսկաստանը պաշտպանել մի լայնատարած առնապատով, ուր թշնամին չկարողանար գտնել տեղական ոչ մի օգնություն՝ առաջ շարժվելու Հա-

⁹⁷ ՀԺՊ IV, էջ 81:

բշում էին Իրանի խորքերը, այնուամենայնիվ, գաղթականների որոշ խմբեր բնակեցվել են Թավրիզում¹⁰⁴:

1635 թվականին՝ շահ Աբասի մահից հետո, Օսմանյան սուլթան Մուրադ Դ-ն (1623-1640) 400000-անոց բանակով արշավում և գրավում է Երևանը, Մակոն, Բայազետը և Թավրիզը: Սակայն այս նվաճումը շատ կարճ է տևում: Թուրքերը, խուսափելով Թավրիզում շրջապատվելուց, Խոյի ու Սալմաստի վրայով նահանջում են Վան: 1639 թվականին Կոստանդնուպոլսում կնքված պայմանագրով Միջագետքը Բաղդադով անցնում է թուրքերին, իսկ Անդրկովկասում սահմանները մնում են անփոփոխ: Սկսվում է Հարաբերական խաղաղության մի շրջան, որը ուղեկցվում է նաև տնտեսական և Հոգևոր-մշակութային կյանքի որոշակի աշխուժացմամբ:

Մեզ է հասել այդ ժամանակաշրջանում, ավելի հստակ՝ 1655 թվականին, Ղարադաղի Հուժ գյուղում գրված մի Հիշատակարան¹⁰⁵, որից որոշակի պատկերացում ենք կազմում XVII դարի կեսերին Ղարադաղի Հայության Հոգևոր կյանքից: Մասնավորապես

¹⁰⁴ ՀԺՊ IV, էջ 326:

¹⁰⁵ Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հատ. Գ, (1641-1660), ՀՄՍՀ ԳԱ, Պատմության ինստիտուտ, Երևան, 1984, էջ 640-641:

այն մասին, որ XVII դարի կեսերին Ղարադաղի Հոգևոր Հաստատությունները գտնվել են Սյունյաց Հոգևոր թեմի՝ Տաթևի վանական Համալիրի ենթակայության ներքո: Այդ մասին է վկայում նաև Տաթևի թեմի նոր Հարկացուցակում Ղարադաղի գավառի որպես Հարկատու ներառելը: Հարկացուցակում գավառը բաժանված է երկու մասի՝ Ղարադաղ Վերին (Հավանաբար՝ լեռնային)՝ 18 գյուղով, Ղարադաղ Ներքին (Արաքսամերձ)՝ 7 գյուղով¹⁰⁶: Ղարադաղի մնացած Հայաբնակ գյուղերը (թվով ավելի շատ) խանապատկան էին և Հարկատու էին միայն վերջիններիս: Տաթևի վանքին Հարկատու լինելը շարունակվեց մինչև 1830-1840 թվականները, երբ Հստակորեն սահմանազատվեցին ցարական Ռուսաստանի և Պարսկաստանի սահմանները¹⁰⁷:

XVII դարի սկզբին բավականին թուլանում է Սեֆյան Պարսկաստանը: Աֆղանական ցեղերի ապստամբությունը՝ Միր Մահմուդի գլխավորությամբ, ծանր Հարվածներ են հասցնում Սեֆյան պետությանը: Հսկնում են Իրանի արևելյան ու կենտրոնական շրջանները և մայրաքաղաք Սպահանը, որտեղ Միր Մահմուդը (1717-1722) իրեն շահ է

¹⁰⁶ Ալիշան, 2011, էջ 242-243:

¹⁰⁷ «Մշակ», 1872, թիվ 31:

Հոչակում: Առիթը բաց չէն թողնում Հարեան կայսրությունները: Հյուսիսից՝ Կասպից ծովի արևմտյան ափերից մինչև Հարավային ափերը, ռազմակալում է Ռուսաստանը, իսկ արևմուտքից Անդրկովկասի իրանական տիրույթներ են ներխուժում օսմանյան թուրքերը: 1724 թվականին այս երկուսի միջև Կոստանդնուպոլսում կնքվում է գաղտնի Համաձայնագիր, որով թուրքերը ճանաչում են Ռուսաստանի տիրապետությունը Դերբենդից մինչև Մազանդարան ընկած առափնյա շրջաններում: Ռուսները ճանաչում են Օսմանյան կայսրության իրավունքները գրեթե ողջ Անդրկովկասի՝ Թիֆլիսի, Երևանի, Նախիջևանի, Գանձակի, Ղափանի, Արցախի նկատմամբ, ինչպես նաև՝ Թավրիզ-Արդեբիլ գծից հյուսիս (Մարանդ, Ղարադաղ) և Թավրիզ-Քերմանշահ գծից արևմուտք (Խոյ, Սալմաստ, Ուրմիա) ընկած իրանական տարածքների վրա¹⁰⁸: Այնուհետև թուրքերը անցնում են ռուսների Հեղինակած այս նենգ դաշնագրության պայմանների իրագործմանը: Իրար ետևից գրավում են Նախիջևանը, Օրդուբադը, Գողթան գավառը, Երևանը: Ամենուր, իրենց սովոր-

¹⁰⁸ ՀՃՊ IV, էջ 156 (սա տարածաշրջանի առաջին, սակայն ոչ վերջին բաժանումն էր Ռուսական կայսրության ու Օսմանյան թուրքիայի միջև):

րություն Համաձայն, սրի են քաշում խաղաղ բնակչությանը, թալանում և ավերում բնակավայրերը: 1725 թվականի գարնանը, շարժվելով Հարավից՝ Համադանից, թուրքական զորքերը գրավում են Թավրիզը: Հերթը Հասել էր Կասպանին: Ատրպատականի թուրքական բնակչությունն ու վերջիններիս առաջնորդ խաները ցնծություն մեջ էին: Ղարադաղի խաների մեծ մասը իրենց ցեղակից Օսմանյան թուրքերի կողմից ակտիվորեն ներքաշվում են ռազմական գործողությունների մեջ:

1720-ական թվականներին Կասպանում ընթացող ռազմական գործողություններին, որն ընթանում էր Դավիթ Բեկի և նրա զինակիցների ու տեղական քոչվոր, կիսաքոչվոր թրքալեզու և քրդական ցեղերի միջև, ակտիվ մասնակցում էին նաև Ղարադաղի որոշ խաներ:

«Լեռներում բորբոխված այս պատերազմը «կլբոմ շար սահմանափակ էր, բայց նրա ասպարեզը Հեյուհեյե լայնանում էր, ընդարձակվում: Տարածաշրջանի Բորտ ապրանքանշտո-թյո-նն իր բոլոր մեջոցները կովի դաշտն էր Հանո-մ: Բարգո-շարի, Օրդո-բադի, Մախիջևանի խաները, մինչև իսկ Արախտով բաժանված Ղարադաղի թրտ-թյո-նը մի պետակ սրբա-

ԼԵՌՆ
ԿՈՒՄ Է.

պան, մոտ-սո-լմանական պատերազմի էին շարապո-մ. նրանց սարսափելի, ավերիչ արշավանվելերը կրկնվո-մ էին Հաճախակի՝ ա-Հագին խանակո-Բյաճի պիճաճ Գեշապիչ-նեթ Բասիլով երկրի ներսը»¹⁰⁹:

1723 թվականին Բարգուշատի Ֆատհ Ալի խանը, օգնություն ստանալով Ղարադաղի խանից, 18000 զորքով շարժվում է Չավնդուր¹¹⁰ գավառի վրա, որի տերը՝ Թորոս իշխանը¹¹¹, առաջիններից մեկն էր, որ գնացել էր իր ծառայությունը դնելու Դավիթ Բեկի Հրամանատարության տակ և ստացել էր նրանից Չավնդուրը կառավարելու և այնտեղ զորաբանակ կազմելու լիազորություն: Հայոց զորքը, դարանամուտ լինելով, գիշերային մի ուժեղ Հարձակումով մեծ ջարդ է տալիս Բարգուշատի և Ղարադաղի թուրքական Հրոսակախմբերին և, խուճապի

¹⁰⁹ Լեո, III, գիրք II, էջ 183:

¹¹⁰ Չավնդուր: Գավառ Մեծ Հայքի Սյունիք նահանգում: Հիշատակվում է XVII-XVIII դարերում: Ընդգրկել է Բարգուշատի լեռնաշղթայի արևելյան հատվածից դեպի հարավ՝ Ողջի և Բասուտա գետերի և նրանց վտակների ավազանը:

¹¹¹ Թորոս իշխան: Սյունիքի ազատագրական շարժման ղեկավարներից, Չավնդուրի իշխան (մելիք), մի քանի անգամ ջախջախել է Բարգուշատի խանի զորքին, զոհվել է Եղվարդի ճակատամարտում Արծվանիկի մելիք Ֆրանգյուլի դավաճանության պատճառով, թաղված է Եղվարդ գյուղի եկեղեցու գերեզմանատանը:

մատնելով նրանց, փախուստի Հարկադրում¹¹²: 1725 թվականին Ղարադաղի («Սև լեռան», ինչպես նշել է Ղուկաս Սեբաստացին) խանը Օրդուբադի խանի Հետ զորքով մտնում և գրավում են Մեղրու փոքր թաղը: Մեղրեցիները Հերոսական դիմադրություն են ցույց տալիս քաղաքի ներսում: Օրհասական մարտերը շարունակվում են այնքան ժամանակ, մինչև Չավնդուրից Բայինդուր զորավարը 2000 Հայ մարտիկներով օգնության է Հասնում և Հալածում թշնամուն մինչև Օրդուբադի սահմանները՝ պատճառելով զգալի մարդկային կորուստներ¹¹³:

1725 թվականի գարնանը Օսմանյան զորքերը արդեն Հասել էին Կապանի բարձունքներին: Օսմանյան զորքի, որոնց Հետ էին նաև Ղարադաղի խաները, առաջին ընդհարումները Կապանի Հայկական զորքերի Հետ ոչ մի Հաջողություն չբերեցին թուրքերին¹¹⁴: 1727 թվականին Օսմանյան զորքերը

¹¹² Ղուկաս Սեբաստացի, Դավիթ Բեկ կամ պատմություն Ղափանցոց, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1992, էջ 22-23:

¹¹³ Սեբաստացի, 1992, էջ 40-41:

¹¹⁴ 1725 թվականի մայիսի 11-ին ներկայացրած մի զեկուցագրում Իվան Կարապետը նշել է, որ «Թուրքերը հասել են Ղափան, ընդհարումներ են ունեցել Դավիթ Բեկի հրամանատարության տակ գտնվող հայկական զորքերի հետ, մեծ զոհեր են տվել և այժմ այնտեղ թուրքեր չկան»:

և սրանց դաշնակցած Ղարադաղի խաները, Ղարադաղի ղարաչոուլու քրդական ցեղը, Բարգուշատի խաները, ինչպես նաև թշնամոն միացած որոշ Հայկական ֆեոդալների ուժերը Հալիձորի պատերի տակ պարտություն են կրում Կապանի զինված ուժերից: Հիշյալ ղարաչոուլու քրդական ցեղերը մինչ այդ դեպքերը Սևասար-Ղարադաղում էին Հայտնրվել Սյունիքից՝ Հալածվելով Հայկական ուժերի կողմից:

Ատրպատական ներխուժած Օսմանյան թուրքերի դեմ ծավալված դիմադրությունը գլխավորում էր Սեֆյան շահ Հոսեյնի գահաժառանգ որդի Թաշմազը (1729-1732): Մինչ Կապանում այս դեպքերն էին տեղի ունենում, իրանական զորքն ու Թաշմազին Հավատարիմ խաները Ատրպատականի հյուսիսային շրջանները՝ ներառյալ Ղարադաղը, մաքրում են թուրք նվաճողներից: Թաշմազի առաջապահ ջոկատները կանգնած էին Մեղրու դիմաց՝ Ղարադաղի Ղյուզալ գյուղում (Դզմար գավառակ), որը գտնվում է Արաքսից ոչ շատ հեռու: Դավիթ Բեկը Մխիթարին և Տեր-Ավետիսին 66 զինվորներից բաղկացած ջոկատով ուղարկում է Ղյուզալի խանի Հեստ բանակցելու (նա Համարվում էր շահ Թաշմազի

զորքի հրամանատարը¹¹⁵)՝ առաջարկելով օսմանցիների դեմ պայքարը միացյալ ուժերով շարունակել: Նախկինում Դավիթ Բեկի դեմ թշնամաբար տրամադրված Ալազի խանը, ով Ղյուզալի խանի եղբայրն էր, աշխատում էր Համոզել իր եղբորը դաշնակցել Դավիթ Բեկի հետ և Համատեղ ջանքերով օսմանցիներին դուրս քշել Գողթանից: Վերադառնալիս Ղյուզալի խանը Մխիթարի և Տեր-Ավետիսի տրամադրություն տակ է դնում 50 Հոգանոց սպառազեն մի ջոկատ:

1728 թվականին մահանում է Դավիթ Բեկը, և պայքարը շարունակվում է Մխիթար սպարապետի գլխավորությամբ, ում Հաջողվում է մի քանի փառահեղ Հաղթանակ տանել թուրքերի նկատմամբ, սակայն 1730 թվականին նա դավադրաբար սպանվում է խնձորեսկցիների կողմից, որոնք, կտրելով սպարապետի գլուխը, տանում են Թավրիզում նստած թուրք փաշային:

1747 թվականին Նադիր շահի¹¹⁶ (1736-1747) ըսպանվելուց հետո Իրանը մոտ 50 տարով ընկրղմվում

¹¹⁵ Սեբաստացի, 1992, էջ 62-63:

¹¹⁶ Նադիր շահ Աֆշարի կամ Նադիր շահ: Հիմնադրել է Աֆշարիների դինաստիան: Իր ռազմական տաղանդի պատճառով որոշ պատմաբաններ նրան որպես Պարսկաստանի Նապոլեոն կամ երկրորդ Ալեքսանդր են կոչել: Նադիր շահը սերում էր

է անիշխանության մեջ: Այս ժամանակաշրջանում Ղարադաղի խաները սկսում են վարել կենտրոնական իշխանությունից անկախ քաղաքականություն թե՛ Հարկահավաքման և թե՛ ուղղմական Հարցերում: Սրանք ժամանակ առ ժամանակ պատերազմական գործողությունների մեջ էին մտնում Հարևան խանությունների հետ: Այսպես՝ 1752 թվականին Ղարադաղի Քազիմ խանը, դաշնակցելով Ղարաբաղի Փանահ խանի, Նախիջևանի Հեյդար խանի, Գանձակի Շահվերդի խանի հետ, որոնք միավորվել էին վրաց Թեյմուրազ և Հերակլ թագավորների հետ, արշավում են Շիրվանի Հաջի-Չելեբի խանի դեմ: Թեյմուրազը դավաճանում և կալանավորում է իր դաշնակից խաներին, սակայն շուտով պարտություն է կրում Շիրվանի խանից, և կալանավորված խաները ազատ են արձակվում¹¹⁷:

Այդ իրադարձություններից մի քանի տասնամյակ հետո էլ մենք տեսնում ենք, որ անիշխանությունն ու միջցեղային ընդհարումները դեռ շարունակվում են. 1789 թվականին Ղարադաղի (ԱՀար

Պարսկաստանի հյուսիսում՝ Խորասանում բնակվող քոչվոր թուրքալեզու աֆշարների ցեղից, որը վայելում էր Սեֆյան դինաստիայի ռազմական օժանդակությունը դեռ նրա հիմնադիր Շահ Իսմայիլ Առաջինի օրերից:

¹¹⁷ Լեո, III, գիրք երկրորդ, էջ 276:

քաղաքի) Մուսթաֆա խանը բազում զորքով արշավում է Գողթան գավառ, կողոպուտի և ավերածության է ենթարկում գավառի բնակավայրերը¹¹⁸:

XVIII դարի վերջին իր հսկողությունը գաղափարակապիտիստներն է հասնում Ղարաբաղի Իբրահիմ-Խալիլ խանը: Իսրայիլյան և հայկական աղբյուրները Իբրահիմ խանը մի որոշ ժամանակով նվաճում է Հարկապոս և Կարճնոսում նաև Ղարադաղի խաներին¹¹⁹: Հարկապոսի Հիշարակովում է, որ Իբրահիմը Հարկապոսից նստում է Հեյդոջերբակում է վերահիշյալ Ահարի Մուսթաֆա խանին¹²⁰:

¹¹⁸ Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ Խանի անդրկովկասյան արշավանքի մասին (կազմ.՝ Տիտանյան Ռ.Տ.), ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1981, էջ 67 (Արքահամ Աստապատցու վկայությունը Աղա Մուհամմադ խանի մասին):

¹¹⁹ Հայկական աղբյուրները 1981, էջ 165 (Աղի Գյոզալ Բեկը Աղա Մուհամմադ Խանի արշավանքի մասին), էջ 177 (Վարդան Օձնեցին Աղա Մուհամմադ Խանի արշավանքի մասին):

¹²⁰ Հայկական աղբյուրները 1981, էջ 165 (Աղի Գյոզալ Բեկը Աղա Մուհամմադ Խանի արշավանքի մասին):



ԹՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՈՎՏԱՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ
ՆԱԲԵՐՈՒՄԻ ՏԱՐԵՐԵՐԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ
ՎԵՐԱԿԸ Բ (1762-1798)

1 782 թվականին վրաց Հերակլ Բ (1762-1798) թագավորը խնդրում է Ռուսաստանի կայսրուհի Եկատերինա II-ին (1762-1796) արևելյան Վրաստանը ընդունել Ռուսաստանի կայսրության հովանավորության ներքո: 1783թ. Հուլիսի 24-ին Գեորգիևսկի ամրոցում ստորագրվում է պայմանագիր, Համաձայն որի Քարթլի-Կախեթի թագավորը հրաժարվում է Իրանի կամ այլ պետության վասալությունից և մտնում է Ռուսաստանի հովանավորության տակ¹²¹: Վրաց թագավորները պետք է Հաստատվեն Ռուսաստանի կողմից և հրաժարվեն ինքնուրույն արտաքին քաղաքականությունից: Այդ ժամանակ Քարթլի-Կախեթի թագավորության

¹²¹ Ռուսաստանի հովանավորության տակ անցնելուց հետո Վրաստանը ենթարկվել է սահմանակից թուրքական խաների, կովկասյան ավարների, Աղա Մոհամմադ շահի՝ մի քանի անգամ կրկնվող ասպատակությունների (հիմական պատճառը հենց նշված հովանավորչության ընդունելն էր), և այդ ընթացքում ոչ մի անգամ Ռուսաստանից ռազմական օգնություն չի ստացել:

կազմի մեջ էին մտնում Լոռին, Փամբակը, Համշահինը և Հայաստանի հյուսիսային մի քանի այլ շրջաններ: Միաժամանակ Ռուսաստանը սկսեց ծավալել Հետախուզական աշխատանքներ. գործակալներ ուղարկեց Հայաբնակ տարբեր մարզեր և գավառներ, այդ թվում՝ նաև Ղարադաղ: 1783 թվականի մայիսի 3-ին գեներալ Պ. Պոսոյովկինը իշխան Գ. Պոսոյովկինին գրել է հետևյալը. «Ղարադաղից ու Ղարաբաղից ինձ մոտ վերադարձած գործակալները պնդում են, որ ոչ միայն Հայերը, այլև տեղացի մյուս բնակիչները չափից ավելի ցանկանում են մեր զորքերի գալուստը»¹²²: Սա Ռուսաստանի կայսրության տարածաշրջանում Հաստատվելու երկրորդ փորձն էր: Առաջին փորձը ավարտվել էր անհաջողությամբ. ռուսական զորքերը ուղղակի սարսափած փախել էին Նադիր շահի առաջխաղացումներից: Գեորգիևսկի պայմանագրից մի քանի օր հետո գեներալ Պ. Ս. Պոսոյովկինը Անդրկովկասի և Ատրպատականի հյուսիսային գավառների խաներին ուղարկում է մի հրովարտակ, որով առաջարկվում էր նրանց Հետևել Վրաստանի օրինակին և մտնել Ռուսաստանի հովանավորության տակ: Հրովարտակներ և

¹²² Գրիգորյան Վ. Ռ., Երևանի խանությունը 18-րդ դարի վերջում (1780-1800թթ.), ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1958, էջ 98:

Թանկարժեք նվերներ ուղարկվեցին նաև Թավրիզի խանին: Ռուսաստանը չէր պատրաստվում զորք ուղարկել տարածաշրջան, այլ ցանկանում էր այն նվաճել դիվանագիտական ճանապարհով: 1783 թվականին Իրանի գաշի Հավակնորդներից մեկը՝ Ալի-Մուրադ շահը (1781-1785), գրավել էր Սպահանը: Ալի-Մուրադ շահը Ռուսաստան է ուղարկում իր ներկայացուցչին և Հայտնում, որ պատրաստ է Ռուսաստանին զիջել Դերբենդը, Բաքուն, Գիլանը, Մազանդարանը, Աստարաբադը, Երևանի, Նախիջևանի, Ղարաբաղի և Նույնիսկ Ղարադաղի խանությունները ուսանների ռազմական օգնության դիմաց¹²³: Ալի-Մուրադ շահի հետ վերջնական Համաձայնության գալու համար 1784 թվականին Սպահան է ուղևորվում մի դեսպանություն, որը պետք է Ալի-Մուրադ շահից պահանջեր նշված տարածքների խաղաղ անջատումը Իրանից: Դեսպանությունը, Հասնելով Խոյ, ստանում է Ալի-Մուրադ շահի մահվան լուրը և ստիպված վերադառնում է Ռուսաստան: Հանդես գալով Հայերի «ազատարարի» և «փրկարարի» դիմակի տակ՝ Ռուսաստանի բուն նպատակն էր եղել ընդարձակել կայսրության սահմանները, նվաճված տարածքները ծառայեցնել իր գաղութատիրական

¹²³ Լեո, III, գիրք երկրորդ, էջ 355:

շահերին, Օսմանյան կայսրության դեմ բացել երկրորդ ճակատ՝ նեղուցների համար մղվող և դեռ մղվելիք պատերազմների ժամանակ:

XVIII դարի վերջում Իրանում տեղի ունեցած գազակալական կոիվները ավարտվում են ծագումով թուրք Աղա Մուհամադ խանի (1794-1797) Հաղթանակով: Այդ մարդուն, որ կրում էր շահի անվան հետ երբեք չլծորդված «Աղա» անունն այն պատճառով, որ նա ներքինի էր, վիճակվել էր Պարսկաստանը նորից միավորելու և պարսկական անիշխանության վերջ դնելու մեծ բախտը¹²⁴: Նա Հանդիսացավ Ղաջարների դինաստիայի հիմնադիրը, որոնց մայրաքաղաքը Թեհրանն էր: Իրեն Հպատակված տիրակալներից նա պատանդներ էր վերցնում: 1790-ականների սկզբներին նա գերեվարում է Ղարադաղի որոշ խաներին և նրանց Հարազատներին¹²⁵: 1795 թվականին Աղա Մուհամադ շահը իրականացնում է մի ավերիչ արշավանք դեպի Անդրկովկաս¹²⁶: Նա, վե-

¹²⁴ Լեո, III, գիրք երկրորդ, էջ 384:

¹²⁵ Գրիգորյան, 1958, էջ 149:

¹²⁶ Հիմնական հարվածներն ուղղվում են Շուշիի, Շամախու և Երևանի վրա: Ավիրվում և սրի են քաշվում արշավանքի ճանապարհին ընկած բոլոր բնակավայրերը: Մեծ կոտորած է իրականացվում Թիֆլիսում, որի ժամանակ սպանվում է նաև մեծ երգահան և բանաստեղծ Սայաթ-Նովան: Շուշին կարողանում է մինչև վերջ դիմադրել և մնում է անառիկ:

րականգնելով Իբրահիմ խանի կողմից ավերված Խուդափերինի կամուրջը¹²⁷, 50000-անոց զորքով Ղարադաղի վրայով անցնում է Արաքսը: Այդ ժամանակաշրջանում Ղարադաղը ուներ բավական ստվար հայ ազգաբնակչություն¹²⁸: Կարելի է պատկերացնել, թե ինչպիսի վնաս է պատճառում գավառի գյուղերին Հիմնականում թուրքական ցեղերից կազմված այս մեծ բանակի տեղաշարժը: Դեռևս առաջին արշավանքի հետևանքներից ուշքի չեկած՝ 1797 թվականին Աղա Մուհամադ շահը իրականացնում է դեպի Անդրկովկաս իր երկրորդ արշավանքը: Այս անգամ կրկին իր ահռելի բանակով հարավից մտնում է Ղարադաղ և Խուդափերինի կամրջով անցնում Արաքսը¹²⁹: Պարսկական զորքերը վերջապես գրավում են Շոշին և հաստատվում այնպեղ. սկսում են ավերել ամբողջ Ղարաբաղը: Սակայն շոտլանդացի 1797 թվականի մայիսի կեսերին, Աղա Մուհամադ շահը Շոշում սպանվում է իր ալգո-թյանը հայ սպասավորի ջեռով, և Իրանական զորքերը շրայում են հերթական հաճախակի անհաջող մասնակցություն:

Քանի որ հայտնի պատճառով Աղա Մուհամադ շահ Ղաջարը սերունդ չուներ, 1797 թվականին

Իրանում իշխանությունն անցնում է վերջինիս եղբոր որդուն՝ Ֆատհ-Ալին (1797-1834): Նա իր որդուն՝ թագաժառանգ Աբաս Միրզային, հենց նույն տարի նշանակում է Ատրպատականի կուսակալ: Ղարադաղի խանությունն ուղղակի կախվածություն ստանում է մտնում Աբաս Միրզայից, որի նստավայրը Թավրիզն էր:

Որպեսզի հասկանանք Ղարադաղի հայ գյուղացի-թյան վիճակը Աբաս Միրզայի՝ բավական երկար ամառ Գրեյթ-թյան ժամանակաշրջանում՝ 1797-1833 թվականներ, ներկայացնել հարկահան-թյան որոշ խորհրդանշան պահանջներ, որոնք կիրառվում էին վերջինիս Գրեյթ-թյան ժամանակ:

Ատրպատականի կուսակալի անմիջական գերակայության ներքո գտնվող խանությունների հայերից գանձվող գլխահարկը կրկնակի ավել էր, քան մուսուլմանական բնակչությունից գանձվողը: 15 տարին լրացած բոլոր անձանցից գանձում էր կատարվում: Կրկնակի ավել էր նաև հայերից գանձվող ծխահարկը: Հարկեր գանձվում էին նաև անասնապահությունից, մեղվաբուծությունից, ջրաղացներից, ջուլահակագործությունից, եկեղեցուց, անշարժ գույքից, առևտրից, այգիներից և այլն¹³⁰:

¹²⁷ Գրիգորյան, 1958, էջ 158:

¹²⁸ ՀԺՊ, IV, էջ 251:

¹²⁹ Լեո, III, գիրք երկրորդ, էջ 402:

¹³⁰ ՀԺՊ, V, էջ 53:

1804 թվականի մայիսի 29-ին ռուսական զորամասերը անցնում են Լոռի-Փամբակի սահմանագիծը, որով սկսվում է ռուս-պարսկական առաջին պատերազմը: Պարսիկների կողմից պատերազմը վարում էր գազաժառանգ Աբաս-Միրզան՝ իր ատրպատականյան 40000-անոց վատ սպառազինված զորամիավորումով: 1805 թվականին Հիրակի (Շորագյալի) թուրք սուլթանը և Ղարաբաղի Իբրահիմ խանը (1763-1806) ընդունում են ռուսների Հպատակությունը: Ռուսական կայսրության տիրապետությանն են անցնում նաև Կապանի, Գորիսի և Սիսիանի շրջանները, քանի որ այդ ժամանակ Հանդիսանում էին Ղարաբաղի խանության մաս և ենթարկվում էին Իբրահիմ խանին: Ռուսաստանին միացված Ղարաբաղում պահպանվեցին և՛ խանական վարչաձևը, և՛ Իբրահիմ խանի տիրապետությունը¹³¹: Իբրահիմ խանի տիրապետության և

¹³¹ Քյուրուկչայի պայմանագրից հետո Ռուսական կայսրության կողմից Իբրահիմ Խալիլ խանը պարզևատրվում է գեներալ-լեյտենանտի, իսկ վերջինիս որդի Մեհտի Ղուլի աղան՝ գեներալ-մայորի կոչումներով: Այս անգամ արդեն Ռուսական կայսրության կազմի մեջ էին շարունակվում արցախցիների և սյունեցիների հալածանքներն ու կեղեքումները ռուսական կառավարությունից հովանավորվող թուրքական իշխող շրջանների կողմից, չնայած այն հանգամանքին, որ նախքան այդ տարածքների միացումը, Ռուսաստանի կայսրությունը հենվում էր հենց հայկական բնակչության օժանդակության և

Աղա Մուհամմադ խանի արշավանքների ժամանակաշրջանում զգալիորեն փոխվել էր Արցախի և Սյունիքի էթնիկ կազմը. ամբողջական Հայկական բնակավայրեր արտագաղթել էին Վրաստան, Համախու, Երևանի, Ղարադաղի խանություններ՝ իրենց տեղը զիջելով քոչվոր թուրքական և քրդական ցեղերին: Ցիցիանովը նպատակ դրեց Հարևան խանություններ, այդ թվում՝ Ղարադաղ, արտագաղթած Հայերին ետ բերել ռուսական կայսրությանը նոր միացած տարածք: Ալեքսանդր կայսրին գրած մի ընդարձակ զեկուցման մեջ նա նշել է, որ մտադիր է Համախու խանից և Ղարադաղից ետ վերցնել վերջին ժամանակներում Ղարաբաղից (Ս.Ջ.՝ այսինքն՝ Ղարաբաղի խանությունից, որի մեջ էր մտնում նաև Սյունիքի զգալի մասը) արտագաղթած Հայ ընտանիքներին¹³²:

աջակցության վրա: Հայ մելիքների իրավունքներն ու տիրույթները չվերականգնվեցին: Եվ ինչպես իրավացիորեն գրում էր Լեոն, «այս էր ահա հայությունն ստանում այն մեծ շարժումից, որ տևել էր գրեթե մի ամբողջ դար, և որ նրա նոր պատմության գլխավոր առանցքն էր կազմում» (Լեո IV, էջ 256): Նման վերաբերմունք հայ ազգը իր հյուսիսային «դաշնակցից» արդեն արժանացել էր XVIII դարի 20-ականներին և դեռ կարժանանա հետագա տարիներին՝ և՛ առաջին համաշխարհային պատերազմի, և՛ բոլշևիկյան ինտերվենցիայի, և՛ Արցախյան պատերազմի ժամանակաշրջաններում:

¹³² Լեո, IV, էջ 252:

Ռուս-պարսկական այս պատերազմի ժամանակ Ղարադաղը ծառայում էր որպես Հենակետ կամ բանակատեղի՝ Ղարաբաղի խանություն ներխուժելու Համար: Մասնավորապես՝ 1805թ. Հունիսին Աբաս Միրզայի առաջապահ 10000-անոց զորամասը Ղարադաղից Խուղափերինի կամրջով ներխուժել է Ղարաբաղ, սակայն Արաքսի ափին, պարտվելով ռուսներից, նահանջել է Ղարադաղի կողմը: Պարսիկները նորից անցնում են Արաքսը և, Ջեբրաիլի մոտ տեղի ունեցած ընդհարումից, այս անգամ ստիպում են ռուսներին նահանջել Հուլի¹³³: Այդ ժամանակ պարսիկների Հիմնական զորքը Աբաս Միրզայի գլխավորությամբ տեղակայված էր Ղարադաղի Ահար բնակավայրում¹³⁴:

1810 թվականի ամռանը ռուսները գրավում են Մեղրին, ապա, գրոհելով Աբաս Միրզայի ճամբարը, նրան Հարկադրում են Ղարաբաղից կրկին նահանջել Ղարադաղ: 1811 թվականին ռուսական կողմի առաջարկությամբ Սևասար-Ղարադաղում գտնվող Ասլանդուզի (Արասբարան)¹³⁵ բերդում սկսում են Հաշտության բանակցությունները: Պարսիկները,

¹³³ Լեո, IV, էջ 262:

¹³⁴ Լեո, IV, էջ 264 (Փիր-Ղուլի խանի Իբրահիմ խանին ուղարկված նամակից):

¹³⁵ Գտնվում է Ջրականի (Ջեբրաիլի) դիմաց՝ Արաքսի աջ ափին:

Հաշվի առնելով ռուսների ծանր վիճակը կապված նապոլեոնյան արշավանքի Հետ, անդրկովկասյան իրենց նախկին տիրույթները վերադարձնելու պայման էն դնում: Ռուսները ստիպված են լինում անցնել վճռական գործողությունների և 1812 թվականին անցնում են Արաքսը: Ասլանդուզի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Աբաս Միրզայի 30000-անոց զորքը պարտություն է կրում: Ի վերջո 1813 թվականի Հոկտեմբերին Ղարաբաղի Գյուլիստան բերդում կնքվում է Հաշտության պայմանագիր, որով ավարտվում է ռուս-պարսկական առաջին պատերազմը: Այդ պայմանագրով Պարսկաստանը ճանաչում է Դաղստանի, Վրաստանի, ինչպես նաև Գյանջայի, Ղարաբաղի, Հաքիի, Հիրվանի, Դերբենդի, Ղուբայի, Բաքվի, Թալիշի խանությունների, Լոռու, Փամբակի, Համշաղիսի, Ջանգեզուրի և Հորադյալի դավառների միացումը Ռուսական կայսրությանը: Ավելացնենք նաև, որ Ողջի գետի աջափնյա տարածքները մինչև Արաքս գետ (ներառյալ Մեղրու տարածաշրջանը), փաստացի մնում են Պարսկաստանի տիրապետման տակ: Այդ տարածքը Պարսկաստանի իշխանության կողմից Հանձնվում է Ղարադաղի Աբուլ-Ֆետ խանի իրավասությանը¹³⁶:

¹³⁶ Լիսիցյան Ս., Ջանգեզուրի հայերը, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան,

1813 թվականից Ղարադաղը վերաժվում է Ռոսսիայի կայսրությանը և Երևանի նահանգի մասնակցությանը: Երբևիցե խանը պարսկական կայսրությանը հանձնում էր ռոսսական տիրույթները և խանի անսպասելի թողնելու դեպքում Ղարադաղը վերադառնում էր Ռոսսիային: Երբևիցե խանը 1813 թվականին վերադառնում էր Ռոսսիային, և Ղարադաղը 1813 թվականին վերադառնում էր Ռոսսիային: Երբևիցե խանը 1813 թվականին վերադառնում էր Ռոսսիային, և Ղարադաղը 1813 թվականին վերադառնում էր Ռոսսիային:¹³⁷

Առաջին պատերազմից հետո ստեղծված իրավիճակը չէր բավարարում ո՛չ Իրանին, ո՛չ էլ Ռոսսիային: Պարսիկները ցանկանում էին վերականգնել անդրկովկասյան իրենց տիրույթները, իսկ ռուսներն էլ նպատակ ունեին ողջ ճակատով շարժվել ընդհուպ մինչև Արաքս գետը՝ գրավելով Երևանի և Նախիջևանի խանությունները: 1826 թվականին սկսվում է ռուս-պարսկական երկրորդ պատերազմը: Այն էական ազդեցություն է ունենում Ղարադաղի Հայերի մի զգալի մասի ճակատագրերի վրա: Ղարադաղը կրկին վերածվում է ռազմական ճամբարի:

Հուլիսի 17-ին գահաժառանգ Աբաս Միրզան Մեհտի Ղուլի խանի ուղեկցությամբ (արդեն 4 տարի էր, ինչ նա ապաստանել էր Պարսկաստանում)

1969, էջ 12:

¹³⁷ Լիսիցյան, 1969, էջ 38:

60000-անոց բանակով Ղարադաղից Խուզափերինի կամրջով ներխուժում է Ղարաբաղ¹³⁸: Խուզափերինի կամրջով անցնող ճանապարհը ուղղակի տանում էր Արցախի սիրտը: Դեպի Կովկաս իրականացվող պարսկական գրեթե բոլոր արշավանքները անցնում էին այս կամրջով: Սեպտեմբեր ամսին Համբորում և Գանձակում (այն արդեն Երևանի մարզում էր կոչվում) դեներալ Վ. Մադաթովի զորամիավորումներից կրելով ծանր պարտություններ՝ պարսկական այդ հսկայական զորքը նահանջում է Ղարադաղ՝ իր հետ տանելով նաև գերեվարված շատ գյուղերի բնակիչների¹³⁹:

Պատերազմի ընթացքում Ղարաբաղի և Սյունիքի գյուղերի Համար իսկական պատուհաս էին դարձել շահսևան կոչվող քոչվոր թուրքական ցեղերը: Սրանք Ղարադաղից պարբերաբար անցնում էին Արաքսը և ասպատակում ռուսահպատակ Հայ-

¹³⁸ Աբաս Միրզան հարվածը ուղղում է Շուշիի և Գանձակի վրա: Միաժամանակ Երևանի Հուսեյն-Ղուլի խանը ներխուժում է Շիրակ և Փամբակ: Վեց ամսից ավել հերոսաբար պաշտպանվեց Շուշին: Ռուսական փոքրաթիվ կայազորին օգնում էին հայկական աշխարհագրայինները: Շուշին, իր վրա կենտրոնացնելով Աբաս Միրզայի հիմնական ուժերը, Անդրկովկասի շատ բնակավայրեր, այդ թվում՝ Թիֆլիսը, փրկում է պարսիկների ներխուժումից, ինչը վճռորոշ է դառնում պատերազմի արդյունքների հարցում:

¹³⁹ Լեո, IV, էջ 415:

կական գյուղերը: Սրանց պատժելու գործը Կովկասի կառավարիչ գեներալ Ա. Երմոլովը¹⁴⁰ Հանձնարարում է Ղարաբաղի կառավարչապետ Վ. Մադաթովին¹⁴¹: Վերջինս 1826 թվականին զորքով արշավում է Ղարադաղ: Սկսելով այդ արշավանքը 1826 թվականի վերջին՝ ձմեռվա ցրտերի մեջ Մադաթովը արագ և մեծ հաջողությամբ կատարում է Երմոլովի Հանձնարարությունը. հալածում է շահսեաններին, քայքայում նրանց թափառական տնտեսությունը՝ մեծ քանակությամբ անասուն, ոչխար, ուղտեր խլելով: Ղարադաղի և Հարակից գավառների խաները Հանկարծակիի եկած փախչում են կամ առանց որևէ դիմադրության անձնատուր լինում: Սակայն Մադաթովը երկար չի մնում Ղարադաղում և վերադառնում է Թիֆլիս¹⁴²:

¹⁴⁰ Երմոլով Ալեքսեյ Պետրովիչ (1777-1861): Ռուսական և պետական գործիչ, 1812 թվականի Հայրենական պատերազմում կարևոր դեր է ունեցել, մասնակցել է Բորոդինոյի ճակատամարտին: 1816 թվականից եղել է Կովկասյան կորպուսի հրամանատար, Կովկասի գլխավոր զորահրամանատար և կառավարիչ: Վերացրեց Ղարաբաղի, Շաքիի և Շիրվանի խանությունները՝ որպես վարչական առանձին միավորներ:

¹⁴¹ Վալերիան Մադաթով Ռոստոմ Գրիգորի Մադաթյան (1782թ. գյուղ Ավետարանոց 1829թ. Շումլա, Բուլղարիա). Ռուսական բանակի հայազգի զորավար, գեներալ-լեյտենանտ, 1817 թվականից նշանակվել է Ղարաբաղի, Շիրվանի և Շաքիի խանությունների օկրուգային պետ:

¹⁴² Լեո, IV, էջ 416:

Նախիջևանը և Երևանը գրավելուց հետո՝ 1827 թվականի հոկտեմբերի 13-ին, ռուսական զորքը, գրեթե առանց լուրջ դիմադրություն հանդիպելու, գրավում է Թավրիզը: 1828 թվականի Հունվարին կարճ ժամանակամիջոցում ընկնում են Մարաղան, Ուրմիան, Խոյը, Սալմաստը և Հունվարի 25-ին՝ Արդաբեյը: Այս ամենից հետո ռուսական զորքը ուղղվում է դեպի Թեհրան: Երկրի ներսում Ղաջարների դինաստիայի դեմ բարձրանում է դժգոհության ալիք: Հայտնվելով անելանելի վիճակի մեջ՝ Ֆատհ-Ալի շահը պատրաստակամություն է հայտնում ընդունելու ռուսների առաջարկած պայմանները¹⁴³: Բանակցությունների իրականացման համար ընտրվում է Թավրիզից Թեհրան տանող ճանապարհի վրա գտնվող Թուրքմենչայ գյուղը:

Արդյունքում 1828 թվականի փետրվարի 10-ին Թուրքմենչայ փոքր գյուղում Ռուսաստանի կայսրության և Պարսկաստանի միջև կնքվում է երկկողմանի Հաշտության պայմանագիր: Պայմանագրով ռուս-պարսկական սահմանը հասցվում է մինչև Արաքս գետը: Պարսկաստանը պաշտոնապես ճանաչում է Երևանի ու Նախիջևանի խանությունների, Օրդուբադի գավառի (ներառյալ Ողջի գետի աջակողմ-

¹⁴³ ՀԺՊ, V, էջ 168-169:

յան ափի և Արաքսի միջև ընկած տարածքը) միացումը Ռուսաստանին, պարտավորվում է վճարել ռազմատուգանք: Պարսկական կառավարությունը պարտավորվում է նաև չխոչընդոտել իր Հպատակության տակ գտնվող քրիստոնյաներին, որոնք կցանկանային գաղթել Ռուսական կայսրության սահմանները:

Թուրքմենշայի պայմանագրով գաղթի Համար սահմանվել է մեկ տարի ժամանակ: Գաղթողներին իրավունք էր տրվում առանց մաքսի և որևէ այլ Հարկ վճարելու տանել իրենց շարժական գույքը, իսկ անշարժ գույքը օտարելու Համար տրվեց Հինգ տարի ժամանակ¹⁴⁴:

Նոր գրավված արևելյան Հայաստանի բնակչությունը ավելացնելու և Արաքսի սահմանագիծը Հուսալի էթնիկական տարրով բնակեցնելու խնդիրը մինչև Թուրքմենշայի պայմանագրի կնքումը զբաղեցրել է ցարական կառավարությանը: Պասկևիչը ծրագրում էր այդ խնդիրը լուծել հյուսիսային Կովկասից այնտեղ շուրջ 80000 կազակներ վերաբնակեցնելու միջոցով: Սակայն շուտով պարզ դարձավ, որ Ռուսաստանից կազակների նման զանգվածային գաղթը կպահանջեր ինչպես կազմակերպչական երկարատև ու մանրակրկիտ նախապատրաստութ-

յուններ, այնպես էլ դրամական ու նյութական խոշոր միջոցների ներդրում, որպիսին կառավարությունը ի վիճակի չէր տրամադրել: Ուստի այդ ծրագիրը թողնում են ապագային՝ օրվա առաջնահերթ Հարց Համարելով Պարսկաստանից Հայերի ներգաղթը¹⁴⁵: Գաղթի այս որոշումը առաջին Հերթին բխում էր ցարական Ռուսաստանի ռազմաքաղաքական և գաղութային շահերից: Պայմանագրի կնքումից անմիջապես Հետո սկսվում են նախապատրաստությունները: Ներգաղթողներին ընդունելու և տեղավորելու Համար ստեղծվում է կոմիտե: Գաղթականները Ռուսական կայսրության սահմանին Հասնելուն պես անցնում էին ներգաղթի կոմիտեի իրավասության տակ: Հաշվի առնելով եկվորների զբաղմունքը՝ կոմիտեն պարտավոր էր ներգաղթողներին բնակեցնել Համապատասխան շրջաններում, նախ՝ Երևանի գավառում, որից Հետո նաև՝ Նախիջևանի, Օրդուրադի, Մեղրու և Կապանի¹⁴⁶ շրջաններում պետական

¹⁴⁵ Լեո, IV, էջ 427:

¹⁴⁶ Կապանի տարածաշրջանում գաղթականների կողմից հիմնվում կամ ամբողջությամբ վերաբնակեցվում են Եղվարդ (առավելապես Վինայից, նաև Սևահողից), Մոդես (առավելապես Քարազլիից, նաև Վինայից), Սրաշեն, Ըռոտմանց, Ներքին Հանդ (Քարազլիից և Վինայից) գյուղերը: Բացի այդ շատ ընտանիքներ տեղաբաշխվում են այլ գյուղերում:

¹⁴⁴ ՀժՊ, V, էջ 171:

Հողերի վրա¹⁴⁷: Պարսկաստանից գաղթի կազմակերպումը Հանձնարարվում է գնդապետ Լազար Լազարևին (Լազարյան), ով Թավրիզի գրավումից Հետո նշանակվել էր քաղաքի պարետ: Հրահանգված էր գաղթը կազմակերպել սոսկ կամավոր սկզբունքով: Առաջին Հերթին գաղթեցվելու էին այն շրջաններից, որտեղից ուռևական զորքերը շուտ էին Հեռանալու: Գաղթողներին Հավաստիացնում էին, որ նրանք կստանան բավարար չափով Հող, վեց տարով կազատվեն բոլոր Հարկերից և երեք տարով՝ բոլոր տեսակի պարհակներից: Ատրպատականի Հայության գաղթի կազմակերպմանը նշանակալից մասնակցություն ունեցավ նաև Պարսկաստանում Ռուսաստանի դեսպան Ա. Ս. Գրիբոեդովը: Ներգաղթի նախապատրաստման և իրագործման մեջ իր խոշոր ներդրումը ունեցավ Հայկական մարզի վարչության անդամ Ներսես Աշտարակեցին¹⁴⁸: Նա Հատուկ պատ-

¹⁴⁷ ՀԺՊ, V, էջ 172:

¹⁴⁸ Ներսես Ե Աշտարակեցի, կաթողիկոս (1843-1857): Գործուն մասնակցություն է ունեցել 1804-1813 թվականների ռուս-պարսկական և 1806-1812 թվականների ռուս-թուրքական պատերազմներին՝ նպաստելով Մայր աթոռի հետ ցարական կառավարության քաղաքական կապերի ամրապնդմանը: 1814 թվականին Ներսես արքեպիսկոպոսը նշանակվում է Վրաստանի հայության հոգևոր առաջնորդ և տեղափոխվում Թիֆլիս: Նրա ջանքերով 1824 թվականին այստեղ բացվում է

վիրակների միջոցով բացատրական լայն գործունեություն ծավալեց Ատրպատականի Հայերի մեջ՝ Հորդորելով նրանց ներգաղթել արևելյան Հայաստան: Իսկ երբ ներգաղթը սկսվեց, նա մեծ ջանքեր գործադրեց Հայկական մարզում գաղթականների ընդունման, բնակեցման Համար¹⁴⁹: Պարսկաստանի պետական մարմինները զանազան խոչընդոտներ էին ստեղծում գաղթը խափանելու Համար, որպեսզի չչրկվեն Հազարավոր աշխատավոր և Հարկատու Հպատակներից: Պարսիկները նույնիսկ մեղադրում էին Լ. Լազարևին, գաղթի կամավորության սկզբունքը խախտելու և բռնի միջոցների դիմելու մեջ: Գաղթականների առաջին քարավանները անցնում են Արաքսը արդեն 1828 թվականի մարտ ամսին: Դրանք Հիմնականում Թավրիզի Հայերն էին: Այնուհետև գաղթին միանում են Ատրպատականի գավառները, այդ թվում՝ Ղարադաղը: Պասկեիչը կարգադրում է, որ շարժերը միաՀամուտ չլինեն, այլ կատարվեն մասմաս, որ յուրաքանչյուր գյուղ մի առանձին խումբ կազմի՝ չբաժանվելով մանր մասերի կամ չխառնվելով մեծ զանգվածների Հետ¹⁵⁰: Արաքսի այս կողմում

հայկական դպրոց, որը հետագայում կոչվում է Ներսիայան: Թաղված է Էջմիածնի Մայր տաճարի մոտ:

¹⁴⁹ ՀԺՊ, V, էջ 173:

¹⁵⁰ Լեռ, IV, էջ 430:

Հիմնականում Հենց այդ խմբերով էլ բնակեցվում էին՝ Համագյուղացիներին առանց իրարից բաժանելով: Գաղթը շարունակվեց 1829-30թթ. ողջ ընթացքում: Առանձին դեպքերում 1932 թվականին դեռ շարունակվում էին տեղաշարժերը¹⁵¹:

1828-1829թթ. Ատրպատականում ապրող 65000 Հայերից արևելյան Հայաստան ներգաղթեցին 8249 ընտանիք՝ մոտ 45000 մարդ: Նրանք մեծ մասամբ բնակեցվեցին Երևան, Նախիջևան, Օրդուբադ քաղաքներում, Զանգիբասարի, Կարբիբասարի, Վեդիբասարի, Սարդարապատի, Կրիսբուլաղի, Ղարաչիչակի, Ապարանի, Սուրմալուի, ինչպես նաև Նախիջևանի, Օրդուբադի մահալներում, Վայոց ձորում, Սյունիքում, Ղարաբաղում, Գանձակում: Ղարադաղի բնակավայրերից գաղթածների թվի վերաբերյալ տեղեկություններ չեն պահպանվել: Սակայն Հիմք ընդունելով Ատրպատականից ընդհանուր գաղթածների մասնաբաժինը՝ կարելի է ենթադրել, որ գաղթել է ղարադաղահայություն կեսից ավելին:

Ամենոր գաղթականները մեծ դժվարություններ էին կրում: Հալարավոր ընթանիվներ օրերով մնացին քաղաքներին: Նախապես Հոգ շէր ցարվել ապրել ու ցար-

¹⁵¹ Саркисян Г. Г., Население Восточной Армении в 19-начале 20вв., Ереван, 2002, с. 60.

բական պայմաններ արեղ թել ու և նվազագույն պարենավորում ապահովել ու Համար: Հալարավոր մարդիկ կոպորվեցին¹⁵²: Միայն 1829-30թթ. մոլեգնող ժամապահարից մոտ 10000 գաղթական մահացավ¹⁵³: Իսկ ինչպես ցույց տվեց Հեյրաբա ժամանակաշրջանը, ուսուցանող շրջանների Հարկային կեղեվումներն ու գյուղացիներն իրավունքներն արձանագրումը ոչնչով չէր պիտի պարահանան արհարապետության ժամանակվա Հայաստանի թիվ: Պասկեիչը պարահանալ գաղթականներն ունեց, որը դեռ նույնիսկ չէր պեղավորվել Արարապյան երկրում, իսկ է պահանջում և, Հավանելով մոտ 2000 Հոգի, ուղարկում է պարերսուվել ու Օսմանյան քանակի դեմ¹⁵⁴:

Ցարական կառավարությունը սիրաշահում էր մուսուլմանական իշխող խանական, բեկական խավին: Հասկանալու Համար, թե ինչ նշանակություն ուներ Հայ գյուղացին ուս չինովսիկի Համար, բերելը մի օրինակ. Կարճևան գյուղը Պասկեիչի կողմից որպես նվեր տրվում է Ղարադաղի նախկին Մամադ Ղուլի խանին: Կարճևանցիների բողոքներում ասվում էր Հետևյալը. «...Այժմ Հրամանավ Պասկեիչ արդարին Մամադ-Աուլի խան Ղարադաղցի պատն ու Հինգ պատն խաններն է անում, որ է Աարճևան. խնդրելով Հասարակոթյանք ղերահասու լինել»

¹⁵² Լեո, IV, էջ 435:

¹⁵³ Саркисян, 2002, с. 69-70:

¹⁵⁴ Լեո, IV, էջ 435:

որ այս փոփոք-ը ժամանակին ինչպե՞ս ձեռն-ընտան կամ
չո՛ւղո՛ւմ է արել, մեր Գյողն չի ժախճել կամ մենչ
չենչ ժախճել նորա զրե՛ն»։ Ապա նշվում է, որ խանը,
90 ձիավորով գալով գյուղ և բազմապիսի նվերներ ու
Հարկեր Հավաքելով, ավերել է իրենց գյուղը¹⁵⁵։

Ծանր էր Ղարաբաղի դաշտավայրային մաս
ներգաղթած պարսկահայերի վիճակը։ Թուրք բեկերը
նրանց թույլ չէին տալիս բարձրանալու լեռները՝ ստի-
պելով մնալ ամառը տոթակեզ և վատառողջ տա-
փաստաններում, ուր նրանք մահանում էին, այնպես,
որ երեք ամսվա ընթացքում ջերմախտը սպանել էր
1012 գաղթական։ Թուրքերը թալանում էին նրանց
ապրանքն ու ունեցվածքը։ Գանգատներն ու բողոք-
ները մնում են անհետևանք։ Տեղական վարչությունը
խեթ աչքով էր նայում Հայերին, Հալածում էր նրանց և
նեղություններ պատճառում¹⁵⁶։



¹⁵⁵ ՀԺՊ, V, էջ 229:

¹⁵⁶ Լեռ, IV, էջ 522:

Մաս 2.....



ԵՎԼԱՍԿ-ՂԱՐԱԿԱՆ

XIX-XX ԴԱՐԵՐՈՒՄ



«...Եփսոս է Ղարաբաղը։ Եպագայո՛ւմ
մենչ այնտեղ ապրելո՛ւմ ենչ երջանիկ օրեր՝
ապահով կող ոպրովելո՛ւց և թալանովելո՛ւց։
Եվ ինչպե՛ս երե՛սմ է՝ այնչան էլ Հեո՛ւմ չէ
Գալիչ օրերի ցանկալի երաշխիչը։ Մնո՛ւմ է
ապասել, այսչան Համբերելո՛ւց Հեո՛ւմ չիչ էլ
Համբերենչ, մինչև որ Հանգիստ և ապահով
կյանչի արշալո՛յսը կԺագի...»։

«Լեղաղան», 1912, մարտ, թիվ 2



ԹՈՒՐԲՄԵՆՉԱՅԻ ՊԼՅՈՒՆԵԿԻՑ

ՀԵՏՈՒ ԸՆԿԼՕ ԺԱՄԵՆԿԱՆՈՐԾԱՆՈՒՄ

Թուրքմենչայի պայմանագրով իրականացված գաղթից շատ չանցած՝ 1840 թվականին, Ղարադաղի բնակչության մի մասը կրկին գաղթել է: Սրա մասին պատմության մեջ շատ քիչ տեղեկություններ են պահպանվել: Ըստ Մ. Բարխուդարյանի՝ Արցախի Նոր Առաքյուլ, Ջիլան, Շաղախ, Բինեաթլու, Քարագլուխ, Ղուշչիլար, Նորաշեն, Տագ (Տյաք) և Հադրութավան (Հադրութ) գյուղերի բնակիչները եկել են Ղարադաղից 1840 թվականին¹: Գաղթի պատճառը Պարսկաստանում, մասնավորապես՝ Ղարադաղում տիրող անիշխանությունն էր, թուրք խանների և բեկերի ոտնձգություններն ու Հարձակումները Հայկական գյուղերի և Հայ բնակչության վրա: Գաղթել են Հիմնականում դեպի Արցախ: Սակայն նոր Հողի վրա ղարադաղցիները չընտելացան:

¹ Հովսեփյան 2009, հատ. I, էջ 150, ծան. 43, Բարխուդարյանց Մ., Արցախ, «Արօր», Բագու, 1895, էջ 63-68:

Պարսկաստանում իրավիճակը մի քիչ փոխվելուց Հետո՝ մոտ 20 տարի անց, շատերը ետ վերադարձան իրենց ավերակ գյուղերը՝ վերաշինելու կամ նորերը կառուցելու: 1840 թվականի գաղթի մասին հիշողություններ էին պահպանում Դղմարի, Մինջվանի և Քեյվան² գավառակների տարեցները³:

Գաղթից Հետո Պարսկաստանում մնացած Հայերի թվի մասին ունենք իրարից զգալի տարբերվող տեղեկություններ: 1851 թվականի «Մասյաց աղախիում» հրատարակված վիճակագրական տվյալներով Պարսկաստանում ապրում էր մոտ 40000 Հայ, որից 20000-ը Թավրիզում և նրա շրջակա գավառներում, այդ թվում Ղարադաղում⁴: Ըստ բեկիացի իրավագետ Ռոլեն Ժեքմենի տվյալների՝ 1877-1887 թվականներին Պարսկաստանում ապրում էր 200000-225000 Հայ⁵: Ըստ Նազար Գորոյենցի՝ Հայերի թիվը Իրանում 1870-1917 թվական-

² Ղարադաղի արևելյան գավառակն է, որտեղ գտնվում են Խուրափերինի տարածքի նշանավոր կամուրջները:

³ Հովսեփյան 2009, հատ. I, էջ 150-152:

⁴ ՀԺՊ V, էջ 516:

⁵ ՀԺՊ VI, էջ 20:

ներին տատանվել է 150000-200000-ի միջև⁶, որոնց Հիմնական մասը բնակվում էր Ատրպատականում: Վերջին երկու աղբյուրների տված տեղեկությունները Հիմնավորված չեն մարդահամարների կամ որևէ պաշտոնական վիճակագրության տվյալներով և Հիմնականում չափազանցացված են: Ղարադաղից Հայերի գաղթ է եղել նաև 1871 թվականին⁷:

XIX դարի առաջին քառորդում Ղարադաղի Հայ բնակչության Հիմնական մասը գտնվում էր ճորտական վիճակում: Բացի պետական Հարկերից, Հայ գյուղացիները պարտավոր էին վճարել նաև խանական, մելիքական Հարկերը, ինչպես նաև աշխատել վերջիններիս սնտեսություն մեջ:

Ղարադաղի Հայերն էլ ժամանակին ունեցել են իրենց մելիքները: Նախքան Թուրքմենշայի պայմանագրով իրականացված գաղթը Հայ մելիքներին պատկանող գյուղերը ավելի շատ էին, քան Հետա-

⁶ ՀՏՊ VI, էջ 711, Գորոյեանց Ն. Յ., Պարսկաստանի հայերը (Պատմական, տեղագրական եւ վիճակագրական համառոտ տեղեկութիւններ Պարսկաստանի հայերի մասին՝ ամենահին ժամանակներէն մինչեւ 1898թ.), «Մոդերն», Թեհրան, 1968:

⁷ «Մշակ», 1886, 15 մայիսի, թիվ 53:

դա տարիներին: Նրանցից Հատկապես Հայտնի են Գանձառիի մելիք Ազարիայի, նրա որդի մելիք Չարարիայի անունները⁸: Հիշատակվել են նաև մելիք Կարապետը և մելիք Խաչատուրը Դովարի Սարգուզյուղում, մելիք Օհանջանը Օղայում, մելիք Սարգիսը Գիրմնավում, մելիք Իսախանը և մելիք Ջհանը Ղասումաշենում, Հարություն բեկը Օրավ-Քլալայում, Աբրահամ բեկը Նորաշենում, մելիք Ղարագյոզը Մեքիդիում, Մելիք-Մուշկամբարյանները Մինջվանում, Մելիք-Ազարյանները Խանազանում և ուրիշներ⁹: Ղարադաղի մելիքները ժա-

⁸ «Մշակ», 1872, թիվ 31:

⁹ Ըստ գիտնական, պատմաբան, քաղաքագետ Հովան Սիմոնյանի, ով իրականացնում է իշխանական, մելիքական տների տոհմաբանական, ծագումնաբանական և ազգակցական կապերի հետազոտություններ և ուսումնասիրություններ, դարադաղյան ծագում ունեն հետևյալ մելիքական գերդաստանները՝ Արցախի Վերին Սգնեքի ու Առաքյուլի Մելիք-Ալավերդյանները, Մելիք-Բաղդասարյանները, Մելիք-Խաչատրյանները, Մելիք-Պետրոսյանները, որոնք հանդիսանում են Մելիք-Ղասումյանների կրտսեր ճյուղը, ինչը ապացուցվել է ԴՆԹ թեստով, Մելիք-Սարգսյաններ, Մելիք-Իսրայելյաններ (Արցախի համանուն տոհմի հետ կապ չունեն), Մելիք-Մերքումյաններ, Մելիք-Ստեփանյաններ, որոնք հանդիսանում են Մելիք-Մուշկամբարյանների

մանակին մեծ դեր են խաղացել Հայերի ինքնապաշտպանութիւնի գործում եւ մղելով քուրդ բեկերի և թուրք խաների ավազակային Հարձակումները¹⁰: Ղարադաղի Հայ մելիքները XIX դարի վերջում արդէն Հիմնականում կորցրել էին իրենց Հողատիրութիւն իրավունքը և բնակվում էին որպէս Համայնքի սովորական անդամներ ու Հողից օգտվում էին մնացյալ գյուղացիների Հետ Հավասար իրավունքներով Հաճախ ստանձնելով քյոխվայի կամ տանուտիրոջ պարտականութիւնները: Մելիք-Ազարյանները Հսում բավականին Հողեր ու գյուղեր են ունեցել Ղարաբաղում և Ղարադաղի Արաքսպար Հովտում: Կորցնելով սեփականատիրական իրավունքը՝ նրանց սերունդները բնակութիւն են

կրտսեր ճյուղերը, և որոնք ծագումնաբանական կապ ունեն Բագրատունիների իշխանական տոհմի հետ՝ ինչը ապացուցվել է ԴՆԹ թեստով, Մելիք-Օհանջանյաններ, որոնք հանդիսանում են Մելիք-Ղարաբաղյանների կրտսեր ճյուղը, ինչը ապացուցվել է ԴՆԹ թեստով, Մելիք-Աղաջանյաններ, Մելիք-Միրզայանցներ, Մելիք-Ղազարյաններ, որոնք ծագումնաբանական առումով կապված են Մելիք-Ազարյանցների հետ: (Հովան Սիմոնյանի հետ բանավոր զրուցից, 23.06.2021, ք. Երևան):

¹⁰ Հովսէփյան 2009, հատ. I, էջ 40:

Հաստատել Խանագաւ գյուղում: Հայաբնակ գյուղերի մեծ մասը XIX դարում խանապատկան էին, չնայած դրան՝ բոլորը կառավարվում էին Հայ տանուտերերի միջոցով¹¹:

XIX դարում պարսկահայերի վիճակը Հասկանալու Համար ներկայացնենք Ատրպատականի թեմի առաջնորդ Գևորգ Եպիսկոպոսի 1855 թվականի Հուլիսի 27-ին Նասրեդդին շահ Ղաջարին¹² Նասրէդդին, 1848-1896) գրած խնդրագիրը: Նա խնդրել է իրավունք չգրաւ Հաւաքաւորն Հայերն իրենց Հարաւարնէրն Գոյնը Գրաւելու, արգելել Հայերն Հաւաքաւորն-Թյոնը Պարսկաստանում, արգելել կաւ-վաշարէրն Հայ Գյոյնացիներն պահանջելու խոյր և ցախ, աահմանվաշից ավելի մախ շվերցնել Ռո-աստրան աշխարհու- Գնացող Հայ մշակներն, արգելել աղջիկ վախցնելը և վախցնողներն պարտել, ասնջել Պարստաւորն խանէրն և բեկերն անիրավո-թյոնները, Գնել Թավրիշի Հայկական դպրոցին 250 ըո-ման նպաստով, պարսկական Գյոյներում ցրվաշ Հայերն Հաւաքել մե պեղ, անրով վարել Հայաստան Հայերն Ըէր, Թավրիշի ո- ԹեՀրանի Հայերն աւարել ամեն

¹¹ «Նոր Դար», 1892, թիվ 6:

¹² Նասրեդդին Շահ Ղաջարը Ֆատի Ալի շահի թոռն է, իր տիրապետության երկարությամբ Իրանի ողջ պատմության մեջ երրորդն է:

դեռևս ասորիների հարկերից, արգելել անշավակ հայ մարդկանց գո-յժի գրավումը, ընդ-յլ ցալ հայ եկեղեցիների վանճազարո-թյո-նը, օրինակ անասցնել հայ եկեղեցիներին հալված խնային իրավումներ¹³ : Խնդրագրի բովանդակությունը բավական տեղեկություն է տալիս Ատրպատականի Հայությունից դրույթյան մասին :

Աստիճակով հավաստիությունները ցարաթում էր սրբապետ խանի որ իսլամ դավանողները սրբանում էին հարկային, գո-յժային, ժառանգական արքունո-թյո-նները կամ առավել ո-թյո-ններ (ինչպես Օսմանյան կայսրո-թյո-նում) : Եշխասյանի բնակչո-թյո-նն ո- երկրասարքո-թյո-նը մեկնում էր Ռո-սահան կայսրո-թյո-ն, Հիմնականում Բա-ժո, Շո-շե, Թի-ֆլիս արքագնա աշխատանքի : Աստիճակով հայտնաբերված հարկերն էին մալիկե-թը և ղեղեղն, որոնք գանջում էին սահմանա-ժից ցարանապարհի ավել շահով :

Ատրպատականի թեմի առաջնորդը առանձին նշել է Ղարադաղի խաների և բեկերի սանձարձակությունների և անիրավությունների մասին : Նասրեդդին շահն ինչ-որ շահով ընդհանուր էր Գեորգե-պետի ուսուցիչ ինտրանսիտի և հարո-կ հրավարակ է շնորհել Երրպարականի թեմի առաջնորդին :

¹³ ՀԺՊ V, էջ 518:

1870-ական թվականների Ղարադաղի Հայաբնակ գյուղերի, դրանց բնակչության մոտավոր թվի, սոցիալական վիճակի և եկեղեցու մասին արժեքավոր տեղեկություն է մեզ հաղորդում «Մշակի» անանուն թափանցողներից մեկը¹⁴, ըստ որի՝ 1872 թվականի դրությամբ Ղարադաղում կա մոտ 28 Հայաբնակ գյուղ, որոնցում միջին հաշվով մոտ 30 ընտանիք է ապրում : «[ՇԼԿ]»-ը գրում է^{1872, թիվ 31}

«Այդ 28 գյուղում դուք չէք գտնի ոչ մի վարժարան : Այդ մասին մեղադրելի է ոչ թե տգետ ժողովուրդը, այլ Ատրպատականի հոգևոր կառավարությունը՝ թավրիզի առաջնորդարանը : Նա միայն Ղարադաղի Հայությունը հիշում է հոգևոր պատուը հավաքելու օրերին : Խղճալի գյուղացին կրոնական քերականություններ էր վճարում իր հոգևոր պարտքը : Բայց եթե չքավորության պատճառով չկարողանա իր պարտքը ցուցանել, Առաջնորդի նվիրակը կստանա նրանից բռնությամբ՝ նրա տան շորուխալասը ծախել տալով, որովհետև նա ուներ իր հետ թավրիզի բարձր կառավարությունից հրաման տե-

¹⁴ «Մշակ», 1872, թիվ 31:

ղային գավառապետի վրա, որ այդպիսի Հանգամանքներում օգնի նվիրակին: Խղճակի ժողովուրդ, նա իր չքավորության մեջ ստիպված է տերության տուրքը վճարել ձեռ ուտելով... նա ստիպված է իր պարտադիր հոգևոր նվերը վճարել Առաջնորդին դարձյալ ձեռ ուտելով...: Երեսուն տարի առաջ, երբ Ղարադաղը Տաթևի վանքի վիճակն էր, այս գավառից հայ երեխաները տարվում էին նույն վանք ուսման համար, ուր պատրաստվում էին գոնե փոքրիշատե գրագետ քահանաներ: Բայց քանի Ղարադաղը կորցրեց Տաթևը, այդ բախտից նա զրկվեց: Այժմ ամեն մի ածխավաճառ, եթե ցանկութիւն ունէր քահանայ դառնալու, կարող է իւր բեռնակիր էշերը վաճառել, մի քառասուն ռուբլի արծաթ կազմել, Առաջնորդին դիմելով տերտեր դառնալ և անտանում փայտաշատությամբ կոշտացած, ածուխի մեջ սևացած իւր ձեռքը խեղճ ժողովրդին համբուրել տալ...: Նորին սրբութիւնը մեծ ուրախութեամբ ընդունում է այդպիսիներին»:

Հայաբնակ գյուղերի թվի և բնակչության վերաբերյալ ավելի հստակ տեղեկություն կա 1879թ. «Մշակ»-ի թիվ 173-ում. Գյո-ղերի խնակը 29 էր՝ 601

դո-ն Բնակչո-Բյամբ, 27 եկեղեցի, 13 խաճանա, ոչ մի դպրոց, ոչ մի Գյո-ղ խառը Բնակչո-Բյամբ չէ, որդամարդկանց մեծ մասը Ըո-շո-մ և Թիֆլիսում պանդխտո-Բյան են, հիմնական զբաղմունքներն առանձնացնում են շերամապահո-Բյո-նը, կանանց համար կարպետ, ջեջիմ գործելը¹⁵:

1876 թվականի դրությամբ Ղարադաղի Քեյվան գավառակի ամենահայաշատ Սրղըն գյուղի համար պարսկական արքունիքի սահմանած հարկը կազմել է 25 թուման (70 ռուբլի): Սակայն գյուղի տերը՝ Բաղըր խանը (տվյալ ժամանակաշրջանում խան տիտղոսը կրում էին թուրք ֆեոդալները, հողատերերը, գյուղատերերը), բռնությամբ գանձել էր 1550 ռուբլի և պահանջում էր ևս 1800-ը: Սուրբ ծննդյան օրը, երբ գյուղի ժողովուրդը հավաքված է լինում եկեղեցում, խանի զինված մարդիկ ներխուժում են եկեղեցի: Նրանք ջարդուփշուր են անում խաչերը, եկեղեցիական գույքը, ձեռում քահանային և գյուղացիներին, սպառնում են մորթել բոլորին Հենց եկեղեցու մեջ, եթե չվճարեն խանի պահանջած գումարը: Իրագործելով թուրքին բնորոշ սրբապղ-

¹⁵ Տե՛ս նաև՝ «Մշակ», 1886, թիվ 53:

ծուխյուններ՝ խանի մարդիկ բանտարկում են քա-
 ճանային և ծերերին: Չմեռվա այդ ցուրտ օրերին
 Սրղընի տղամարդիկ գնում են Թավրիզ՝ բողոքելու:
 Չնայած ցուրտ էր, և ճանապարհը՝ դժվար, այ-
 նուամենայնիվ, 51 սրղընցի հասնում են Առաջնոր-
 դարան և ողջ եղելությունը պատմում Անդրեաս
 արքեպիսկոպոսին, որն էլ իր հերթին բողոքը հղում
 է Ատրպատականի կառավարիչ ՍաՀաբ դիվանին¹⁶:

Քեյվանը թերևս Ղարադաղի ամենաանհան-
 գիստ գավառակն էր: Այն ուներ ինը Հայաբնակ
 գյուղ՝ մոտ 300 ընտանիք բնակչությամբ: 1884
 թվականի աշնանը չեղբյան ցեղից ՄաՀմուտ կոչ-
 վող խանը իր որդիներ Աբուլ-Սամիտի, ՄաՀմետ-
 Վելիի հետ մի քանի հարյուր հոգանոց հրոսա-
 կախմբով հարձակվում է Քեյվան գավառակի ինը
 Հայկական գյուղերի վրա: Տեղի են ունենում միջ-
 նադարին բնորոշ ոճրագործություններ և բարբա-
 րոսություններ, ինչից չեն ազատվում նույնիսկ կա-
 նայք, տարեցները և երեխաները: Սպանվում է երեք
 գյուղացի, շատերն էլ՝ վիրավորվում: Այդ գյուղերից

¹⁶ «Մշակ», 1876, 4 փետրվարի, թիվ 4:

մոտ 200 ընտանիք Խուդափերինի կամրջով գաղ-
 թում է Հուշի: Այս եղելությունների մասին հեռագ-
 րով տեղեկացվում են Թեհրանը, Թիֆլիսի պարսից
 հյուպատոսը և Թավրիզի առաջնորդարանը¹⁷: Հա-
 ճի կառավարության կողմից ՄաՀմուտ խանը կանչ-
 վում է Թավրիզ և կալանավորվում: Տեղի է ունե-
 նում դատ, որի արդյունքում վճռվում է՝ եթե մե-
 ղադըյալի կալանավորումը Հայերին չբավականաց-
 նի, նրան կգլխատեն: Հայերը, վախենալով
 վրեժխնդրություններից, հրաժարվում են մաՀա-
 պատթի պաՀանջից: Արդյունքում հանցավոր խանը
 կալանավորվում է և մեկ տարի անց ազատ արձակ-
 ւում: Վճովել էր նաև 50 տոկոսով նվազեցնել Քեյ-
 վան գավառակի Հայկական գյուղերի արքունական
 հարկը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ
 դրանք բավական ավերվել էին¹⁸:

Միանշանակ չէր պարսկական կառավարութ-
 յան գործունեությունը, Հայտնի են նաև այլ օրի-

¹⁷ «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1884, 25 հոկտեմբերի, թիվ
 83, 90, «Նոր Դար», Թիֆլիս, 1885, 23 հունվարի, թիվ 9:

¹⁸ «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1885, 25 հոկտեմբերի, թիվ
 99:

նակներ: 1872 թվականին Ղարադաղի երկու թուրք խանների միջև զինված ընդհարում է տեղի ունենում, որի արդյունքում սպանվում են մարդիկ: Թավրիզի պետական մարմինները հրաման են ուղղում Ղարադաղի գավառապետ և դատավոր Ամիրզատին՝ խաներին կալանավորելու համար: Սա 250 ձիավորով շարժվում է գավառ, սակայն ցեղակից խաներին բռնելու փոխարեն թալանում և ավերում է ճանապարհին հանդիպած հայաբնակ գյուղերը և եկեղեցիները, բնակչությանն էլ հալածում և գաղթական դարձնում¹⁹:

Ազատ արձակվելուց հետո Մահմուտ խանը վրեժխնդիր է լինում Քեյվանի հայությունից: 1885 թվականին նա հարձակվում է գավառակի բոլոր 9 հայաբնակ գյուղերի վրա՝ Սարանլի, Ասրան, Կալալի, Ղելեմլի, Ազվանլի, Դոքեդերե, Կենսերայ, Էշրեֆ, Սըղըն (պարբերականում բերված են գյուղերի թուրքական անվանումները): Բնակչությունը ենթարկվում է ծեծ ու ջարդի, լինում են զոհեր: Քեյվանի հայության երևելիներից Սարգիս բեկ Ջհան-

¹⁹ «Մշակ», 1872, թիվ 27, 31:

խանը երեք այլ գյուղացիների հետ ուղևորվում է Թեհրան: Նասրեդդին շահը նրանց ընդունում է, լսում գանգատները և սովորականի համաձայն կարգադրություններ անում կարգուկանոնը վերականգնելու նպատակով: Հաշը Սարգիսին մեղրության աստիճան է շնորհում, հանձնարարում Քեյվանի 9 հայաբնակ գյուղերի կառավարչությունը և նվիրում Քիրմանի շալից խալաթ, որը նա մեծ ակնածանքով էր կրում²⁰:

Հաջորդ տարի՝ 1886 թվականի ձմռանը, նույն չելեբյան թուրքական ցեղի խաները՝ Ահմադը, Մահմադը և Մահմուտը, իրենց զինված խմբերով հարձակվում են արդեն Քեյվանի հարևանությամբ գտնվող Ղարադաղի մեկ այլ՝ Մինջվան և Մեշափարա գավառակների յոթ հայաբնակ գյուղերի վրա²¹: Հետաքրքիր է, որ հողվածագիրը այս անգամ էլ որոշ գյուղեր հիշատակում է հայերի շրջանում չգործածվող թուրքական անուններով՝ Դաշրաչի (Քարագլուխ), Վինա, Յուսուփլու, Գեարմանլու (Գիրմեսավ), Միաբիտի (Միբիդի), Թազաբ-

²⁰ «Մշակ», 1886, 4 մայիսի, թիվ 25:

²¹ «Մշակ», 1886, 23 դեկտեմբերի, թիվ 145:

յանդ (Նորաշեն), Նեփեշտ: Ընդ որում, այս գյուղերը պատկանում էին Հենց ԱՀմադ խանին²²: Առավելապես տուժում են լեռներում մեկուսացված Նորաշենն ու Նեփեշտը: Բացի կենցաղային իրերի ավարառումից՝ քչվում են անասունները, Համապատասխանաբար՝ 811 և 567 գլուխ: ԱՀմադ խանի, Հայդարլուեցի Մահմադ բեկի, Շահվերդի և Ռուստամ քյադխուղանների առաջնորդությամբ թուրքերի գինված բազմությունը առավոտ կանուխ հրացանաձգությամբ Հարձակվում է Նեփեշտ Հայկական փոքրիկ գյուղի վրա: Չիերի սմբակների տակ սպանվում է Յ-ամյա երեխա²³: Սարսափահար բնակիչները փորձում են պատսպարվել տներում: Գրեթե բոլորը ենթարկվում են դաժան ծեծի, բռնաբարվում են կանայք և աղջիկներ: Հղի կանանցից երկուսը վիժում են²⁴: Ոմանց Հաջողվում է փախչել և, չնայած այդ ձմռան ցուրտ օրերին, պատսպարվել մոտակա սարերում ու անտառներում: Հետագա

²² «Մշակ», 1887, 7 մայիսի, թիվ 49:

²³ Նշվում է այդ երեխայի անունը՝ Բալասան Հովսեփյան:

²⁴ Մեզ են հասել նաև այդ կանանց անունները՝ Մարիամ և Հոփսիմե:

օրերին այդ գավառակներից մոտ 33 հոգի բողոքներով ու խնդրագրերով Հասնում են Թավրիզի Հայոց առաջնորդարան՝ Ստեփանոս եպիսկոպոս Մխիթարյանցից օգնություն և պաշտպանություն խնդրելու: Այդ ընթացքում գաղթականները նյութական աջակցություն են ստանում Թավրիզի Հայ մեծահարուստներ Սարգիս Հովսնյանից, մահտեսի Սիմոն Թումանյանցից, Խաչատուր Տեր-Չաքարյանից:

Նույն օրերին Դզմար գավառակի (արևմտյան դավառակ) Նորաշենիկ գյուղը իր ավազակախմբով թալանում է Միրզա Մուստաֆա խանը: Տուժել են բոլորը, առավելապես գյուղի Ադամ քահանան: Թավրիզից կառավարական ուժեր են ուղարկվում խանին ձերբակալելու, սակայն, սովորության Համաձայն, սրանք էլ իրենց Հերթին են թալանում ճանապարհին Հանդիպած Հայաբնակ գյուղերը՝ առանց իրենց Հանձնարարված Հրամանը կատարելու (չմոռանանք, որ Թավրիզի կառավարական ուժերն էլ ճշող մեծամասնությամբ ազգությամբ թուրքեր էին): Ապրիլ-մայիս ամիսներին Մեշափարայի և Մնջվանի գործով Թավրիզում ընթացող դատը

արդյունք չի տալիս, և սրբազանի նախաձեռնութ-
յամբ գործի քննությունը տեղափոխվում է Թեհրան:
Արդյունքում Նեփեշտի Հայերը ԱՀմագ խանից
միայն նյութական փոխհատուցում են ստանում:
Բնականաբար ամեն ինչ քննվում էր արևելյան ո-
ճով կաշառքներով ու նվերներով: Չեզականորեն,
կարճ ժամկետով բանտարկվում է միայն Նորաշենը
կողոպտող խանը: Թուրք խանի կողմից կատար-
վում է դատավճռի վրեժխնդրություն. նույն թվի օ-
գոստոս ամսին ԱՀմագը կողոպտում է Մեշափարա
և Մինջվան գավառակների Հայաբնակ գյուղերը:
Սպանվում է մեկ գյուղացի: Գյուղացիներից մի քա-
նիսը անցնում են Արաքսը և Հասնում Շուշի՝ աղեր-
սանքի Հեռագիր հղելով Թեհրան՝ շահին: Այս ան-
գամ արդեն Թեհրանի կառավարությունը բան-
տարկում է ԱՀմագին, իսկ սրան պատկանող վե-
րոնշյալ Հայկական գյուղերը պետականացվում են.
Հարկատու են դառնում պետական գանձարանին²⁵:

Դեպի Արաքս գետի աջ ափ՝ ցարական Ռու-
սաստանին ենթակա տարածք, Ղարադաղի բնակ-

²⁵ «Մշակ», 1887, 15 դեկտեմբերի, թիվ 142, «Նոր Դար», 1887, 3 հուլիսի, թիվ 107:

չություն գաղթը գրեթե չէր դադարում: Իրավիճա-
կը նույնիսկ սկսեց անհանգստացնել Պարսկաստա-
նի կառավարությունը. դիմեցին Ելիզավետպոլի
Նահանգապետին՝ գաղթաճներից Պարսկաստան
եստ վերադարձնելու խնդրանքով: Ստեղծվեց Համա-
տեղ Հանձնաժողով, որի կազմում էին նաև Գորի-
սում նստող գավառապետն ու Մեղրիում նստող
պրիստավը: 1888 թվականի ապրիլին Հանձնաժո-
ղովի կողմից ընդունված որոշման Համաձայն՝ Խու-
ղափերինի կամրջի մոտ արգելափակվեցին մոտ
500 գաղթական ընտանիք (որից 25-ը Հայ, մնացա-
ծը թուրք): Պարսկական կառավարությունը դրա-
նով չբավարարվեց և պահանջեց, որ ետ վերա-
դարձնեն նաև 1860-ական թվականներից Հետո
գաղթաճներին, սակայն ստացավ մերժում, քանի որ
դրանց մեծ մասը արդեն ռուսահպատակ էր²⁶:

Հեղափոխում է խանի գործընկերներին, թեկու՛յ կարճ ժա-
մանակով, Քեյվանդ-ձեյրաթի ճակը որոշ շափով բարե-
լավում է: Թուրք խաներին ազապակային Հարջակոմ-
նիլը դեմագոգրում էր հավատակի կառավարիչ Մե-
լի-Ջահանյան մեղիք Սարգիսը: Քեյվանդի գյուղացի-

²⁶ «Նոր Դար», 1888, 3 մայիսի, թիվ 66:

երկու անգամ գնդակի վերք էր ստացել և մահից հրաշքով փրկվել: Չնայած դրան՝ նա կառավարում էր Քեյվան գավառակը՝ Հայերին քիչ թե շատ պաշտպանելով խաների բռնություններից ու Հարստահարումներից³¹:

1896 թվականի դրությամբ Ղարադաղի Հայաբնակ գյուղերի ոչ ամբողջական վիճակագրությունը (որոշ գյուղերի մասին տվյալներ ներկայացված չեն) հետևյալն է³².

N	Գյուղ	Տուն	Բնակիչ/մոտավոր/
Դգմար			
1	Խանագահ	89	534
2	Իրգուլթին	40	240
3	Մարդու	37	222
4	Աղաղան	44	264
5	Ղըշլաղ	25	150
6	Ղուկուղի	22	132
Հասանով			
7	Նորաշեն	33	198
8	Օղա	28	168
9	Լումա	տ/չ	տ/չ

³¹ Միմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք III, ԵՊՀ հրատ., Երևան, 2009, էջ 481-482:

³² Վիճակագրական. Պարսկաստանի Ղարադաղ գաւառի հայաբնակ գիւղերը, «Արարատ», ԻԹ (Գ), 1896, մարտ, էջ 135-137:

10	Զիարու	տ/չ	տ/չ
Մեշափարա			
11	Ողան	44	264
12	Մզկիթ	19	114
13	Գրրմընավ	21	126
14	Քըլալա	20	120
15	Նեփեշտ	17	102
16	Միքիղի	15	90
Մինջվան			
17	Վինա	75	450
18	Ամրադուլ	33	198
19	Քարագլուխ	23	138
20	Սևահող	20	120
21	Վարդանաշեն	տ/չ	տ/չ
Քեյվան			
22	Մըղըն	տ/չ	տ/չ
23	Ղասունաշեն	54	324
24	Գեոզդարա	32	192
25	Ասրան	32	192
26	Բերդ	38	228
27	Սուրուն	22	132
28	Նորաշեն	տ/չ	տ/չ
29	Աշրափ	տ/չ	տ/չ
30	Մրիդավ	6	35

ՀՈՒՌՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՐԱԿԱՆ ԿՅՆՆԵՐ



Իրանահայ Համայնքը միավորվում և կառավարվում էր թեմերի միջոցով: Իրանահայ ամենահին՝ Թավրիզի թեմը միավորում էր հյուսիսային նահանգներում բնակվող Հայ բնակչությանը: Մինչև 1833թ. այն կոչվում էր Ատրպատականի թեմ, որի կենտրոնը Մակուի Սբ. Թադեոսի վանքն էր: 1828թ. Թուրքմենչայի պայմանագրով Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միանալուց Հետո Ատրպատականի թեմի կենտրոնը տեղափոխվեց Թավրիզ, քանի որ Սբ. Թադեոսի վանքը գտնվում էր ռուս-պարսկական սահմանի մոտ: 1833թ. այն վերանվանվեց Թավրիզի թեմ, որն ավանդաբար անվանում են նաև Ատրպատականի թեմ: Ազգային առաջնորդարանը Թավրիզ փոխադրվելուց Հետո մինչև 1836թ. գտնվում էր Ղալա (Բերդաթաղ) թաղամասի Սբ. Մարիամ Աստվածածին եկեղեցու բակում: Հետագայում այն տեղափոխվեց Հայոց ազգային կենտրոնական դպրոցի շենքը, որը

գտնվում է Թավրիզի Հարավային Շարիաթի պոլիտայում³³:

Ղարադաղի Հայկական գրեթե բոլոր գյուղերում կային եկեղեցիներ³⁴: Դրանք հիմնականում միանավ խղճուկ կառույցներ էին, որոնց շինարարությունը, պահպանությունը հոգացվում էր գյուղացիների կողմից: XX դարի սկզբին ամենայն Հայոց կաթողիկոս Մատթեոս Բ Իզմիրլյանին ուղղած նամակում Ատրպատականի՝ այդ ժամանակվա թեմակալ առաջնորդ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը գրել է. «Ի միջի այլ կարիքների և պահասութիւնների աչքի է ընկնում գրեթե ամէն տեղ եկեղեցական անօթների, զգեստուց և գրքերի մեծ սրակասութիւն: Բաւական է յիշել, որ Ղարադաղի 19 Հայաբնակ գիւղերից միայն Խանազեաճ գիւղի եկեղեցին ճաշոց գիրք ունի. միւսներից շատերը չունեն նաև ոչ զգեստ, ոչ ժամագիրք, ոչ իսկ մի խաչ կամ Աւետարան Տերունական սեղանի վերայ.

³³ Հակոբյան Ա., Իրանահայ համայնքի ինքնավարության մարմինները և իրավական կարգավիճակը 1921-1945 թթ., Հայագիտության հարցեր, 1 (7), Երևան, 2016, էջ 69-70:

³⁴ Մինչև այսօր պահպանվել են հայկական շատ գյուղերի, բերդերի, վանքերի, իջևանատների ավերակներ:

եկեղեցի կոչոող այդ կրաս-եր ողորմելի շենիերը ըստ մեծի մասի մերկ են թուրրովին, ե- խաճանաները, որոնցից ի-րախանչի-րը 5-7-9 գի-ղ է ճով-ո-մ, ստի- պո-ած են գի-ղէ գի-ղ քանել իրենց հետ ե- ղգետտ, ե- եկեղեցական գրիեր, ե- սեղանի վարագոյր ե-ն»³⁵:

Հոգևոր Հաստատութիւններից որոշները մի- ջին դարերում եղել են կրթութիան և գրչութիան օ- ջախներ: 1911 թվականի նոյեմբերի 21-ին նույն Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը Էջմիա- ծին է փոխադրում Ղարադաղի Հայկական գյուղե- րից Հավաքված 12 ձեռագրեր³⁶: Դրանցից մեկը գրի

³⁵ Միմոնյան 2009, հատ. III, էջ 411-412:
³⁶ Հուժի ավետարանի փնտրտուքի արդյունքում մեզ Մայր Աթոռից հավաստիացրել են, որ նշված ձեռագրերը Վազգեն Առաջին կաթողիկոսի ժամանակ փոխադրվել են Մատենադարան, որտեղ դրանց պահպանման համար ավելի նպաստավոր պայմաններ կան: Արդյունքում մեզ հաջողվեց այն գտնել Մատենադարանում՝ ձեռագիր N 4316 համարի տակ: Ավետարանը կաշվե կազմով է, ոչ մեծ չափի (ընդամենը 12սմ երկարությամբ), սակայն բավական հաստափոր զիրք՝ կազմված ավելի քան 340 մագաղաթյա թերթից: Սկզբի մոտ երկու տասնյակ էջերը ամբողջությամբ քայքայված են ջրի ազդեցությունից, մեջտեղի էջերից շատերը սևացել են թանաքի քայքայումից, իսկ վերջի էջերի վրա կան նաև այրվածքի հետքեր: Ավետարանում կա նաև 6 էջ քիչ թե շատ լավ պահպանված մանրանկարչություն:

լ առնվել 1655 թվականին ³⁷ Ղարադաղի Յոյժ (Հուժ) գյուղում: Մյն Ավետարան է, որը արտագր- վել է Մինաս աբեղայի կողմից: Ահա Հատված դրա հիշատակարանից.

«Երդ գրեցա- սք. Ը-երարանս, խառ-ավրակ աղ- թի-րս, կենաց ճանապարհ արխայո-թեան և Լոյս աշխար- հի և դո-ոն ողորմո-թեան, Յեռ-ամք մեղ սաներկ ոգ-ոյ և ամենամեղս ի գրչաց Մինաս սոսկ անո-ամք միայն ա- թեղայն» ի սք. և ի Հո-շակա-որ ո-խոս ի Արաթեի (Տաթևի՝ Ս.Չ.) առ-աղեւոյն, ընդ Հովանեա- սորին և այլ իննեակ դասո-ց եկեղեցեացս, որ ո-նին ինվեանս մասն ինչ քաղ ո-մ արքոց և աստո-ածապարհ երկիրս Մարգանաղ ո-մ³⁸, ի գեա-ղն որ կոչի Յոյժ, ի Հայրա- պետ-թեան քեառ-ն Յակոբայ յաթոո-ս Էջմիածնի ի թվական-թեանս Հայոց ՌՃԴ (1655թ.)»³⁹:

Թուրքմենչայի պայմանագրով իրականացված գաղթից Հետո Ատրպատականի գրեթե բոլոր գա- վառները դեռ շարունակում էին մնալ Հայաբնակ:

³⁷ «Ալիք», Թեհրան, 1968, թիվ 116, Ատրպատականի հայերեն ձեռագրերը, Վարդան Ծայր. Վրդ. Դեմիրջեան, Առաջնորդ Հայոց Ատրպատականի:
³⁸ Մարդանաղըմ. գետ Ղարադաղում, որը սկիզբ է առնում Ղարադաղի լեռներից, հոսելով Հուժ գյուղի մոտակայքով՝ թափվում է Արաքս:
³⁹ Հակոբյան 1984, հատ. Գ, էջ 640-641:

Հայերը մեծ տոկոս էին կազմում Սալմաստի, Խոյի, Մակուի, Ուրմիայի, Բարանդուզի⁴⁰, Սուլդուզի, Սոուջուլաղի, Մարաղայի, Արդեբիլի, Ղարադաղի գավառներում: Ատրպատականի Հայուլթյան Հոգեվոր կյանքը կենտրոնացած էր Ատրպատականի թեմում՝ Թավրիզ կենտրոնով, որը, ինչպես և նախկինում, շարունակում էր մնալ որպես տարածաշրջանի ամենահայաշատ բնակավայրը: Հայերը հիմնականում կենտրոնացած էին քաղաքի երկու թաղերում՝ Ներքին կամ Ղալա և Դրսի կամ Վիլավայի: XIX դարի երկրորդ կեսում Թավրիզում գործում էին «Արամյան»⁴¹ (1835 թվականից), «Աննայան», «Հայկազյան», «Թամարյան» Հայկական դպրոցներ:

⁴⁰ Գտնվում է Ուրմիայի մոտ: 1953 թվականի տվյալներով Բարանդուզի 6 հայաբնակ գյուղերում ապրում էին մոտ 1000 հայեր, որոնք արդեն թրքախոս էին («Ալիք», 1953, 18 հունիսի, թիվ 131):

⁴¹ «Արամյան» դպրոցը 1835 թվականին հիմնադրել են Մ. Թաղիադյանը և Ս. Եպիսկ. Սաթունյանը: 1875 թվականին այստեղ դասավանդել է Բաֆֆին, 1935 թվականին նշվել է դպրոցի հարյուրամյակը («Ալիք», 1936, 16 ապրիլի, թիվ 170), 1952 թվականի դրությամբ այն դեռ գործում էր՝ 7 ուսուցչով ու մոտ 200 աշակերտով, և արդեն Թավրիզի միակ հայկական դպրոցն էր («Ալիք», 1952, 15 օգոստոսի, թիվ 181):

րը, Հրատարակվում էին մի շարք պարբերականներ, այդ թվում՝ «Ղարադաղ» (1913-1914), «Աղաղան» (1912) թերթերը: Հայկազյան և Թամարյան դպրոցները հիմնվում են 1895 թվականին Ղարադաղից ծագած, Պարսկաստանում և Կովկասում Հայտնի գործարար Թումանյանց եղբայրների կողմից: Դրանք գտնվում էին Թավրիզի Վիլավա թաղամասի Սբ. Սարգիս եկեղեցու բակում: Այդ դպրոցի մեծ ու փառավոր շենքը, որը կառուցվել է Թումանյանցների կողմից⁴², դեռևս 1930-ականներին իր նմանը չունեի ողջ Պարսկաստանում⁴³: «Աննայան» դպրոցի հիմնադիրները նույնպես Թումանյանյաններն էին⁴⁴ (Թումանյան): Ի Հավելումն կրթության թեմային, որին մենք դեռ կանդորադատանք առանձին գլխով, ավելացնենք, որ դեռևս XIX դարի սկզբին՝ 1815 թվականից, Թիֆլիսում Հայտնի էր Պողոս Ղարադաղցու ուսումնարանը, որտեղ սովորել է նաև Խաչատուր Աբովյանը⁴⁵:

⁴² «Ղարադաղ», 1914, 15 հուլիսի, թիվ 11, էջ 2:

⁴³ «Ալիք», 1931, 11 հունիսի, թիվ 12:

⁴⁴ «Ալիք», 1931, 11 հունիսի, թիվ 12:

⁴⁵ ՀԺՊ V, էջ 607:

Դզմար գավառակի Խանազաճ գյուղի Մելիք-Ազարյաններից ծագած Պողոս վարդապետը Ներսես Աշտարակեցու կողմից Հրավիրվում է Թիֆլիս՝ ուսուցչուժյան: Նա այդ տարիներին Հայագետի մեծ Հոչակ էր վայելում, չնայած ասում են, որ նա իր աշակերտներին ավելի շատ ծեծ էր տալիս, քան ուսում⁴⁶:

Ղարադաղի և ողջ Ատրպատականի Հայուժյան Հոգևոր, կրթական և Հասարակական կյանքում էական դեր է խաղացել Ներսես Մելիք-Թանգյանը⁴⁷:

⁴⁶ Լեո VI, էջ 13:

⁴⁷ Ներսես (Նիկողայոս) Մելիք-Թանգյանը ծնվել է 1866 թվականին Սիսիանի շրջանի Բոնակոթ գյուղում: Սերում է նշանավոր Մելիք-Թանգյանների տոհմից: 1886 թվականին ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, ուսուցչություն արել Շուշիում և Բաքվում, ապա հոգևոր ծառայության անցել Մայր Աթոռում: Սկզբնական շրջանում նվիրվել է ազգային ազատագրական պայքարին: 1891 թվականին ֆիդայական խմբի հետ Պարսկաստանում մասնակցել է քրդական հրոսակների դեմ տեղի ունեցած զինված արյունալի ընդհարմանը (Յուշամատեան Ներսես Մելիք Թանգեան արքեպիսկոպոսի, կազմեց՝ Ա. Մամեան, Թեհրան 1968, Միքայել Վարանդյանի հուշերից): 1900 թվականին ավարտել է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, վերադարձել Էջմիածին և 1901 թվականին ձեռնադրվել վարդապետ: 1901-1904 թվականներին եղել է Տաթևի թեմի փոխանորդ և վանքի վանահայր: 1905-1906 թվականներին հայ-թաթարական բախումների ժա-

1912 թվականից նա Էջմիածնի Մայր Աթոռի կողմից նշանակվել է Ատրպատականի թեմի առաջնորդ և մինչև իր մահը՝ 1948 թվականը, անընդմեջ վարել

մանակ, որպես Տաթևի վանահայր՝ համագործակցել է Սյունիքի աշխարհագորային խմբերի և մասնավորապես Սեբաստացի Մուրադի հետ: Ընդգծենք, որ այդ տարիներին Տաթևի թեմն ուներ 89 եկեղեցի, 11 վանք և 81 վանքապատկան գյուղ: Ներսես Մելիք-Թանգյանը 1903-1905 թվականներին գրել և հրատարակել է իր հիմնարար երկհատոր աշխատությունը՝ «Հայոց եկեղեցական իրավունքը»: Մշտապես ունենալով գործունեության ասպարեզ, գորեղ միտք և սեփական կարծիք՝ նա հաճախ էր ընդհարումներ ունենում իշխանությունների և եկեղեցու ավագանու հետ: Թերևս այդ պատճառներով էլ 1907 թվականին նրան արքտրում են Դրիմ: 1909 թվականին վերադառնում է Էջմիածին և, ձեռնադրվելով եպիսկոպոս, Մայր Աթոռում զանազան պաշտոններ է վարում, այդ թվում՝ գործերի կառավարիչ: 1912 թվականին կաթողիկոսական ընտրություններից հետո ուղարկվում է Ատրպատականի թեմ, ընտրվում առաջնորդ և 36 տարի անընդմեջ կատարում դժվարին պարտականություններ: Բացի պարսկահայության խնդիրներից Ներսես Մելիք-Թանգյանը անընդհատ հետևում էր մայր հայրենիքում ընթացող ողբերգական իրադարձություններին: Նա մարտնչող Սյունիքի համար կազմակերպում է պարենամթերքի և փամփուշտների մատակարարումը, իսկ Լեռնահայաստանի անկումից հետո լծվում է գաղթականության կարիքների բավարարման խնդիրներին: Ներսես արքեպիսկոպոսը մահացել է 1948 թվականին Թավրիզում (Դավթյան Շ., Սիսիանի բնակավայրերի պատմությունը, Հրատարակչություն ՊԶ, Երևան, 1997, էջ 129-130):

է այդ պաշտոնը: Իր առաջնորդության տարիները բավական ծանր էին ինչպես ղարադաղահայրության, այնպես էլ ողջ ատրպատականահայրության համար: Ներսես սրբազանը, լինելով վերին աստիճանի ազգասեր և հայրենասեր գործիչ, տանել չէր կարողանում օտարամոլությունը հայերի մեջ: Միաժամանակ նաև խիզախ էր և համարձակ. եղել է դեպք, երբ իր թիկնապահներին հրամայել է իր ներկայությամբ դաժան ծեծի ենթարկել Սալմաստի հայկական գյուղերից մեկում ոճրագործություններ իրականացրած և ռուսական վարչակարգին ծառայությանը անցած թուրք խանին: Անցնելով իր պարտականություններին՝ Ներսես սրբազանը միանգամից լծվել է կարիքավոր հայ գյուղացիներին աջակցելու նախաձեռնություններին: Ներսես Մելիք-Թանգյանի պաշտոնավարման տարիներին Թավրիզը անընդհատ գաղթականներ էր ընդունում Ղարադաղի հայկական գյուղերից: Նրա ջանքերով կազմվել են նպաստամատուց կազմակերպություններ, որոնց միջոցով սնունդ, հագուստ և դրամ էր հայթայթվում գաղթականների համար: Գաղթական ղարադաղցիները հավաքվում էին Թավրիզի հրա-

պարակներում, շուկայում, Առաջնորդարանի բակում: Նրանցից շատերը գիշերում էին փողոցներում: Գաղթականների կարիքները բավարարելու գործում ամենամեծ դերը ստանձնում էր Հենց սրբազանը՝ կազմակերպելով ինչպես նյութական բավարարվածության հարցերը, այնպես էլ՝ գաղթականներին հայրենի գյուղեր ետ վերադարձնելու գործը: Ունենալով մեծ հեղինակություն Ատրպատականի նահանգապետի և բարձրաստիճան այլ պաշտոնյաների մոտ՝ Ներսես Մելիք-Թանգյանը նախաձեռնում էր իրավական և դատական գործընթացներ՝ հայերի հանդեպ ոտնձգություններ իրականացրած խանների նկատմամբ:

Ներսես սրբազանը Հաճախակի այցելություններ էր իրականացնում Ղարադաղի հայաբնակ գյուղերը: Նրա ուշադրության և հոգածության կենտրոնում էր միշտ գտնվում կրթական գործի կազմակերպումը: Ղարադաղի հայկական գյուղերում գործող շատ դպրոցների հովանավորչությունը իրականացվում էր Ներսես սրբազանի նախաձեռնությամբ: 1926 թվականին իր կողմից Նորաշեն-Հուժում կառուցվում է դպրոց: 1930-ական թվե-

րին, շնորհիվ Ներսես արք. Մելիք-Թանգյանի և Թավրիզի Ղ.Հ.Հ միության ջանքերի, Ղարադաղում ամեն տարի պահվում էր 10-13 դպրոց⁴⁸:

Ներսես արքեպիսկոպոսը Հայտնի էր որպես սկզբունքային գործիչ, եկեղեցու, ազգի և Հայրենիքի շահերի և իրավունքների մեծ ջատագով: Եվ Հենց այդ պատճառով ՊԱԿ-ի (КГБ) կողմից անընդհատ ամբաստանվել է «Հակախորհրդային գործունեության մեջ»: ՊԱԿ-ը չէր թույլատրում Մայր Աթոռի միաբաններից որևէ մեկին գործուղել կամ աշխատանքի ուղարկել արտասահման, եթե նա Ներսես արքեպիսկոպոսի Հետ երբեմնի ծանոթ է եղել կամ որևէ առնչություն է ունեցել: Նույնիսկ 1932թ. կաթողիկոսական ընտրություններին թույլ չէն տվել որ Ատրպատականի թեմը պատվիրակներ ուղարկի Էջմիածին: Աշխատանք էր տարվում նրան Ատրպատականից Հեռացնելու Համար: Այդ մասին Գեորգի Աղաբեկովը⁴⁹ Հետևյալ տեղեկություններն

⁴⁸ «Ալիք», 1933, 31 օգոստոսի, թիվ 20:

⁴⁹ Գեորգի Աղաբեկով (Գևորգ Հարությունով 1895-1937): ԽՍՀՄ ԷնԿավեՒե (HKBД) գործակալ: Առաջին բարձրաստիճան գործակալներից է, ով 1930-ականներին փա-

է տալիս իր «OGPU»⁵⁰ գրքի մեջ. «...Նրա ազդեցությունը շատ մեծ է Հայաստանում՝ ինչպես Հասարակ ժողովրդի և ինչպես կղերականության վրա: Եվ նա շատ լավ պարեհություն ունի ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվելու: Կաթողիկոսն այդ ժամանակ խիստ հիվանդ էր անչ էր և կարող էր պարտահեղ, որ մահանար: Եթե Ներսեսը Հաջորդեր նրան, Պարսկաստանը պիտի փոխեր Ռոսսաստանին իբրև Կաթողիկոսի բնակություն տեղի, և սովետական կառավարությունը պիտի կորցնե գերազանցորեն մեկ մեջոց ազդեղություն: Սաթի OGPU-ն որոշեց ապավել Ներսեսից նրա գեղը դնելով սովետներին նվերված մի անչ»: ՊԱԿ-ը բազմիցս փորձել է իր Հետ գործակցող Հոգևորականների միջոցով Էջմիածին կանչել Ատրպատականի առաջնորդին: Սուրենյան կաթողիկոսը ստիպված կատարում էր ՊԱԿ-ի պահանջը, բայց և միաժամանակ լուր էր տալիս Ներսես սրբազանին՝

խել է արևմուտք: 1937 թվականի օգոստոսին Ֆրանսիայում սպանվել է ԽՍՀՄ հատուկ գործակալների կողմից:

⁵⁰ «OGPU: The Russian Secret Terror» (Միացյալ պետական քաղաքական վարչություն, ռուսական գաղտնի ահաբեկչությունը):

«տեղդ կեցիր, զավակս»: Եվ Ներսես սրբազանը մինչև վերջ էլ մնաց իր պաշտոնին⁵¹:


Ղարադաղի հայաբնակ գյուղերի եկեղեցիները և նրանց սպասարկող քահանաների ցուցակը 1946թ. դրությամբ⁵² համաձայն Ատրպատականի թեմի Հայոց առաջնորդարանի գրանցումների⁵³

Գյուղ	Գավառ	Եկեղեցի	Քահանա
Սրղրն	Քելվան	Սբ. Սարգիս	տեր Հովսեփ
Ղասումաշեն	Քելվան	Սբ. Հովհաննես	տեր Հովսեփ
Վինա	Մրնջվան	Սբ. Մարիամ	տեր Խորեն
Քարագյուլի	Մրնջվան	Սբ. Հովհաննես	տեր Խորեն
Վինա ⁵⁴	Մրնջվան	Սբ. Հովհաննես	տեր Խորեն
Ողան	Մեշափարա	Սբ. Մարտիրոս	տեր Խորեն
Խանագահ	Դրզմար	Սբ. Ստեփանոս	տեր Եզնիկ
Ղուլուղի	Դրզմար	Սբ. Հռիփսիմե	տեր Եզնիկ
Նորաշեն-Հուժ	Հասանով	Սբ. Գևորգ	տեր Մարտիրոս
Իրզութին	Դրզմար	Սբ. Շողակաթ	տեր Գրիգոր
Աղաղան	Դրզմար	Սբ. Շողակաթ	տեր Գրիգոր
Ղշլաղ	Դրզմար	Սբ. Հովհաննես	տեր Գրիգոր
Մարդու	Դրզմար	Սբ. Գևորգ	տեր Գրիգոր
Մարի	Դրզմար	Սբ. Մարիամ	-

⁵¹ Յուշամատեան Ներսես Մելիք Թանգեան արքեպիսկոպոսի 1968, էջ 25, 46:
⁵² Օղա, Գիրմնավուն և Նեփեշտ գյուղերը եկեղեցիներ ունեին, սակայն դրանց մասով տվյալներ առկա չէին:
⁵³ Հովսեփյան 2009, հատ. I, էջ 69:
⁵⁴ Անտառի եկեղեցի:

ԱՋԱՏԱԿԱՆ ԴԱՅԲԱԻ

ԱՇԽԱԽՍՏԱՆ ՏԱԻԻՆԵՐԻ



XIX դարի վերջերից օսմանյան լծի տակ ապրող բալկանյան ժողովուրդների ազատագրական շարժման ակտիվացման հետ մեկտեղ ազգային պարթոնք է ապրում նաև Հայ ժողովուրդը. Հիմնվում են ազգային-քաղաքական կուսակցություններ և ֆիդայական խմբեր: Հասարակական ու քաղաքական կյանքում տեղի ունեցող այդ փոփոխությունները Հասնում են նաև Ղարադաղ: 1890-ական թվականներից դաշնակցության կուսակցության տեղական կոմիտեն Ատրպատականի այլ գավառների հետ մեկտեղ սկսում է գործել նաև Ղարադաղում⁵⁵: Ղարադաղի դաշնակցության կոմիտեի ներկայացուցիչն էր Եփրեմ Դավթյանը՝ Իրանի ապագա ազգային հերոսը:

Արևմտյան Հայաստանում գործող ֆիդայական խմբերին զենք մատակարարվում էր Արևելյան

⁵⁵ ՀԺՊ VI, էջ 713:

Հայաստանից գաղտնի, զինատար խմբերի միջոցով: Գոյուլթյուն ունեին զենքի մատակարարման մի քանի հիմնական ճանապարհներ, որոնցում կային միջանկյալ կայանատեղիներ: Այդպիսի մի նշանավոր կայանատեղի և զենքի կուտակման, այնուհետև Արևմտյան Հայաստան տեղափոխելու վայր էր Սալմաստից ոչ հեռու՝ Թուրք-իրանական սահմանին գտնվող Դերիկի (Հավանաբար քրդերենի *diric* «զարդատուփ, փոքրիկ սնդուկ» բառից) վանքը: Հուլիից Դերիկի վանք և այնուհետև Արևմտյան Հայաստան զենքի փոխադրման ճանապարհը անցնում էր Ղարադաղով:

Փոխադրության այդ գիծը հիմնել էին շուշեցի Իլիկո Մելիք-Շահնազարյանը, որը դաշնակցութեան Համահիմնադիր Ռոստոմի կնոջ եղբայրն էր, և Ղարադաղցի Ավագը⁵⁶: Այնուհետև այդ գծի վրա աշխատել է նշանավոր Հայդուկ Սևքարեցի Սաքոն: Սամսոնը հիշատակել է նման մի դրվագ, երբ Սա-

⁵⁶ Սամսոնի (Ստեփան Թաղևոսյան) հուշերը, «Հայրենիք», Բոստոն, 1923, թիվ 10: Ստեփան Թաղևոսյանը Քրիստափոր Միքայելյանի քրոջ որդին, ծնվել է 1871 թվականին Գողթն գավառի Վերին Ագուլիս գյուղում:

քոն ու Ղարադաղցի Ավագը Ղարադաղից զենք են փոխադրում Դերիկի վանք: Դա 1896 թվականի ամսուն էր: Եվ դա այդ օրերին պարբերական բնույթ էր կրում: Այդ ուղիով են անցել և վերադարձել Այնասորի արշավանքին մասնակցած մարտիկներից շատերը: Այդ տարիներին Ղարադաղով են անցել և տեղացիների մոտ հանգրվանել ֆիդայական շարժման այնպիսի խոշոր ներկայացուցիչներ, ինչպիսիք են Նիկոլ Դումանը⁵⁷, Վարդանը⁵⁸, Եփրեմը, Աևքարեցի Սաքոն⁵⁹:

⁵⁷ Նիկոլ Դուման (Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան): Ծնվել է 1867 թվականին Արցախի Ղշաղ գյուղում: 1887թ. ավարտել է Հուլիի թեմական դպրոցը: Աշխատել է ուսուցիչ Հյուսիսային Կովկասի հայկական դպրոցներում, 1894-1896 թվականներին՝ Թավրիզի և Սալմաստի վարժարաններում: 1894-1896 թվականներին մասնակցել է Դերիկի կռիվներին: 1895թ. հոկտեմբերին առաջնորդել է դեպի Վան-Վասպուրական ուղղվող 50 հոգանոց խումբը: 1905 թվականի հայ-թաթարական ընդհարումների ժամանակ ղեկավարել է Երևանի նահանգում և Արարատյան դաշտում գործող ուժերը, հետոքեն կազմակերպել է հայերի պաշտպանությունը: Իրանում հեղափոխության ժամանակ ղեկավարել է Թավրիզի պաշտպանությունը: Ողջ կյանքը պայքարին ու մարտին նվիրած Դումանին խեղճացնում է թոքախտը: Նույնիսկ այդ վիճակում էլ չէր հրաժարվում իր պայքարից: Զգալով որևէ բան անելու կարողությունների պակասը՝ 1914 թվականի սեպտեմբերի

Հետաքրքիր մի գրվագ է նկարագրում իր հուշերում «Ալիք» օրաթերթի Ռաշտի խմբագիրը՝ ղարաղաղցի Խաչատուր Մինասյանը⁶⁰, որը ներկայացնում ենք ամբողջությամբ, առանց փոփոխությունների.

«1896թ. էր: Բախվեց նոր էին՝ վերադարձել Ղարադաղ՝ մեր ծննդավայր Ղըրմընավ գյուղը: Ինչպե՞ս էր ղեր ղեր ղեր էր, մի բո՞ւ՝ ու բորան օր. չյո՞ւնամբրերկը ղո՞ւյլ շէր գալիս փողոց իսկ դո՞րս գալ, գյո՞ղը ղաղված էր իսր ղո՞ւն-ղյան մէջ, ու ամէն մի գո՞ւն կձկված ինձն իր վրա:

Ահա գյո՞ղ էն մյնո՞ւմ յափնջիներով ու չյո՞ւնով ծաձկված շորս չիսովորներ: Երկո՞ւսը իջեանո՞ւմ էն

27-ին ինքնասպան եղավ՝ իր ատրճանակով կրակելով քունքին:

⁵⁸ Խանասորի Վարդան (Մարգիս Մեհրաբյան, 1870-1943): Հայ քաղաքական, ռազմական գործիչ: Ծնվել է 1870թ. Արցախում: 1890 թվականից գործել է Ատրպատականում, զինատար խմբերով հաճախ անցել Վասպուրական, 1897 թվականին նշանակվել է Խանասորի արշավանքի ընդհանուր հրամանատար:

⁵⁹ Սևքարեցի Սարո (Ծովանյան Մարգիս Մարիբեկի): Ծնվել է 1870թ. Սևքար գյուղում (ներկայիս ՀՀ Տավուշի մարզ) և մահացել 1908թ.: Հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, ֆիդայի, Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության անդամ:

⁶⁰ Եփրեմը Ղարաղաղում. մահվան 45-ամյակի առթիվ, «Ալիք», 1957, 5 օգոստոսի, թիվ 168:

Բախվեց նոր վերադարձած Համագյո՞ղացի Ալեխան Սանո՞կյանի մոտ, իսկ մյո՞ւս էրկո՞ւսը՝ առաջնորդո՞ւն-յամբ Ողան գյո՞ղացի Ղապի Համբարձո՞ւմի մեկ մոտ:

Ներսո՞ւմ մի ակնարկով բացատրո՞ւմ էն, ղե իրենձ «ալգասերներ» էն: Անծանոթներից մեկը կոչվո՞ւմ էր Ալեխան (Հեղափոխո՞ւմ Հայրենի Եփրեմը):

Թէ՛ն նորեկների նկատմամբ աշխատո՞ւմ էինձ ղո՞ւն-ղյո՞ւն պահպանել, բայց շշո՞ւնները պնեյցո՞ւն, երբեկից՝երբեկ անցնելով Հայրենի դարձան բոլորին, ղե «ալգասերներ» էն եկել: Առանց հրավերի մեկ մոտ էն գալիս գյո՞ղի խաճանան և գյո՞ղապետ Սարգիսը, մի խանի աշխի ընկնող գյո՞ղացիներ, և անպայման ուղո՞ւմ էն պե՞տնել ղե ինչպե՞ս մարտիկ էն «ալգասերներ»:

Մի քանի օր հանգստանալուց հետո, երկուսը Խուդաֆերիսի ճամբով անցնում են Ղարաբաղ-Շուշի: Հետագայում միայն իմացա, որ գնացողներից մեկը Սևքարեցի Սարոն էր, որ այդ գծի վրա գնդի փոխադրության գործով էր զբաղված:

Ալեքսանը (Եփրեմը) տաս օր էր ինչ մեզ մոտ սպասում էր, երբ Չանգեզուրից մեզ մոտ եկան երկու հեղափոխականներ՝ զինված մոսին հրացաններով՝ առաջնորդությամբ եղվարդեցի Եփրեմ բեկ

Մելիք-Ղարաբաղյանի, ու տեսնվեցին Ալեքսանի Հետ:

Նորեկներից մեկը, որ աչքի էր ընկնում իր ներկայանալի արտաքինով, կոչվում էր Շեկո (Շեկոն Հետագայում 1898թ. սեպտեմբերի 10-ին եղել է Վազգենի⁶¹ և Վարդանի Հետ ու մասնակցել է Վանի շրջանի Կեմ գյուղի կռվին՝ որպես խմբապետ՝ Ս. Չ.): Առաջին գիշերն իսկ մեզ մոտ են Հավաքվում Համարյա ամբողջ գյուղացիք: Առիթից օգտվելով Շեկոն սկսեց պատմել մեզ 1895-96թթ. Վանի և այլ վայրերի կռիվների և Հերոս նահատակների մասին: Գյուղացիները լուռ էին և Հուզված, ահա տեր Ներսեսը Ներսես Տեր-Ստեփանյան. Հետագայում

⁶¹ Տիգրան Տերոյան (Վազգեն): Ծնվել է 1873թ. Վանում: Հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, բանաստեղծ: ՀՅԴ կուսակցության անդամ: Ձերբակալվել է Թուրքական իշխանությունների կողմից: Ազատվելուց հետո տեղափոխվել է Սալմաստ, այնտեղից՝ Նիկոլ Դումանի 60-հոգանոց խմբի հետ՝ Վան ճանապարհին կռիվներ մղելով: Նրա ջոկատում է գործել Անդրանիկ Օզանյանը: Մասնակցել է 1896 թվականի Վանի «մեծ դեպքին»: Դեմ է եղել Խանասորի 1897թ. արշավանքին: Զոհվել է 1898թ. Վանից ոչ հեռու գտնվող Կուրուբաշ գյուղի ջրաղացում (այս մասին տե՛ս՝ Армянский вопрос. Энциклопедия (Отв. ред. К. С. Хуршудян), Ереван, 1991, с. 89):

մենք նրա սերունդներին տեսնում ենք Վինայում Ս. Չ.) Հանկարծ ոտքի է կանգնում ու նահատակների Համար աղոթք մրմնջում: Գյուղացիները շուկով և երկյուղած նույնպես աղոթում են ու վերջում Հայտնում, թե նրանց՝ Հերոսների Համար եկեղեցում Հոգեհանգիստ-պատարագ պիտի անեն և անխտիր կին և տղամարդ ներկա պիտի լինեն եկեղեցում:

Հաջորդ օրը եկեղեցին լեցուն էր, ներկա էր ամբողջ գյուղը: Դրված էր մահաբեմ՝ ծածկված մասնավոր ծաղկե պսակով: Ներկաները արարողության ու աղոթքի ամբողջ ընթացքին ակնածանքով էին դիտում ներկա գտնվող «ազգասերներին»: Պատարագից և քահանայի կարճ քարոզից Հետո առաջ է գալիս Շեկոն ու դաշույնը դնելով խաչի ու սպիտարանի վրա, մի քանի Հակիրճ խոսքերից Հետո, Հրավիրում է Եփրեմին (Դավթյան՝ Ս. Չ.): Եփրեմը գյուղացիների ոգուն և մտքին Հասկանալի ու պարզ ոճով նկարագրում է բալկանյան ազգերի ազատագրական պայքարների Հաջողությունը և խոսքը մասնավորեցնելով մեր պատմության և մեր ժողովրդի ճակատագրին, շեշտում է, թե պատվով սպրելու Համար պետք է բռնել պայքարի նույն

ճամփան: Գյուղացիների կողմից մի քանի խոսքով մեր Հպարտությունն ու Հրճվանքն եմ արտահայտում, որ նման հյուրեր ունենալու պատիվն ու երջանկությունն ունենք: Պատարագից Հետո հյուրերին և աչքի ընկնող գյուղացիներին Սարգիս տանուտերը իր մոտ է հրավիրում: Հոգեհացի Հաջորդօրը Շեկոն մի ուղեկցի ընկերակցությամբ ճանապարհվում է Թավրիզ:

Եփրեմը երկու ամիս մնաց Ղարադաղում մեզ մոտ: Նա, գյուղից գյուղ շրջելով, Համախմբում էր գյուղացիներին՝ խոսելով, բացատրելով, պարզում էր, թե ինչ կարևորություն ունի զենքը և ինչու ամեն մի գյուղացի պիտի զինվի:

Եփրեմը 1897թ. փետրվարի վերջին թողնում է Ղարադաղը գնում Թավրիզ ու մասնակցում Խանասորի⁶² արշավանքին:

⁶² Խանասորի արշավանք: Հայ ֆիդայիների կազմակերպած ռազմարշավ՝ ուղղված քրդական մագրիկ ցեղի ոչնչացման: Այդ քրդերը մեղադրվում էին թուրք-իրանական սահմանի մոտ՝ Սբ. Բարդուղիմեոս վանքի տարածքում, հայ ֆիդայիների սպանության համար: Այն տեղի է ունեցել 1897 թվականի հուլիսի 25-ին: Գաղափարը Նիկոլ Դումանին էր և արժանացել էր Քրիստափոր Միքայելյանի հավանությանը: Արդյունքում քրդական ցեղի զգալի մասը

Եփրեմը երկրորդ անգամ կրկին գալիս է Ղարադաղ իր կնոջ՝ Մնահիտի հետ, ուր երեք տարի Աղաղան գյուղում պաշտոնավարում է որպես ուսուցիչ՝ միշտ գյուղացիների ու աշակերտների սերն ու պաշտամունքը վայելելով:

Երրորդ ու վերջին անգամ՝ նրան տեսնում եմ Ալարում և Ղարադաղի թրքական շրջանում որպես սահմանադրական բանակի Հրամանատար, այնտեղ եկած՝ զսպելու և պատժելու բոլոր ըմբոստ խաներին»:

Հայ Հեղափոխական դաշնակցությունը առավել մեծ ակտիվություն Ղարադաղում ցուցաբերել է Խրանի սահմանադրական Հեղափոխության տարիներին (1905-1912), որին, ինչպես կտեսնեք Հետագա շարադրանքից, նա ակտիվորեն մասնակցել է:

կոտորվում է, հայերից սպանվում է 19 հոգի (այս մասին տե՛ս՝ Армянский вопрос 1991, с. 327-328):

ՆԱՐԱԴԱՂԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ XX

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ

Նախքան ժամանակաշրջանի քաղաքական իրադարձություններին անցնելը ներկայացնենք XX դարասկզբի Ղարադաղի գավառակների, գյուղերի և Հայ բնակչության մասին ընդհանուր տեղեկություններ:

Ամբողջ Ղարադաղը բաժանվում էր ութ գավառամասերի կամ գավառակների՝ **Դրզմար, Հասանուկ, Մեշախարա, Մընջվան, Քեյվան, Արաքսպար, Ուզումդուկ, Քեյեյբար**: Որոշ Հայ Հեղինակներ Ղարադաղի գավառակները թվարկելիս վերջին երեքը չեն հիշատակում, քանի որ դրանցում XIX դարի երկրորդ կեսից սկսած Հայաբնակ գյուղեր չկային: Թուրքերի կողմից անընդհատ չդադարող ավազակային Հարձակումները տարիների ընթացքում աստիճանաբար դատարկում էին Հայկական բնակավայրերը: Ի դեպ նշենք, որ Ղարադաղի թուրք խաները չէին բավարարվում միայն պարսկահպատակ Հայկական բնակավայրերը ճնշելով:

Նրանք, ինչպես նախկինում, Հաճախ անցնում էին Արաքսը և ասպատակում ու թալանում նաև Այուսիքի, Ղարաբաղի Հայկական գյուղերը: Նրանք նաև մասնակցել են 1905-1906 թվականների Անդրկովկասում ընթացող Հայ-թաթարական բախումներին՝ մասնակցելով իրենց ցեղակիցների կազմակերպած թե՛ թալանին, թե՛ զինված ընդհարումներին⁶³: ԱՀա թիֆլիսից Չանգեզուրի իրադրության վերաբերյալ կաթողիկոսին ուղղված Հեռագրերից մեկը (28.08.1905)՝ որպես վկայություն. «...Թաթարական կազմավորված Հորդանները Չանգեզուրի և Չեթրայելի գավառներում գլխապետ էն ամբողջ Հայ բնակչությանը առանց Հաշվի առնելու ահու և ցարիք: Պարսկաստանի սահմանից անցել է Թաթարական Հեթեկապորը կազմված մի խանի Հապար մարտուց, և գալիս է կազմված ցարաթիներում միանալու ավերող Հորդաններին: Ել գին սպասում է ոչնչացում»⁶⁴: 1906 թվականի օգոստոսի կեսերի Ուժանիսի և Եղվարդի վրա իրականացված Հարձակմանը մասնակցել է նաև դա-

⁶³ Մմբատյան Գ, Մյունիքը փորձության մեջ: Հայ-թաթարական բախումները, «Անտարես» հրատ., Երևան, 2017, էջ 209:

⁶⁴ Մմբատյան 2017, էջ 210, ծան. 354:

րադաղցի Բաղր խանը՝ իր 500 զինյալներով,⁶⁵ Ռա-
Հիմ և Ալի խաները՝ մոտ 1500 ձիավորներով⁶⁶:



Հստ 1904 թվականին Ե. Հո-
վասափյանցի կողմից կազմված վի-
ճակագրության՝ Ղարադաղում կար

29 Հայաբնակ գյուղ՝ մոտ 7000 Հայ բնակչով:
1912 թվականի Հունվարի 1-ին Թավրիզում
լույս տեսնող «Աղաղան» թերթում կազմվել և
հրատարակվել է Երվանդ Ֆրանգյանի⁶⁷ վիճա-
կագրությունը, Համաձայն որի՝ 1912 թվականի
դրությամբ Ղարադաղում կար 29 Հայաբնակ
գյուղ՝ 1199 տնով, մոտ 7200 շնչով և բազմա-
թիվ մեծ ու փոքր թուրքական գյուղեր⁶⁸: Ե.
Հովասափյանցի և Ե. Ֆրանգյանի վիճակագ-
րությունները գրեթե նույնն են թե՛ գյուղերի
քանակով ու անտնով և թե՛ առանձին վերց-
րած գյուղերի տների քանակով:

⁶⁵ Սմբատյան 2017, էջ 452:

⁶⁶ Սմբատյան 2017, էջ 454:

⁶⁷ Երվանդ Ֆրանգյան (1878, Իգդիր – 1928, Թավրիզ): Փիլիսո-
փայական գիտությունների դոկտոր: 1913 թվականին
ավարտել է Բեռլինի համալսարանը:

⁶⁸ «Աղաղան», 1912, մարտ, թիվ 2, էջ 14:



Հստ մեկ այլ վիճակագրության, որը
կազմել է ուսուցիչ Գալուստ Եգանյանը⁶⁹,
1912 թվականին Ղարադաղում կար 31
Հայաբնակ գյուղ՝ 1473 տնով ու 8838 շնչով⁷⁰:

Մեր կարծիքով այս վերջինը առավել արժա-
նահավատ է, քանի որ Հեղինակը ապրել և գործել է
Ղարադաղում, սակայն աշխատության մեջ ներկա-
յացրել ենք Երվանդ Ֆրանգյանի վիճակագրության
մանրամասները. մեզ չհաջողվեց գտնել Գալուստ
Եգանյանի վիճակագրությունը:

Նախորդող երկու տասնամյակի ընթացքում
լրվել կամ թրքաբնակ են դարձել շուրջ մեկուկես
տասնյակ Հայաբնակ գյուղեր, որոնցից են (ցանկը
ամբողջական չէ)՝ Դզմարից՝ Ջաֆարաբադ և
Նամնա գյուղերը, Հասանովից՝ Հուժ, Ռաշու,
Հավի, Վերին Լումա, Մեշափարա գավառակից՝

⁶⁹ Ազգային գործիչ, հետագայում՝ քահանա՝ Տեր Սահակ ան-
վամբ:

⁷⁰ «Ալիք», 1959, 22 դեկտեմբերի, թիվ 285:

Նեփեշտ⁷¹, Ղարադունա, Չարու, Ալիաբադ, Շրբ-վան, Միքիդի,⁷² Մումուդարուն:

N	Գավառակ/գյուղ	տուն/բնտանիք	բնակիչ
	Դզմար	309	1854
1	Խանազահ	96	576
2	Իրգիթ (Իրգուլթին)	51	306
3	Սարդու	48	288
4	Աղաղան	41	246
5	Ղըշլաղ	39	234
6	Ղուլուղի	34	204
	Հասանով	108	648
7	Նորաշեն	40	240
8	Օղա	35	210
9	Լումա	18	108
10	Զիաքու	15	90
	Մեշափարա	181	1086
11	Ողան	65	390
12	Մգկիթ	40	240
13	Գրբմրնավ	35	210
14	Քրլալա	25	150
15	Նեփեշտ	16	96
	Մինջվան	201	1206
16	Վինա	78	468
17	Ամրադուլ	40	240
18	Քարագլուխ	35	210
19	Սևահող	25	150
20	Վարդանաշեն	23	138

⁷¹ Մինչև XX դարասկիզբ կար Վերին և Ներքին Նեփեշտ, որից մեկը լքվեց:

⁷² Միրզայան Վ. Պ., Ղարադաղ (Պասպատունիք), «Ալիք», 1982, 20 հունվարի, թիվ 15:

	Քելվան	400	2400
21	Սրդրն	100	600
22	Ղասումաշեն	60	360
23	Գեոգլարա	60	360
24	Ասրան	50	300
25	Բերդ	40	240
26	Սուրուն	30	180
27	Նորաշեն	20	120
28	Աշրափ	20	120
29	Սրիտավու	20	120
	Ընդհանուր	1199	7200

Մինչև XX դարի կեսերը Ղարադաղում խճուղիներ չկային, և Հաղորդակցությունը Ահար և Թավրիզ քաղաքների հետ իրականացվում էր քարավանների միջոցով: Հաղորդակցության միջոցների սղոլթյան պատճառով Ժողովուրդը միանգամայն կտրված էր արտաքին աշխարհից և գրեթե անտեղյակ էր Հայրենի սարերից այն կողմ՝ կատարվող իրադարձություններին: Առևտուր գրեթե չկար, դրամի շրջանառությունը սահմանափակ էր, և ավելի տարածված էր ապրանքափոխանակությունը:

Ղարադաղի Հայաբնակ գյուղերի մեծ մասը XX դարի սկզբին պատկանում էին թուրք խաներին: Միայն 9 գյուղ պատկանում էր ղարադաղցի Հայտնի առևտրականներ թումանյանց եղբայրներին, 2 գյուղ (նաև մեկ գյուղի կեսը)՝ Ատրպատականի

Հայկական առաջնորդարանին, մեկական գյուղ՝ Մեղիք-Մուշկամբարյաններին (ՍևաՀող) և ՋՀանգիր բեկ Մեղիք-ՋՀանյանին (Ասրան): Գավառի բնակչության Հիմնական մասը շիա դավանանքի թուրքեր էին, հետո՝ Հայեր, վրանաբնակ քրդեր, թափառաշրջիկ գնչուներ: Տեղացի ժողովուրդը բավական տգետ էր և նախապաշարված: Ղարադաղի Հայերը բազմաթիվ սրբերից և սրբավայրերից բացի ունեին նաև տոտեմներ. պաշտամունքային կենդանիներից էր դողոշը, որոնք տեղացիները քթանթոշ էին կոչում և որի Համար Հատուկ սրբավայրեր ունեին: Այս ամենով Հանդերձ՝ Ղարադաղի Հայերը թե՛ գաղափարապես, թե՛ մշակույթային առումով և թե՛ իրենց քաջությամբ անհամեմատ ավելի բարձր էին կանգնած տեղացի մնացած ազգություններից: Տարածաշրջանում նրանք առանձնանում էին հյուրասիրությամբ⁷³:

XX դարի սկզբներին Ղարադաղում, ինչպես նաև ողջ Իրանում, դեռ գերիշխում էր ֆեոդալական արտադրական Հարաբերությունները: Բնակ-

⁷³ Բակունի Բ., Ղարադաղ, «Աղաղան», 1912, հունվար, թիվ 1, էջ 9-10:

չություն Հիմնական մասը զբաղվում էր գյուղատնտեսությամբ:


Ղարադաղի խաների սանձարձակությունների մասին տեղեկատվություններ Հաճախակի էին Հրապարակվում տվյալ ժամանակաշրջանում Թավրիզում և այլ քաղաքներում թողարկվող պարբերականներում: Ահա դրանցից մեկը. «Ղարադաղում անտերություն է: Ալի Մուրադ խանից գանգատվում են Նեփեշտ գյուղի Հայերը, որովհետև այդ խանն էլ, ինչպես երևում է, իր խանական ախորժակին զոհ է բերել ապօրինի գանձած դրամներ և սովորական եկամուտներից դուրս ցանկացել է նոր եկամուտներ ստեղծել: Չուտ խանական Հանցանք, որից զերծ չէ Ղարադաղում և ոչ մի խան»⁷⁴:

⁷⁴ Գավառական կյանք, «Ղարադաղ», 1914, 15 ապրիլի, թիվ 5, էջ 5:

ՆԱՐԵԿԱԼ ԻՐԱՆԻ



ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ



XX դարի սկզբին տարածաշրջանի ամենախոշոր քաղաքական իրադարձությունը 1905-1912 թվականների Իրանի սահմանադրական Հեղափոխությունն էր, որի ժամանակ կրկին ռազմական գործողությունների թատերաբեմ է դառնում Ղարադաղը:

Իրանի սահմանադրական Հեղափոխության առաջատար դեմքերից և ղեկավարներից մեկը Եփրեմ Դավթյանն⁷⁵ էր (Եփրեմ խան Սարդարը), ում

⁷⁵ Եփրեմ Դավթյան (Եփրեմ խան, 1868-1912): Հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ: 1880-ականներին անցել է Արևմտյան Հայաստան և միացել Մուշում, Մասունում, Էրզրումում, Վանում գործող ֆիդայական խմբերին: 1890 թվականին Սարգիս Կուկունյանի արշավանքին մասնակցելու համար ձերբակալվել է, արքայից Սիբիր, ապա Մախալին: 1896 թվականին փախչել է արքայազնից և հաստատվել Իրանում: Գործուն մասնակցություն է ունեցել Իրանի սահմանադրական հեղափոխությանը (1905-1911)՝ դառնալով նրա կազմակերպիչներից և հայտնի ղեկավարներից մեկը: Շահի գահընկեցությունից հետո նշանակվել է Իրանի ժամանակավոր կառավարության զինված ուժերի հրամանատար: Համար-

վինակցում էին ֆիդայական շարժման ականավոր ներկայացուցիչներ Քեռին⁷⁶ (Արշակ Գավաֆյան), Խեչոն,⁷⁷ Զուլումաթը⁷⁸: Ղարադաղում գտնվելու

վում է Իրանի ազգային հերոս (Армянский вопрос 1991, с. 172):

⁷⁶ Քեռի (Արշակ Գավաֆյան, 1858, Կարին - 1916, Ռևանդուզ): Հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, ֆիդայի, ՀՅԴ անդամ: 1890 թվականին մասնակցել է Ս. Կուկունյանի արշավանքին, 1904 թվականին՝ Մասունի ապստամբությանը: Հայ-թաթարական բախումների ժամանակ (1905-1906) Քեռին եղել է Չանգեզուրի ինքնապաշտպանության ղեկավարներից մեկը: Այնուհետև անցել է Պարսկաստան, միացել Եփրեմ Խանին, դարձել նրա օգնականը՝ մասնակցելով 1905-1911 թվականների Իրանական հեղափոխությանը: Վրեժխնդիր է եղել Եփրեմ Խանի սպանության համար: Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելուց և հայ կամավորական խմբերի կազմավորումից հետո Քեռին եղել է 4-րդ կամավորական գնդի հրամանատար, մասնակցել է 1915 թվականի Սարիղամիշի ճակատամարտին: Թաղված է Թիֆլիսում (այս մասին տե՛ս՝ Армянский вопрос 1991, с. 200):

⁷⁷ Խեչո (Ամիրյան-Գևորգյան Խաչատուր, 1868-1915): Հայ ազգային-ազատագրական շարժման մարտիկ, ՀՅԴ կուսակցության անդամ: Մասնակցել է Խանասորի արշավանքին, Իրանի հեղափոխական շարժմանը, համագործակցել է Եփրեմի և Քեռիի հետ: Առաջին համաշխարհային պատերազմի սկզբնական շրջանում եղել է հայկական կամավորական 2-րդ գնդի հրամանատար Դրաստամատ Կանայանի օգնականը: Մասնակցել է Վանի ազատագրման կռիվներին, զոհվել է Դատվանի համար մղվող կռիվում (այս մասին տե՛ս՝ Армянский вопрос 1991, с. 331):

տարիներին նա շրջել է Ատրպատականի բոլոր Հայքնակ գյուղերով: 1909 թվականի Հուլիսի 10-ին սահմանադրության կողմնակիցների Հաղթանակից և Թեհրանի գրավումից Հետո Եփրեմ խանը նշանակվել է Իրանի զինված ուժերի հրամանատար: 1909 թվականի նոյեմբերին Թեհրանից շարժվելով դեպի Ատրպատական՝ Եփրեմն իր սահմանադրական զորքերով, որոնց մեջ զգալի քանակ էին կազմում Հայերը, այդ թվում՝ նաև՝ նշանավոր Հայդուկներ, Ղարադաղում ջախջախիչ պարտության է մատնել միապետական ուժերին:

Ղարադաղի խաները ակտիվ մասնակցություն են ունեցել քաղաքացիական այս կռիվներին՝ ոմանք՝ սահմանադրական ուժերի կողմից, ոմանք՝ միապետական: Հաղթանակներ տանում էին մերթ

⁷⁸ Զուլումաթ (Պասեցի Հովհաննես, ? , Կ. Պոլիս-1911, Խոյ): Ազգային-ազատագրական շարժման մարտիկ, ֆիդայի: 1895-1898 թվականներին գործել է Ադրյուր Սերոբի խմբում: Վերջինիս գոհվելուց հետո անցել է Կովկաս: 1903 թվականին զենք է հասցրել Խլաթ ու Մասուն: Մասնակցել է Մշո դաշտի, Խլաթի ու Վասպուրականի կռիվներին: 1905 թվականից Պարսկաստանի սահմանազլխին (մասնավորապես Ս. Թադևոս առաքյալի վանքում) զբաղվել է զենք փոխադրելու գործով (այս մասին տե՛ս՝ Армянский вопрос 1991, с. 185):

մի կողմը, մերթ մյուս: Մոհամեդ Ալի շահի (1907-1909) գահընկեցությունից Հետո շահսեանները և Ղարադաղի Ռահիմ խանը, որոնք շահի կողմնակիցներն էին, զինված ընդհարումների ու ավարատության թատերաբեմ են սարքում Ատրպատականը, մասնավորապես Ղարադաղը:

1909 թվականի աշնանը Ռահիմ խանը խմբավորում է իր ուժերը և գրավում Արդաբեյլը, որից Հետո նա անցնում է Ղարադաղ՝ Թավրիզ արշավելու հեռանկարով: Եփրեմ Դավթյանի Հեղափոխական զորքը Ահարից ոչ Հեռու գտնվող Հերիզ թուրքաբնակ գյուղում փախուստի է մատնում Ռահիմ խանի գերակշռող ուժերին և մտնում Ահար, որի մասույցներում էլ Հաղթում է Ռահիմ խանի որդու զլխավորած զորքին: Մեկ օր անց՝ դեկտեմբերի 26-ին, Ռահիմ խանը մոտ 6000 զինյալներով արշավում է Ահար: Տեղի են ունենում մի շարք ընդհարումներ, որոնք կրկին ավարտվում են միապետական ուժերի պարտությամբ⁷⁹:

⁷⁹ Զգալի կորուստներ են լինում (գոհվում են նաև Ռահիմ խանի եղբայրը և եղբորորդիները): Հեղափոխական զորքի հայկական գունդը ունենում է յոթ վիրավոր և մեկ զերի:

Հաջորդ տարի՝ 1910 թվականի սկզբներին, Մինջվան և Քելեյբար գավառակներից Հարավ գրտնրվող Քելեյբար գավառակում կրկին ընդհարվում են Եփրեմն ու ՌաՀիմ խանը, և կրկին Հաջողությունը Հեղափոխականների կողմն էր: Դրանից Հետո որոշ խաներ լքում են ՌաՀիմին և անձնատուր լինում Եփրեմին: Անուհետև Եփրեմի զորքը Հարձակվում է Ղարադաղի Վանավա թուրքաբնակ գյուղի վրա, որտեղից իր զորքով նաՀանջել էր ՌաՀիմ խանը: Եփրեմը շեշտակի գրոհով գրավում է միապետականների թնդանոթային մարտկոցը, ինչից Հետո միապետականները կրկին բռնում են նաՀանջի ուղին՝ թողնելով թե՛ գերիներ, թե՛ կուտակած թալան: ՌաՀիմը նաՀանջում է դեպի հյուսիս՝ Արաքս գետ: Մինչ Հետապնդող Հեղափոխական զորքի Հասնելը նա ռուսական սահմանապահ զորագնդի աջակցությամբ անցնում է սահմանը: Եփրեմը վերադառնում է Քելեյբար, որտեղից նա մի ջոկատ՝ դաՀնակցական Սամսոնի գլխավորությամբ, ուղարկում է Մինջվանի և Քելեյվանի Հայկական գյուղերը՝ գյուղացիության վիճակը պարզելու նպատակով: Այդ ջոկատը լինում է Սուրուն, Սըղըն, Վինա գյուղե-

րում⁸⁰: 1910 թվականի Հունվարի վերջին ամբողջ Ղարադաղն արդեն Եփրեմի ու նրա զինակիցների ձեռքում էր: Սահմանադրականների ոգևորությունը չափ չունեի: Մարդիկ Հույս ունեին, որ վերջապես ամբողջ Փայտակարանը ընդմիշտ կմաքրվի կեղեքիչ խաների ճիրաններից, և այդպիսով վերջ կտրվի Ատրպատականի ալեծուսի դրությանը: Այդ Հույսն ավելի խորացավ, երբ պարսից կառավարությունը ռուսական կողմից պահանջեց վերադարձնել ՌաՀիմ խանին՝ որպես պատերազմական Հանցագործի⁸¹:

Մի քանի ամիս անց ՌաՀիմ խանը իր զորքով վերադառնում է Ղարադաղ, և կրկին տեղի են ունենում մի շարք զինված ընդհարումներ Քելեյբար-ԱՀար Հատվածում, սկզբում փոփոխական Հաջողություններով, Հետո Հեղափոխականների Հաղթանակով: Այդ ժամանակ Հեղափոխականների շարքերում կռվում էր նաև Հայտնի դաՀնակցական Խե-

⁸⁰ Ֆարրո, Եփրեմի գործունեությունը Պարսկաստանում, «Հայրենիք», Բոստոն, 1924, դեկտեմբեր, թիվ 2 (26):

⁸¹ Միմոնյան Հ., 1905-1912թթ. պարսկական հեղափոխությունը և հայերը, ԵՊՀ հրատ., Երևան, 2017, էջ 332:

չոն, ով ընդհարումներից մեկի ժամանակ ծանր վիրավորում է ստանում: ՌաՀիմը կրկին փախչում է Արաքսի ձախ ափը և արժանանում է միապետականների աջակից ռուսական ցարական բանակի Հանդիսավոր ընդունելությունը⁸²:

Օգտվելով քաղաքական խառը իրավիճակից՝ ակտիվանում են նաև Հեղափոխական գործընթացներին չմասնակցող խաները: 1909-1910 թվականներին Մեշափարա գավառակի Ալի խանը բավական նեղություններ սկսեց պատճառել Օղա, Ողան և Մզգիթ Հայաբնակ գյուղերին: 1909 թվականի ամառը նա Ողանի դիմաց՝ Իրանի այդ ժամանակվա ամենաՀարուստ գերդաստաններից մեկի՝ Թումանյանցներին պատկանող Հողատարածքում, իր և իր գերդաստանի Համար ամառանոց է կառուցում: Այդ նույն ժամանակ Ողանի քառանան էր խանագահի տեր Առաքել Դանիելյանը: Նա ուներ դավաճանի և փողատերի մեծ Համբավ: Տեր Առաքելը Ալի խանին անընդհատ մատնություններ էր անում՝ Ողանում իրականացվող դաշնակցական ժողովե-

⁸² Ֆարրո, Եփրեմի գործունեությունը Պարսկաստանում, «Հայրենիք», Բոստոն, 1925, թիվ 3:

րի, զենքերի և ցանկացած այլ շարժի մասին: Ի վերջո ողանցիք քշում են տեր Առաքելին, ով փախչում է իր Հարազատ Խանագահը: Իսկ Ալի խանով սկսում են զբաղվել Թումանյանցները իրենց կառավարչի՝ Ալեքսան բեկ Հաճնազարյանի (բնիկ Թիֆլիսցի էր, ծագումով Արցախի Մելիք-Հաճնազարյաններից) միջոցով: Ալեքսանի նստավայրը Վինայի Թումանյանցների առևտրային տունն էր: 1909 թվականի օգոստոսի 11-ին Թավրիզի ռուսական կայազորից մի զորախումբ գալիս է ԱՀար և ՌաՀիմ խանից ստանում ռուսահպատակներից մինչև այդ թալանված գույքի արժեքը՝ 200000 ռուբլի և 180 ուղտ⁸³: Թումանյանցների միջնորդությամբ այդ զորախմբից մեկ ջոկատ՝ 100 Հետևակ և 20 ձիավոր կողակ⁸⁴, զինված վինացի երիտասարդների Հետ շարժվում է Ողան և Հարձակվում Ալի խանի ամառանոցի վրա: Կողակները, ինչպես ցույց է տվել

⁸³ «Մշակ», 1909, 17 սեպտեմբերի, թիվ 203:

⁸⁴ Նույնն է՝ կազակ «1. միջնադարյան Ռուսաստանում մարդկանց խումբ, որ կազմված էր պետության ծայրամասերը փախած գյուղացիներից, 2. ցարական Ռուսաստանի ծայրամասերը արտագաղթած արտոնյալ գյուղացի, ռազմիկ, զինվորական, մարզերի բնակիչ»:

անցած տասնամյակների տարածաշրջանի պատմությունը, միշտ պատրաստ էին փողի դիմաց իրականացնելու ցանկացած ռազմական գործողություն: Հարձակման արդյունքում սպանվում է Ալիխանի աղջիկը, քեռորդին, ծառան, իսկ եղբայրը՝ Ասադուլլան (ով Հետագայում, ինչպես կտեսնենք, շատ նեղություններ է պատճառում ղարաղաղցիներին) կորցնում է աջ թևը: Ռուսական զորախումբը մինչև օգոստոսի 25-ը մնում է Ողանում: Այս ընդհարումից Հետո Ալիխանի կողմնակից խաները Հավաքվում են և Հարձակվում Վինայի վրա: Վինայի զինված երիտասարդությունը լավ դիմադրություն է ցույց տալիս թուրք հրոսակներին: Ընդհարումը տևում է մի քանի օր, ինչից Հետո վինացիները անցնում են Հակահարձակման և ցաքուցրիվ անում խաների զինական ուժերը: Խաները Հաշտություն են առաջարկում, սակայն վինացիները մերժում են և կռիվը շարունակում մինչև վերջնական Հաղթանակ⁸⁵: Նույն ամսի 27-ին Ալիխանը Քեյվան գավառակում մահանում է ծանր Հիվանդությունից:

⁸⁵ Գալուստ (Տեր Սահակ քահանա) Եգանյանի նոթագրություններից, «Ալիք», 1979, 10 հունվարի, թիվ 253 (4):

Հեղափոխական և բարձիթողի այդ տարիներին Իրանում որոշակի ակտիվություն էր ցուցաբերում Հայ Հեղափոխական դաշնակցությունը: Վերջինիս Թավրիզի մասնաճյուղը փորձում էր իր Հսկողության կամ ազդեցության տակ պահել նաև Ղարաղաղի Հայաբնակ գյուղերը՝ գյուղացիներին վարժեցնելու ինքնապաշտպանությանը և ազգային գաղափարներին:

1910 թվականի աշնանը Թավրիզից դաշնակցական «Արեժ» կոմիտեի Հրահանգով Ղարաղաղ են գալիս վեց հոգի փորձված ֆիդայիներ և Հակոբ անունով մեկ մտավորական: Այդ ֆիդայիների անուններն էին Արշակ (սյունեցի, Խուլիգան մականվամբ), Երվանդ, Ստեփան, Սարգիս, Կարո և Ռախչի: Նույն ժամանակ խանագազցի տեր Առաքիլը շարունակում էր իր ազգադավ գործունեությունը: Բանը հասել էր նրան, որ նա Լումայում մի որևայրի կնոջ աղջկան, մոր Հետ գործակցելով, փաճառել է Ղահրաման խանին: Մատնիչներ կամ թուրք խաների Հետ Համագործակցողներ կային նաև Քեյվանում և Մինջվանում: Սրղընում իրենց մասնություններով աչքի էին ընկել գյուղի մելիքն

ու քահանան, Մինջվանում Հայտնի էր մատնիչ Աթան կամԿուճի Աթան⁸⁶:

Ժամանած ֆիդայիներին հրահանգված էր կանոնավորել կամ կազմակերպել Ղարադաղի ինքնապաշտպանությունը, արթնացնել ազգային արժանապատվությունը, պատժել դավաճաններին, սանձահարել թուրք խաներին: Երվանդն ու Սարգիսը ստանձնեցին Մեշափարա գավառակը, Հակոբը անցավ Դզմար, Արշակը, Ստեփանը, Բախշին ու Կարոն անցան Մինջվան ու Քեյվան գավառակները:

Մինջվան գավառակում դաշնակցականներ քիչ կային, սակայն Համակրողների և Համագործակցողների թիվը այլ գավառակների Համեմատ մեծ էր: Հայտնի են ոմանց անունները՝ Գյուլբուդաղյան Բաբան, Հովհաննես, Խաչատուր (Հայտնի զինագործ էր), քարագլխեցի Սիմոն Տեր-Հովսեփյան (մասնակցել էր կամավորական շարժումներին և անհայտ կորել), քարագլխեցի Բեգլար, վինեցի Գրիգոր և ուրիշներ: Եկվոր ֆիդայիները Մինջվա-

⁸⁶ Գալուստ (Տեր Սահակ քահանա) Եգանյանի նոթագրություններից, «Ալիք», 1979, 11 հունվարի, թիվ 5:

նի գյուղերում ժողովներ էին կազմակերպում, միջոյններ հավաքում, զենք ու զինամթերք գնում:

Մինջվանից Հետո անցնում են Քեյվան, որը ազգային շարժման տեսանկյունից անբարենպաստ վայր էր համարվում: Չանգեզուրցի Արշակն ու ընկերները Սըղընում Չարդար Խաչու տանը ճաշում էին, երբ ներս են մտնում Քերիմ խանի՝ մոտ 50 զինված մարդիկ և եկվորներին առաջարկում խանի մոտ հյուր գնալ: Բախշին ու Կարոն, ուլքեր տեղացիների տարազով էին, խառնվում են գյուղացիների Հետ և աննկատ դուրս գալիս, իսկ Արշակն ու Ստեփանը զինված թուրքերի Հետ շարժվում են դեպի Քերիմ խանի գյուղը: Նախապես դիրքավորված Կարոն ու Բախշին գյուղից դուրս կրակ են բացում թուրքերի վրա, որոնց անմիջապես միանում են նաև Արշակն ու Ստեփանը: Թուրքերը, երկու վիրավոր տալով, փախչում են: Սըղընի մելիքը այս դեպքից Հետո փախչում է Բերդին գյուղը և այնտեղ թաքնվում: Բախշին ու Կարոն երկար փնտրելուց Հետո գտնում են նրան և տանում դեպի Սըղըն, սակայն մեկիքը ճանապարհին սրտի կաթվածից մահանում է: Իսկ Սըղընի քահանան փախչում է գյուղից և չի վե-

րադառնում մինչև եկվոր ֆիդայիների գավառակից Հեռանալը:

1911 թվականին Ղարաբաղից Ղարադաղ են գալիս նոր դաշնակցական գործիչներ՝ Աղասին և Արտեմը: Այդ ժամանակ Ատրպատականի գավառապետի Հրահանգով ընդառաջելով Թավրիզի Հայոց թեմի բողոքագրին՝ ԱՀարի կառավարիչը բռնում է Քերիմ խանին և ուղարկում Թավրիզ: Իսկ Եփրեմից պարտված և Արաքսի ձախ ափ անցած Ռազիմ խանը փորձեր էր անում ետ վերադառնալ: Ռազիմ խանի և Եփրեմի ընդհարումների ժամանակ Քերիմ խանը Ռազիմին աջակցություն չէր ցուցաբերել, ինչի պատճառով նրանք թշնամացել էին: Այնպես որ, երբ Ռազիմը անցավ Արաքսը, Քերիմի ընտանիքը, չնայած այն հանգամանքին, որ վերջինս ձերբակալվել էր Հայկական գյուղերը թալանելու համար, ապավինեց Հայերին և օգնություն խնդրեց: Ղարադաղի դաշնակցության ներկայացուցիչները տեղացիներից զինում են 150 երիտասարդի և անցնում Ղասումաշեն (Քեյվան): Ռազիմ խանի որդին երկու անգամ Հարձակվում է Քեյվան գավառակի վրա, բայց Հանդիպելով Հայերի և Քե-

րիմ խանի մարդկանց կատաղի դիմադրությամբ՝ Հետ է նահանջում: Այս կռիվներում աչքի են ընկել Միրայել Ավագյանն ու Օհանջան Մարությանը: Քեյվանում Հաջողության չհասնելուց Հետո Ռազիմ խանը շեղում է ճանապարհը և անցնում է ԱՀարի կողմերը⁸⁷:

Ինքնապաշտպանությունը Ղարադաղի որոշ գյուղերում քիչ թե շատ ամուր հիմքերի վրա է դրվում: Աչքի են ընկնում ինչպես տեղացիները, այնպես էլ եկվոր դաշնակցականները. Գզմար և Հասանով գավառակներում երկու Հակոբները, Ալեքսանը, Ղազարոսը, Արշակ և Նիկալա Սարգսյանները, Մեշափարա գավառակում Հարությունը, Երվանդը, Սարգիսը, Գալուստ Եգանյանը, Մինջվան գավառակում Արշակը, Ստեփանը, Կարոն, Բախչին: Իրագործվում են նաև ահաբեկումներ. Խանագահում սպանվում է դավաճան տեր Առաքելը, ում դիակը երկու օր մնում է անթաղ, Լումայում գնդակահարվում է որբեայրի Թամամը, ով իր աղջկան ծախել էր թուրք խանին: Հետագայում աղջկան ետ

⁸⁷ Գալուստ (Տեր Սահակ քահանա) Եգանյանի նոթագրություններից, «Ալիք», 1979, 11 հունվարի, թիվ 5:

են բերում և ամուսնացնում Հայի Հետ: Մինչվանում սպանվում է մատնիչ Կուճի Աթան: Այս դեպքերից Հետո գրեթե վերանում են մատնություններն ու թուրք խաների Հետ Համագործակցությունները:

Հեղափոխական տարիների թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական անիշխանությունը դրսևորվում էր բոլոր բնագավառներում: Գյուղացիները տարեկան Հարկերը ստիպված վճարում էին երկու անգամ. մի անգամ միապետականներին, մի անգամ էլ՝ սահմանադրական Հարկահավաքներին: Հարկերը տարածվում էին ինչպես մարդկանց, այնպես էլ անասունների վրա: Բացի այդ, խոտհարքի ժամանակ գյուղացիները ութ խուրձից մեկը պետք է տային խանին⁸⁸: Կատարյալ անտերություն էր: Ամեն խան և բեկ իր գյուղում վերածվել էր մի ինքնիշխան արքայի. տուգանում էր, ծեծում, կողոպտում իր Հպատակ գյուղացուն: Կենտրոնական իշխանությունը գրեթե վերացել էր⁸⁹: «Մոյս երեւէ ամբա է ինչ Ղարադաղը արյոնահեղ կոնիւների թափերաբեմ է դարձել,- 1912 թվականի Հունվարին գրում է «Աղա-

⁸⁸ «Աղադան», 1912, հուլիս, թիվ 4, էջ 15:

⁸⁹ «Աղադան», 1912, հունվար, թիվ 1, էջ 30:

դան» թերթի թղթակիցը,- Լըշադի և Բոյո-Չ խանի երկարատե կոնիւների ընթացդեմ, ինչպէս միշտ, այնպէս էլ այս անգամ վնասվել են մի շարք Գյո-ղեր, որոնցից ամենից շատ դո՛ւժել են Թալաթեյը (Նորաքենը՝ Ս.Ջ.) և Բանգ Մո-ւլէը»⁹⁰:

1911 թվականի փետրվարի սկզբին (Հեղափոխական երկրորդ կառավարության օրերին) տեղի ունեցավ Դզմար գավառակի Ղուլուդի Հայաբնակ գյուղի կոտորածը: Ղուլուդիի վրա իրենց Հրոսակներով Հարձակվեցին Իսկանդեր, Ռուսաստանից վերադարձած Ռահիմ և Հիդայաթ խաները: Շրջապատելով գյուղը՝ նրանք պահանջեցին 400 թուման (800 ռուբլի) տուգանք: Գյուղացիները չափազանց անհանգստացել էին՝ նկատելով, որ եկվորների մտադրությունն ավելի չար է: Սակայն խաները փարատելով նրանց մտահոգությունը՝ ասել էին, թե նշված գումարով ամեն ինչ վերջանում է: Բայց կեսգիշերին, երբ ամբողջ գյուղը քնած էր, այնտեղ են թափվում խաների Հրոսակները և սկսում կողոպտան ու կոտորածը: Գյուղից փախածների մի մասը, այդ թվում՝ երեխաներ, ազատվելով սրի երա-

⁹⁰ «Աղադան», 1912, հունվար, թիվ 1, էջ 27:

խից, զոհ են գնում ձմռան սոսկալի ցրտին: Որոշ թվով ղուլուղեցիներ փախչում են դեպի Հայաբնակ Խանազաճ գյուղը, բայց ճանապարհին ցուրտը շատ կյանքեր է խլում: Հետևելով փախչողներին՝ հրոսակները մտնում են Խանազաճ, որը նույնպես կողոպտվում ու թալանվում է: Քշվում է գրեթե ողջ անասնազխաքանակը⁹¹: Նույն տարի Թավրիզի իշխանությունները Ռահիմ խանին խաբեություն մատուցում են Թավրիզ և բանտարկում, որտեղ էլ նա մահանում է:

1911 թվականի ամռան ամիսներին, օգտվելով երկրում տիրող խառը վիճակից, Քեյվան գավառակի խաները թալանի ու ավերածության են ենթարկում իրենց պատկանող Հայկական գյուղերը⁹²: Հալածանքն ու պատճառված վնասները այնքան

⁹¹ Միմոնյան 2010, հատ. IV, էջ 622-623, այս մասին տե՛ս նաև՝ «Մշակ», 1911, թիվ 33:

⁹² Ահա այդ տարիների Քեյվանի գյուղերի պատկանելիությունը՝ Դուգեյ-Դարան (Գեոգդարա), Նորաշենը, Աշրափի կեսը պատկանում էին Ռահիմ խանին, Աշրափի մյուս կեսը՝ Աբդուլ Սամեդ խանին, Մուրուն, Ղասումաշենը, Բերդին-Ետքը, Մըղըն, Մըհդավը՝ Քերիմ խանին, հայապատկան էր միայն Ասրան՝ Ջհանգիր բեկ Մելիք-Ջհանյանին («Մշակ», 1911, թիվ 135):

զգալի էին, որ խեղճ ու անճար քեյվանցիները ըստիպված էին նույնիսկ արտագաղթել իրենց ծննդավայրերից: Ղարադաղից «Մշակին» Հաղորդում էին. «Հայ գի-ղերը՝ Սօփգին, Սի-րո-ն, Ըսրան, Սասըմձենդ (Ղասումաշեն՝ Ս.Ջ.), Բերդ՝ Թալան-ե-ցին՝ Բերիմ խանի շեռ-խով: Դեմադրող սի-րո-նցիներին քանրապես վերա-որվել են 8 հոգի, սպան-ել է մեկ հոգի: Բո-նաբար-աժ է մեկ կին: Թալան-աժ ընդանիվները պարսպար-ել են Ըվարսին է- Եսա Թի-րթ գի-ղերո-մ, որոնք պարսկանո-մ են Ըբդի-լ-Սամեդ խանին: Թշ-առ-նե-րի գրո-թի-նը կրիտիվական է: Ղարադաղի մնացած Հայերին է- չրիպոնեաներին ևս սպանո-մ է վրանգ»⁹³:

Իրադարձությունները զարգացել են Հետևյալ կերպ. որոշ գյուղեր հրաժարվեցին վճարել Քերիմ խանին Հասանելիք Հարկերը: Խանը, զայրացած ենթակաների այդպիսի Հանդգնությունից, հրամայում է ծառաներին իր հոտերը արածեցնել Ղասումաշենի արտերում: Ղասումաշենցիները քշում են և գյուղ բերում խանի նախիրները ու Հետո էլ զինաթափում ու ծեծում դրանց Հետևից ուղարկված խանի մարդ-

⁹³ Միմոնյան 2010, հատ. IV, էջ 626, նաև՝ «Ախուրեան», 1911, 17 հունիսի, թիվ 34:

կանց: Քերիմ խանը, կենտրոնացնելով իր բոլոր ուժերը, դիմում է զինված Հարձակման: Երկու օր դիմադրելուց Հեսո Հայերը տեղի են տալիս, ինչից Հեսո սկսվում է գաղթ ու թալան: Մինչ Ղասումաշեն և Սուրուն գյուղերը զինված դիմադրում էին, Արդըն, Ասրան, Բերդին-Ետք, Մըհապ գյուղերի բնակիչները իրենց Հոտերով քաշվում են թուրքաբնակ Ավարսին և Նիժ գյուղերը: Սուրունից վիրավորվածներին տեղափոխում են Վինա՝ բուժման: Ընդհարման արդյունքում երկուստեք լինում են սպանվածներ: Ավարսինում և Նիժում ապաստանած Հայերից ուղարկված բանագնացին Քերիմ խանը գնդակահարում է: Ասպատակություններին շտապում են մասնակցել նաև այլ խաներ: Թալանվում են Քեյվանի գրեթե բոլոր Հայաբնակ գյուղերը: Քեյվանցին մնում է առանց ապրուստի միջոցների:

Տեղի ունեցածի կապակցությամբ Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղապահ Գևորգ արք. Սուրենյանցը 1911 թվականի Հուլիսի 2-ին Հետևյալ Հեռագիրն է հղում պարսից շահի խնամակալ Նասր օլ Մոլքին. «Նորին Բարչրո-թեան պարսից կայսերական խնամակալին. խնդրո՞ւմ ենք յարգանքով պաշտպանել

Ղարադաղի Հայերին և՛ Մակո-այ Ասրավանիչը (Աբովադեի վանքը), որոնք ենթարկո՞ւած են խաների աւելա՞ծութեան»: Հուլիսի 6-ին Գևորգ արքեպիսկոպոսը պարսից շահի խնամակալից ստանում է Հետևյալ պատասխանը. «Ըմենայն Հայոց կաթողիկոսական պետական Գևորգ արքեպիսկոպոսին. Ղարադաղի և՛ Մակո-ի Հայ Ժողովրդեան ապահովութեանը շարժուիլ է իմ արդին: Հրաման է արշակո՞ւած նշո՞ւած բնակավայրերում վերականգնել խաղաղութեանը և՛ պարտել յանպարտներին: Հա՞սարի եղե՞ք իմ արդանց բարեկամութեան»⁹⁴: «Արորը» նշում էր, որ Ղարադաղի թուրք խաների կատաղության հիմնական պատճառն այն է, որ Հայ Հեղափոխականները Հայ միամիտ գյուղացիներին քարոզել էին չվճարել կալվածական տուրքերը, ինչի Հետևանքը նրանց «կյանքի քանդումը» եղավ⁹⁵:

1911 թվականի դրությամբ ՋՀանգիր բեկ Մելիք-ՋՀանյանը արդեն չէր վարում Քեյվանի մելիքության կամ վերակացուի պաշտոնը: Քերիմ խանի

⁹⁴ Միմոնյան 2010, հատ. IV, էջ 626, նաև՝ «Ժայռ», 1911, 7 օգոստոսի, թիվ 48:

⁹⁵ Միմոնյան 2010, հատ. IV, էջ 626, նաև՝ «Արոր», 1911, մայիս-հունիս, թիվ 5-6, էջ 166-167:

ճնշման տակ այդ իրավասույթյունը հանձնվել էր տեղի թուրք խաներից մեկին, իսկ Ջհանգիր բեկն ու իր եղբայր Աբրահամը գաղթել են Թավրիզ: Հայ գյուղացիների բողոքներից Հեսո Ատրպատականի թեմական առաջնորդ Կարապետ եպիսկոպոս Տեր Մկրտչյանը դիմել էր նահանգապետին՝ բացատրելով, որ Ջհանգիր բեկ Մելիք-Ջհանյանը պահպանում է վերակացուի իրավունքը և խնդրել էր նրան վերականգնել իր նախկին պաշտոնում: Սակայն Քերիմ խանի ճնշման տակ նահանգապետը չբավարարեց այդ բողոքը:

Քեյվան գավառակի բոլոր հայաբնակ գյուղերից մոտ 60 հոգի գնում են Ահար վարչական կենտրոն և գանգատվում խաներից: «Արդեն երե՛՛տ ասե՛ն է, ինչ թալանված ու բռնաբարված գյուղացիները խորշ են գալիս Ահարի ու Թավրիզի փողոցներում, անդադար մաշում են առաջնորդարանի ու դատարանի շենքերը, բայց իչ ո՛ր», - գրում է ժամանակի պարբերականը⁹⁶: Քեյվանցիների բողոքներից Հեսո Ահար դատվելու են կանչվում հայտնի կողոպտիչ ու հարստահարիչ Աբդուլ Սամեդ խանը և Ռոստամ

⁹⁶ «Աղաղան», 1912, մայիս, թիվ 3, էջ 30:

խանը: Քերիմ խանը այդ ընթացքում թեմական առաջնորդարանի պահանջով պահվում էր Թավրիզում մինչև Ահարում դատի ավարտը: Դատի ընթացքում Քեյվանի հայ գյուղացիների հավատարմատար է նշանակվում Թումանյանց եղբայրներին պատկանող Ղարադաղի գյուղերից մեկի կառավարիչ՝ Սարգիս Հովնանյանը: Դեպքերի հետագա ընթացքը ցույց է տալիս, որ Ահարում քեյվանցիներին չի հաջողվում խաներից փոխհատուցում ստանալ, որը դնահատվել էր 40000 ղուան: Հայերը որոշում են դատական գործը վերսկսել այս անգամ Թավրիզում: Քեյվան գավառակի Արափ, Ղասրմաշեն, Ասրուն գյուղերի վստահորդները գնում - ներկայանում են Թավրիզի առաջնորդարանին և հայց ներկայացնում Քերիմ խանի, Ղահրաման խանի և Մեհտի Ղուլի խանի դեմ: Նրանք Ջհանգիր բեկի և առաջնորդարանի ներկայացուցիչի հետ ներկայանում են Ռաշիդ ուլ Մուլքին և ներկայացնում կրած փաստերը: Մի քանի օրից Թավրիզ են գալիս նաև Արդին, Մըհաբե, Ասրան գյուղերի լիազորները, Ս. Հովնանյանը և Քեյվանի հոգևոր հովիվ տեր Մուշիկ քահանան: Այդ օրերին ստացվում է մի նամակ-

բողոք Շուշիում ապաստանած քեյվանցիներից, որոնք, նկարագրելով իրենց դառը վիճակը, խնդրում են առաջնորդարանին Քերիմ խանից ստանալ վնասների փոխհատուցումները, որպեսզի իրենք Հնարավորութիւն ունենան վերադառնալ իրենց Հայրենիքը⁹⁷: Քեյվանի կողոպտված գյուղացիներին այդպես էլ չի հաջողվում վերականգնել իրենց կորուստները և ավերված գույքը: 1912 թվականի Հունվարի վերջին Քեյվան գավառակից մոտ 150 տուն հայեր, չունենալով ապրուստի որևէ հնարավորություն, կրկին անցնում են Արաքս գետը և ապաստանում Ղարաբաղում: Ղարաբաղի մյուս գավառակները նույնպես ծանր օրեր էին ապրում և արտագաղթելու հարցը անընդհատ օրակարգում էր: Ատրպատականի թեմը ջանքեր էր գործադրում գյուղացիներին պաշտելու ուղղությամբ⁹⁸:

1911 թվականի Հուլիս ամսին Հարձակումներ են տեղի ունենում նաև Դզմար գավառակի Հայաբնակ գյուղերի վրա: Թալանվում են Օղա, Խանագազ, Ղուլուդի, Գիրմնավ, Նորաշեն գյուղերը:

⁹⁷ «Աղաղան», 1912, մայիս, թիվ 3, էջ 30-31:

⁹⁸ «Աղաղան», 1912, մարտ, թիվ 2, էջ 3:

Բացի անասուններից բոլոր գյուղերից առգրավվել և տարվել են նաև հրացաններ ու փամփուշտներ: Վշվել տարվել են Թումանյանցներին պատկանող Ողան, Բալա, Քոհրուզի (վերջին երկուսը՝ Թրքաբնակ) գյուղերի նախիրները: Հունիսի 22-ին Խարիկ և Դեմուրշիլար Թրքաբնակ գյուղերի ամբոխը չրջապատում է Մեշափարա գավառակի՝ Թումանյանցներին պատկանող Մզգիթ գյուղը և մի կողմից սկսում գնդակոծություն, իսկ մյուս կողմից փորձում է Հովիվներից խլել գյուղի մերձակայքում արածող անասուններն ու ձիերը: Չորս զինված Հայ Հովիվները Ռուստամ-բեկ Տեր-Գրիգորյանի, Հ. Հարությունյանի և երկու ռուս զինծառայողների օգնությամբ երկար հրացանաձգությունից հետո կարողանում են պաշտպանել կենդանիներին և տեղափոխել գյուղը: Թուրքերը, հանդիպելով Հայերի զինված դիմադրությունը, չեն կարողանում մտնել գյուղ: Այս նույն ժամանակ թուրք հրոսակների մեկ այլ խումբ հարձակվում է Թումանյանցներին պատկանող գյուղից մի քանի կիլոմետր հեռու գտնվող խոտի դեզերի և անտառների վրա հսկողություն իրականացնող Բաղդասար բեկ Բաբայանի և Համ-

բարձում՝ Նազարյանի վրա: Արդյունքում առաջինը սպանվում է, իսկ երկրորդը՝ ծանր վիրավորվում⁹⁹:

1913 թվականին կրկին Հարձակման են ենթարկվում Մեչափարա և Հասանով գավառակների Հայկական գյուղերը: Չնայած կազմակերպվում է դիմադրություն, այնուամենայնիվ Հայկական գյուղերը մեծ վնասներ են կրում: Ամենից շատը տուժում են Մզգիթ, Հասանով գավառակի Օղա, Ղուլուղի և Շավի գյուղերը¹⁰⁰: Այս Հարձակումները իրականացվել էին Շիրինդիլ և Հուսեյն խանների կողմից: Վերջիններիս հիմնական նպատակը գյուղացիների անասունների նախիրներին տիրանալն էր:

1913 թվականին ղարադաղցի մեկ այլ խան՝ Մամադ անունով, գյուղացիների հանդեպ կատարած կողոպուտների պատճառով Թավրիզի իշխանավորների կողմից կալանավորվում է: Դատական նիստի ժամանակ որոշում է կայացվում, որպես կա-

⁹⁹ «Մշակ», 1911, 20 հուլիսի, թիվ 154:

¹⁰⁰ Գալուստ (Տեր Սահակ քահանա) Եգանյանի նորագրություններից, «Ալիք», 1979, 11 հունվարի, թիվ 5:

տարված թալանի փոխհատուցում կողոպտվողներին դրամական բավարարություն տալ¹⁰¹:

Անասնագողությունը արդեն սովորական երևույթ էր դարձել, ինչի արդյունքում Ղարադաղի ճայ գյուղացիությունը մեծ վնասներ էր կրում: Շատ սեպերում դա ուղեկցվում էր հովիտների ու գյուղացիների սպանությամբ: 1911 թվականի աշնանը գողանում են Աղաղան գյուղի անասունները. «Դեպքերը այնչափ սովորական են դառնել, - գրում է ժամանակակից հոգվածագիրը, - որ մենք մե պետակ սասնասարքոթյամբ եմք լսում կողոպուտի ու թալանի լուրերը այս կամ այն գյուղից»¹⁰²: Հիշյալ ժամանակաշրջանում Աղաղան և Իրգութին գյուղերը պատկանում էին Հաջի Ռուստամ խանին: Նրա պատականությունն էր դրանք պահպանել այլ խանների՝ պարբերական բնույթ կրող ոտնձգություններից: Սակայն գյուղերը քանիցս թալանվում էին, իսկ գողացված անասունները նա այդպես էլ չի կարողացել հո բերել¹⁰³: Սահմանադրականների և միապետա-

¹⁰¹ «Ղարադաղ», 1914, հունվար, թիվ 1, էջ 24:

¹⁰² «Աղաղան», 1912, հունվար, թիվ 1, էջ 31:

¹⁰³ «Աղաղան», 1912, հունվար, թիվ 1, էջ 28:

կանների ընդհարումների ժամանակաշրջանում՝ միապետականների կողմնակից նույն Հաջի Ռուստամ խանը սահմանադրական ուժերի կողմնակից Համարվող Աղաղանի գյուղացիներ Խաչատուր Գեորգյանին, Խաչատուր Մկրտչյանին, Վահան Գրիգորյանին, Աղաջան Պետրոսյանին, Հարություն Խաչատրյանին և Իրգուլթինի մի քանի գյուղացիների տուգանում է խոշոր գումարներով, մի քանիսին էլ ծեծի է ենթարկում¹⁰⁴: Առավել նողկալին խանապատկան Հայկական գյուղերում խանների կողմից նշանակված Հայ քյոխվանների կողմից (որոնք իրենց մեղք էին կոչում) սեփական ժողովրդին թուրք խանի օգտին կեղեքելու դեպքերն են: Դրգմար գավառակի Խանազազ գյուղի քյոխվա Մարտիրոս Դադյանի Համար սովորական էր դարձել գյուղացիներին մարմնական պատիժների ենթարկելը, խանի օգտին անհիմն տուգանքներ գանձելը և ամեն առիթով մատնություններ իրականացնելը¹⁰⁵:

¹⁰⁴ «Աղաղան», 1912, մարտ, թիվ 2, հավելված, էջ 9:

¹⁰⁵ «Արև», Բագու, 19 մայիսի, 1917, թիվ 102:

Գյուղացու՝ առանց այն էլ ծանր տնտեսական վիճակը էլ ավելի էին խորացնում պետական մարմիններն ու գյուղական վաշխառուները, որոնք, ճգնաժամային իրավիճակներից օգտվելով, Հողի կամ աշխատանքի դիմաց բարձր տոկոսներով դրամական փոխառություններ էին Հատկացնում գյուղացիներին: 1914 թվականը գյուղատնտեսական առումով բացառիկ բարեհաջող տարի էր: Նորաշենցի մի Հողվածագրի խոսքերով գյուղացիք Հրրծվում էին բերքի առատությունից, երբ ամեն անգամ դաշտ էին դուրս գալիս: Սակայն մայիս ամսին 10 օր անդադար տևած սելավներն ու կարկուտը Հողին են Հավասարեցնում գյուղացու ամբողջ աշխատանքը: Ռաշու և Օղա գյուղերը գրեթե առանց բերք են մնում. «Նորից Հանդես է գալու՝ գյուղի վաշխառուն և արհեստների արհեստները՝ է առանց այն էլ ինչ Գյուղացիներին», - եզրափակում է Հողվածագիրը¹⁰⁶: Ղարադաղում փող էին փոխառում մինչև 40, 60 տոկոսադրուքով: Շարունակաբար թանկանում էին մթերքների գները¹⁰⁷:

¹⁰⁶ «Ղարադաղ», 1914, 1 հուլիսի, թիվ 10, էջ 5:

¹⁰⁷ «Աղաղան», 1912, հունվար, թիվ 1, էջ 31:

Ողջ այդ ընթացիկում Ղարադաղի Գյո-ղերը դա-
 րարելով ուժ էին. յո-րախանչյո-ր ընտանիք չգտնում էր
 Հեռանալ Գյո-ղից և բնակո-ւթյո-ն Հասարակույթի վաղա-
 խումբում: Երիտասարդո-ւթյո-նը լինում էր Գյո-ղը: Սո-յնը
 անո-ւմ էին նաև արտեղծները: Ղարադաղը ասորի ճանաչար-
 ամարն էր ամառո-ւթյան: Վաղընում էին ոչ այնպիսի
 ժանր արտեղծական դրո-ւթյո-նից և սովից, ինչպիսի
 բո-ւնո-ւթյո-նները ու Հալաթանիները: Պանդո-ւթյո-
 ղարադաղցիները ըստի-ւր-ում էին Սովկասի և Պարս-
 կաստանի խոշոր վաղախներում: Հարերը Գայթակղվում
 էին Թո-ւմանյանց եղբայրների օրինակով: Սակայն ղա-
 րիբո-ւթյան Գնացողներից իշերին էր Հաջողվում շար-
 քի վերջ բարեկեցիկ կեցո-ւթյո-ն արեղծել¹⁰⁸: Պարսկաս-
 րանի և Սովկասի վաղախներում ամենոր կարելի էր
 Հանդիպել ղարադաղցիներին: Հարկատես շար էին Բա-
 խո- արդասագընդները: Ղարադաղից շարո-ւնակ աշ-
 խարող չե-ւթեր էին գնո-ւմ այնպեղ, նո-յնիսկ՝ մանկա-
 Հասակ երեխաներ: Սովկասի վաղախներում արդասագնա
 աշխարանի մեկնաթ ղարադաղցիներին ընկը Հասնո-ւմ
 էր մի վանի Հապարի¹⁰⁹: Բախվի պանդո-ւթյո-ղարադաղ-
 ցիներին մոտ 90 րոկոսը Գրանվո-ւմ էր բավական խեղճ
 վիճակո-ւմ¹¹⁰:

¹⁰⁸ «Աղաղան», 1912, հունվար, թիվ 1, էջ 14-15:
¹⁰⁹ «Աղաղան», 1912, մարտ, թիվ 2, էջ 10:
¹¹⁰ «Աղաղան», 1912, հունվար, թիվ 1, էջ 30:

ՂԱՐԱԴԱՂԵ ԱՒԵՋԻՆ ԼՇԽԱՎՀԱՄԼՄՏԻ
 ՏԱՐԻՆԵՐԻՆ



« Հիշարակո-ւթյան է արժանի 1914 ընկա-
 կանին արեղի ո-ւնեցաթ Մղգիթի (Մղղ-
 կիթ) ճակարամարդը:

Ղարադաղցի Իսմայիլ խանը Հար-
 ձակվում է Մեշափարա գավառակի Մզգիթ Հա-
 յարնակ գյուղի Թումանյանցների ձիերի երամակի
 վրա՝ միաժամանակ ցանկանալով տիրել նաև գյու-
 ղի Հարուստ և ընդարձակ արոտավայրերին: Մղղ-
 ցիթի Հայերը ուժեղ դիմադրույթուն են ցույց տա-
 ւի: Մզգիթի տանուտեր Բեգլարը օգնույթուն է
 ինդրում նույն գավառակի ամենաՀայաշատ Ողան
 գյուղից: Ողանցիք 70 զինված երիտասարդներով
 (30-ը՝ ձիավոր՝ Գալուստ Եգանյանի գլխավորույթ-
 յամբ, իսկ 40-ը՝ Հետիոտն՝ զանգեզուրցի (եղվար-
 ցեցի) Անդրեասի Հրամանատարույթյամբ) շտապում
 են օգնույթյան: Անդրեաս Տեր-Հարույթյունյանը
 Կապանի Եղվարդ գյուղից էր, Բախշի Տեր-Հա-

րությունյանի որդին: Հայրենանվեր այս գործիչը
 Հաճախ էր Հայտնվում իրադարձությունների հոր-
 ձանուտներում: Հետագայում՝ 1919 թվականի հու-
 նիսի 28-ին, աչքի է ընկել Ազարակի ճակատամար-
 տում¹¹¹: Ողանի ջոկատի կազմում էին դաշնակցա-
 կաններ Հարությունն ու Հակոբը, Ողանի տանու-
 տեր Բաղդասար բեկը, դալլաք Մկրտիչը, Թուման-
 յանցների անտառապահ Համբարձում Նազարյանը:
 Ձիավոր խումբը մի ժամից հասնում է Մզգիթ:

Մզգիթցիներին հաջողվել էր Թումանյանցների
 ձիերի երամակը փախցնել և բերել գյուղ, իսկ կռի-
 վը սարերում դեռ շարունակվում էր: Ողանի ձիա-
 վոր ջոկատը Գալուստ Եգանյանի գլխավորությամբ
 բարձրանում է սարերը, դիրքավորվում թուրքերի
 դիմաց և սկսում հրաձգությունը: Ուշացումով հա-
 սած հետիոտն խումբը, չկողմնորոշվելով իրավիճա-
 կում, շարժվում է դեպի թուրքերի դիրքերը: Դիր-
 քավորված Հայերը նկատում են, որ թուրք ձիավոր-
 ներից մի ջոկատ առանձնանում է՝ հետիոտն Հայերի
 թիկունք անցնելու համար: Ողանցիները, դուրս

¹¹¹ Մմբատյան Գ., Սյունիք. պատմություն և հիշողություն,
 «Անտարես» հրատ., Երևան, 2019, էջ 276:

դալով դիրքերից, անցնում են Հարձակման: Անդ-
 թևասի ջոկատը, տեսնելով այդ, բաժանվում է երկու
 մասի. մի մասն անցնում է թուրքերի թիկունքը, իսկ
 մյուսը շտապում է Հարձակման անցած Եգանյանի
 ջոկատին օգնություն: Արևամուտը Հայերի թիկուն-
 քից էր, ինչը բավական խանգարում էր թուրքերին:
 Մարտի ժամանակ թշնամին ունենում է 8 զոհ, 14
 վիրավոր: Հայերից սպանվում են Ողանի տանու-
 տեր Բաղդասար բեկը և Մկրտիչը, իսկ Համբար-
 ձումը ձեռքից վիրավորվում է: Կռիվը տևում է
 մինչև մութն ընկնելը, որից հետո թշնամին, հավա-
 րելով իր զոհերին ու վիրավորներին, հեռանում է
 Մզգիթի հողերից: Ողանցիք էլ, Մզգիթում թողնե-
 լով 20 զինված երիտասարդ և վերցնելով երկու
 դիակները, վերադառնում են իրենց գյուղ¹¹²:

Պարսկաստանի սահմանադրական հեղափո-
 խության ժամանակ ցարական Ռուսաստանը ակ-
 տիվորեն աջակցում էր միապետական ռեժիմին:
 Ատրպատական են փոխադրվում Ռուսական զո-
 րամասեր: Դիվանում 1912 թվականից տեղակայ-

¹¹² Գալուստ (Տեր Սահակ քահանա) Եգանյանի նոթագրու-
 յուններից, «Ալիք», 1979, 14 հունվարի, թիվ 7:

ված էր ռուսական Ապշերոնյան ծ՛1-րդ գունդը, որը Հերթափոխվեց 1914 թվականի մայիսին: Ռուսական մի զորամաս էլ տեղակայված էր Ղազվինում¹¹³: Աստիճանաբար ուժեղանում էր նաև ռուսական տնտեսական ազդեցությունը այդ տարածաշրջանի վրա. 1914 թվականի սկզբում ռուս-պարսկական լեռնաարդյունաբերական ընկերությունը մասնագետների մի արշավախումբ է ուղարկում Ղարադաղ՝ փնտրելու պղնձի, արծաթի, կապարի Հանքավայրեր¹¹⁴:

Հակառակ ճամբարի՝ տերությունները պասիվ դիտողի դերով չէին բավարարվում: Ինչևէ, նախքան ընթացող աշխարհամարտի 1915-1918 թվականների իրադարձությունների Ատրպատականյան ճակատին անդրադառնալը ներկայացնենք նույն ժամանակաշրջանի իրադարձությունները Ղարադաղում:

1915 թվականի սեպտեմբերի սկզբներին լուր է տարածվում, թե իբր ռուսական զորքը ջարդվել է Փոքր Ասիայի ճակատում: Ղարադաղի խաները

¹¹³ «Ղարադաղ», 1914, 15 մայիսի, թիվ 7, էջ 6:

¹¹⁴ «Ղարադաղ», 1914, 15 մայիսի, թիվ 7, էջ 7:

ժողով են գումարում Քելեյբարում՝ Սուջա ու Մեմալիքի տանը, և նրա նախագահությամբ Ալի Մուրադ, Աբդուլ Սամեդ, Սուրայ, Ռուստամ, Ալի Ապուլի, Փաշա, Հուսեյն խաները վճռում են բոլոր ռուսաձգատակ կալվածատերերին պատկանող գյուղերը թալանել քրիստոնյաներին էլ կոտորել: Այլած խաներից երկուսը Հարձակվում են Մեշափարա գավառակի Թումանյանցներին պատկանող Աեփեշտ գյուղի վրա, որոնց միանում են նաև սարերից վերադարձող բազմաթիվ քոչվորներ: Հարձակվում են մթով, կապկպում են նեփեշտցի գյուղացիներ Հակոբին, Բալասանին, Աբրահամին, Բաղդասարին և Մանգասարին ու ծեծելով պահանջում 500 թուման: Մահակներով ծեծելուց Հետո Բաղդասարին ոտքերից կախում են, Մանգասարի գլուխը շամփուրով դաղում և, 470 թուման, 6 ձի, 6 հրացան, փամփուշտակալներ, մահճակալներ, Հագուստեղեն, զարդեղեն, եզներ ու ոչխարներ վերցնելով, ձեռանում են: Միևնույն ժամանակ մեկ այլ հրոսակախումբ Հարձակվում է կրկին Թումանյանցներին պատկանող, սակայն արդեն թրքաբնակ Սարի-Դարա գյուղի վրա: Գյուղը ամբողջությամբ թալանվում

է, իսկ տանուտիրոջ որդին ենթարկվում է տանջանքների: Երկու այլ խաներ Հարձակվում են Թումանյանցներին պատկանող շամլուաբնակ¹¹⁵ Չարու և Գարագյունե գյուղերի վրա: Չարուեցիքին Հաջողվում է գյուղից դուրս բերել և փրկել անասուններին և ունեցվածքը, իսկ Գարագյունեն ամբողջովին թալանվում է: Սրանցից Հետո Հարձակվում են շամլու Սեիդ Բաբա Թաիր աղային պատկանող գյուղի վրա և կրկին թալանում: Նույն ժամանակ թալանում և ավերում են Մելիք-Ջևանյանին պատկանող Քեյվան գավառակի Ասրան Հայաբնակ գյուղը: Ասրանցիները Խուդափերինի կամրջով գաղթում են Շուշի¹¹⁶: Խուդափերինից մինչև Հայկական բնակավայրերը Հասնելը գաղթականները անընդհատ թալանվում ու անարգվում էին Կարիագինոյի ու Ջեբրաիլի թուրք խաների ու բեկերի կողմից:

¹¹⁵ Շամլուներին, ըստ ավանդության, Ղարադաղ է բերել Շահ Աբբասը, լեզուն մոռացվել է, խոսում են թուրքերեն, չնայած նիստուկացով հեռու են և թուրքերից, և քրդերից, հարգանքով են վերաբերվում հայերի նկատմամբ, պաշտամունքով մոտ են եզդիներին (Չ. Հովսեփյան, Ղարադաղի հայերը, Երևան 2009, հ. 1, էջ 55):

¹¹⁶ «Մշակ», 1915, 19 սեպտեմբերի, թիվ 205:

Ադ նույն ժամանակ Շիրինդիլ և Ռուստամ խաները Հարձակվում են Մինջվան գավառակի վրա, գլխավորապես՝ Վինայի: Այն լավ զինված ու խրճված երիտասարդություն ուներ: Վինային ընկճելը Հավասարազոր կլիներ ամբողջ Ղարադաղի ձայլոթյան պարտությունը: Ալեքսան բեկն անձամբ անցնում է զինված վինացիների գլուխ և վարում մարտը, որը տևում է մեկ շաբաթ: Խանական հրոսակները, չկարողանալով ներթափանցել Մինջվանի ձայկական գյուղերը, ետ են նահանջում:

1915 թվականի սեպտեմբերի սկզբին Աբաս-յուլի խանի կողմից, զենք գտնելու պատրվակով, խուզարկության է ենթարկվում Մեշափարա գավառակի Գրրմընավ գյուղը: Ինչպես արդեն գիտենք, Գրրմընավը գտնվում էր Շուշիից Դերիկի վանք զենք տեղափոխելու ճանապարհին, և այստեղ ճաճախ Հանգրվանում էին դաշնակցական զինատար խմբեր: Թուրք խաները դա գիտեին: Գյուղի րաՀանա Վարդան Ստեփանյանի (Գրրմընավցի րաՀանայական ընտանիք Ստեփանյաններին կամ Տեր-Ստեփանյաններին Հետագայում մենք տեսնում ենք Վինայում) տնից Հայտնաբերվում է մոսին

Հրացան՝ 500 փամփուռներով: Գյուղը ենթարկվում է թալանի և խոշոր տուգանքի¹¹⁷:

1916 թվականին դրուժյունը ավելի է լրջանում: Օսմանյան կայսրության Հայերի կոտորածը մեծ եռանդ է ներշնչում Ղարադաղի խաներին: Իրանի կենտրոնական իշխանության ազդեցությունը արդեն տարածաշրջան չէր հասնում: Ղարադաղի Հայերը մնացել էին միայնակ և անտեր: Թուրք խաները օսմանցիների կարգադրությամբ կրկին պատրաստվում են ընդհարումների: Նրանք ցրվում են Ղարադաղի զանազան գյուղերով՝ փող, զենք, ձի և այլ միջոցներ հավաքագրելու՝ ի աջակցություն դեպի Ատրպատական արշավող ցեղակիցների: Տեղացի Միր Մամուդ խանի կողմից թալանի ու բռնագանձումների են ենթարկվում Հասանով գավառակի ազգապատկան (Ատրպատականի Հայոց թեմին պատկանող) Նորաշեն, Օղա, Հուժ գյուղերը¹¹⁸:

Ղահրաման խանը իրեն հայտարարում է հակառուսական շարժման ղեկավարը Ղարադաղում: Նա բռնագրավում է Դզմար գավառակի Խանա-

¹¹⁷ «Արև», Բագու, 1915, 25 սեպտեմբերի, թիվ 156:

¹¹⁸ «Արև», Բագու, 1916, 10 փետրվարի, N 30:

դաճ Հարուստ գյուղը, որը այդ ժամանակ պատկանում էր Թավրիզի մուշտեիդին¹¹⁹: Վերջինս ջանքեր է գործադրում գյուղը ետ վերադարձնելու համար, սակայն դա նրան չի հաջողվում: Ղահրամանը գյուղացիներից զենք հավաքագրելու պատրվակով ձերբակալում է գյուղի երեւելիներից մի քանիսին¹²⁰:

1917 թվականի գարնանը քշում տանում են Խյանագաչի և Չիաքուի ոչխարները¹²¹, իսկ փետրվարին Ասադուլա խանի կողմից թալանի է ենթարկվում Մեշափարա գավառակի Քլալա փոքրիկ Հայրենակ գյուղը¹²²: Նույն տարվա ամռան սկզբին թուրք ավազակների կողմից սպանվում են երեք խանագազցիներ: Այս անգամ ավազակներից ոմանք պետական մարմինների կողմից հայտնաբերվում և դատվում են¹²³: Նույն 1917 թվականին Հարձակման են ենթարկվում և կողոպտվում Հասանով գավառակի Նորաշեն, Քեյվան գավառակի Աչրափ և

¹¹⁹ «Մահմեդական բարձր կրոնավոր»:

¹²⁰ «Արև», 1916, 23 հունվարի, թիվ 15:

¹²¹ «Այգ», 1917, 2 ապրիլի, թիվ 13:

¹²² «Արև», 1916, 23 փետրվարի, թիվ 39:

¹²³ «Արև», 1917, 18 օգոստոսի, թիվ 171:

Գեոգրարա գյուղերը: Բնակիչների մի մասը գաղթում է Ղարաբաղ¹²⁴:

Գալուստ Եգանյանի կողմից Մեշափարա գավառակի Ողան գյուղում ժողով է հրավիրվում, որին մասնակցում են Ղարադաղի բոլոր գավառակներից ժամանած ներկայացուցիչներ: Օրակարգում զենքի և ինքնապաշտպանության հարցն էր: Արդյունքում զենք գնելու նպատակով Հանգանակվում են գումարներ: Ընտրվում են երկու հոգի՝ խանագազցի Հակոբը և Մանուկը, որոնք հավաքված գումարով սուրհանդակ Աբրահամի Հետ ճանապարհվում են Թավրիզ: Սակայն ճանապարհին պատգամավորները ենթարկվում են ավազակային Հարձակման և սպանվում են:

1917 թվականին Ռուսաստանի բոլշևիկյան Հեղափոխության պատճառով ռուսական զորքը սկսում է մերկացնել ճակատը: Ղարադաղով բավական ռուսական զորամիավորումներ են գալիս անցնում դեպի Ռուսաստան: Սրանց կամ զինաթափում էին խաները, կամ իրենք էին իրենց զենքերը թող-

¹²⁴ «Մշակ», 1917, թիվ 213:

նում և անցնում Արաքսի ձախ ափ: Ռուսական բանակի ազդու թյամբ Հայ մի սպա՝ Չախարով ազգանունով, Ողանում առկա ռուսական զինապահեստի ձևերի բանալիները Հանձնում է Գալուստ Եգանյանին: Եգանյանի խնդրանքով Չախարովը տրամադրում է նաև 10 մոսին հրացան՝ 200-ական փամփուշտներով¹²⁵: Այս ժամանակ Մեշափարայի ամենաազդեցիկ խաներից էր Ասադուլլան: Սա մեր կողմից արդեն հիշատակված Ասադուլլան է, ով իր եղբոր՝ Ալի խանի Հետ 1910 թվականին վարձու կողակների և վինացիների կողմից ենթարկվել է հարձակման, որի ժամանակ կորցրել էր ձեռքը: Ասադուլլան բավական նեղուխյուն էր պատճառում Մեշափարայի Հայերին: Մի օր նա եկավ Ողանի զինապահեստի բանալիների Հետևից, Գալուստ Եգանյանին բռնեց, կապեց սյունից և ենթարկեց տանջանքների: Ասադուլլայի մարդիկ զննեցին Ողանի բոլոր տները, հավաքեցին Հայտնաբերած զենքերը: Գալուստը, որն ի դեպ արդեն դարձել էր հոգևորական, այդպես էլ զինապահեստի բանալիները

¹²⁵ Գալուստ (Տեր Սահակ քահանա) Եգանյանի նոթագրություններից, «Ալիք», 1979, 16 հունվարի, թիվ 9:

չհանձնեց թուրքերին: Նույն օրը Ողան է հասնում՝ ռուսական 100 հոգանոց մի ջոկատ, ինչը ստիպում է Սաադուլային թողնել գյուղը: Ռուսական այս ջոկատը գյուղում հանգրվանելուց հետո ողանցիներին թողնում է 105 հրացան, 6 արկղ փամփուշտ և հեռանում է դեպի Արաքսի ձախ ափը: Ի հավելումն այդ զենքի՝ հաջորդ օրը ողանցիները բացում են իրենց գաղտնի զինապահեստը, որտեղ կար 10 հրացան, 4 արկղ փամփուշտ, 4 մատուցեր ատրճանակ, մեկ գնդացիր, վառոդ և դինամիտներ: Ողանը ամբողջությամբ զինվում է: Սաադուլա և Թադի խսները ամիսներ հետո երկու անգամ հարձակվում են Ողանի վրա, երկու անգամ էլ կորուստներ կրելով նահանջում են¹²⁶:

¹²⁶ Գալուստ (Տեր Սահակ քահանա) Եգանյանի նոթագրություններից, «Ալիք», 1979, 18 հունվարի, թիվ 11:



ՕՍՏԵՅԱՆ ՉՈՐԲԸ ՂԱՐԱԴԱՂՈՎԻ ԿԱԿ

ՄԵԾ ԵՂԵԻՆԻ ՂԱՐԱԴԱՂՅԱՆ ԷԶԸ

Հիշյալ ժամանակաշրջանում համաշխարհային ռազմական իրադարձությունները հասնում են թուրք-իրանական սահմանին՝ աստիճանաբար մոտենալով Ղարադաղին: 1914 թվականի սկզբներին Ջուլֆայից հեռագրում են Թիֆլիսի թերթերին առ այն, որ Ատրպատականում ուժեղանում է թուրք-գերմանական պրոպագանդան ռուսական ազդեցության դեմ¹²⁷: Միաժամանակ ուժեղանում է նաև պանթուրքական գաղափարախոսությունը: Ինչպես ողջ Արևմտյան Հայաստանում, այնպես էլ այստեղ ակտիվանում են քրդական ցեղախմբերն ու հրոսակախմբերը: Հայերի կողոպուտը Ղարադաղում սկսում է մասսայական բնույթ կրել: Գյուղացիները չէին կարողանում դուրս գալ դաշտեր՝ աշխատելու: Կտրվել էր գյուղերի միջև կապը: Ատրպատականի Հայոց թեմի առաջնորդը միայն կարողանում է Աբ-

¹²⁷ «Ղարադաղ», 1914, 15 մայիսի, թիվ 7, էջ 7:

րահամ բեկ անունով մի մարդ ուղարկել Ղարաղաղ՝ կողոպուտներից զերծ պահելու համար Առաջնորդարանին պատկանող Նորաշեն-Հուժ, Օղա, Զիագու գյուղերը¹²⁸:

1914 թվականի վերջին քուրդ բեկեր Սրմկոն, Գուրտոյ բեկը, Համգե աղան և ուրիշները, խուժանի գլուխն անցած, որոնց միանում են նաև տեղացի թուրքերը, ողողում են Ուրմիայի շրջանը, թալանում, խոշտանգում և սպանում տեղի հայերին ու ասորիներին, առևանգում և բռնաբարում աղջիկներին¹²⁹:

1915 թվականի սկզբին Ուրմիա ներխուժած օսմանյան զորքերը Խալիլ փաշայի հրամանատարությամբ ձերբակալում են երևելի հայերին և, խումբ-խումբ քաղաքից տարահանելով, գնդակահարում¹³⁰:

Փաստորեն՝ ցեղասպանությունը հասել էր Ատրպատական:

¹²⁸ Հովսեփյան 2009, հատ. I, էջ 152:

¹²⁹ Մարո Յ., Ատրպատականի գոյամարտը, «Ալիք», 1964, 4 փետրվարի, թիվ 27:

¹³⁰ Մարո Յ., Ատրպատականի գոյամարտը, «Ալիք», 1964, 8 փետրվարի, թիվ 29:

1915 թվականի ապրիլին Ուրմիա լճի մոտ՝ Ղիլման գյուղում, ռուսական զորքից կրած պարտությունից հետո թուրքական զորքերը նահանջում են Ուրմիայից: Ատրպատական են լցվում ռուսական զորամիավորումները: Սակայն կարճ ժամանակում տեղի հայերը հասցնում են հիասթափվել ռուսական սպայակազմի դրսևորած վարքից և վերաբերմունքից: Ճակատի հրամանատար զորավար Չերնոզուրովը շատ մտերմիկ և հոգատար վերաբերմունք է ցույց տալիս պարսկաթուրքական սահմանին ապրող ջարդարար քուրդ բեկերի հանդեպ, հանձնիս՝ Սրմկոյի, Գուրտոյ բեկի, Համգե աղայի¹³¹: Վերջիններիս հաճախակի հրավիրում է կերուխումի, պարզևատրում ջբանշաններով:

1917 թվականին ռուսական զորամիավորումների կազմալուծման արդյունքում պաշտպանական պարտականությունը իրենց վրա են վերցնում հայկական և ասորի զինված խմբավորումները: Կազ-

¹³¹ 1915 թվականի վերջերին, դաշնակցության որոշումով զանգեգուրցի Ավետիսը տեռորի է ենթարկում Համգե աղային՝ օրը ցերեկով Ուրմիայի եկեղեցու հարակից փողոցում մատուցել ատրճանակով գնդակահարելով վերջինին («Ալիք», 1964, 9 փետրվարի, թիվ 30):

մավորվում է Ուրմիայի Հայկական բառալիոնը, որի Հրամանատար է ընտրվում Ա. Ստեփանյանը, օգնական՝ Ա. Մուշեղյանը, Ա վաշտի վաշտապետ՝ զանգեզուրցի Արշակը, Բ վաշտինը՝ ղարաբաղցի Արսեն Տեր-Գրիգորյանը, Գ վաշտինը՝ զանգեզուրցի Արտեմը (երեքն էլ Քեռիի Հայկական կամավորական զորամիավորումից)¹³²:

Թուրքիայի դրոմամբ կրկին ակտիվանում են քրդական Հրոսակախմբերը՝ Սըմկոյի գլխավորությամբ: Վերջինիս ակտիվորեն աջակցում էր ղարաբաղցի Ամիր Արշադի եղբայրը իր՝ ղարաբաղցի թուրքերից կազմված ջոկատով: 1918 թվականի փետրվարին նա Ուրմիայի շրջանի Հայկական գյուղերից մեկում իրականացնում է ոճրագործություններ: Ուրմիայի Հայկական բառալիոնը նպատակադրվում է պատժել ղարաբաղցի խանին: Վերջինիս Հասնում են Կուշչի գյուղում և ընդհարվում, որն ավարտվում է ղարաբաղցի թուրքերի պարտությամբ:

¹³² Մարտ 3., Ատրպատականի գոյամարտը, «Ալիք» օրաթերթ, 1964, 11 փետրվարի, թիվ 32:

1918 թվականին Օսմանյան թուրքերը ողջ ճակատով անցնում են Հարձակման: Միաժամանակ ակտիվանում են Թավրիզի թուրքերը ղարաբաղցի Ամիր Արշադի գլխավորությամբ: Խոյում սրանց միանում է Սըմկոն իր 3000 ձիավորներով: Ամիր Արշադի ու Սըմկոյի զինված ուժերը շարժվում են Սալմաստի ուղղությամբ, ուր կենտրոնացած էին Հայ-ասորական ուժերը¹³³: Ամիր Արշադը իր ուժերով դիրքավորվում է Սալմաստի արվարձաններում լեռնագոտու բարձունքին: Ռազմաճակատի կենտրոնում դիրքավորվում է Վասպուրականից նահանջած Հայկական զորամասը՝ 1200 ձիավոր և Հետևակ զորքով, որոնց Հետ էր նաև Սալմաստի զինված խումբը՝ Սարիբեկի գլխավորությամբ: Հայկական ուժերը ղեկավարում էր Լևոն Շողոյանը¹³⁴: Չախ

¹³³ Մարտ 3., Ատրպատականի գոյամարտը, «Ալիք» օրաթերթ, 1964, 18 փետրվարի, թիվ 37:

¹³⁴ Լևոն Շողոյան (1887, Խարականց, Հայոց ձոր գավառ – 1974, Իրաք, Բաղդադ): Ազգային-ազատագրական շարժման գործիչ, ՀՀԴ կուսակցության անդամ: 1915 թվականին մասնակցել է Շատախի ինքնապաշտպանության մարտերին: Եղել է Փեսանդաշտի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարը: 1917 թվականին դարձել է Գյավաշի գավառապետ: 1918 թվականին Կ. Համբարձումյանի հետ կազմակերպել է Վանից հայերի հարկադրական գաղթը

Թևում դիրք էին բռնել ասորական ուժերը: Կարճատև ընդհարումից հետո Ամիր Արշադը պարտվում է և խուճապահար փախչում թողնելով իր «Ջեյրան» թնդանոթը և գնդացիները:

1918 թվականի գարնանը Օսմանյան զորքերը Մոսուլի կողմից շարժվում են Ատրպատական: Ոտքի է կանգնում տեղի թրքությունը՝ աջակցելու ցեղակիցներին: Մայիսի սկզբներին նրանք հասնում են Դիլման: Հայ-ասորական ուժերը, անցնելով հակահարձակման, թուրքերին բավական ետ են շարտում, որից հետո մղում են մի շարք հաղթական ճակատամարտեր: Այդ ճակատամարտերում հերոսաբար զոհվում են զանգեզուրցիներ Արտեմն ու Արշակը: Հունիսի սկզբներին թուրքերը, լսելով Նախիջևանից Անդրանիկի առաջխաղացման մասին,

դեպի Համադաս և ապահովել գաղթականների անվտանգությունը: Մային կալա վայրում Համբարձումյանը սպանվել է, իսկ Շադոյանը ջարդել է թուրքերին ու փրկել գաղթականներին: Անգլիական ուժերին միանալուց հետո հայ գաղթականները և Շադոյանի ուժերը շարժվել են դեպի Բաղդադ, ապա Բասրայի մոտ հիմնել վրանաբնակ հանգրվան: 1921 թվականի հունիսի 23-ին որոշվել է թողնել այդ հանգրվանը, ժողովրդի ստվար մասը մեկնել է Խորհրդային Հայաստան: Շադոյանն ապրել է Իրաքում (այս մասին տե՛ս՝ Армянский вопрос 1991, с. 338):

ասանում են Համալրումներ և անցնում Հարձակման: Ինչպես Հայտնի է, Անդրանիկը Խոյի մոտ բավական ծանր ճակատամարտում պարտություն է կրում, որից հետո էլ ավելի է ծանրանում Ատրպատականի Հայ և ասորի զինված ուժերի վիճակը: Պարտություն են կրում նաև Ուրմիայի Հայ պաշտպանները, և թուրքական զորքը լցվում է Ուրմիա և շրջակա գյուղերը: Իր դերը խաղում է նաև ռազմավթերքի պակասը: Թուրքական ներխուժումը ուղեկցվում էր թուրքին բնորոշ կոտորածներով ու խոշտանգումներով: Ոճրագործություններին ակտիվ մասնակցում էին Ուրմիայի թուրքերը: Ատրպատականի Հայությունը բռնում է գաղթի ճամփան: Մոտ 80000 Հայ և ասորի փախչում են դեպի Հարավ, որոնց կրնկակոխ հետապնդում են թուրքերն ու քրդական հրոսակախմբերը¹³⁵: Գաղթականների քարավաններին պաշտպանում էին ուղեկից զինված հայկական ջոկատները՝ Արսեն Տեր-Գրի-

¹³⁵ Մարո Յ., Ատրպատականի գոյամարտը, «Ալիք», 1964, 3 մարտի, թիվ 49:

գորյանի ու Կոստի Համբարձումյանի¹³⁶ գլխավորությամբ: Վերջիններս բազմաթիվ սխրագործություններով էին աչքի ընկել (ինչը դեռ ըստ արժանվույն չի գնահատվել Հայ պատմաբանների և սերունդների կողմից) ինչպես ողջ ատրպատականյան գոյամարտի ժամանակ, այնպես էլ գաղթի ընթացքում: Կոստի Համբարձումյանը այդպիսի մի ընդհարման ժամանակ զոհվում է: Բազմաթիվ զոհեր են կրում նաև գաղթականները ու նրանց պաշտպանները, որոնց մեջ էր նաև Հովհանես Թումանյանի որդին՝ Արտավազը: Օգոստոսի 7-ին գաղթականություն քարավանը Հասնում է Համադան:

¹³⁶ Կոստի Համբարձումյան, Վասպուրականի Կոստի, Ուխտավոր (1882, Շուշի – 1918, Սային Կալա, Իրաք): Ազգային-ազատագրական շարժման գործիչ, ՀՀԴ անդամ: 1908 թվականին Կապանում կրթական տեսուչ էր. կարգավորել է դպրոցական գործը: 1908-1914 թվականներին Բելգիայում ստացել է գյուղատնտեսական բարձրագույն կրթություն: Կազմակերպել է զենքի առաքում Պարսկաստանով՝ հայ ազատագրական շարժման մարտիկներին զինելու նպատակով: 1909 թվականին ձերբակալվել է, արգելափակվել Մետեխի բանտում, ապա աքսորվել Խարկով: 1915 թվականին մասնակցել է Վանի ազատագրմանը: 1917 թվականին դարձել է Վանի հայկական ժամանակավոր կառավարության ղեկավար (այս մասին տե՛ս՝ Армянский вopoc 1991, с. 23):

1918 թվականի հուլիսին՝ Ուրմիայի գաղթից հետո, Օսմանյան բանակը Ալի Էհսան փաշայի գլխավորությամբ Ուրմիայի, Սալմաստի, Խոյի, Մակուի, Ջուլֆայի, Մարաղայի, Թավրիզի հետ մեկտեղ գրավում է նաև Ղարադաղը: Ներխուժելով Ղարադաղ՝ Օսմանյան զորքը տեղավորվում է թուրքաբնակ Ղյուզալ գյուղում: Սա Դավիթ Բեկի կողմից ղեկավարվող ապստամբությունից մեզ Հայսնի Ղյուզալ գյուղն է Արաքսի ափին՝ Մեղրիի դիմաց: Այդտեղից թուրք զինվորներ են ուղարկվում դեպի մոտակա Հայկական գյուղերը՝ պահանջելով մտնող: Ղարադաղի Հայերը բավարարում են նրանց պահանջները, սակայն Օսմանյան զորքին Ղյուզալ մտնող Հասցնող ծ Ղարադաղցի Հայերը սպանվում են¹³⁷: Բնականաբար թուրքերը այսբանով չեն բավարարվում:

Հայոց Մեծ եղեռնը հասավ Սևասար: Դժմար գավառակի Աղաղան գյուղում տեղի է ունենում սարսափելի կոտորած:

¹³⁷ Միրզայան Վ. Պ., Ղարադաղ (Պասպատունիք), «Ալիք», 1982, 20 հունվարի, թիվ 15:

Աղաղան գյուղի դիմացից մի նեղ արահետ է տանում դեպի Հարևան թրքաբնակ Աննրղ գյուղը: Առավոտյան աղաղանցիները այդ արահետի վրա զինված մարդկանց են նկատում: Գյուղացիներից մի քանիսը գյուղի քաՀանա տեր Արտակի Հետ խորհրդակցելուց Հետո մի մատաղացու ոչխար են վերցնում, աղ ու Հացով գնում օսմանյան զորաջուկատին դիմավորելու՝ մտածելով, որ այդպես վտանգը գյուղից կՀեռացնեն: Ավա՛ղ... Թուրքական զորքը բաժանվում է երկու մասի. մի մասը բարձրանում է գյուղի դիմացի լեռը, մյուսը Հրամանատարի՝ սպա Խալիլի Հետ գյուղ է մտնում¹³⁸: Չենք գտնելու պատրվակով խուզարկվում և կողոպտվում են աղաղանցիների տները: Թալանից Հետո գերեվարվում են այդ պահին գյուղում եղած բոլոր աղաղանցիները և տեղահանվում: Նրանց Հայտարարվեց, որ իրենք ռազմագերիներ են և ազատ կարձակվեն պատերազմի ավարտից Հետո: Գյո-ղացիների շարասյունը զինվորների Հակողո-թյամբ դո-րա է Գալեա Գյո-ղից դեպի նախասյուն որոշված վայրը՝ Տեշպ

¹³⁸ Մարտ Յ., Ասրպատականի գոյամարտը, «Ալիք», 1964, 10 մարտի, թիվ 55:

ինչպես Երևանյան Հայաստանում: Հանապարհին մի թուրք զինվոր շարասյան կանանց մեջ լուր է տարածում, որ իրենց տանում են կոտորելու: Երկու կնոջ՝ երկու երեխաների Հետ, Հաջողվում է փախչել և ազատվել: Հարասյունը անցնում է Աղաղանի մոտակա ձորերից մեկով Հոսող գետակը, ՀաղթաՀարում է ափամերձ վերելքը և մտնում է Ճղպորու արտ կոչվող վայրը: Հարասյան ետևից քայլող զինվորները գետը չեն անցնում, այլ դիրքավորվում են գետի ափին, և երբ շարասյան առջևից քայլող զինվորները Հանում են արտի վերջում գտնվող բլրակը, սկսվում է կոտորածը: Առաջին կրակոցով սպանվում է տեր Արտակ քաՀանա Հովհաննիսյանը: Երբ քաՀանան ընկնում է, նրա մայրը, կինը, երեխաներն ու քույրը լացուկոծով Հավաքվում են նրա շուրջը: Ժողովուրդը սկսում է փախչել տարբեր ուղու թյուններով: Նրանց մի մասին Հաջողվում է ազատվել՝ Հանելով մոտակա անտառը: Սպանվում են տարբեր սեռի և տարիքի 60 Հայ գյուղացիներ, վիրավորվում են երեքը: Այդ սպանվածներից 20-ը տեր Արտակի Հարազատներն էին: ՉոՀերից միայն երեքն էին, որ աղաղանցի չէին, այլ մոտակա Հա-

յաբնակ գյուղերից էին, որոնք այդ օրը հյուրընկալվում էին Աղաղանում:

Հայոց մեծ եղեռնի այս դավազը կամ էջը ներառված չէ եղեռնի աշխարհագրությունն ու վիճակագրությունը պատկերող ոչ մի քարտեզի և ուսումնասիրության մեջ:

† † †

Տասնհինգ օր Հեսոո թուրքական այդ զորքը մտնում է Դզմար գավառակի մեկ այլ Հայաբնակ գյուղ՝ Իրգուլթինը: Իրգուլթինցիները նախապես կանանց և աղջիկներին փախցրել էին գյուղից և թաքցրել մերձակա անտառում: Իրգուլթինում մարդ չսպանվեց, սակայն գյուղը ամբողջությամբ թալանվեց: Թուրքերը գյուղից վերցնում են 20 ձի և ջորի, որոնց վրա բարձում են թալանվածը և Հեռանում¹³⁹:

Լուրը արագորեն տարածվում է ողջ Ղարադաղով: Գավառակիները Համախմբվում են՝ յուրաքանչյուրը իր ամենամեծ գյուղում կենտրոնանալով: Մզգիթի, Գիրմանավի, Բլալայի գյուղացիները Հա-

¹³⁹ «Ալիք», 1979, 17 ապրիլի, թիվ 77 (Մուշեղ Աթայանի հուշերից):

վաքվում են Ողանում: Սակայն օսմանցիները դեպի Մեշափարա գավառակ չեն շարժվում, բայց Հորդուրում են տեղացի խաներին ավելի ակտիվանալ: Թալանվում են Դզմար և Հասանով գավառակները: Առավել տուժում է Ղուլուդի գյուղը, որտեղ կատարվում են բռնաբարություններ և սպանություններ: Այդ օրերին վրիժառուության փայլուն օրինակ է ցույց տալիս Հասանով գավառակից նորաշենցի Էրգյան (երկար) Սարգիսը, ով, Հանկարծակի Հայտնվելով այս կամ այն վայրում, սպանում և ահաբեկում էր թուրք զինվորներին և անՀեստանում¹⁴⁰:

Մի քանի խաներ միավորվելով ավերում են Մզգիթ և Օղա գյուղերը, որոնց բնակիչները գաղթում են Թավրիզ: Ասադուլլա, Թաղի և Ազիզ խաները մի քանի Հարյուր ձիավորներով ներխուժում և թալանի են ենթարկում Ողանը: Գյուղը ավերվում է, իսկ ողանցիների մի մասը գաղթում է Թավրիզ: 65 ընտանիքից մնում է 16-ը՝ Հիմնականում ամենաաղքատները: Գալուստ Եգանյանը, այս 16 ընտանիք-

¹⁴⁰ Գալուստ (Տեր Սահակ քահանա) Եգանյանի նոթագրություններից, «Ալիք», 1979, 18 հունվարի, թիվ 11:

ներին առաջնորդելով, տեղափոխում է Ասադուլլա խանին պատկանող Քլալա Հայաբնակ գյուղը¹⁴¹:

Առաջ են գալիս զանգվածային գաղթ, սով, Համաճարակ, ավերվում ու լքվում են մի շարք գյուղեր, որոնց մի մասը այդպես էլ չի վերաբնակեցվում, իսկ մի քանիսն էլ բնակեցվում են տեղացի թուրքերով: †

Առաջին աշխարհամարտի ավարտից հետո՝ նոյեմբերի 5-ին, թուրքական զորքը հեռանում է Ատրպատականից:

¹⁴¹ Գալուստ (Տեր Սահակ քահանա) Եգանյանի նոթագրություններից, «Ալիք», 1979, 18 հունվարի, թիվ 11:

ՂԱՐԱԴԱՂԸ ԱՌՁԻՆ ԱՇԽԱՎՈՒՄՏԻՆ ՎՋՈՐԻՈՂ ՏԱՐԻՆԵՐԻՆ



1917 թվականից սկսած Ղարադաղում սով էր: Անցած մի քանի տարիների ընթացքում, Հաշվի առնելով գավառում տիրող վտանգալոր իրավիճակը, դաշտային աշխատանքները բավարար չափով չէին իրականացվել, ինչի հետևանքով կեցությունը դժվարացավ:

1919 թվականի աշնանը Ղարադաղի շատ գյուղեր կրկին սկսում են դատարկվել: Այս անգամ՝ Ղարադաղցիները գաղթում են ոչ միայն Ղարաբաղ, այլև Արարատյան դաշտավայր, Թիֆլիս, Գանձակ, Բաքու, իսկ մեծ մասը՝ Թավրիզ: Գաղթը շարունակվում է մինչև 1920 թվականի գարունը¹⁴²: Գաղթական Ղարադաղցիները վաղ առավոտից հավաքվում էին Թավրիզի Հրապարակներից մեկում, ժա-

¹⁴² Հովսեփյան 2009, հատ. I, էջ 154:

մեր շարունակ հենված բաժնի կամ կացինի կոթին, սպասում պատահական մի աշխատանքի: Նրանցից շատերը գիշերում էին փողոցներում: Ադ օրերին Առաջնորդարանի շուրջը ասեղ գցելու տեղ չկար: Թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանը բողոքով դիմում է Ատրպատականի նահանգապետին՝ պահանջելով պատժել Ղարադաղի սանձարձակ թուրք խաներին, որպեսզի ղարադաղցիները կարողանան վերադառնալ սեփական տները¹⁴³: Ամերիկյան բարեգործական կազմակերպության կողմից Ղարադաղ վերադարձող գաղթականներին 10-ական թուման է տրամադրվում: Շատերը մեկ տարի հետո վերադառնում են Հայրենի գյուղ:

Ինչպես և անցյալում, XX դարում նույնպես ղարադաղի խաները չէին հապաղում մասնակցելու Արաքսի ձախ կողմում տեղի ունեցող Հայ-թուրքական ընդհարումներին: Նրանք մասնակցել են դարասկզբի թե՛ զանգեզուրյան և թե՛ արցախյան գրեթե բոլոր ռազմական իրադարձություններին՝

¹⁴³ Հովսեփյան, 2009, հատ. I, էջ 152-156:

պատուհաս դառնալով Արցախի ու Սյունիքի Հայ մտակալության համար: Իրանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Հովսեփ Արղությանի՝ 1920 թվականի ապրիլի 22-ին Իրանի վարչապետին գրած բողոքը դրա վառ ապացույցն է.

«Իր ժամանակին էս գրածոր է բերանացի տե՛մել էմ Չերդ Վահանայի ու Ռեյան և արքային գործոց մեխարո-Ռեյան խնդրելով անհրաժեշտ մեջոցներ չեռնանել Ռոյլ չորսով սահմանակից ցեղերին մեջանցելու կողմանց գործերին: ...Սահայն վերջին ժամանակներս հասարայ ցեղերի ու Ռեյոն սրայաց, որ մեխանի ղարադաղցի խաներ, արքային սպտեցո-Ռեյոնից րրդված, հարյո-րներով, քննված մարդկանցով անցել են Արախը, Խո-տաներին համորջի վրայով, նույնպես անհնալով մասնակցել Ղարաբաղում ցեղի ունեցող ընդհարումներին հայերի և Ռաբարներին մեջև: ...»¹⁴⁴: Կյուսքը, անկասկած, 1920 թվականի մարտին Ղարադաղում նոր թափ ստացած Հայ-թաթարական լիղհարումների մասին էր: Եվ որպես այդ «բարեկամության» շարունակություն՝ Ադրբեջանի մուսափաթական զինյալ ուժերն էլ, իրենց հերթին 1920

¹⁴⁴ Զոհրաբյան Է. Ա., Սովետական Ռուսաստանը և հայ-իրանական հարաբերությունները, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1985, էջ 43-44:

Թվականի հունիսին՝ արդեն խորհրդայնացած Ադրբեջանի ժամանակ՝ 11-րդ կարմիր բանակի դեմ ապստամբվելուց և պարտվելուց հետո, ԽՍՀՄ դափերինի կամուրջն անցնելով, պատասպարվել են Ղարադաղցի խանների մոտ¹⁴⁵:

Առաջին աշխարհամարտի ավարտով Ղարադաղում ոչինչ չի փոխվում: Չինված բախումները թուրք խանների և առանձին դեպքերում թուրքերի և հայերի միջև շարունակվում էին այնպես, ինչպես դրանք կային և՛ պատերազմի, և՛ նախապատերազմյան տարիներին:

Ղարադաղի Մամմադ-Խանլու և Էյլաքանլու թուրքաբնակ գյուղերի միջև վեճ կար, ավելի ճիշտ՝ կռիվ, որը թեժանում է 1920 թվականին: Դա Ղարադաղի համար սովի տարի էր, քանի որ մորեխը ոչնչացրել էր ամեն ինչ: Սրանց զինված ընդհարումները տեղի էին ունենում գլխավորապես հայաբնակ վայրերում: Մամմադ-Խանլուն դիմում է Ամիր Արշադին, ով այդ ժամանակ Ղարադաղի ամենաուժեղ և ազդեցիկ խանն էր: Վերջինս բավա-

կան մեծ բանակ ուներ: Արշադը արձագանքում է Մամմադ-Խանլուի կոչին: Նա 10000 զորքով դուրս է գալիս Ուզունդուլի տափարակից և շարժվում դեպի Մինջվան: Արշադը բանակը բաժանում է երկու հավասար մասի. 5000-ը իր համհարզներից մեկի՝ Ղահրաման խանի գլխավորությամբ շարժվում է Էյլաքանլու, իսկ մյուս 5000-ը իր գլխավորությամբ շարժվում է դեպի Քելեյբար՝ Էյլաքանլուին սատարող Շուջայմամուլեյին ճնշելու: Ճանապարհին ընկած էին Մինջվանի հինգ հայկական գյուղերը: Մինջվանի հայությունը չի ընկրկում: զինվում, ճավաքվում է Վինայում և ցույց տալիս կատաղի դիմադրություն: Այդ նույն ժամանակ Հասանով գավառակում Ղահրաման խանը պարտվում է և քաշվում լեռները: Լումա հայաբնակ գյուղը, որ պատկանում էր Ղահրամանին, մեն-մենակ մնում է Էյլաքանլուի դիմաց: Հերոսության կատարյալ օրինակ է ցուցադրում լումեցի Աղաջանը: Նա գյուղից վեր՝ մի անառիկ վայրում, որտեղից հսկվում էին Լումայի բոլոր մատույցները, դիրքավորվում է և սկսում է կրակի տակ պահել թուրքերի բոլոր շարժումները՝ թույլ չտալով նրանց մոտենալ գյուղին:

¹⁴⁵ Միմոնյան Ա., Ջանգեզուրի գոյամարտը 1920-1921թթ., ԵՊՀ հրատ., Երևան, 2000, էջ 97:

Աղաջանին Հաջողվում է երեք օր կասեցնել Էյլասաքանլուի թուրքերի առաջխաղացումը դեպի Լուսինինչը բավական է լինում, որպեսզի լումեցիները իրենց գույքով տեղափոխվեն Հարևան թրքաբնակ սակայն բարյացակամորեն տրամադրված Արաղին գյուղը: Իր խնդիրը կատարելուց Հետո, երբ արդեն փորձում էր Հեռանալ իր դիրքից, Աղաջանը սպանվում է:

Այդ նույն ժամանակ՝ 1920 թվականի աշնանը, Մեշափարա գավառակում Ասսադուլլա խանը արշավում է Քլալա Հայաբնակ գյուղի վրա՝ ստիպելով քլալացիներին և Տեր ՍաՀակ քահանայի (Գալուստ Եգանյանի) գլխավորությամբ այնտեղ պատսպարված ողանցիներին փախչել Քլալայի մերձակայքում գտնվող Մուլթ ձոր կոչվող վայրը՝ թողնելով իրենց ողջ գույքը¹⁴⁶: Որոշ ժամանակ այդտեղ մնալուց Հետո գաղթականները շարժվում են դեպի Վինային մերձակա Պլալան աղբյուր կոչվող վայրը: Այդ ժամանակ Վինայի մոտ ընթանում էր Մինջվանի Հայրության և Ամիր Արշադի միջև կռիվը: Վինացիները,

¹⁴⁶ Գալուստ (Տեր Սահակ քահանա) Եգանյանի նոթագրություններից, «Ալիք», 1979, 18 հունվարի, թիվ 11:

խնամալով Լումայի Հայերի գաղթը և Պլալան աղբյուրում Հանգրվանելը, լուր են ուղարկում նրանց և լնդունում իրենց գյուղում: Ամիր Արշադը ի վերջո գաղարեցնում է իր Հարձակումը: Նա լուր է ուղարկում մինջվանցիներին, թե իբր չգիտեր, որ իրեն գիմադրողները Հայեր են, որ ինքը Հայերին թշնամի չէ և ինքը Աժդահա փաշայի (Նժդեհի) բարեկամն է¹⁴⁷: Արշադը նշում է նաև, որ Նժդեհի Հետ բավական մտերմական Հարաբերությունների մեջ է գտնվում, նրա բանակի Համար ցորեն է ուղարկում, և շուտով Նժդեհը իր Համար թնդանոթներ է ուղարկելու: Միաժամանակ Արշադը խնդրում էր գաղարեցնել Հրաձգությունը և իր զորքին ճամփա տալ դեպի Քելեյբար: Մինջվանցիք ընդունում են Արշադի առաջարկը: Չինադադար Հաստատելու համար ընտրված բանագնացներն էին Հովհաննես պրիսվան և գիրմնավցի տեր Ներսես Տեր-Ստե-

¹⁴⁷ Նժդեհը Ղարադաղի խաների հետ ակտիվորեն սկսել է հարաբերություններ ձևավորել 1920 թվականի սեպտեմբերից, երբ նա ռուս-թուրքական ուժերից երեք կողմից սեղմված էր Մեղրու լեռներում: Նա այդ նպատակով Արաքսի աջ ափ էր ուղարկել Գեդեոն Տեր-Մինասյանին և Աշոտ Մելիք-Մուսայանին (Միմոնյան 2000, էջ 222-223):

փանյանը, ով այդ ժամանակ բավական պատկառելի տարիքում էր: Արշադի ճամբար գնալիս պատահական արձակված կրակոցից սպանվում է Հովհաննեսը, ում մարմինը տեր Ներսեսը շաղակած հասցնում է հայկական դիրքեր: Երկրորդ անգամ ընտրված բանագնացներն էին լուսեցիների Հեռայստեղ Հասած Գալուստ Եգանյանը, Գրիգորը և Խորեն Տեր-Ստեփանյանը, ով տեր Ներսեսի որդին էր: Ամիր Արշադը իր վրանում բանագնացներին ընդունում է մեծ պատվով և հարգանքով: Պայմանավորվում են զինադադարի մասին:

Կռիվը դադարեցվում է, և Արշադի զորքը Մինջվանով անցնում է դեպի հարավ Քելեյբար: Արշադն էլ մի քանի հարյուր ձիավորներով մոտ մեկ շաբաթ հանգրվանում է Վինայում: Արշադը Վինայում հայերին բավական բարյացակամ և բարեկամական վերաբերմունք է ցույց տալիս, ինչը մեծապես պայմանավորված էր ոչ միայն Մինջվանի հայերի զինական ուժով, այլև այդ օրերին հարևան Այունիքում ռազմական մեծ հաղթանակներ տարած և օրեցօր հզորացող Նժդեհի գործոնով: Այդ օրերին Արշադը Վինայում հրապարակայնորեն գնդակա-

նարում է իր կողմից պատանդառված իր հակառակորդներ Հասանովի Քարիմ ու Դզմարի Ռահիմ խաներին, որոնք մեծ պատուհաս էին նաև Ղարաբաղի հայերի համար, ու մարմինները ուղարկում վիրջիններիս հարազատներին: Վինայում գտնվելու ժամանակ նրան համնում են Նժդեհի կողմից Չանգեղուրից ուղարկված երկու թնդանոթները՝ ութ թնդանոթածիգ մասնագետներով, որոնց ղեկավարի անունը Խաչիկ էր: Այդ թնդանոթների շնորհիվ նա երեք օրում գրավում է Մինջվանի հարավում գտնվող լեռներով ու բերդերով պաշտպանված անտիկ Քելեյբար գյուղաքաղաքը¹⁴⁸:

Հարաբերությունները Նժդեհի և Արշադի միջև մեավորվել են 1920 թվականի սեպտեմբերից, այն ժամանակ, երբ բոլշևիկները, գրավելով Կապանի նստակները, թուրքերի հետ համատեղ զանգեղուրյան գիլյալներին՝ Նժդեհի ղեկավարությամբ, սեղմել են Մեղրիի սարերում: Նժդեհը Կարճևանի սարերում լիցունել է Արշադի կողմից ուղարկված Մուլթալիբ

¹⁴⁸ Գալուստ (Տեր Սահակ քահանա) Եգանյանի նոթագրություններից, «Ալիք», 1979, 20 հունվարի, թիվ 12:

(կամ Մուծայիմ) խանին¹⁴⁹: 1921 թվականի հունիսին, երբ արդեն Լեոնահայաստանը իր վախճանին էր մոտենում, Նժդեհը Ամիր Արշադին կրկին անսխալ կանոնադրական աջակցություն է ցուցաբերում Արշադի և Թադի խանի միջև Ուշ-Թաքինի ուղղությամբ, որը գտնվում է Մեղրիից մոտ 21 կմ դեպի Հարավ-արևելք, ճակատամարտ է տեղի ունենում և Մեղրիի վրայով 500 զինված Հայեր անցնում են սահմանը և միանում Արշադի զորքին¹⁵⁰: Սա Նժդեհի կողմից ուղղակի վանազիտական քայլ էր, որով անշուշտ, նա ապահովում էր իր թիկունքը: Համագործակցությունը Նժդեհի և Ամիր Արշադի միջև ավարտվում է Լեոնահայաստանի վերջնական պարտության: Եվ արդեն 1921 թվականի ամսական ամիսների գաղթի ժամանակ Արշադը յուրաքանչյուր Հայից դեպի Ղարադաղ Արաբազ անցկայներու Համար գանձում էր ոսկի¹⁵¹:

¹⁴⁹ Գեորգեան Վ., Լեոնահայաստանի հերոսամարտը (1919-1921), «Ազատ խոսք» հրատ., Երևան, 1991, էջ 82:

¹⁵⁰ Զոհրաբյան 1985, էջ 165:

¹⁵¹ Վրացյան Ս., Կյանքի ուղիներով, հատ. Ա, «Յուսարիկ» հրատ., Կահիրե, 1955, էջ 230:

1921 թվականի ապրիլի վերջից Հազարավոր ճյուղ գաղթականներ ապստամբած և պարտված¹⁵² Հայաստանից ուղղվելու են վերցրել Մեղրիի վրայով դեպի Պարսկաստան: Ապրիլի վերջին և մայիսի սկզբին Նժդեհը անձամբ երկու անգամ անցել է Արաբազ, Հանդիպել Ղարադաղի խաների Հեսո՝ գաղթի և գաղթականության Հարցերը կարգավորելու նպատակով: Թեև Թեհրանի իշխանությունները կարգադրել էին, որ գաղթականներին անսարգել թույլ տրվի Արաբսն անցնել, սակայն Ամիր Արշադը չէր ենթարկվում այդ հրահանգին. մեկ արգելում, մեկ թույլատրում էր գետնանցումը: Նա սկզբում յուրաքանչյուր գաղթականի Համար վերցնում էր մեկ ոսկի, Հետո վարձը բարձրացրեց մինչև 2-3 ոսկու: Վերջիվերջո Համաձայնություն է ձեռք բերվել կես ոսկի՝ մեկ գաղթականի Համար: Իզմարի տարածքում եղան ավազակային Հարձակումներ, ինչի նկատմամբ գաղթականներն ունեցան և՛ զոհեր, և՛ անհայտ կորածներ:

¹⁵² Խոսքը բոլշևիկների դեմ կազմակերպված փետրվարյան ապստամբության մասին է:

Տարագիրների մեջ էին այնպիսի նշանավոր դեմքեր, ինչպիսիք են՝ Հովհաննես Քաջազնունին, Սիմոն Վրացյանը, Նիկոլ Աղբալյանը, Լևոն Շանթը, Ռուբեն Դարբինյանը, Ալեքսանդր Թամանյանը, Լեո Կամսարը, Սմբատ Բորոյանը (Մախլուտո), Ռուբեն Տեր-Մինասյանը, Թևան Ստեփանյանը և էլի շատ ուրիշներ: Գետանցումը իրականացվում էր «քելակների» միջոցով: Դրանք այժի փչված տիկեր էին՝ ամրացված մի քանի փայտով, որոնք Հակառակ ափից պարաններով քաշվում էին: Եղան բազմաթիվ խեղդվողներ: Ալեքսանդր Թամանյանը Ռուբեն Տեր-Մինասյանի խնդրանքով նախաձեռնեց լատագծի շինարարության աշխատանքներ: Այդ նպատակով Կապանից բերվեցին երկաթե պարաններ, սակայն աշխատանքների ընթացքում գետում խեղդվել է գործի տեխնիկական ղեկավար, ճարտարապետ Նորայր Իսահակյանը, և աշխատանքները դադարեցվել են¹⁵³: Ողջ գաղթականությունը անցել է Ղարադաղի Դզմար գավառակի թուրքաբնակ Նյուզալ գյուղով և, առանց ժամանակ կորցնելու,

¹⁵³ Սիմոնյան, 2000, էջ 471:

շարժվել դեպի Մուժամբար և Թավրիզ: Այդ գաղթի ժամանակ Նյուզալում Նժդեհի մասնակցութամբ մի միջադեպ է տեղի ունեցել, որը հետագայում Թավրիզում իր «Հայտնի» դատավարություն մեղադրանքներից մեկն է դարձել: Նախքան Նյուզալ մտնելը նա սպանել տվեց սպա Ասլանյանին, իսկ Նյուզալում խուզարկեց որոշ դաշնակցական պաշտոնյաների և զգալի քանակությամբ ոսկի ու դրամ առգրավեց՝ գաղթականների կարիքները հոգալու համար¹⁵⁴: Մուժամբար գնալուց առաջ նա Նյուզալում թողնում է երկու թնդանոթ¹⁵⁵՝ առանց փականքների, որոնք թնդանոթաձիգների կողմից իրենց հետ տարվում են Մուժամբար: Թնդանոթները բռնագրավվում են Ամիր Արշադի կողմից, ով այնուհետև սկսում է պահանջել փականքները՝ սպառնալով քանդել Հայաբնակ Մուժամբարը: Փականքները այդպես էլ չեն տրվում Արշադին, Մուժամբարն էլ չի քանդվում: Չնայած իր այդ

¹⁵⁴ Հարությունյան Ա., Գարեգին Նժդեհի 1921թ. Թավրիզի դատավարությունը, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2004, էջ 18, 115:

¹⁵⁵ Հարությունյան, 2004, էջ 40:

ժամանակվա կարողություններին՝ նա, այնուամենայնիվ, անկարող էր Արաքսն անցած Հայկական զինական ուժի հանդեպ: Այս միջադեպը ևս մեկ անգամ պատուում է Հայերին բարեկամ ձևացող Ամիր Արշադի դիմակը՝ մերկացնելով նրա իրական նպատակներն ու կերպարը:

Ելուզալը, ինչպես և դավիթբեկյան շարժման ժամանակ, ծառայել է պրոնեցիստներին և պարսկահայատականներին՝ որպես շփման հարթակ: Ելուզալում Ամիր Արշադի օգնական Մուլթալիբ և Գիդանտ խանների օժանդակությամբ իրականացվել են ոսկու և թանկարժեք իրերի միջոցով դեռևս մարտնչող Այունիքի համար պարենամթերքի և փամփուշտի գնումները¹⁵⁶: Գլխավոր կազմակերպչը Ատրպատականի թեմակալ առաջնորդ Ներսես Մելիք-Թանգյանն էր: Նույն տարվա ընթացքում գաղթականների զգալի մասը ցրվել է արտասահմանում, սակայն որոշները մնացել են, որոնց թվում

¹⁵⁶ Միմոնյան, 2000, էջ 470:

էր Ղարաբաղի Հերոսը՝ Թևան Ստեփանյանը¹⁵⁷, ով տեղափոխվել է Ղարադաղ՝ մշտական բնակության:

Այդ գաղթականներին հուլիսին՝ Լեռնահայաստանի պարտությունից Հետո, միանում են նաև պրոնեցի գաղթականները, գերազանցապես ղեկավար և կովող ուժերը՝ Նժդեհի գլխավորությամբ¹⁵⁸: Նժդեհին ընդառաջ է շարժվել Ամիր Արշադը՝ համարաբար ակնկալելով ստանալ զանգեզուրցիների մտ եղած զենքերը: Խուղափերինի կամուրջի պահակապետի զեկուցագրում այդ առիթով ասված է. «... լիսի 6-ին պարսկական մի զորախումբ, թվով 1500 ճոգի, Աինայի հովտով, Արշադ խանի ղեկավարությամբ, գնացին Ղափանի ուղղությամբ, հավանորեն Եփրեհին օգնելու՝ և Աինա գյուղը պաշտպանելու»:

¹⁵⁷ Թևան Ստեփանյան (1892-1941): Հայ պետական, ռազմական գործիչ: Ծնվել է Հաղբուքի Տումի գյուղում: 1920-1921 թվականներին Արցախում գլխավորել է բոլշևիկների դեմ պայքարը: Մերտ կապերի մեջ է եղել Դրոյի, Նժդեհի հետ, նրանց հանձնարարությամբ զբաղվել է Դիզակի հարավային սահմանների ամրապնդման գործով: Թևանին հաջողվել է ազատագրել Դիզակի և Վարանդայի շրջանները: 1941 թվականի նոյեմբերի սկզբին Պարսկաստանում ձերբակալվում է խորհրդային գործակալների կողմից, բերվում Բաքու և գնդակահարվում է:

¹⁵⁸ Նժդեհը Արաքսը անցնում է 1921 թվականի հուլիսի 9-ին:

Համար թողեցին մոտ 200 պինվոր»¹⁵⁹: Ընդհանուր առմամբ, Ղարադաղի վրայով դեպի Ատրպատական են անցել ավելի քան 8000 գաղթական:

Ինչպես արդեն տեսանք, Առաջին համաշխարհային պատերազմի տարիներից սկսած Ղարադաղի Հայ գյուղացիությունը պարբերաբար գաղթում էր դեպի Իրանի խորքերը, հիմնականում Թավրիզ: Գաղթականների մեծ մասը չէր կարողանում ապրուստի միջոց գտնել կամ կողմնորոշվել Հետագա ապրուստի հարցում: 1921 թվականի մայիսից Թավրիզում կազմակերպվում է գաղթական ղարադաղցիների վերադարձը Հայրենի օջախներ: Վերադարձողներին 10-ական թուման օգնություն էր բաժանվում: Հայերի վերադարձի անվտանգություն ապահովումը հանձնարարվում է նույն Ամիր Արշադին, ով վերադարձող յուրաքանչյուր քարավանի ուղեկից էր նշանակում երկու զինված Հեծյալ զինվոր: Ղարադաղի Դզմար, Հասանով և Մեշափարա գավառակներում Հայերի անվտանգությունը պետք

¹⁵⁹ Սողոմոնյան Ս. Գ., Քաղաքացիական կռիվները Զանգեզուրում 1920-1921 թվականներին, «Հայաստան» հրատ., Երևան, 1958, էջ 116:

է ապահովել Հասանով գյուղի բնակիչ Մամադխանը, իսկ Քեյվան և Մինջվան գավառակներում՝ Քերիմխանլու գյուղի բնակիչ Հեքիմ խանը: Գաղթականներից ոմանք, հաշվի առնելով անցյալում կրած դառնությունները, հրաժարվում են վերադառնալ¹⁶⁰: Դզմար գավառակի Ղուլուղի գյուղի կալվածատեր Ամիրասլան խանը, գնալով Թավրիզ, իր Հայ հողագործներին լավ պայմաններով համոզում և ետ է բերում:

Թավրիզի փողոցներում խառնվել էին իրար Հայաստանի և Ղարադաղի գաղթականությունը: Սեպտեմբերի դրուժյամբ միայն Հայաստանի գաղթականների թիվը ավելի քան 4000 էր, որից միայն զանգեզուրցիներ՝ 1200 մարդ, մոտ նույնչափ էլ Ատրպատականի այլ շրջանների Հայերից, որից ղարադաղցիներ՝ 1292 մարդ¹⁶¹: 1921 թվականի սեպտեմբերի 1-ին Ղարադաղի գաղթականների կոմիտեն դիմում է ներկայացնում Թավրիզում նոր Հաստատված ՀՍՍՀ գաղթականական լիազոր Գ. Վարդանյանին, որտեղ ասված էր. «.....Ձեր միջոցով

¹⁶⁰ Հովսեփյան 2009, հատ. I, էջ 152-156:

¹⁶¹ Սիմոնյան 2000, էջ 639:

կենդանիներն էլ Հայաստանի կառավարող-ընտանիքի ընդ-
 փո-յն մեջ ունենալը չէր-էլ առ-նել Հայաստանի փոխադրել-
 Ղարադաղի Գաղթականներ-ընտանիքի մասը, որ երկրորդ
 աստիճան է ինչ ապաստանել է Թավրիզ և շարունակ երա-
 ղել է վերաբնակվել-ը- իր մայր Հայրենիք-ում - Հա-
 յաստանում:Մեր 1400 Գաղթականներ ապաստ-մ էն
 խորհրդային իշխանություն չէր-էլ արած մեջ ունենալը և
 օժանդակությունը, որպեսզի ի վիճակի լինեն կարճ ժա-
 մանակից հետո Հայաստանի փոխադրվել-ը-:Ոչ միայն
 Թավրիզում ապաստանած Գաղթականներ-ընտանիք-
 յո-նն է Հայաստանի փոխադրվել, այլև Ղարադաղում
 մնացած ողջ Հայո-ընտանիք, որը 3000-ից ավելի մե լինել է
 ներկայացնում-:»¹⁶²: Սակայն Սովետական Հայաս-
 տանը որոշեց առայժմ ընդունել միայն առավել
 ծանր դրության մեջ գտնվող շրջանների տարագիր-
 ներին, որոնցից չհամարվեցին Ղարադաղցիները: Ի-
 րավունք տրվեց Ուրմիայի, Սողուզի, Սումայի գաղ-
 թականներին, որոնց դրությունը իրավացիորեն ավելի
 աննպաստ համարվեց՝ քուրդ Սըմկոյի ապրա-
 տամբական շարժման պատճառով: Նրանք զրկվել
 էին տուն վերադառնալու հարավորությունից: Ի-
 րանի կառավարությունը գաղթական Հայ զինյալ-

162 Զոհրաբյան 1985, էջ 227-228:

ներից (Սամսոն Թաղևոսյանի և Կուռոյի գլխավոր-
 րությունը) կազմում է կամավորների խումբ՝ Սըմկո-
 յի դեմ կռվելու համար: Հայերի այդ գունդը աշնա-
 նը Սըմկոյին լուրջ պարտություն է հասցնում մի
 շարք ընդհարումներում:

Ի լրումն այս ամենի, 1921 թվականի ամառը
 մոբեխը Ղարադաղում ոչնչացնում է առանց այն էլ
 հյուժված տնտեսությունների վերջին մնացորդները:
 Ղարադաղցիների բերքը հաճախակի էր տուժում
 մոբեխից, որը այդ կողմերում պատահում է պարբե-
 րաբար և հսկայական ծավալներով: Մորեխի պատ-
 ճառով երկու տարի անընդմեջ՝ 1889-1890 թվա-
 կաններին, ողջ Ղարադաղը առանց բերքի և դար-
 մանի էր մնացել, ինչը անասունների մասսայական
 մորթի պատճառ էր դարձել¹⁶³: Նման աղետներ ար-
 ձանագրվել են նաև ավելի վաղ ժամանակներում:
 Դեռ XVII դարի երկրորդ կեսի մատենագիր Չա-
 բարիա Ազուլեցին իր «Օրագրությունում» հիշա-
 տակել է այդպիսի մի աղետ. «ԹՎ ին ուժ լ. (1670 լ.)
 մայիսի մեկ ումն Լ. Գ. լ. լ. լ. Դ. լ. լ. լ. լ. Ուրդու-վար
 (Օրդու-բար) խիստ մեղացն մեր մորեխ եկա-: Լ. յա ք ամ

163 «Նոր Դար», Թիֆլիս, 1891, թիվ 175:

է (Երկրորդ անգամ է), որ Ղափանն, Դյմար¹⁶⁴, Ղարադաղն մորէն խիստ կերտ»¹⁶⁵: Նման անբարենպաստ մի քանի տարիներ են արձանագրվել Ղարադաղում նաև դարասկզբին:

Ինչպես արդեն նշել ենք, Ղարադաղի խաները մեծ մասս էին պատճառում նաև Չանգեզուրի, Կարիագինոյի, Ղարաբաղի Հայկական գյուղերին՝ պարբերաբար իրականացնելով ավազակային Հարձակումներ, սպանություններ, անասնագողություններ: 1922 թվականին Ղարադաղի Հայտնի ավազակապետերից մեկը՝ Թեյմուր անունով, ով Հաճախակի էր Չանգեզուրի կողմերում զբաղվում անասնագողությամբ, սպանում է Չանգիլանի ոստիկանապետ Ջեբրաիլ Շիրին օղլուն, բայց և ինքը սպանվում է ոստիկանի կրակոցից¹⁶⁶:

¹⁶⁴ Հետաքրքիր է, որ Ջաքարիա Ագուլեցին Դզմարը Ղարադաղից տարանջատում է:

¹⁶⁵ Ջաքարիա Ագուլեցու օրագրությունը 1938, էջ 94:

¹⁶⁶ Հեղաբույժ Ն., Չանգեզուրի լեռներում, «Հայաստան» հրատ., Երևան, 1977, էջ 181:

ՆԱՄԻՆԸ ՓԵՆՏԱՎԻՆԵՐԻ¹⁶⁷ ՇՐՋԱՆՈՒՄ:

ՍԵՎԵՐԻ ՎԵՐՋՆԵՎՆԵ

ՎԵՅԼԹՎՈՒՄԸ



Իրանի շահ Ռզա Փաշլավիի (1878-1944) օրոք կառուցվել է ճանապարհ՝ Թավրիզից մինչև Ղարադաղի կենտրոն՝ Ահար Թրքաբնակ գյուղաքաղաքը: Սա Ղարադաղի առաջին քիչ թե շատ բարեկարգ ճանապարհն էր: Կառուցումը տևել է 1928 թվականի գարնանից մինչև 1931 թվականի աշունը: Ճանապարհի շինարարության վրա բաժ ու քրուն-դով աշխատեցվել են գավառի գյուղացիները: Պետությունը նրանց ոչ միայն չի վարձատրել, այլև

¹⁶⁷ Փաշլավիներ: Շահերի հարստություն Իրանում (1925-1979): Հաջորդել են Ղաջարների հարստությանը: Ներկայացուցիչներն են՝ Ռեզե-Շահ Փաշլավի (1925-1941) և Մոհամմադ Ռեզա Փաշլավի (1941-1979): 1979 թվականի Իրանի իսլամական հեղափոխությունը տապալեց Փաշլավիների հարստությունը:

օրվա հացը և գործիքները հոգալու ինդիորը նույն պես դրել է գյուղացիների վրա: Նրանք հավաքագրվել են շահի զինվորություն կողմից, յուրաքանչյուր ընտանիքից՝ մեկ անձ: Ավելին, այն ընտանիքը, որը աշխատող տղամարդ չուներ, պարտավոր էր մեկ ամսով վարձել այլ անձի¹⁶⁸: Առաջ անցնելով նշենք, որ նույնիսկ 2019 թվականի դրությամբ Ղարաբաղի նախկին արդեն հայկական շատ գյուղեր (օրինակ՝ Սարգու, Աղաղան, ՍևաՀող) մեքենայի ճանապարհ չունեն: Դրանցից շատերը ներկայումս թուրք խաշնարածների համար ծառայում են որպես ամառանոցներ:

1930-ական թվականների սկզբին Ղարաբաղը այս անգամ արդեն ինքն է գաղթականներ ընդունում: Գաղթականները գալիս էին Արաքսի ձախակողմյան ափից, որը արդեն մեկ տասնյակ տարի էր ռուսական բոլշևիկյան բռնակալության տիրապետության տակ էր: Խորհրդայնացած Հայաստանում արդեն թափ էր առել քաղաքական բռնաճնշումները, գյուղի բռնի կոլեկտիվացումը, ինչից շատերը

փախչում էին թե՛ մենակ և թե՛ ընտանիքներով: Դրանց թվում էին նաև 1930 թվականին Սովետական Հայաստանի շատ վայրերում գյուղացիների բռնի ունեզրկման դեմ զինված ապստամբության շատ մասնակիցներ: 1933 թվականի սեպտեմբերի 15-ին Ատրպատականի հայոց թեմական խորհրդի ստենագրպիր Արամ Ղուկասյանը հաղորդում է Թեհրան՝ «Ալիք» պարբերականի հրատարակչությանը. «Երաժիտով Հայաստանից փախել են 161 մարդ՝ այդ թվում՝ երեխաներ: Գաղթականները, ուսրեկանական ժամանակավոր արգելափակումից ազատվելով, ուղարկվել են Եռաջնորդարան, որպեսզի պարտապարտվեն գեղի Իրանի Հարավը ուղարկվելուն, իսկ որ թավրիցում մնալը արգելված է: Փախստականների մեջ հայերից բացի կան նաև թաթարներ, ուսներ և վրացիներ: Օրական 4-10 հոգի ուղարկվում են Հարավ նախապես նշանակված վայրերը: Մերի, Վաղցած, Հիվանդկանանց և երեխաներին օգնություն հասնող Հասարակությունը: Ինվանի ցուցակով միայն 1932 թվականին Երաժիտով փախել են Հայաստանի որբանոցներից մոտ 120 որբ: Ելած էլ անդադար գալիս են: Պետք է մի կողմ դնել կոստանդուպոլիսի Հաշիվները և անել ամեն ինչ Գաղթականներին օգնելու համար: Ժողովուրդը կո-

¹⁶⁸ Հովսեփյան, 2009, հատ. I, էջ 261:

տորվում է, պեթժ է փրկել և ազատել կորստից»¹⁶⁹: Մեծ չափերով գաղթում էին խորհրդային անցած տասնամյակի ընթացքում Հունաստանից և Բուլղարիայից Հայրենադարձվածները, ովքեր, հրապուրվելով բուլղարիական պրոպագանդայի կողմից ներկայացված «բարեկեցիկ» կյանքով, տեղափոխվել էին Խորհրդային Հայաստան, սակայն կյանքի և ապրուստի միջոցներ չէին գտել: Գաղթականների մեջ շատ էին նաև քաղաքական Հետապնդվողները:

Ղարադաղի Հայերը առաջին անգամ պարսկական բանակ են զորակոչվել 1932 թվականին: Պարտադիր զինվորական ծառայությունը տևում էր երկու տարի: Այդ ժամանակվա պարսկական բանակը վատ էր կազմակերպված, վատ պարենավորված և այլ անհրաժեշտ տարրական պայմաններից զուրկ էր: Բարձր էր զինվորների մեջ մաշակոցային աստիճանը թե՛ հիվանդություններից, թե՛ պատաՀարներից: Օրինակ՝ 1932 թվականին Խանազահից զորակոչված 13 երիտասարդներից երեքը բանակում մաՀացել էին¹⁷⁰ տարբեր պատճառներով:

¹⁶⁹ «Ալիք», 1933, 7 նոյեմբերի, թիվ 28:

¹⁷⁰ Հովսեփյան 2009, հատ. I, էջ 479:

Երկրորդ Համաշխարհային պատերազմի ժամանակ՝ 1941 թվականի օգոստոսի 25-ին, խորհրդային զորքերը անցնում են սահմանը և մուտք գործում Իրան: Հատուկ դիվանագիտական նոտայով Մոսկվան հիմնավորում էր այդ «ստիպողական» քայլի «Հույժ անհրաժեշտությունը երկու երկրների անվտանգության Համար»¹⁷¹: Պաշտոնական նպատակը Իրանի նավթային ռեսուրսները ֆաշիստական Գերմանիայից պաշտպանելն էր: Սակայն կարմիր բանակի՝ Իրան մտնելուց անմիջապես Հետո Ատրպատականի անջատումը, խորհրդայնացումը և կցումը ռուսական գաղութային կայսրությանը դառնում է ռուսական պատերազմական քաղաքականության հիմնական նպատակներից մեկը: Իրանի զինված ուժերը ցուցաբերեցին թույլ դիմադրություն և մի քանի օրվա ընթացքում ռազմական գործողությունները Հասան իրենց ավարտին: Արդեն Հաջորդ օրը՝ օգոստոսի 26-ին, ռուսները մտան Թավրիզ: Ատրպատականը ամբողջությամբ ռազմակալվում է խորհրդային զորքի կողմից:

¹⁷¹ Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2005, էջ 632:

Քողարկված Հինգերորդ շարայան նման հրապարակ են իջնում 1938-1939 թվականներին Անդրրկովկասից արտաքսված Հայ և թուրք գաղթականները և խանդավառությամբ ու ծաղիկներով դիմավորում են խորհրդային զորքերի առաջապահներին¹⁷²։ Հենց միանգամից խորհրդային Հատուկ ծառայությունները սկսեցին կազմակերպել փողոցային անկարգություններ, Հակապետական Հանրաշավաքներ։ Թուրք խուժանը թափվել էր Թավրիզի փողոցները և թալանում էր այն, ինչ պատահի։ Թիրախը մեծ մասամբ Հայերն էին։ Հարձակումներ էին իրականացնում Հայկական թաղամասերի, ձեռնարկությունների, խանութների վրա, առևանգում էին մարդկանց։ Նոր Հաստատված ռուսական վարչակարգի կողմից սկսվեցին նույն Հալածանքները այլախոհների նկատմամբ, ինչպես Խորհրդային Միությունում։ Աչքի ընկնող Հայ գործիչներին ձերբակալում և տեղափոխում էին ԽՍՀՄ տարածք և

¹⁷² Փիրումեան-Մինասեան Ռ., Մինասեան Բ., Թաւրիզից ստալինեան գուլագ ընդհատված պատմութիւն, ՀՀ ԳԱԱ հնագիտութեան և ազգագրութեան ինստիտուտ, Երևան, 2019, էջ 85:

աքսորում սիբիրյան գուլագները¹⁷³։ Շատերի Հետ միասին այդ բախտին է արժանացել Ատրպատականի դաշնակցության աչքի ընկնող անդամներից, ծնունդով Հասանով գավառակի Օղա գյուղից Բաղդասար Մինասյանը և ազգային, Հասարակական գործիչ, նույն գավառակի Նորաշեն գյուղից Խաչատուր Գրիգորյանը։ Խորհրդային Հատուկ ծառայությունները միջոցներ էին ձեռնարկում առևանգելու և ձերբակալելու Ատրպատականի Հայոց թեմի առաջնորդ Ներսես Մելիք-Թանգյանին, սակայն դա նրանց այդպես էլ չհաջողվեց։ Այդ ամբողջ թոհուբոհի վերջնական նպատակն էր Ատրպատականը անջատել և միացնել Խորհրդային Ադրբեջանին¹⁷⁴։

¹⁷³ Ռուս. ГУЛАГ «ճամբարների և կալանավայրերի գլխավոր վարչություն» (Главное управление лагерей и мест заключения):

¹⁷⁴ Իրականում այդ իրադարձությունները Ստալինի և Խորհրդային միության հատուկ ծառայությունների կողմից ծրագրվել էին դեռ տասը տարի առաջ, երբ կովկասյան թաթարների կամ թուրքերի հանրապետությունը անվանակոչեցին Ադրբեջանի խորհրդային սոցիալիստական հանրապետություն, իսկ բնակիչներին՝ ադրբեջանցիներ։ Պատահական չէ, որ ատրպատականյան այդ իրադարձությունների իրականացման անմիջական ղեկավարն ու

Պատերազմից հետո՝ 1945 թվականի դեկտեմբերին, օկուպացված Թավրիզում գումարվեց ժողով, որի որոշմամբ ձևավորվեց այսպես կոչված Իրանական Ադրբեջանի կառավարությունը: Իրադարձությունները տանում էին դեպի Ատրպատականի՝ ներառյալ Ղարադաղի միացմանը Խորհրդային Ադրբեջանին: Իրանական Ադրբեջանի կառավարությունը իրար հետևից ընդունում էր կոմունիստական ոգով օրենքներ, որոնք կոչված էին օրինականացնել Ադրբեջանի անկախությունը և երկու Ադրբեջանների միավորումը¹⁷⁵: Թուրքերենը հայտարարվեց պաշտոնական լեզու, ստեղծվեցին սեփական զինված ուժերը: Բարեբախտաբար միաժամանակ սկսվեցին նաև միջազգային ճնշումները Խորհրդային Միության նկատմամբ: Համաձայն 1941 թվականին փոխադարձ կնքված դաշնագրի՝ խորհրդային զորքերն ու բրիտանական զորքերը, որոնք այդ նույն ժամանակ ներխուժել էին Իրան

պատասխանատուները Ադրբեջանի խորհրդային հանրապետության առաջնորդներն էին՝ Միրջաֆար Բաղիրովի ղեկավարությամբ:

¹⁷⁵ Բայբուրդյան 2005, էջ 643:

նարավից, պետք է քեֆն Իրանը պատերազմի ավարտից հետո, առավելագույնը վեց ամսվա ընթացքում: Միայն այն բանից հետո, երբ 1946 թվականին ԱՄՆ-ը վերջնագիր ներկայացրեց Խորհրդային կառավարությանը, վերջինս ստիպված էր լքել և դուրս բերել զորքերը Իրանից՝ «Ռեմոկոստական Ադրբեջանին» թողնելով Իրանի հետ մեկ-մեկակ¹⁷⁶:

Երկրորդ Համաշխարհային պատերազմի ավարտից հետո Սովետական միությունը նորից ձեռնամուխ է լինում սփյուռքահայությունից ներդաշնակության ներդաշնակության: Սովետական Միության կառավարությունը 1945 թվականի նոյեմբերի 21-ին որոշում է կայացնում սփյուռքահայությունից ներդաշնակության ներդաշնակության ձևերը: Հայաստանի կառավարությունը ընդհանուր առմամբ խնդրել էին 130000 մարդ, սակայն բոլորին ընդունելու

¹⁷⁶ Մենատոր Հենրի Ջեկսոնը իր հուշերում վկայում է, որ ԱՄՆ նախագահ Տրումենը Սպիտակ տուն էր հրավիրել խորհրդային դեսպան Ա. Գրոմիկոյին և նրան հայտարարել, որ եթե խորհրդային բանակը անհապաղ դուրս չգա Իրանից, ապա ԱՄՆ-ը նրա դեմ կօգտագործի ատոմային ռումբ (Բայբուրդյան 2005, էջ 645):

Հնարավորությունն չեղավ: 1946 թվականի հուլիս-հոկտեմբեր ամիսներին Հայաստանը Իրանից, Սիրիայից, Լիբանանից, Հունաստանից, Բուլղարիայից և Ռումինիայից ընդունել է 50945 մարդ¹⁷⁷: 1947 թվականին Սիրիայից, Լիբանանից, Պաղեստինից, Իրաքից, Եգիպտոսից, Հունաստանից, Ֆրանսիայից, ԱՄՆ-ից ներգաղթել է 35401 մարդ: Հայրենադարձների քանակը ավելի մեծ կլինեք, եթե Իրանի կառավարությունը չարգելեր գաղթը¹⁷⁸: Եվս 10000 մարդ ներգաղթել է 1948 թվականին: Այսպիսով 1946-1948 թվականներին Հայաստան է ներգաղթել մոտ 100000 մարդ: Պարսկաստանի Հայկական ազգային կազմակերպություններն ու միությունները դեմ էին Սովետական Հայաստանի կողմից կազմակերպվող այդ ներգաղթերին և միջոցներ էին ձեռնարկում խոչընդոտելու և Հայերի շրջանում ներգաղթի դեմ քարոզչություն իրականացնելու համար:

Ավազակային Հարձակումները Հայկական գյուղերի վրա դարասկզբի Համեմատ նվազել էին, բայց

¹⁷⁷ ՀԺՊ VIII, էջ 251:

¹⁷⁸ ՀԺՊ VIII, էջ 254:

չլին վերացել: 1945 թվականի նոյեմբերի 5-ին արդեն ավելի քան երեք տասնամյակ թրքացած Օղայի խմները՝ Ալին և Մահմուդը, զինված ավազակների գլուխն անցած, Հարձակվում են Դզմարի Խանագահ գյուղի վրա: Գյուղացիները Հանկարծակիի գալով փախչում են գյուղից: Ավազակները սկսում են իրենց թալանը: «Ըրիսթոսահեա Մարտիրոսյանի ցան թուր իրերն ու անասունները ցարբել են,- գրում է թավրիզում Հրատարակվող «Արևելք» թերթը,- 10 ցարեկան ցողային վայրենաբար թահել է աչվն ու երեւր որչան վա են ցարջրել: Փակ դուները կորբել ու շարունակել են կողոպտոցը: Անասելի թեթի են ենթարկել մի խանի Գյո-ղացիներին, որոնք մեծ աչվ են պարկաթ են անկողնում»: Թրքաբնակ Դինավուրի գյուղացիներն էլ, օգտվելով առիթից, գնում են թալանի, բայց Հանդիպելով մի քանի երիտասարդ խասագահցիների դիմադրությանը, ետ են դառնում կողոպտելով միայն գյուղի ծայրի տները¹⁷⁹:

1946 թվականից անընդհատ խորացող ծանր սոցիալ տնտեսական վիճակի պատճառով Ղարաբաղում դեռ պահպանվող Հայաբնակ գյուղերի

¹⁷⁹ «Արևելք», Թավրիզ, 1945, 9 դեկտեմբերի, թիվ 12:

բնակիչները կրկին սկսում են բռնել գաղթի ճանապարհը: Գաղթը կազմակերպելու Համար Ղարա գաղում կատարվում է բնակչության նախնական հաշվառում, որը իրականացվում է նաև գաղթից Հետո: Դրանց արդյունքները հետևյալն էին¹⁸⁰.

Նախքան 1946թ. գաղթը				Գաղթից հետո՝ 1947 թ.	
N	Գավառակ/գյուղ	տուն/ընտ.	բնակիչ	տուն/ընտ.	բնակիչ
	Դզմար	219	1312	104	624
1	Խանազահ	56	336	-	-
2	Իրգիթ	68	408	50	300
3	Սարդու	13	78	-	-
4	Աղաղան	23	138	23	138
5	Ղրշլաղ	31	186	31	186
6	Ղուլուղի	28	166	-	-
	Հասանով	46	276	27	162
7	Նորաշեն	27	162	27	162
8	Լումա	19	114	-	-
	Մեշափարա	42	252	32	192
9	Ողան	25	150	15	90
10	Նեփեշտ	17	102	17	102
	Մինջվան	190	1140	151	906
11	Վինա	98	588	66	396
12	Ամրաղուլ	22	132	22	132
13	Քարազլուխ	45	270	38	228
14	Սևահող	13	78	13	78
15	Վարդանաշեն	12	72	12	72

¹⁸⁰ Հովսեփյան 2009, հատ. I, էջ 145-146, 156-157:

	Քելվան	191	1146	127	764
16	Սրղրն	62	372	56	336
17	Ղասումաշեն	35	210	28	168
18	Գեոգդարա Դուգավդարա	17	102	11	66
19	Բերդ	23	138	-	-
20	Սուրուն	19	114	-	-
21	Նորաշեն	12	72	12	72
22	Աշրափ	13	78	10	62
23	Սրիտավու	10	60	10	60
24	Ընդհանուր	688	4128	441	2648

Սյտեղ նույնպես բնակչության թիվը հաշվարկվել էր մոտավորապես՝ մեկ ընտանիքը դիտարկելով 6 անձ: Հեղումը իրական թվի հետ էական չէր լինի:

Ինչպես ցեղանոս էնձ, 1912 թվականին Արմենիա-Պարսիստանի իրականացրած զիճակագրո-թյան Համաձայն Ղարադաղի Հայաստանի Գյո-ղերի թիվը, նախկին 1946 թվականի Գաղթը, նվազել է 6-ով (արդեն Հայաստանի վրա էին Հասանովից Օղա, Զիաթո-, Մեշափարայից Մուգիթ, Գրբանավ, Բըլալա, Բեյվանից Լարան), իսկ բնակչո-թյան և ընդհանրությունների թիվը ավելի շատ կեսով: 1946 թվականին Ղարադաղից Գաղթել էին 247 ընդհանրապես մոտավորապես 1480 մարդ: Գաղթը շարունակվել է նաև 1947 թվականից Հեյոս ավելի նվազ շափերով: Ընդհանրապես Գաղթեցին Գյո-ղերից Լարան, Մարդո-, Ղո-Լո-ղի (Ղո-Լո-ղին Գաղթել է Հիմնա-

կանոն-մ Խորհրդային Հայաստան, Երասրայի շրջան), Հասանովից Լո-մա, Բեյվանից Բերդ, Սո-րո-ն Գյո-ղերը: Սնացել էր ընդամենը 17 Հայաբնակ Գյո-ղ, որոնց մեծ մասը վերջնական դադարեցման շեմին էր կանգնած, մինչդեռ Բրեյնակ Գյո-ղերի Բեյվը այդ նո-յն ժամանակ մոտ 880 էր¹⁸¹: Ըստ «Ղարադաղի Հայե-րը» ազգագրական գրքի Հեղինակ Հովհաննես Հով-սեֆյանի 1940-ականներին Ղարադաղի 101 բնակավայ-րո-մ դեռ պաճառակո-մ էին Հայկական Գերեզմանոց-ներ, Հո-շարձաններ, արքավայրեր¹⁸²: Որպես եկվորներ Բո-րեյն ու իրդերը արքավայրեր կամ ուխտապետներ շո-նեին և Հայերից յո-րացված արքավայրերն էին այ-ցելո-մ:

Ղարադաղի Հայերը Հայրենի գյուղերը քրոմ, լցվում էին Թավրիզի փողոցները՝ շատերը դեպի Հայաստան կամ Իրանի այլ քաղաքներ արտագաղ-թելու նպատակով: Նրանք իրենց գույքը չնչին ար-ժեքով ծախում էին, այնպես որ ստացած գումարով կարողանում էին Հագիվ մի քանի ամիս ապրել: Այդ գաղթը կազմակերպված չէր: Շատերը ամիսներով մնացին Թավրիզում՝ Հետագա գաղթի Հույսերը

կորցրած: Թշվառ ղարադաղցիները Հայտնվել էին սովի ճիրաններում: Դա արդյունք էր Իրանի իշխա-նություն վարած տնտեսական անհեռատես քաղա-րականության, ինչի արդյունքում Իրանի ծայրա-գավառները դատարկվում էին, իսկ քաղաքները (Հատկապես Թեհրանը) արագ տեմպերով աճում էին: Դրությունը գնալով սպառնալի էր դառնում, և 1957 թվականին Իրանի կառավարությունը վար-չապետի գլխավորությամբ ներքին գործերի նախա-րարություն կազմում մի աշխատանքային խումբ է ձևավորում՝ խնդիրը մանրամասնորեն ուսումնասի-րելու Համար: Ուսումնասիրությունների արդյուն-քում աշխատանքային խումբը կառավարությանը մի զեկույց է ներկայացրել, որտեղ ամփոփվել են ստեղծված իրավիճակի պատճառները: Որպես գա-վառների և գյուղերի դատարկման պատճառներ զեկույցում նշված էին զինվորագրությունը, Հացի և մթերքների գների մեծ տարբերությունը (ի օգուտ մեծ քաղաքների), աշխատանքի անհամեմատ բարձր վարձատրությունը մեծ քաղաքներում, գյուղատնտե-սական աշխատանքների և գյուղմթերքների ար-ժեքը կումը, գավառներում տիրող գործազրկություն-

¹⁸¹ «Ալիք», 1985, 4 փետրվարի, թիվ 28 (Էմիլ Հակոբյան, Ղա-րադաղ կամ Փայտակարան):

¹⁸² Հովսեփյան 2009, հատ. I, էջ 42:

ցորեն է նվիրաբերում, ևս 47 տոննա վաճառում պետական գներով: Հայոց թեմական խորհուրդը որոշում է կայացնում հավաքված միջոցները բաժանել միայն գյուղեր վերագործողների միջև: Նշված միջոցների 60 տոկոսը բաժանվեց ղարադաղցիներին, իսկ մնացածը՝ Մարաղայի, Միանդաբի, Դարաշամբի և Ատրպատականի այլ վայրերի հայ գյուղացիներին: Պահպանվել է հանգանակված միջոցների բաժանման հաշվետվությունը¹⁸⁵.

N	Գյուղ	Գավառակ	Գումար /թիվ/
1	Իրգութին	Դգմար	11400
2	Խանազահ	Դգմար	200
3	Ղշլաղ	Դգմար	34850
4	Նորաշեն	Հասանով	8250
5	Վինան	Մինջվան	2500
6	Ամրաղուլ	Մինջվան	1300
7	Վարդանաշեն	Մինջվան	1250
8	Քարազուխ	Մինջվան	650
9	Գեոզարա	Քեյվան	2750
10	Աշրափ	Քեյվան	1500
11	Ղասումաշեն	Քեյվան	1000

Առաջնորդարանին հաջողվել էր վերոնշյալ գյուղերի գաղթականների մի մասին ետ վերագործանել իրենց տները, սակայն ոչ երկար ժամանակով:

¹⁸⁵ «Ալիք», 1950, 9 օգոստոսի, թիվ 177:

1946 թվականից սկսած Գաղթի Ընդհանուր Ղարադաղի Գյուղերում բնակչության թիվը էականորեն նվազում է, ինչը պայման է դառնում շատ Գյուղական Համայնքների ձայնագրման: Գաղթը կազմակերպող մարմինները Գաղթականներին Գյուղերից ընտրում համաներամագրում էին որոշակի սկզբունքով, այլ ոչ թե ամբողջական բնակավայրերով: Ինչի արդյունքում, որպես Ընդհանուր մեռած էին իրար շտապացած Գյուղական Համայնքներ, որոնք Հայրենիքում էին շտապացանց անորոշ վիճակում: Սակայն 29 Հայաստանի Գյուղերից 1950-ականներին սկզբին մեռած էին II-ը, որոնցից մի խանիսը մեծ վերադարձումով կարելի էր Գյուղ անվանել: Իրանից արդեն ստացված Համայնքներ էին, որոնցից մի խանիսի բնակչությունը Գաղթել էր Թավրիս և կրկին վերադարձել: Ղարադաղի Հայկական Գյուղը մնացել էր քանիսին թողած, երկրագործական և անասնապահական օրարական Հնարավորություններից պրկված: Օրինակ՝ Դգմար գավառակի Իրգութին (Ուրգութին, Իրգիթ կամ Ուրգութ) 23 տուն ունեցող գյուղը ուներ ընդամենը 22 եզ, 16 կով¹⁸⁶: Վերոհիշյալ 11 գյուղերը ընկած էին 150 կիլոմետրի վրա (արևմուտքից՝ Իրգութինից, մինչև արևելք՝ Սրղըն)՝ սովոր, սնկի պես բազմացած թուրքական գյուղերի մեջ: Այդ 11

¹⁸⁶ «Ալիք», 1954, 6 հոկտեմբերի, թիվ 221:

գյուղում 1954 թվականի դրությամբ ապրում էր 235 ընտանիք կամ 1439 մարդ, որոնց կեսը Մինջվան գավառակի Վինա, Քարագլուխ և Ամրադուլ երեք գյուղերի բնակիչներն էին: 1954 թվականին Թեհրանում Հիմնված «Ղարադաղի Հայրենակցական միության» նույն թվին իրականացրած վիճակագրության արդյունքները Հետևյալն են¹⁸⁷.

Գավառ/գյուղ	Տուն	Շուն	Դարոցական տարիքի երեխաներ			Դպրոց	Ուսուցիչ	Եկեղեցի	Քաղաք
			Աղջիկ	Տղա	Ընդամուր				
Դգմար-1 գյուղ	23	125	14	20	34	1	1	1	-
Իրգութին	23	125	14	20	34	1	1	1	-
Հասանով-1 գյուղ	9	54	8	10	18	-	-	1	-
Նորաշեն	9	54	8	10	18	-	-	1	-
Մեշափարա-1 գյուղ	15	107	14	21	35	1	-	1	-
Ողան	15	107	14	21	35	1	-	1	-
Մինջվան-5 գյուղ	148	951	68	115	183	2	2	5	1
Վինա	70	431	20	44	64	1	1	1	-
Քարագլուխ	36	248	26	37	63	1	1	1	1
Ամրադուլ	24	135	10	13	23	-	-	1	-
Վարդանաշեն	9	76	8	11	19	-	-	1	-
Սևահող	9	61	4	10	14	-	-	1	-
Քելվան-3 գյուղ	40	202	25	51	76	1	1	3	-

¹⁸⁷ «Ալիք», 1954, 6 հոկտեմբերի, թիվ 221:

Սրղըն	18	92	14	23	37	1	1	1	-
Ղասումաշեն	14	68	5	16	21	-	-	1	-
Սրիդավ	8	42	6	12	18	-	-	1	-
Ընդամենը	235	1439	129	217	346	5	4	11	1

Ղարադաղի Հայաբնակ գյուղերի մի մտավոր վիճակագրություն էլ կազմվում է Հաջորդ տարի՝ 1955 թվականին, Վ. Պ. Միրզայանի կողմից, Համաձայն որի՝ 1955 թվականին Սրղըն, Ղասումաշեն, Վինա, Քարագլուխ, Ողան, Նորաշեն, Իրգութին գյուղերում ապրում էր 1200 մարդ¹⁸⁸:

XX դարի կեսերին Ժամեր սոցիալ-դեմոկրատական կապիտալիզմի նոսրացումը և սոցիալ-դեմոկրատիայի անհաջողակ ընդհանուր շարժումը, Հայկական բնակչության Հանդուրդ թոթիկների կամայական թշուրտնանքով ու Հանցանքներով: Վարչական կենտրոնը՝ Հար ձաղախը ամբողջությամբ թոթաբնակ էր: Թոթիկների շեղումն էր ոչ միայն տեղական իշխանության ներքին, այլև սոցիալական-թշուրտնա, արդարացի-արդարացի ու դատարանները, ինչը չէր կարող իր խորական ազդեցությունը չունենալ այդ ողջ գործընթացների վրա: Դարասկզբի Համեմատ կարելի է ասել շատ շեղ բան էր փոխվել:

1953 թվականի փետրվարի 2-ին ԱՀարի շրջանի Իրրիդ թուրքաբնակ գյուղի սահմանում կատար-

¹⁸⁸ Միրզայան Վ. Պ., Ղարադաղ (Պատկերներ) գաւառը, «Ալիք», 1982, 20 հունվարի, թիվ 15:

վել էր մի քստմենելի ոճիր, որի զոհն էր Մինջվան գավառակի Քարագլուխ գյուղի բնակիչ, քսաներկուամյա Իշխան Ավագյանը: Ոճիրը կատարվել էր Հետևյալ կերպ. երիտասարդը գործով պետք է գնար Քեյվան գավառակի թրքաբնակ Միրավ գյուղը և նույն օրն էլ պետք է վերադառնար: Ճանապարհը անցնում էր Իբրիղ գյուղով: Իշխանը մեկնում է, բայց այլևս չի վերադառնում: Փետրվարի 3-ին Քարագլխի գյուղացիները երկար փնտրելուց Հետո Իբրիղի մոտակա խոր ձորում գտնում են Համագյուղացու դիակը՝ խոշտանգված վիճակում: Անմիջապես տեղեկացվում են պատկան մարմինները: Բժշկական զննությունից պարզվում է, որ ոճրագործները Իշխանի ձեռքերը կապելուց Հետո սպանել են գլխին Հասցրած մահացու Հարվածներով: Շուտով ոստիկանները Հետախուզում են Հայտարարում իբրիղցի Իսմայիլ խանի, նրա որդու՝ Թեմուր խանի, Համգա խանի, նրա որդու՝ Ղազրաման խանի, քրոջ որդու՝ Միրզա Ալիի նկատմամբ և կարճ ժամանակում Հայտնաբերում և ձերբակալում են բոլորին: Սրանք Մինջվանում և Քեյվանում Հայտնի ավազակներ և թալանչիներ էին: Չոհի եղ-

րայրը՝ Լևոն Ավագյանը, և նրա Համագյուղացիները տեղեկանում են, որ Հանցագործները Հնարավոր է սղատ արձակվեն մեղադրյալների ազգականներից կաշառված ԱՀարի իրավապահների կողմից: Քարագլխեցիները գնում են Թավրիզ, ազգային մարմինների միջոցով դիմումներ են Հղում նահանգապետին, ժանդարմերիային և զինվորական իշխանությանը՝ դատական գործընթացը Թավրիզ տեղափոխելու Համար¹⁸⁹: Հիշենք 1912 թվականի Քեյվանի խաների դատը, որը նույնպես անբարենպաստ ընթացք էր ստացել ԱՀարում և քեյվանցի Հայերի դիմումներով և Թավրիզի Առաջնորդարանի ջանքերով տեղափոխվել էր Թավրիզ: Յավոք, գործի Հետագա ընթացքի վերաբերյալ տեղեկություններ չՀայտնաբերեցինք, բայց միայն այսքանից կարելի է Հետևություններ անել 1950-ականներին Ղարադաղում տիրող իրավիճակի և օրինականության վերաբերյալ:

1940-ականների վերջին ամբողջ Ղարադաղում մնում էր միայն մեկ քառանա՝ տեր Խորեն Տեր-

¹⁸⁹ «Ալիք», 1953, 23 ապրիլի, թիվ 87:

Ստեփանյանը, ով սպասարկում էր միայն Վինային և Քարագլխին: Նա հիվանդության և ծերության պատճառով չէր կարողանում սպասարկել գավառակի մնացած գյուղերին: Դեռևս նախորդող տարիներին կային չորս քաճանաններ, որոնք արտագաղթի ժամանակ նույնպես հեռացել էին Ղարադաղից. մասնավորապես՝ Նորաշենի քաճանային հետ էր կանչել Ատրպատականի առաջնորդարանը և տեղափոխել էր Թավրիզ, իսկ Իրգուլթինի քաճանան գաղթել էր Թեհրան՝ անտերության մասներով իր հոտը¹⁹⁰: Ծնվածները չէին մկրտվում, հանգույցյալներն էլ առանց կրոնական արարողության էին հանձնվում հողին: Որոշ տեղերում ոչ հոգևոր կրթությունն ունեցող աշխարհիկ մարդիկ իրենց վրա էին վերցրել քաճանայական պարտականությունները և սկսել էին կատարել եկեղեցական ծիսակատարություններ, այլ կերպ ասած՝ եկեղեցին աշխարհականացվել էր:

1959 թվականի մայիսին Թավրիզի Հայոց առաջնորդարանից Ղարադաղ այցելության է գնում

¹⁹⁰ «Ալիք», 1954, 6 հոկտեմբերի, թիվ 221, 1955, 15 փետրվարի, թիվ 37, 1955, 6 հոկտեմբերի, թիվ 218:

տեր Մարտիրոս քաճանան: Նա շրջում է բոլոր 9 հայաբնակ գյուղերով, կատարում հոգևոր արարողություններ և կազմում վիճակագրություն, որը ներկայացնում էնք ստորև¹⁹¹.

N	Գյուղ	Գավառակ	Տուն	Շունչ
1	Վինա	Մինջվան	69	447
2	Քարագլուխ	Մինջվան	38	215
3	Իրգուլթին	Դզմար	17	84
4	Ամրադուլ	Մինջվան	15	91
5	Ղասումաշեն	Քեյվան	14	104
6	Սրդրն	Քեյվան	10	51
7	Սրիդավ	Քեյվան	9	54
8	Վարդանաշեն	Մինջվան	5	30
9	Ողան	Սեշափարա	2	13
Ընդհանուր			179	1089

Որպեսզի պատկերացնենք, թե ինչ արարողությամբ էր հայաթափվում Ղարադաղը XX դարի կեսերին, համեմատենք 1954 և 1959 թվականների վիճակագրական տվյալները: Ընդամենը 5 տարում 11 հայաբնակ գյուղերի քանակը կրճատվել էր երկուսով, լքվել էին Հասանով գավառակի վերջին հայաբնակ գյուղ Նորաշենը և վերջին 60 տարում Մինջվան գավառակում առաջին գյուղը՝ Սևահողը: Հինգ տարում տների քանակը կրճատվել էր 56-ով

¹⁹¹ «Ալիք» օրաթերթ, 1959, 22 դեկտեմբեր, թիվ 285:

(24% -ով), բնակչության քանակը՝ 350 -ով (32% -ով)։ Ի տարբերություն Ղարադաղի մնացած գավառակների, որոնք արագորեն կորցնում էին թե՛ իրենց Հայաբնակ գյուղերը, թե՛ Հայ բնակչությունը, Համեմատաբար կայուն էր Մինջվան գավառակի Հայությունը, ով XX դարի առաջին 60 տարում կորցրեց մեկ գյուղ, իսկ որոշ գյուղերի մասով էլ նույնիսկ բնակչության աճ գրանցեց (Վինա, Քարագլուխ) առանձին ժամանակահատվածներում։

1961 թվականին օգոստոսի 12-ին ՍՍՀՄ Միսիստրների սովետը որոշում ընդունեց Հայերի նոր Հայրենադարձություն կազմակերպելու մասին։ 1962-1965 թվականներին Հայաստան ներգաղթեց 6949 մարդ։ Իրանից Հայաստան ներգաղթողների թիվը 705 մարդ էր¹⁹²։ Արտագաղթեցին նաև Ղարադաղից։

1961 թվականի արտագաղթից հետո վերջնականապես լքվեցին Մինջվան գավառակի Ամրագուլ, Քեյվան գավառակի Սըղըն, Մեշափարա գավառակի վերջին Հայաբնակ Ողան գյուղերը։ Հստ

¹⁹² ՀԺՊ VIII, էջ 358-359։

Ատրպատականի Հայոց առաջնորդ Վարդան Վ. Դեմիրճյանի մոտավոր Հաշվարկի՝ 1964 թվականին Ղարադաղի Հայության թիվը կազմում էր 950 մարդ¹⁹³։ Այսինքն՝ 1960-ականների սկզբին Ղարադաղից արտագաղթել են մոտ 140 Հայ։ Սակայն մեր մոտավոր Հաշվարկներով, որը հիմնված է նույն Վարդան Վ. Դեմիրճյանի ներկայացրած ընտանիքների քանակի վրա, 1964թ. Ղարադաղի Հայերի թիվը պետք է կազմեր մոտ 855 մարդ և Համապատասխանաբար՝ 1961-64թթ. ժամանակահատվածում գաղթողների թիվը պետք է կազմեր մոտ 235 մարդ։ Ատրպատականի Հայոց առաջնորդը Հստակ ներկայացրել է Վինա և Քարագլուխ գյուղերի բնակչության թիվը, մնացած 4 Հայաբնակ գյուղերը ներկայացրել է միայն ընտանիքների քանակով։



Մեր կողմից նախկին վիճակագրական տրվյալների հիման վրա, միջին վիճակագրական ընտանիքը հիմք ընդունելով 6 անձ, հաշվարկել ենք 1964 թվականի Ղարադաղի Իրգութին, Ղասումաշեն, Մըհդավ, Վարդանաշեն հայաբնակ գյուղերի բնակչության մոտավոր քանակը.

¹⁹³ «Ալիք» օրաթերթ, 1964, 26 օգոստոս, թիվ 187։

N	Գյուղ	Գավառակ	Մարդ	Դպրոցի աշակերտների թիվը
1	Վինա-գյուղապետ՝ Ստեփան Մելիք-Ստեփանյան, ուսուցիչ՝ Սոկրատ Մելիք-Ստեփանյան	Մինջվան	417	80
2	Քարագլուխ-գյուղապետ՝ Խաչատուր Դավթյան, ուսուցիչ՝ Լուսիկ Վարդանյան	Մինջվան	180	42
3	Իրգութին-գյուղապետ՝ Բագրատ Բաղդասարյան	Դզմար	156	-
4	Ղասումաշեն	Քելվան	42	-
5	Մրիղավ	Քելվան	42	-
6	Վարդանաշեն	Մինջվան	18	-
	Ընդամենը		855	122

1964 թվականին Ղարադաղում մնացած այս 6 Հայաստանի Հանրապետության արդեն Հոգևոր Հովիվ շրջաններն¹⁹⁴ 1967 թվականին Իրգու-Թինի բնակիչները ամբողջությամբ տեղափոխվում են Թավրիզ¹⁹⁵:

Իրանահայկական Համայնքը գոյատևում էր աստիճանաբար մահանալով կամ գաղթելով: Այդ գային ամենամեծ իրադարձությունը կամ ազգային

¹⁹⁴ «Ալիք», 1964, 26 օգոստոսի, թիվ 187:

¹⁹⁵ «Ալիք», 19 հունվարի, 1970, թիվ 13:

կյանքի ամենացայտուն դրսևորման ձևը արդեն դարձել էին Հայկական դպրոցների ամանորյա Հանդեսները:

Ղարադաղում մնացած Հայուխյան բեկորներին աջակցելու նպատակով 1965 թվականին Թավրիզում Հայկական Համայնքի, գերազանցապես՝ ղարադաղցիների կողմից ստեղծվում է Հանձնաժողով: Վերջինս այդ նպատակի Համար Հանգանակում է 11800 ռիալ գումար: Իսկ 1966 թվականին Նյու Յորքի Իրանահայ Համայնքը, ընդառաջելով Թեմական խորհրդի դիմումին, ղարադաղահայուխյան Համար Հատկացնում է 150 դոլար գումար: Այդ միջոցները բաժանվում են Ղարադաղի գավառի առավել կարիքավոր գյուղացիներին¹⁹⁶:

1967 թվականի Հունիսի 19-22-ը Ղարադաղի Մինջվան գավառակի Վինա և Քարագլուխ գյուղեր են այցելում Թավրիզի Հայ Համայնքի յոթ ներկայացուցիչներ, որոնց մեջ էին Թավրիզի Հոգևոր Հովիվ տեր Բագրատ քահանա Մելքոնյանը և Հրամտ Աճեմյանը: Վերջինս ճամփորդությունից

¹⁹⁶ «Ալիք», 19 հունվարի, 1970, թիվ 13:

անմիջապես հետո «Ալիք» օրաթերթում գրավոր ակնարկ է հրատարակում այդ մասին¹⁹⁷:

Ավելի քան 15 ժամ տևող երկար ու տաժանակիր ճամփորդությունից հետո՝ գիշերվա ժամը 1-ին, խումբը հասնում է Վինա: Թավրիզից ընդամենը 50-60 կմ հեռավորությունը հաղթահարելու համար 15 ժամ պահանջվեց՝ այն էլ ավտոմեքենաներով: Աստեղից կարելի է պատկերացնել, որ դեռ XX դարի 60-ական թվականներին Ղարադաղում ճանապարհներ գրեթե գոյություն չունեին: Ճանապարհների բացակայությունը համարյա մեկուսացրել է գավառը արտաքին աշխարհից և նվազագույնի հասցրել ցանկացած տեսակի հաղորդակցություն: Բերենք մի դեպք, որը արդյունք էր վերը նկարագրած խնդրի. 1969 թվականի հուլիսի 12-ին Ղարադաղում Արաքսի ափին, իր ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ օձի խայթոցից մահացել էր Իրանի բանակում ծառայող նորջուղայեցի երիտասարդ Անդրանիկ Մինասյանը: Ճանապարհային հաղորդակցության բացակայու-

¹⁹⁷ Աճեմյան Հ., Դեպի Ղարադաղ, «Ալիք», 27 հուլիսի, 1967, թիվ 160:

յան պատճառով երիտասարդի դին բերում և թաղում են Վինայի գերեզմանատանը՝ առանց հարազատների ներկայության¹⁹⁸:

Ինչևէ, 15 ժամ ճամփորդությունից հետո խումբը հասնում է Մինջվան գավառակի Վինա դյուղը և հյուրընկալվում գյուղապետ Ստեփան Մելիք-Ստեփանյանի տանը:

Ստեփան Մելիք-Ստեփանյանը 1925-1969 թվականներին՝ շուրջ 44 տարի, եղել է Վինայի գյուղապետը, տանուտերը կամ, ինչպես այն ժամանակ էին ասում, քյոխվան: Ծնվել է 1897 թվականին¹⁹⁹: Եղել է Դրոյի զինվորներից և 1918 թվականին մասնակցել է ազատագրական կռիվներին: Այնուհետև վերադարձել է Իրան, հաստատվել Վինայում:

¹⁹⁸ «Ալիք», 1969, 17 սեպտեմբերի, թիվ 207:

¹⁹⁹ Ըստ ամերիկաբնակ վիսեցի Վահե Տեր-Ստեփանյանի, ով Ստեփան Մելիք-Ստեփանյանի կրտսեր եղբոր կնոջ եղբայրն է, Մելիք-Ստեփանյանները նախկինում Մելիք-Մուշկամբարյաններ էին, որոնք փոխել են իրենց ազգանունը: Մելիք-Ստեփանյանների և Մելիք-Մուշկամբարյանների ազգակցական կապը հաստատվել է նաև գիտնական, պատմաբան, քաղաքագետ Հովան Սիմոնյանի կողմից վերջիններիս սերունդներին իրականացրած ԴՆԹ թեստի արդյունքում (Հ. Սիմոնյանի հետ բանավոր խոսակցությունից, 23.06.2012, ք. Երևան):

Եղել է Վինայի դպրոցի Հոգաբարձություն նախագահը: Իր ազգանվեր գործունեությունը Հիմնական ցուցանիշը կամ արդյունքը այն էր, որ իր տանուտիրություն ժամանակաշրջանում, ի տարբերություն Ղարադաղի այլ Հայաբնակ գյուղերի, Վինայից քիչ էին գաղթում: Մեծ Հարգանք էր վայելում գավառակում, այդ թվում թուրք բնակչության և խաների շրջանում²⁰⁰:

«Ընամվոր է: Ըրեւը իր առաջին շողերը փարածել էր ողջ Գյո-ղի վրա և ոսկեզօծ արքերը Գյո-ղի բնական ու թանկարժեք գանձարանի փառավորութեան էին թողնում մեզ վրա, - գրում է Հրանտ Աճեմյանը, - Ինչժան Համաշափ և ինչժան ներդաշնակ էին ցորենի Հասկերն ու Հանաչապարդ անփառների թավաշանման քոյաերը: Իրախոսային առեւեմնող Գեղեցկո-թյամք օժոն և մեր ազգային ոգո-զգացմոնեները իրենց Գագաթնակերին Հասցնող մի Հիաստանչ փեսարան էր պարզվում մեր դիմաց: Զարթնել է արդեն Հայ Գյո-ղացին: Եոո-զեո-կա ամենո-րեք: Տղամարդիկ Գնացել են արքերը, կանայք ու աղջիկները նվերված են փան Գործերին: Միտածամանակ պարտապարտում են ճաշը որպեսզի փանեն իրենց ամո-սիներին և էղբայրներին:

²⁰⁰ «Ալիք», 1969, 17 սեպտեմբերի, թիվ 207:

Սուլերը, Ելները, Գո-թանը մեր մեջ ազգային Հարապարտ-մեների Հոգեվիճակ են սրել ժո-մ»:

1967 թվականի Հունիս ամսվա դրությամբ Վինայի բնակչությունը կազմում էր 419 շունչ կամ 60 ընտանիք²⁰¹ և վերջին՝ 1964 թվականի վիճակագրությունից Հետո գրեթե չէր փոխվել: Գյուղի վերին մասում գտնվում էր Թումանյանց եղբայրների 1907 թվականին կառուցված պարսպապատ, աշտարակավոր շենքը, որը գործածվել է Թումանյանցների կողմից թե՛ որպես առևտրային տուն և թե՛ որպես ամառանոց: Այդ առևտրային տնից օգտվել են Մինջվանի Հայ գյուղացիները՝ ապահովելով իրենց կարիքները: Առևտրային տունը գործել է մինչև 1937 թվականը, ինչից Հետո այդ Հսկա շենքը քվել և ամայացել է:

Գյուղի տեսարժան վայրերը դիտելուց Հետո խումբը գնում է Վինայի եկեղեցի, ուր Բագրատ քահանա Մեքրոնյանը գյուղացիների Համար մատուցում է Հոգևոր պատարագ: «Եվ դարձյալ Գյո-ղում Լավեցին Հայ եկեղեցո-զանգերի շողանջը,

²⁰¹ Աճեմյան Հ., Դեպի Ղարադաղ, «Ալիք», 1967, 27 հուլիսի, թիվ 160:

դանգերն ղեղանջը կարճ ժամանակում եկեղեցում հասվա՞նում է Վինայի Գյո-ղացիներին, որոնք շարան-շարան գալիս էին երկար և ու-թյո-նից ու դատարից հեյո, ի խորոց սրտի աստի խոսելը ևս էլ ու, հոգու-վշտերն ու սրտի մեմո-նջը հասցնելու արարչին: Հայ մամիկնեղը գլխաթաթի, երկյո-ղաթո-թյամբ մոտենում էին աք. խորանին և մոմ վառում: Պատարագից հետո խմբի անդամները և վինացիները եկեղեցու բակում նկարվում են: Եկեղեցու բակում էր գտնվում Վինայի չորսամյա դպրոցը, ուր 1966-1967 թվականների ուսումնական տարում սովորում էր 30 երեխա: Դպրոցի միակ ուսուցիչը Սոկրատ Մելիք-Ստեփանյանն էր: Գրենական պիտույքները հոգացվում էին Թավրիզի Հ.Օ.Մ. կողմից, իսկ ուսուցչի վարձատրուծյունը՝ գյուղի համայնքի և Գալուստ Գուլբենկյան հիմնադրամի կողմից²⁰²: Ճաշից հետո խումբը բարձրանում է Վինայի մոտ գտնվող Հեռասարը: Հեռասարից բացվում է մի հիասքանչ և տպավորիչ տեսարան դեպի Արաքսի հովիտը՝ իր ջրառատ հոսանքով ու թրքաբնակ գյուղերով, և Չանգեզուրի լեռները՝ իր հայկական գյուղերով: Հաջորդ օրը՝ հու-

²⁰² «Ալիք», 1970, 19 հունվարի, թիվ 13:

նիսի 21-ին, Վինայի եկեղեցում մկրտվում են գյուղի՝ տարբեր տարիքի ավելի քան 30 երեխաներ: Վամը 10-ին՝ մկրտության արարողության ավարտից հետո, խումբը շարժվում է դեպի Քարագլուխ գյուղը, որը Վինայից մոտ 5 կմ հեռավորության վրա է գտնվում: Քարագլխում ևս մատուցվում է պատարագ, քարագլխեցիները հաղորդվում են, 7 երեխաներ էլ՝ մկրտվում: 1967 թվականի հունիսի դրությամբ Քարագլուխ գյուղը կազմում էր 30 տուն՝ 160 շնչով, ինչը 20-ով պակաս էր 1964 թվականի վիճակագրության տվյալներից: Գյուղի եկեղեցին պահպանվում էր, սակայն չէր գործում: Քարագլխի չորսամյա դպրոցի աշակերտների թիվը 1966-1967 ուսումնական տարում ընդամենը 23 էր, այսինքն՝ ընդամենը երեք ուսումնական տարում (1964-1967) աշակերտների թիվը գրեթե կրկնակի կրճատվել էր: Դպրոցի ուսուցիչը Րաֆիկ Մարտիրոսյանն էր: Քարագլխի դպրոցի գրենական պիտույքները ևս հոգացվում էին Ատրպատականի Հ.Օ.Մ. կողմից, իսկ ուսուցչի վարձատրուծյունը՝

գյուղի Համայնքի և Գալուստ Գուլբենկյան Հիմնադրամի կողմից²⁰³ : Մի քանի ժամ Քարագլխում մնալուց Հետո, խումբը վերադառնում է Վինա, ուր պետք է լիներ Հարսանեկան արարողություն:

«Տնծություն մեջ է Վինա գյուղը: Դճուղ-զուռնայի ոգևորիչ ձայների, Հուզիչ ապրումների ներքո, Հարսանքավորների Հետ գնում ենք եկեղեցի: Եկեղեցու բակում կանգնած են գյուղի երեխաները ու իրենց զննող Հայացքներով Հուզումի են մատնում մեզ: Սբ. Պսակի խորհրդի Հոգևոր արարողությունից Հետո, եկեղեցու բակում վինացի օրիորդները իրենց ազգային, տոհմիկ, Հեզաճկուն պարերով առավել ոգևորություն ու խանդավառություն էին ստեղծում»:

Այս ճամբորդությունից 2 տարի Հետո՝ 1969 թվականի Հուլիսի 18-ին, Վինայում իր մահկանացուն է կնքում տանուտեր Ստեփան Մելիք-Ստեփանյանը: Բացի շրջակա գյուղերի Հայերից նրա Հուղարկավորությունը մասնակցում են նաև Հարևան թուրքական գյուղերի բնակիչներն ու խանե-

²⁰³ «Ալիք», 1970, 19 հունվարի, թիվ 13:

րը²⁰⁴ : Ատրպատականի Հայոց թեմական խորհրդի կարգադրությամբ նույն թվի օգոստոսի 25-ին Վինա է ուղևորվում Բագրատ քաչանա Մելքոնյանը և Հոգեհանգստյան արարողություն կատարում Հանգուցյալ Ստեփան Մելիք-Ստեփանյանի շիրիմին: Հաջորդ տարի Վինան դատարկվում է:

1967 թվականի դրությամբ Ղարադաղի Հինգ Հայաբնակ գյուղերից (Վինա, Քարագլուխ, Ղասումաշեն, Մըհդավ, Վարդանաշեն) միայն Վինայում և Քարագլխում կար գյուղական Հոգաբարձություն (Համայնքապետարան): Այդ ժամանակ Ղարադաղի Հայությունը Հաշվվում էր մոտ 730 մարդ²⁰⁵ :

Ղարադաղի վերջին 5 Հայաբնակ գյուղերը՝ Վինա, Քարագլուխ, Վարդանաշեն (Մինջվան), Ղասումաշեն, Մըհդավ (Քեյվան), գաղթում են 1970 թվականին²⁰⁶ : Գավառը, որը վաղուց արդեն կորցրել էր իր հայկական անվանումը, կորցնում է նաև իր վերջին Հայ բնակիչին: Գաղթում են Հիմնականում


²⁰⁴ «Ալիք», 1969, 17 սեպտեմբերի, թիվ 207:

²⁰⁵ «Ալիք», 1970, 19 հունվարի, թիվ 13:


²⁰⁶ «Ալիք», 1985, 4 փետրվարի, թիվ 28 (Էմիլ Յակոբյան՝ Ղարադաղ կամ Փայտակարան):

Թեհրան և Թավրիզ: Հետագա տարիներին գաղթականների զգալի մասը տեղափոխվում է ԱՄՆ:

1979 թվականի Իրանի իսլամական հեղափոխությունը վերջ է տալիս խաների գոյությունը Ղարաղաղում²⁰⁷:



Հուժի Ավետարան. էջամաս



Հուժի Ավետարան. Հատվածներ Հիշատակարանից

²⁰⁷ «Ալիք», 1985, 4 փետրվարի, թիվ 28:



Հուժի Ավետարան, մանրանկարչություն



Սիմոն Թումանյանց

Զաքարիա Թումանյանց



Սարգիս Թումանյանց

Խաչատուր Թումանյանց



Սամսոն Թաղևոսյան



Ստեփան Մելիք-Ստեփանյան



Սաթիթար Խան



Զուրիկ Սրմկո



Ն. Րսեն արք. Մելիք-Թանգյան



Կարապետ Լյա. Տեր-Մկրտչյան



Գալուստ Եգանյան



Երվանդ Ֆրանգյան




Խորեն Տեր-Ստեփանյան




Կոստի Համբարձումյան



Եփրեմ Դավթյան




Գաղթականներ Թավրիզի առաջնորդարանում, 1896թ.



Վարդանանց տոնը Թավրիզի Արամյան դպրոցի բակում, 1890-ականներ



Թամարյան դպրոցը Թավրիզում



Ներսես արք. Մելիք-Թանգյանը Ղարադաղում, 1924թ.,
ամառ («Յուշամատեան Ներսես Մելիք Թանգեան
Արքեպիսկոպոսի»)



Ատրպատականի թեմի առաջնորդ Ներսես Մելիք-
Թանգյանը Իրգուլթիսում, 1924թ., ամառ



Ներսես արք. Մելիք-Թանգյանը Ղարադաղում, 1926թ.,
ամառ: Սրբազանն իր ուղեկիցներին Ղարանտղուշի լեռներից
յուրյց է տալիս Խոսատուպի լեռնագագաթը. «Էնա Հա,
Խոսատուպի լեռները երևում են» («Յուշամատեան Ներսես
Մելիք Թանգեան Արքեպիսկոպոսի»)



Ներսես արք. Մելիք-Թանգյանը Ղարադաղում Թավրիզի
սկստանների Հետ, 1927թ. («Յուշամատեան Ներսես Մելիք
Թանգեան Արքեպիսկոպոսի»)



Ներսես արք. Մելիք-Թանգյանը Խանազաճում, 1924թ.



Հուժի Սբ. Գևորգ եկեղեցին



Թավրիզի առաջնորդարանը



Քարավազի կամ Խուղափերիսի կամուրջը



Վինայի Սբ. Հովհաննես եկեղեցին մեր օրերում



Վինայի գյուղամեջի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու մոտ, 1965թ.



Վինայի աղբյուրի մոտ. Հարսանեկան արարողություն



Վինեցիները գյուղի եկեղեցու մոտ, 1965թ. (Արմենուհի Բալայանի անձնական արխիվից)

Լ. Ռ. 9(47.925)սփ

ՄԱՐԿԵՆ

ՕՐԳԱՆ «ՂԱՐԱԴԱՂԻ»

ԵՂԵՂԱՆԻ ԳԻՒՂԻ ՀԱՅՐԵՆՈՎԻՍ ՄԻՈՒԹԵՆ՝

№ 1 Ա. ՏԱՐԻ Յունար 1912 Թ. № 1

Սյա համարը բաղկացած է 40 և 3 երեսներից

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՅԲՏԵՐԲԵՆՆ-ՆՇԵՐԱ

«Ազգանի Միութեան» ժամանակագրին և անդամներին.

ԽՐԲԵՐԲԵՆՆ

Մեր ընթերցողներին, Վերածնուց զարգացը.

ԴՊՂԵՆՆԵՆՆԵՆՆ

Նրբագործութիւն թէ անասնապահութիւն, Ինչպէս պահել հաւի ձեւերը ձմեռ ժամանակ, Պաշարացան, Կովի կաթնասուութեան հաստի մասին.

ՏԵՂԵՐԲԵՆՆ

Ղարազաղ.

ՎԻՇՆԵՐԲԵՆՆ

Ղարազաղի հայրենի գիւղերը, Յովնատի զարդաները.

ԴՊՂ ԵՆ ԴՊՂԵՆՆ

Գիւղը Նվնչարիւում, Միջեր.

ԳՐԵՆՆ

Ղարեի երգերն (բան.), Տնտեսը առաջի տանը Ղարազաղի գիւղերում, Պրզմեղը (մի նմոյշ Ղարազաղի բարբառից) Անկկոսաներ.

digitised by ARAR@

Թավրիզում Հրատարակված «Աղաղան» թերթը

ՂԱՐԱԴԱՂ

ՀԱՄԱՐԱՆ ԱՂԱՐԱԴԱՂԻ ՀԱՅՐԵՆՈՎԻՍ

Իրավաբանական պարբերական
Հիմնադրված է 1908 թ. 11 ամսին
Հիմնադրողները՝ ԱՂԱՐԱԴԱՂԻ ՀԱՅՐԵՆՈՎԻՍ
Խմբագրության հասցի՝ Երևան, Մարտի 10 համար
Խմբագրող՝ ԱՂԱՐԱԴԱՂԻ ՀԱՅՐԵՆՈՎԻՍ
Տպարան՝ Երևան, Մարտի 10 համար
Համար՝ 1912 թ. 1 համար

№ 12 | 7 ՏԱՐԻ | 1 ՕԿՏՈՍԱԾ 1914 թ. | 7 ՏԱՐԻ | № 12

Վանաձորի խաչապատկերները իր գիտնական Սուսանյանը անկողնից առաջին անգամ հրատարակել է իր «Վանաձորի խաչապատկերները» գրքի մեջ։ Այս գրքի հրատարակումը մեծ նշանակություն ունի Վանաձորի պատմության և հուշարձանների պահպանման համար։

Վանաձորի խաչապատկերները իր գիտնական Սուսանյանը անկողնից առաջին անգամ հրատարակել է իր «Վանաձորի խաչապատկերները» գրքի մեջ։ Այս գրքի հրատարակումը մեծ նշանակություն ունի Վանաձորի պատմության և հուշարձանների պահպանման համար։

Վանաձորի խաչապատկերները իր գիտնական Սուսանյանը անկողնից առաջին անգամ հրատարակել է իր «Վանաձորի խաչապատկերները» գրքի մեջ։ Այս գրքի հրատարակումը մեծ նշանակություն ունի Վանաձորի պատմության և հուշարձանների պահպանման համար։

ՄԱՐԿԵՆ

Վանաձորի խաչապատկերները իր գիտնական Սուսանյանը անկողնից առաջին անգամ հրատարակել է իր «Վանաձորի խաչապատկերները» գրքի մեջ։ Այս գրքի հրատարակումը մեծ նշանակություն ունի Վանաձորի պատմության և հուշարձանների պահպանման համար։

Վանաձորի խաչապատկերները իր գիտնական Սուսանյանը անկողնից առաջին անգամ հրատարակել է իր «Վանաձորի խաչապատկերները» գրքի մեջ։ Այս գրքի հրատարակումը մեծ նշանակություն ունի Վանաձորի պատմության և հուշարձանների պահպանման համար։

Վանաձորի խաչապատկերները իր գիտնական Սուսանյանը անկողնից առաջին անգամ հրատարակել է իր «Վանաձորի խաչապատկերները» գրքի մեջ։ Այս գրքի հրատարակումը մեծ նշանակություն ունի Վանաձորի պատմության և հուշարձանների պահպանման համար։

digitised by ARAR@

Թավրիզում Հրատարակված «Ղարադաղ» թերթը



Ստեփան Մելիք-Ստեփանյան (Մելիք-Մուշկամբսոյան), 1965թ.



Բաղդասար Մինասյանը կալանավայրում



Սկառսները Խոսրոպիերինի կամրջի մոտ



ԽանագաՀի խանի զինվորները Հայ ընտանիք ևն տանում գյուղից



ԽՍՀՄ տանկը Թավրիզում



Այսրան մոտ և օտար...

Մաս 3

ԿԹԱԿԱՆ ԴՈՐԸ
ՂԱՐԱԴԱԳՈՒՄ



Ստրպատականի Հայերի մեծ մասը ապրում էր գավառներում՝ Սալմաստ, Ղարադաղ, Ուրմիա, Սուլզուզ, Միանդաբ, Խոյ, Մակու և այլն: Երբ գավառներից Համեմատաբար բարեկեցիկը Սալմաստն էր, որտեղ որոշ չափով ավելի կանոնակարգված էր նաև կրթական գործը¹: Սալմաստի պյուղերում 1913-1914 ուսումնական տարում գործում էր 10 դպրոց՝ 1047 աշակերտով: Մյուս գավառներում՝ մասնավորապես Ղարադաղում, Սուլզուզում և Միանդաբում, կրթությունը խաթարված վիճակում էր:

¹ «Ղարադաղ», 1914, 1 օգոստոսի, թիվ 12, էջ 4:
² «Ղարադաղ», 1914, 1 մայիսի, թիվ 6, էջ 4:

Ինչպես Հիշո՞ւմ եմ, որ 1855 թվականին Լյուբլյանայի պատմական ճեմարանի Գեորգ Եպիսկոպոսը Բարձրացրել էր Հայերի Հավատարմություն-Թյոնն արգելելու՝ Հարցը այն վրանգավոր շափերի էր Հասել³: Իրավիճակը անփոփոխ մնաց Հեթանոս ցարիներին: Հավատարմություն-Թյոնն և Չապման խաղախանություն-Թյոնն, ըստ էության, արչանագրվում է նաև XX դարի սկզբներին: Բրիտանացիները հրաժարվելու դեպքեր տեղի էին ունենում ոչ միայն տնտեսապես հետամնաց գյուղական գավառներում, այլև այնպիսի մի Հայաշատ և Համեմատաբար բարեկեցիկ քաղաքում, ինչպիսին Սալմաստն էր, որտեղ Հայերի շրջանում իսլամի ընդունումը արդեն պարբերական բնույթ էր կրում: Որոշ գավառներում իրավիճակն ավելի ծանր էր: Ատրպատականի Սուլդուզ և Միանդաբ գավառների Հայ գյուղացիները իրենց կենցաղավարմամբ, Հագուստով, սովորություններով արդեն ոչնչով չէին տարբերվում քրդերից: Բացի այդ, այդ երկու գա-

³ Մենք նշել էինք, որ պարսկահայերի կրոնափոխությունը ավելի վաղ էր սկսվել: Այս մասին կարելի է տեսնել նաև՝ Բայբուրդյան Վ., Ստեփաննոս Երեց Տերտերյանի (Հագարջրիբեցու) «Պատմագիրքը» («Հանգիտագիրքը»)՝ որպես սկզբնաղբյուր XVII-XVIII դարերի Իրանի և իրանահայության պատմության, ԵՊՀ հրատ., Երևան, 2020, էջ 56:

⁴ «Ղարադաղ», 1914, 1 օգոստոսի, թիվ 12, էջ 4:

վառների Հայերը այլևս չէին խոսում մայրենի լեզվով: Այս ամենը մեծ մտահոգության տեղիք էր տալիս Ատրպատականի Հայոց թեմին և Թավրիզի Հայ մտավորականությանը: Տեղական մամուլի էջերում պարբերաբար տագնապներ էին հնչեցնում: Առաջ անցնելով նշենք, որ Միանդաբում 1931 թվականի դրությամբ ապրում էր արդեն ընդամենը 8 հայկական ընտանիք⁶:

Ազգապահպանման Համար առաջին Հերթին աշխատանքներ էին տարվում դպրոցների գոյության և փինանսավորման ուղղությամբ: Հաճախակի դրամական Հանգանակությունների կոչեր էին հնչեցվում և կազմակերպվում ինչպես թեմի, այնպես էլ Թավրիզի պարբերական մամուլի կողմից: Սակայն փաստերը ցույց են տալիս, որ այս բոլորը կրթական գործին էական Հաջողություններ չեն բերում:

«Ղարադաղ» թերթի խմբագրությունը գրում է. «Նախապատերազմյան տարիներին Ատրպատականի Հայությունը, թվով ավելի քան 50.000 էր: Երկար տարիներից ի վեր այն իր ազգային մարմինն

⁵ «Ղարադաղ», 1914, 1 հուլիսի, թիվ 10, էջ 7:

⁶ «Ալիք», 1931, 9 հուլիսի, թիվ 16, էջ 3:

ուներ, Հանձինս Թեմական պատգամավորական ժողովի և Նրանից բխող ստորագրած վարչական մարմինների: Պատգամավորական այս ժողովը իր մի քանի անգամ փոփոխված կազմերով չի տվել բաղձալի արդյունք՝ գոնե մի Հիմնավոր գործ: Նրա գործունեության բաժիններից մեկը՝ ուսումնական-կրթական գործը, միանգամայն անտես է առնված: Կրթական տուրքի խնդիրը միայն Թավրիզի դպրոցների ապահովումն է նկատի ունի: Պարսկահայության Հոծ զանգվածները, գավառներում ցիրուցան եղած, խարխալիում են անծայր տգիտության մեջ»:

«Ղարադաղում Համադարաթ խափար է Կիրում, խորը Կոբրո-Բյոն է Բազալորում, գրում է «Աղաղանը», - այնպես, որ Ղարադաղցի ոչ Բուրոժին անհրաժեշտ է երայով վաստակել է «էշ»⁷ մականները»⁸:

Թեմական առաջնորդի պատահական այցելությունները և մեկ-երկու գյուղական դպրոցների

⁷ Ընդհանրապես դարադաղցին հայտնի էր իր ինքնահեգնանքի հասնող յուրահատուկ հումորի զգացումով. յուրաքանչյուր գավառակի գյուղացի հարևան գավառակի գյուղացիներին ասում էր՝ «ստուքեր էշ ըն» կամ «ստուքեր մարդ տրոնիս չըն»:

⁸ «Աղաղան», 1912, հունվար, թիվ 1, էջ 27:

բացման խոստումներ առնելը դրուժյունը ոչնչով չեն փոխում⁹: 1913-1914 ուսումնական տարում Ատրպատականի գավառներում (առանց Թավրիզի) գործում էր 33 դպրոց՝ 84 ուսուցչով և 2869 աշակերտով¹⁰:

Կրթական-դպրոցական գործը սկզբնական շրջանում գտնվում էր Հոգևորականների ձեռքում, որոնք իրենց իմացածի չափ անում էին ամեն ինչ, որպեսզի գրաճանաչ դարձնեն ժողովրդին:

XIX դարի վերջից Ղարադաղում սկսում են կրթական առաջին միջոցառումները:

1860-ական թվականներից՝ Դզմար գավառակի Խանաբազ գյուղի գյուղապետ մելիք Ազա Մեվր-Ազարյանի ժամանակներից, կար մի դպրոց, ուր սովորում էին թե՛ տեղի, թե՛ Հարևան գյուղերի երեխաները: Այդ դպրոցում սկզբնական շրջանում պաշտոնավարած ուսուցիչներից Հետո (անունները չեն հիշատակվում), բավական ժամանակ պաշտոնավարել է Մարգար վարժապետը, ով 1885 թվականին տեղափոխվել է Թիֆլիս և ձեռնադրվել որ-

⁹ «Ղարադաղ», 1914, հունվար, թիվ 1, էջ 2-3:

¹⁰ «Ղարադաղ», 1914, 1 մայիսի, թիվ 6, էջ 4:

պես քաճանա: Վերջինիս Հաջորդել է Ռասֆայից Մովսիսյանը: ԽանագաՀի դպրոցի վերաբերյալ մանրամասն տեղեկություններ է մեզ Հաղորդում Թիֆլիսում Հրատարակվող «Նոր Դար» պարբերականը:

«Եյն մի Գեղնափոր, մի պարթարան, մի նեղ, խոնավ և անլոյս խոց է: Բարչրո-Թյոնն արշին ու կոն, մոտ երկու- արշին լայնո-Թյոնն, իսկ երկարո-Թյոննը Հինգ արշին: Եվ երբ վառարանը վառում էն, ծխով լցվում է ողջ ուսումնարանը, և չէր առաջ ներկայանում է մի աղվեսի բռն: Նապարաններ չկան, դասագրքերը մի խանիան էն, այն էլ պարսոսորված: Եյր մի խանի Գերջը Հինգ րարի առաջ Ելեխանդր Մեկի Ելարյանցի կողմից էն նվիրվել»¹¹:

ԽանագաՀի այս դպրոցը, պարբերաբար փակվելով ու վերաբացվելով, գործել է մինչև 1898 թվականը, որից հետո գյուղում բացվել է ուրիշ դպրոց¹²:

1898 թվականին կառուցվում է Դզմար գավառակի ԽանագաՀ գյուղի նոր դպրոցի շենքը՝ բաղկացած 4-5 սենյակներից: Այն կառուցվում է տիկին Ազիզ Տեր-Հակոբյանի (Մելիք-Ազարյան գերդաստանից) ծախսերով ի հիշատակ իր և իր ամուսնուհանգուցյալ Մնացական Տեր-Հակոբյանի անվան: Գյուղի եկեղեցուց մի քանի քայլ վերև գտնվող շենքը նախագծում է ուստա Հակոբը՝ Վինա գյուղից: Կառուցող գլխավոր վարպետը՝ Դովոնց Հարովթը, նույնպես եղել է Վինայից¹³: «Ազիզյան-Մնացական» երկսեռ դպրոցը ուներ երեք բաժանմունք՝ 40 աշակերտներով (որոնցից 3-ը՝ աշակերտուհի): Սահմանագրական հեղափոխության տարիներին դպրոցի աշակերտների թիվը նվազում է: Պատճառը դարձյալ պետական մակարդակով ծայրագավառների անհետևողական կառավարում էր: «ՂաՀ-բաման խանի (ԽանագաՀի Գյո-ղապեր) անհաշիվ և անարգել րո-գանձներ պահանջելը Գյո-ղացիներից այնպիսի նեղ դրո-Թյան մեջ դրեց վերջիններիս, որ երանց միակ ըոգսը մի կտոր շոր հաց Գրանելն է դասում իրենց պավակներին խաղցած շրոշնել ու համար: Ուր մնաց նրանի մտածելն կրթո-Թյան մասին, մանավանդ, որ այս րարի (1911) բերելը շատ պակաս էր»¹⁴, - գրում է մի ղարաղաղի գյուղացի: Այնուամենայ-

¹¹ «Նոր Դար» Թիֆլիս, 1891, թիվ 175:
¹² «Ալիք», 1949, 24 մայիսի, թիվ 113:

տանից) ծախսերով ի հիշատակ իր և իր ամուսնուհանգուցյալ Մնացական Տեր-Հակոբյանի անվան: Գյուղի եկեղեցուց մի քանի քայլ վերև գտնվող շենքը նախագծում է ուստա Հակոբը՝ Վինա գյուղից: Կառուցող գլխավոր վարպետը՝ Դովոնց Հարովթը, նույնպես եղել է Վինայից¹³: «Ազիզյան-Մնացական» երկսեռ դպրոցը ուներ երեք բաժանմունք՝ 40 աշակերտներով (որոնցից 3-ը՝ աշակերտուհի): Սահմանագրական հեղափոխության տարիներին դպրոցի աշակերտների թիվը նվազում է: Պատճառը դարձյալ պետական մակարդակով ծայրագավառների անհետևողական կառավարում էր: «ՂաՀ-բաման խանի (ԽանագաՀի Գյո-ղապեր) անհաշիվ և անարգել րո-գանձներ պահանջելը Գյո-ղացիներից այնպիսի նեղ դրո-Թյան մեջ դրեց վերջիններիս, որ երանց միակ ըոգսը մի կտոր շոր հաց Գրանելն է դասում իրենց պավակներին խաղցած շրոշնել ու համար: Ուր մնաց նրանի մտածելն կրթո-Թյան մասին, մանավանդ, որ այս րարի (1911) բերելը շատ պակաս էր»¹⁴, - գրում է մի ղարաղաղի գյուղացի: Այնուամենայ-

¹³ Հովսեփյան, 2009, հատ. I, էջ 71:
¹⁴ «Աղաղան», 1912, մարտ, թիվ 2, հավելված, էջ 8՝ Բենյամին Նապոլյան:

նիվ, խանազազցին կարևորում է դպրոցը և իր չու նեցածից անգամ բաժին է Հանում կրթության գործին: Դպրոցի ծախսերի $\frac{3}{4}$ մասը հոգում էր Աղիյ Տեր-Հակոբյանը, մնացածը՝ գյուղացիները: Ուսումնական տարին սկսվում էր հոկտեմբեր ամսին: Դասավանդվում էր հայոց լեզու, կրոնագիտություն, ռուսաց լեզու, թվաբանություն, թեղադրություն, ուղղագրություն, երգեցողություն և մարմնամարզություն: 1898-1906 թվականներին այս դպրոցում դասավանդել է վանեցի արմենական Մովսես Տեր-Կարապետյանը¹⁵: Խանազազի դպրոց սովորելու էին գալիս Հարևան Իրգուլթին, Ղչաղ, Սարգու, Նորաշեն, Օղա գյուղերից: 1919 թվականի գաղթի ժամանակ թուրքերը ավերում են Աղիզյան-Մնացականյան դպրոցը, տանում են դարպասները, դռները, լուսամուտներն ու ծածկը: 1922 թվականին՝ գյուղի վերակառուցման ժամանակ, մասնակի նորոգում են նաև դպրոցը, որը գործում է մինչև 1946 թվականի վերջնական գաղթը: Դպրոցի վերջին ուսուցիչն էր «Ղարադաղի Հայերը» ազգագրա-

¹⁵ «Ալիք», 1949, 24 մայիսի, թիվ 113:

կան-բանահյուսական արժեքավոր աշխատություններից: Հեղինակ Հովհաննես Հովսեփյանը¹⁶:

1885 թվականին Մեշափարա գավառակի Յուսուֆլու գյուղում գյուղապետ Աղաջան բեկ Մեփր-Մուշկամբարյանի կողմից բացվում է դպրոց, որտեղ ուսուցիչ էր մարաղացի Խաչատուր անունով մի երիտասարդ: Այդ դպրոցը հաճախում էին նաև Հարևան մի շարք գյուղերի երեխաներ: Այստեղ ուսանել է Թեհրանում հրատարակվող «Ալիք» թերթի հոդվածագիր Խաչատուր Մինասյանը: Դժբախտաբար Յուսուֆլու գյուղի դպրոցը երեք տարվա կյանք ունեցավ: 1888 թվականին քուրդ Ահմադխանի կողմից գյուղը ավերվում է, սպանվում է գյուղապետ Աղաջան բեկը, իսկ ուսուցիչ Խաչատուրը փախչում է Մինջվան գավառակի Վինա գյուղը, ինչից հետո հիմնվում է Վինայի դպրոցը (1888 կամ 1889 թվականին): 1888 թվականին Յուսուֆլուի ավերումից հետո հավանաբար այն այլևս Հայերի կողմից չի բնակեցվում: 1912 թվականին Ղարադաղի Հայաբնակ գյուղերի ցանկում Յու-

¹⁶ Հովսեփյան, 2009, հատ. I, էջ 73:

սուֆլուն այլևս չի նշվում, իսկ 1949թ. արդեն Հիշատակվում է որպես թրքաբնակ¹⁷:

1886 Թվականին Թիֆլիսում մի խումբ պանդուխտ ղարաղաղցիներ՝ Դզմար գավառակի Սարդու գյուղից Սիմոն Բաղդասարյանը, Արիստակես Տեր-Գրիգորյանը, Գալուստ Եգանյանը, Արիստակես Մելիք-Հովսեփյանը և ուրիշներ, Հիմնում են «Ղարաղաղի Հայրենակցական միությունը»՝ նպատակ ունենալով Ղարաղաղում Հիմնել դպրոցներ, Հրատարակել թերթ: Չեռք են բերում Հրատարակչական սարքավորումներ և պարագաներ: Արիստակես Տեր-Գրիգորյանի կողմից Սարդու գյուղի եկեղեցուն կից կառուցվում է մեկ սենյականոց դպրոց: Իսկ 1895 թվականին նույն գյուղում Արիստակես Տեր-Գրիգորյանի և Գալուստ Եգանյանի կողմից Հիմնվում է տպարան: Սակայն շատ չանցած, ընդառաջելով Ատրուպատականի թեմակալ Պարզյան առաջնորդի խորհուրդներին և նկատի ունենալով մի շարք խոչընդոտներ՝ դադարեցնում են տպարանի աշխատանքը:

¹⁷ «Ալիք», 1949, 24 մայիսի, թիվ 113:

ըր: Տառերի մեծ մասը վերադարձնում են Թիֆլիս, մի մասն էլ մնում է գյուղում¹⁸, իսկ տպարանի փայտաշեն կառույցը ոչնչանում է ժամանակի ընթացքում: Պահպանվել է այդ տպարանում Հրատարակված Հայտարարություններից մեկը¹⁹.

«Պատիվ ունենք Հայտնելու Ղարաղաղի Հարդեղի Հասարակությանը, որ առաջիկա սեպտեմբերին բացվում է Սարդու միդասյան վարժարանը և ընդունվում են երթևեկ և գիշերօթիկ աշակերտներ:

Աշակերտների ընդունելությունը սկսում է սեպտեմբերի մեկից մինչև հոկտեմբերի մեկը. յետ այնուհետ չի ընդունվիլ: Վարժարանում դասատվությունը կտևե մինչև 8 ամիս և տարեվճարն է 12 դրան: Ընդունելության միջոցին պրն. Արիստակես Տեր Գրիգորյանի կողմից ընծայվում է աշակերտներին մի ջուխտ կոշիկ (նպատակ ունեն շահագրգռել ծնողներին, որ երեխաներին դպրոց ու-

¹⁸ Գյուղում մնացած տառերը Գալուստ Եգանյանը փոխանցում է իր Դանիել որդուն, որն էլ հետագայում դրանք տալիս է իր եղբոր՝ Սուրենի որդուն՝ Վազրիկ Տեր-Սահակյանին: Վերջինս բնակվում էր Թեհրանում և ԱՄՆ գաղթելուց առաջ դրանք տրամադրում է Նոր Ջուղայի հայկական եկեղեցուն (Վազրիկ Տեր-Սահակյանի հետ զրույցից):

¹⁹ «Ալիք», 1949, 24 մայիսի, թիվ 113:

ղարկեն՝ Ս. Ջ.) իսկ քննությունը՝ մի ձեռք ամառային շոր (մինչև տարեվերջ դպրոցում երեխաներին պահելու նպատակով, որ դաշտային աշխատանքների պատճառով երեխաներին դպրոցից չհանեն՝ Ս. Ջ.): Վարժարանում կարելի է գնել դպրոցական բոլոր պիտույքները ամենաթեթև գներով:

Դաստիարակ՝ Գալ. Եգանյան, Նախագահ՝ Արիստակես Տեր Գրիգորյան: Սարդու 01.08.1896թ.»:

1890-ական թվերին Թավրիզի Հայ բողոքական եկեղեցու ծախսերով և քարոզիչ Աբրահամ Մելիք-Ջանյանի ջանքերով Քեյվան գավառակի Սբղըն գյուղում կառուցվում է դպրոց: Աբրահամ Մելիք-Ջանյանը Քեյվանի վերջին Հայ մելիք՝ Ջանգիր բեկ Մելիք-Ջանյանի եղբայրն էր: Նա միսիոներական կրթություն էր ստացել, տիրապետում էր եվրոպական մի քանի լեզուների, անգլերենից թարգմանել էր Ալֆրեդ Տենիսոնի «In memoriam» ուսանավորների ժողովածուն, որը տպագրվել է Թիֆլիսում 1895թ.²⁰: Ինչևէ, շուտով այդ լուրը

հասնում է Հայ առաքելական եկեղեցու Թավրիզի առաջնորդարան՝ Թեմակալ Ստեփանոս Եպիսկոպոս Մխիթարյանին: Նա խստիվ կարգադրում է գյուղացիներին ընդդիմանալ: Կրթության այդ նորակառույց շենքը, որը կոչված էր քեյվանցի մասուկներին գիր ու գիտություն սովորեցնելու, քարոքանդ է արվում Թեմակալի պահանջով: Ավերակները XX դարի 50-ականներին դեռևս պահպանվում էին²¹: Փաստորեն, XIX դարի վերջում՝ Ղարադաղում խաների ու բեկերի լծի տակ իրենց գոյը թարշ տվող, ուժացման վտանգի տակ ապրող, Համատարած տգիտության ու անգրագիտության մեջ գտնվող Հայկական գյուղերում դպրոց քանդում էին ոչ միայն քրդական ու թուրքական հրոսակախմբերը: Ընդհանրապես Թավրիզի բողոքական միսիոներները բավականին ակտիվ էին և պարբերաբար թարոզիչներ էին ուղարկում Ղարադաղի Հայաբնակ գյուղերը, հոգևոր գրականություն ցրում գյուղացիների մեջ՝ չնայած Համատարած անգրագիտությանը: Գյուղացիներից շատերը այդ նյութերը ներկայացնում էին գյուղի քահանաներին ընթերցման և

²⁰ Կարապետ Եպիսկոպոս, Նիթեր հայ մելիքություն մասին, Բ պրակ, Դոփեանք և Մելիք Շահնագարեանք, Ելեքթրաշարժ տպարան Մայր Աթոռայ, Ս. Էջմիածին, 1914, էջ 181:

²¹ «Ալիք», 1949, 25 մայիսի, թիվ 114:

որպես երեխաներին գրագիտություն սովորեցնելու նյութ: Քաճանաներից շատերը չէին խորշում այդ անելուց և արժանանում էին Թավրիզի առաջնորդարանի քննադատությանը²²:

XX դարի սկզբին Ղարադաղ գավառի գյուղերի դպրոցների պահպանմամբ և ֆինանսավորմամբ անմիջականորեն զբաղվում էին Թավրիզաբնակ Հարուստ ղարադաղցիները, Ատրպատականի Հայոց Թեմը, Աղաղան գյուղի «Հայրենակցական միությունը»՝ Ատրպատականի Հայոց առաջնորդարանի Հովանու ներքո: Պարբերաբար Ղարադաղ էր այցելում Ատրպատականի Հայոց Թեմի առաջնորդ Ներսես Մելիք-Թանգյանը²³, ինչը ամեն անգամ տեղացիների մոտ մեծ Հույսեր էր արթնացնում կրթական գործի նկատմամբ:

Ղարադաղի դպրոցներում ուսումնական տարին տևում էր 6,5 ամիս՝ սկսելով Հոկտեմբերին՝ գյուղատնտեսական աշխատանքները վերջանալուց հետո, և ավարտվելով գարնանը՝ գյուղատնտեսական աշխատանքները սկսվելու ամսին:

²² «Նոր Ղար», Թիֆլիս, 1892, թիվ 6:

²³ «Ղարադաղ», 1914, 1 հուլիսի, թիվ 10, էջ 7:

1895 թվականի նոյեմբերի 7-ին Գասպար Սարգսյանի ջանքերով և նախկին ուսուցիչ Մովսես Ցեր-Կարապետյանի ուսուցչությամբ բացվում է Դրմար գավառակի **Աղաղան** գյուղի դպրոցը²⁴: Դպրոցի շենքը հինավուրց մի շինություն էր՝ երկու սենյակով: Դպրոցը Հովանավորում էր «Թավրիզի կանանց բարեգործական միությունը»²⁵: Դպրոցում սովորում էին նաև Հարեան Իրգուլթին գյուղի երեխաները: Առաջին ուսումնական տարում ուսում են ստանում 26 երեխա, 1896 թվականին՝ 30-34 երեխա: Դասավանդվում էր մայրենի, թվաբանություն, սրբազան պատմություն, գեղագրություն, եկեղեցական երգեցողություն, թեւադրություն, ուղղագրություն: Պայմանները բավական աղքատիկ էին. դպրոցը նույնիսկ չունեւր նստարաններ, գրասեղաններ: Յուրաքանչյուր ուսումնական տարին ավարտվում էր քննությամբ²⁶: Իրանի սահմանադրական լեզվափոխության ապագա հերոս, դաշնակցական կուսակալոր գործիչ Եփրեմ Դավթյանը իր կողմ

²⁴ «Աղաղան», 1912, հուլիս, թիվ 4, էջ 15-16:

²⁵ «Աղաղան», 1912, մայիս, թիվ 3, էջ 30:

²⁶ «Աղաղան», 1912, հունվար, թիվ 1, էջ 5:

Անահիտի Հետ 1899-1902 թվականներին այս դպրոցում պաշտոնավարել է որպես ուսուցիչ՝ վաճելելով գյուղացիների ու աշակերտների սերն ու հարգանքը:

Սահմանադրական Հեղափոխություն տարիներին, ավելի կոնկրետ՝ 1907-1910 թվականներին, դադարել է դպրոցի գործունեությունը²⁷՝ ռազմական գործողությունների և միջցեղային ընդհարումների պատճառով: 1910 թվականին Թավրիզում ազաղանցիների կողմից հիմնվում է «Հայրենակցական միություն», որի ջանքերով վերաբացվում է Աղաղանի դպրոցը: 1910-1913 թվականներին դպրոցը պահպանվել է «Հայրենակցական միության» ջանքերով այստեղ ուսուցչության են ուղարկել Ա. Լալայանին²⁸: 1912 թվականի դրությամբ դպրոցյուններ 43 աշակերտ-աշակերտուհի²⁹: Դպրոցի գրագարանն ուներ 442 գիրք և մոտ 300 պարբերական³⁰: 1920 թվականի աշնանը Աղաղան որպես ուսուցիչ է գալիս նշանավոր ֆիդայիներից մեկի՝ Ար-

²⁷ «Աղաղան», 1912, հունվար, թիվ 1, էջ 34:

²⁸ «Ալիք», 1937, 1 հունիսի, թիվ 337:

²⁹ «Աղաղան», 1912, հուլիս, թիվ 4, էջ 15-16:

³⁰ «Աղաղան», 1912, մայիս, թիվ 3, էջ 30:

շակ Գավաֆյանի (Քեռի) եղբայրը՝ Բագրատը, ով երկու տարի դասավանդելուց Հետո օծվում է քահանա և ընդունելով Արշակ անունը՝ տեղափոխվում Մարաղա³¹: Տեղեկություններ կան, որ Բագրատ Գավաֆյանը Աղաղանի դպրոցում դասավանդել է նաև 1890-ականների վերջերին³²: 1924 թվականին Բագրատ Գավաֆյանին փոխարինում է Երեմ Սարուխանյանը: Այդ ժամանակ շրջանի տեսուչն էր Միհրան Գրիգորյանը: Երեմը շատ պարտաճանաչ ուսուցիչ էր: Նա ուշ ժամերին առանձին պարապում էր թույլ առաջադիմությամբ երեխաների հետ³³: Աղաղանի դպրոցում Հետագա տարիներին ուսուցչություն են արել Վահան Միրզոյանը, Թորգոմը, Ալեքսանը, Բագրատ Հարությունյանը, սալմաստեցի քույր և եղբայր Մկրտիչն ու Մարգարիտը, Գուրգեն Տեր-Պողոսյանը, Վահանը, օրիորդ Քնարիկը, Հրանուշը³⁴: 1934 թվականին Աղաղանի դպրոցը փակվում է: Շատ չանցած՝ 1936 թվականին, ազաղանցիներ Բաբաջան Նազարբեկյանի ու

³¹ «Ալիք», 1979, 18 ապրիլի, թիվ 78:

³² «Ալիք», 1979, 7 հունվարի, թիվ 250 (1978):

³³ «Ալիք», 1979, 19 ապրիլի, թիվ 79:

³⁴ «Ալիք», 1979, 21 ապրիլի, թիվ 80:

Իսրայել Մարտիրոսյանի ջանքերով, Թավրիպի «Հայ կանանց միության» նյութական աջակցությամբ ու Ատրպատականի թեմական առաջնորդի Հովանավորությամբ Աղաղանի դպրոցը վերաբացվում է 27 աշակերտով³⁵:

1898 թվականին Վարդան Թումանյանցի կողմից կառուցվում է Ղարադաղի Մեչափարա գավառակի առաջին դպրոցը՝ Ողան գյուղի Հռիփսիմյան դպրոցը՝ ի հիշատակ իր Հանգուցյալ մոր՝ Հռիփսիմեի³⁶: Դպրոցը երկսեռ էր, ուներ չորս դասասենյակ: «Մենք այդ դպրոցին Հանգուցեցինք 1905-1907 թվադրում է ժամանակի Հողվածագիրը, - թվո՞ւմ էր, թե որեւէ խաղաղության դպրոցի աշակերտ-թյան առաջ ենք կանգնած. աշակերտ-աշակերտ-հիները Հագնվել էին միտրեասի, մախո-ր Համազգեստ, կարգապահ-թյուն են օրինակել էր»: Դպրոցն ուներ սրահ, որտեղ կար բեմ՝ պատրաստված Թումանյանցների կողմից Թիֆլիսից բերված տախտակներով: Թիֆլիսից էին ներմուծվել նաև դպրոցի սեղան-աթոռները, գրամաֆոնը և դաշնամուրը³⁷: Ողանի դպրոցի բոլոր ծախ-

³⁵ «Ալիք», 1937, 1 հունիսի, թիվ 337:

³⁶ «Ալիք», 1933, 12 հոկտեմբերի, թիվ 27:

³⁷ «Ալիք», 1977, 22 մայիսի, թիվ 110:

սերը Հոգում էին Թումանյանցները: Դպրոցը ուներ արծաթից պատրաստված իր նշանը՝ երկու փետուրե գրիչներ՝ թեք, խաչաձև, կենտրոնում գիրք, ներքևում թանաքաման, իսկ վերևում Ղ.Հ.Ե.Դ. տառերը՝ կամարածև շարված: Այդ նշանները ձրի տրամադրվում էին բոլոր աշակերտուհիներին³⁸:

Ողանի դպրոցի ուսուցիչներն էին՝ եղբայրներ Գալուստ և Իսրայել Եգանյանները, տիկին Սանդուխտը, Գուրգեն Տեր-Մարտիրոսյանը, Հովսեփ Նալբանդյանը, որոնք նվիրումով ու ժրաջանությամբ մեծ ծառայություն են մատուցել Ղարադաղի կրթական գործին: Գալուստ Եգանյանը մինչև կյանքի վերջը մնաց իր փայփայած գործին: ՄաՀից դեռ շատ Հետո Կովկասի և Պարսկաստանի բազմաթիվ բնակավայրերում բնակվող ղարադաղցիները երախտագիտությամբ էին հիշում նրան³⁹: Ողանի դպրոցը 1930 թվականին Հրդեհվեց Թուրքիայից Ղարադաղ ներխուժած Հրոսակախմբի կողմից⁴⁰:

³⁸ «Ալիք», 1979, 8 հունվարի, թիվ 251:

³⁹ «Ալիք», 1949, 25 մայիսի, թիվ 114:

⁴⁰ «Ալիք», 1933, 12 հոկտեմբերի:

+ **+** Հիշյալ ժամանակներում՝ մեղեւ էն դեպքեր, երբ Գործերը շվճարելու՝ պարտաւորով Գյուղացիները դիմել էն շահաւանջ ժայրահեղ մեջոցներին՝ մասնավորապէս՝ Ուրմիայի գավառի Դարահըզ և Երբաբ Գյուղերի 15 Գորն Հայեր Լարադաղահանի առաջնորդարանի օգրին գանջվող և դարոցական Գործերը շվճարելու՝ Համար դավանափոխվել էն և ընդունել իսլամ⁴⁵:



Համաձայն «Ղարադաղ» թերթի խմբագրութեան՝ 1913-1914 ուսումնական տարում Ղարադաղում գործում էր 5 դպրոց, որտեղ պաշտոնավարում էին 5 ուսուցիչ, սովորում էին 205 երեխա՝ 84 աշակերտուհի ու 121 աշակերտ: Դպրոցները գործում էին Աղաղան, Իր գուլթին, Ողան, Խանազազ, Նորաշեն գյուղերում⁴⁶: Նշված տեղեկատվութիւնը ամբողջական չէ. նախապատերազմյան այդ տարիներին դպրոց կար նաև Մինջվան գավառակի Վինա գյուղում⁴⁷:

⁴⁵ «Աղաղան», 1912, մարտ, թիվ 2, հավելված, էջ 10:
⁴⁶ «Ղարադաղ», 1914, 1 մայիսի, թիվ 6, էջ 4:
⁴⁷ «Ալիք», 1933, 31 օգոստոսի, թիվ 20:

Ղարադաղի Հասանով գավառակում առաջին դպրոցի շէնքը կառուցվում է 1926 թվականին Նորաշեն գյուղում՝ Ներսես Մելիք-Թանգյան սրբազանի գործունեութեան 40-ամյակին նվիրված տոնակատարութիւնների ժամանակ Հանգանակված միջոցներով: «Մելիք-Թանգյան ազգային դպրոց»-ը 1927 թվականից Հինգ տարի պաշտոնավարել և դասավանդել է գյումրեցի Մարուգե Եղիկյանը, ով Ատրպատական էր անցել 1921 թվականի գաղթի ժամանակ: Հետագայում՝ 1935 թվականին, նա ձեռնադրվել է որպէս քահանա՝ ստանալով տեր Սահակ Հոգևոր անունը⁴⁸: Նորաշենի դպրոցում սովորում էին գավառակի Հայաբնակ գյուղերի երեխաները: Դպրոցի ծախսերը հոգում էր «Մելիք-Թանգյան» Հիմնադրամը⁴⁹: Մինչ այդ Նորաշենում որպէս դպրոց ծառայել են տարբեր շինութիւններ, սններ: Հայտնի է, որ 1916 թվականին Նորաշենում ուսում են ստացել 30-40 աշակերտ⁵⁰, ուսուցիչն էր Գ. Բախտամյանը, իսկ դպրոցական ծախսերը՝ մոտ

⁴⁸ Յուշամատենան Ներսես Մելիք Թանգեան արքեպիսկոպոսի 1968, էջ 196, 228:
⁴⁹ «Ալիք», 31 հոկտեմբերի, 1933, թիվ 27:
⁵⁰ «Այգ», 1916, 11 դեկտեմբերի, թիվ 76:

350 դռանի չափով, Հոգացել էր Ղահրաման բեկը
ինչը այդ ժամանակների Համար աննախադեպ էր⁵¹

Արդեն 1930-ական թվերին Ատրպատականի
Հայոց թեմի առաջնորդ Ներսես արք. Մելիք-
Թանգյանի շնորհիվ և Թավրիզի Ղ.Հ.Հ միության
ջանքերով Ղարադաղում ամեն տարի Հովանավոր-
վում էր 10-13 դպրոց⁵²:

Իրանում Հայկական ազգային դպրոցների գո-
յուլթյան իրավական երաշխիքը Հաստատված էր ի-
րանական շահերի մի շարք «Ֆարմաններով» ու
փաստաթղթերով: XIX դարի 30-ական թվական-
ներից մինչև 1936 թվականը Հայկական աշխարհիկ
Հանրակրթական դպրոցներն օգտվում էին ներքին
ինքնավարության իրավունքից. Հայկական դպրոց-
ներն առաջնորդվում էին սեփական ուսումնական
ծրագրերով, իսկ ուսուցման Հիմնական լեզուն Հայե-
րենն էր: Դպրոցները ղեկավարվում էին թեմական
կամ Համայնական խորհուրդների ընտրած Հոգա-
բարձուլթյունների կողմից: Սակայն 1936 թվականին
Ռեզա շահի իրագործած պետության «իրանացի»

⁵¹ «Այգ», 1917, 19 մարտի, թիվ 11:

⁵² «Ալիք», 1933, 31 օգոստոսի, թիվ 20:

Ներքի 3

II ՏՅՆՈՒԹԵԱՆ «Ղարադաղ-Մեհակ»



Ղարադաղի պատգամավորները Ներսես սրբազանի 60-
ամյակին նվիրված միջոցառմանը («Յուշամատեն
Ներսես Մելիք Թանգեան Արքեպիսկոպոսի»)



Ներսես արք. Մելիք-
Թանգյանը Ղարադաղի
Նորաշեն գյուղում՝
«Մելիք-Թանգեան»
դպրոցի դռան առջև,



Վահան Միրզայան



Միհրան Գրիգորյան



Խաչատուր Գրիգորյան



Երեմ Սարգսյանյան



Բագրատ Հարությունյան



Սահակ քաչանա եղիկյան



Հովհաննես Հովսեփյան



Սըղըն գյուղի Հայկական դպրոցը մեր օրերում



Խանազազի Հայկական դպրոցը



Հայկական դպրոցի ավերակ Ղարադաղում

ման» քաղաքականության հետևանքով ինչպես Հայկական, այնպես էլ ազգային այլ փոքրամասնությունների դպրոցները փակվեցին: 1941 թվականին Ռեզա շահը հրաժարվեց գահից՝ Հոգուտ որդու՝ Մոհամմադ Ռեզա Փահլևիի: Ազգային դպրոցների վերաբացման հնարավորություն ստեղծվեց⁵³:

1942 թվականին թույլատրվում է վերաբացել դպրոցները⁵⁴, սակայն դրանցից ոչ բոլորն էին կարողանում շարունակել կրթության գործը: Վակերտների քանակն էլ նախկինին չի հասնում: Վերականգնելով իրանահայ համայնքի իրավունքներն ազգային դպրոցների նկատմամբ՝ Իրանի կառավարությունն միաժամանակ դպրոցներում պարտադիր կարգով մտցնում է Իրանի լուսավորության նախարարության տարրական դպրոցների ծրագիրը, ըստ որի՝ Հայկական դպրոցներում ուսուցման հիմնական լեզուն դառնում է պարսկերենը: Հայկական դպրոցներում ծրագրից դուրս թույլատրվում էր միայն Հայոց լեզ-

⁵³ Հակոբյան 2016, էջ 77-78:

⁵⁴ «Ալիք», 1966, 19 փետրվարի, թիվ 38:

վի և կրոնի ուսուցումը⁵⁵: Կրթական գործը նախկինի պես այլևս Ատրպատականի Հայոց թեմի կողմից չէր կազմակերպվում: 1952 թվականի դրոշմ-ընթաց «Հայ օգնություն մեզ»⁵⁶ ջանվելով Ղարադաղում գործում էր երեկ գյուղական փոքր դպրոցները Արևայում (Մինջվան), Նորաշենում (Հասանով), Ղասոմաշենում (Քելվան): Հաջորդ տարի փակվում էն Ղասոմաշենի և Նորաշենի դպրոցները: Ղասոմաշենյանները 1954 թվականից սկսում են Հաճախել Արդլանի վերաբացված դպրոցը: Ղարադաղի մնացած գյուղերում կրթական գործը մնացել էր փեղացիների Հոյսին⁵⁷:

Ղարադաղի բնակչությունը անտեսված էր նաև իրանի տարբեր քաղաքներում, այդ թվում մայրաքաղաքում Հաստատված ունևոր Հայրենակիցների կողմից: Նախկին տասնամյակներում Հայ բարձրաշխարհիկ խավը գնահատելի աջակցություն էր ցույց տվել իրանահայության կրթական գործին: Թումանյանցների, Քանանյանի, Յորդանյանների,

⁵⁵ Հակոբյան 2016, էջ 78:

⁵⁶ Միության կենտրոնը ԱՄՆ-ում էր, ուներ ավելի քան 3000 անդամ, գործունեություն էր ծավալում ողջ սփյուռքում: Միակ կազմակերպությունն էր, որ XX դարի կեսերին աջակցում էր Ղարադաղի դպրոցներին («Ալիք», 1952, 17 օգոստոսի, թիվ 182):

⁵⁷ «Ալիք», 1952, 28 մարտի, թիվ 71, նաև՝ 1952, 15 օգոստոսի, թիվ 181:

Պոպովյանի, Արզումանյանի և այլոց օրինակները դեռևս թարմ էին իրանահայության Հիշողության մեջ: XX դարակեսին Հարուստները դեռևս շատ էին, որոնք կարող էին Հոգալ գավառական դպրոցների Հոգսերը, սակայն չկար նախկին վեհանձնությունն ու ազգանվիրությունը:

Բացառիկ մի օրինակ էր Ինժեներ-ճարտարապետ Սոկրատ Նավասարդյանը: Նա 1953 թվականին Ղարադաղի Քարագլուխ գյուղում բացում է Հայկական չորսամյա մի դպրոց՝ Հոգալով շենքի վերանորոգման, կահավորման ծախսերը, Հայրուր աշակերտի կարիքները՝ գրենական պիտույքներ, գրքեր, 20 առավել կարիքավոր ընտանիքների երեխաների Հագուստներ, ուսուցչի աշխատավարձ: Ատրպատականի թեմական խորհուրդը, Հաշվի առնելով Սոկրատ Նավասարդյանի այս գնահատելի գործը, որոշում է դպրոցը անվանել «Մաննիկ»՝ Ի Հիշատակ նրա վաղամեռիկ դստեր: 1953 թվականի դրությամբ այդ դպրոցում սովորում էին Քարագլխից, Ինչպես նաև մոտակա Ամրադուլից, Վարդանաշենից, Սևահողից 107 երեխաներ⁵⁸:

⁵⁸ «Ալիք», 1953, 1 նոյեմբերի, թիվ 240:

Սկզբնական շրջանում դպրոցում դասավանդում էին երկու ուսուցիչներ: Ս. Նավասարդյանի բարերարութիւնը չէր սահմանափակվում միայն կրթական գործին առնչվող հոգսերով: Չմեռվա ցուրտ ամիսներին մոտ 40 երեխաներ դադարեցնում են դպրոց այցելելը՝ տաք հագուստ չունենալու պատճառով: Այս հարցը ևս լուծվում է բարերարի կողմից՝ Թավրիզից պատվիրելով մանկական ձմեռային հագուստեղեն: Քարագլխի չորսամյա դպրոցի աշակերտների թիվը 1966-1967 ուսումնական տարում արդեն 23 աշակերտ էր: Ընդամենը երեք ուսումնական տարում (1964-1967) աշակերտների թիվը գրեթե կիսով չափ կրճատվում է: Դպրոցի ուսուցիչը այդ ժամանակաշրջանում Բաֆիկ Մարտիրոսյանն էր: Գրենական պիտույքները արդեն մատակարարվում էին Ատրպատականի Հ.Օ.Մ. կողմից, իսկ ուսուցչի վարձատրութիւնը՝ գյուղի Համայնքի և Գալուստ Գուլբենկյան Հիմնադրամի կողմից⁵⁹:

1954 թվականին «Ղարադաղի Հայրենակցական միութիւն» կրկին նպաստակ էր դրել աջակցել կամ

⁵⁹ «Ալիք», 1970, 19 հունվարի, թիվ 13:

կազմակերպել փարէցփարէ դասարկվող Ղարադաղի Հայաբնակ գյուղերի կրթական գործը: Միութիւնն ջանքերով 1954-1955 ուսումնական փարոմ դպրոցներ ևն վերաբացվում Սըղըն, Ախնա և Ողան գյուղերում⁶⁰: Նպատակ կար դպրոց բացելու նաև Իրգութին գյուղում, սակայն գյուղի հասարակութիւնը չի ընդառաջում միութիւնը, ինչի հետևանքով դպրոցն այդպես էլ չի վերաբացվում: Միութիւնը չի հաջողվում Թավրիզից կամ Թեհրանից ուսուցիչներ գտնել այդ դպրոցների համար: Արդյունքում տեղացիներից վարձվում են գրաճանաչ և դաստիարակելու ունակ մարդիկ՝ որպես ուսուցիչներ:

Սըղըն գյուղի վերաբացված դպրոց Հաճախում էին Քեյվան գավառակի երեք Հայաբնակ գյուղերի՝ Սըղընի, Ղասումաշենի և Մըհդալի 26 երեխաներ՝ 17 տղա և 9 աղջիկ: Դպրոցում պաշտոնավարում էին տեղացի երկու ուսուցիչներ: Դասավանդումը իրականացվում էր Հայերեն և պարսկերեն:

Եկեղեցու բակում էր գտնվում Վինայի վերաբացված չորսամյա դպրոցը, որտեղ դասավանդում

⁶⁰ «Ալիք», 1955, 6 հոկտեմբերի, թիվ 218:

էր կրթութեան նախարարութեան կողմից ուղարկված մի պարսիկ ուսուցիչ, ում անունն էր Հաբիբ Ֆարշբաֆ: Որպեսզի երեխաները մայրենի լեզվով էլ սովորեն գրել-կարդալ, միութեան կողմից վինացիներից վարձվել էր մեկ վարժուհի և մեկ ուսուցիչ՝ դասերից Հետո լրացուցիչ դասավանդումներ իրականացնելու համար: Վինայի դպրոցը հիշյալ՝ 1963-1964 ուսումնական տարում հաճախել են 36 երեխա՝ 21 տղա և 15 աղջիկ: Դպրոցում սովորում էին նաև հարևան Սևահող գյուղից երեխաներ: Վինայի դպրոցի պարսիկ ուսուցիչը նյութական բավարարվածութեան մասով շարունակ պահանջներ էր ներկայացնում գյուղացիներին, ինչպես նաև արգելքներ էր ստեղծում հայերենի դասավանդման հարցում: Այդ ամենից Հետո վինացիները նրան տրամադրում են տուն և 1500 ռիալ արժեքի նյութական միջոցներ ու պարեն⁶¹: 1966-1967 ուսումնական տարում Վինայի դպրոցում արդեն սովորում էր 30 երեխա: Դպրոցի միակ ուսուցիչը Սոկրատ Մելիք-Ստեփանյանն էր: Գրենական պիտույքները Հոգացվում էին Թավրիզի Հ.Օ.Մ. կողմից, իսկ ու-

⁶¹ «Ալիք», 1955, 6 հոկտեմբերի, թիվ 218:

սուցչի վարձատրությունը՝ գյուղի համայնքի և Գալուստ Գուլբենկյան հիմնադրամի կողմից⁶²:

Գյուղացիների աջակցությամբ և միութեան ջանքերով 1954 թվականին վերաբացվում է նաև Ողանի դպրոցը՝ չնայած այն հանգամանքի, որ գյուղում ապրում էր ընդամենը 12 ընտանիք: Դպրոցում դասավանդում էր տեղացի մի կին, ում վարձատրությունը Հոգում էին գյուղացիները: Պարսկերեն լեզվի դասավանդման համար տեղացիներից վարձել էին մի տղամարդու: 1954-1955 ուսումնական տարում Ողանի դպրոց են հաճախել 27 երեխա՝ 16 տղա և 11 աղջիկ⁶³:

1954-1955 ուսումնական տարում վերոնշյալ կրեք դպրոցներում սովորել են 94 երեխա, պաշտոնավարել են 6 ուսուցիչ: Միաժամանակ նույն ուսումնական տարում 75 երեխա սովորել է Ջալալի «Մաննիկ» դպրոցում⁶⁴:

Հիշարարկո-Բյան արժանի է նաև «Թավրիզի Հայ Գինո-Բյան միո-Բյան» վարչո-Բյան կարարաթ գործը. Գարարազի այն Գյո-ղերո-մ, որոնցո-մ բնակչո-Բյո-

⁶² «Ալիք», 1970, 19 հունվարի, թիվ 13:

⁶³ «Ալիք», 1955, 6 հոկտեմբերի, թիվ 218:

⁶⁴ «Ալիք», 1955, 15 փետրվարի, թիվ 37:

նր շափազանց լին էր, և Հնարավորություն չի եղել
դպրոց բացել ու, այդ գյուղերում տրամահան աջակ-
ցություն էր ցուցաբերվել գրագետ մե գյուղացու-
ղի երեխաներին գրել և կարդալ սովորեցնել ու-
մար, բացի այդ ուղարկվել են տասագրիչ և դպրո-
ցական պարագաներ:

«Մի անգամ պահույճ, որտեղ
սրտեղ ճիշտ ու ու համարձե-
լից փոխի՞ր, համարձե ուրախի՞ր, քն ճշմո՞ւյ կարժ-
տից, թե ո՞ր անգից իս»,- Բ. Արմաթյա

Մաս 4.....



ԽՇԱՆԱՎՈՐ

ՂԱՐԱԴԱՊԻ ԼՅԱՅԻՆԻ



Ղարադաղի Հայ բնակչությունը (և առհասա-
րակ ծագումով Ղարադաղցիները) Հայտնի էր իր ա-
ռանձնաՀատուկ բնավորությամբ, քաջությամբ և
հյուրասիրությամբ: Պանդխտության մեջ արագ էին
կողմնորոշվում, աչքի էին ընկնում ձեռներեցույթ-
յամբ և Հայրենակիցներին օգնելու կամեցողույթ-
յամբ: ՆաՀապետական ժամանակներից սկսած
չքավոր կամ աննեցուկ ընտանիքների Համար ամ-
բողջ գյուղը լծկաններով ու արորով մի երկու օրում
վար էին անում, բերքը Հսձում ու կախում: Պյուղը
օգնության Համար մեկտեղվում էր նաև այլ աշխա-
տանքների ժամանակ: Կոլեկտիվ, ձրի այդ աշխա-
տանքը կոչվում էր «մաջի», որը Հավանաբար

պարսկերեն «մաջլանի» բառից էր, որը նշանակում է «ձրի»: Գավառներում արհեստներին ու առևտրին առավելապես տիրապետում էին հայերը: Եվ ոչ միայն Ղարադաղում: Թեհրանի և Թավրիզի շուկաներում արհեստավորների մեջ մեծ թիվ էին կազմում ղարադաղցիները: Տեղացի հայերը զբաղվում էին նաև երկաթահանքի շահագործումով ու դարբնությունամբ, ինչի արդյունքում երկրագործության և առհասարակ բոլոր արհեստների գործիքները պատրաստում էին սեփական ուժերով: Ղարադաղցիները հայտնի էին հատկապես զինագործության, ոսկերչության, շերամապահության, հյունություն, դարբնության և այլ արհեստների բնագավառներում: Ամեն մի տուն ուներ ջուլհակությամբ զբաղվելու հարմարություններ և գյուղական խրճիթից անբաժան ճախարակ: Գործում էին կտավ, բրդե շալեր, կարպետներ, գորգեր և այլն:

Ղարադաղի հայությունն ունեցել է յուրահատուկ ժողովրդական բանահյուսություն, հայտնի աշուղներ, որոնց ստեղծագործությունները, դժբախտաբար, մեծ մասամբ մոռացվել ու գրի չեն առնվել: Մեզ են հասել աշուղ-ասացողներից մի քանիսի ա-

նունները, որ սերնդեսերունդ փոխանցվել, պահպանվել են: Դեռ XX դարի կեսերին պարսկահայությունը հիշում էր նրանց՝ աշուղ Բաղդասար, աշուղ Սեյրան (աղաղանցի), աշուղ Քարամ (գրբմընավցի), աշուղ Գասպար-Դիվչկին (Քեյվան գավառակից): Այս վերջինի մասին պատմում էին, որ սազը ձեռքին, քաղաքից քաղաք շրջելով, մրցության էր հրավիրում աշուղներին, անցնում էր Ղարաբաղ, Գանձակ, հասնում Թիֆլիս ու մրցանակներ վաստակած՝ կրկին վերադառնում էր Ղարադաղ¹:



Ղարադաղցին, չնայած իր դժվար պայմաններին, այնուամենայնիվ տվել է հիշատակելի անուններ. մասնավորապես՝ մեր կողմից արդեն հիշատակված, ժամանակին մեծ հայագետի համարում ունեցող Պողոս վարդապետ Ղարադաղցին: Պողոս վարդապետը նախնական կրթությունը ստացել է Արցախի Գանձասար վանքում Հովսեփ Տեր-Ավագյան Արցախեցու մոտ, ապա սովորել Տաթևի վանքում: 1810-1817 թվա-

¹ «Ալիք», 1949, 23 մայիսի, թիվ 112:

կաններին սովորել է Կոստանդնուպոլսում: Այս Դզմար գավառակի նշանավոր Մելիք-Ազարյանների գերդաստանից էր: 1822 թվականի սեպտեմբերին Ներսես Աշտարակեցու խորհրդով տեղափոխվել է Թիֆլիս և ուսուցչություն արել Տափիթաղի վանքի խցերում, 1825-1826 թվականներին դասավանդել է Ներսիսյան դպրոցում, իսկ 1829թ. Շուշիում հրատարակվել է նրա «Համառոտություն Հայկական քերականության» աշխատությունը²: Այնուհետև Պողոս Ղարադաղցին ուսուցչություն է արել Թավրիզում, Ագուլիսում: **Նրան են աշակերտել Խաչատուր Աբովյանը, Ստեփանոս Նազարյանը, Մեսրոպ Թաղիադյանը և այլք:** Եղել է առաջադեմ ու ճանաչված մանկավարժ: Դասավանդել է Հայոց լեզու, ճարտասանություն, տրամաբանություն:

Ղարադաղը ունեցել է Հայտնի բարերարներ, որոնցից Հայտնի են **Թումանյանց գերդաստանը, Մահտեսի Աբրահամը, մելիք Մուշկամբարը, տիր Մարտիրոս քահանան: Նշանավոր մելիքներ, ազգային գործիչներ են մելիք Հանուրը, մելիք Ղա-**

² Հովսեփյան, 2009, հատ. I, էջ 65:

րադյոզը: Եվ վերջապես, որպես Հասարակական գործիչ՝ նշանավոր էր Մեշափարա գավառակի Գրրմընավ գյուղից **Ավետիս Նազարբեկյանը**, ով **Արանսիայում և Շվեյցարիայում**, ստանալով բարձրագույն կրթություն, մտնում է Հասարակական-քաղաքական գործունեության ասպարեզ, 1887 թիվականին դառնում Հնչակյան կուսակցության ժամագիրներից մեկը, իսկ Հետագայում, բաժանվելով Հնչակյան կուսակցությունից, անցնում է ծայրաձեղ մարքսիստների շարքը:

Ղարադաղցի էր Հայերեն առաջին Հանրագիտարանի Հեղինակ, «Մշակ» թերթի խմբագիր **Համբարձում Առաքելյանը:** Ղարադաղցի կամ ղարադաղցի ծնողներից էին սերված իրանահայ անվանի երաժիշտներ, նկարիչներ, մտավորականներ **Լեոն Գրիգորյանը, Համբարձում Գրիգորյանը**³,

³ Երգահան Համբարձում Գրիգորյան (1893-1976): Ծնվել է Թավրիզում՝ ղարադաղցի գաղթականների ընտանիքում: Մինչ 1923թ. պաշտոնավարել և դասավանդել է Ղազվինի հայկական ազգային դպրոցում: 1923թ. մի խումբ հայ ուսանողների հետ հրավիրվել է Պրահա, որտեղ շարունակել է ուսումը Ն. Ռիմսկի-Կորսակովի անվան երաժշտական դպրոցում: 1924-1927թթ. սովորել է Փարիզի Երգեցողության դպրոցում: Ուսանել է նաև Սորբոնի համալսարանում: 1927թ. շարունակել է երաժշտական-մանկավարժական գործունեությունը Ռեշտում,

Ռուբիկ Գրիգորյանը, Հենրիկ Գրիգորյանը, Էմելիք-Ասլանյանը, Հարություն Մինասյանը, Խաչիկ Բաբայանը⁴, Վաղինակ Սարգսյան-Իրանյանը, Խաչատուր Գրիգորյանը, Նյու Յորքի Հանրային գրադարանի տնօրեն և Կարնեգի Հիմնադրամի նախագահ Վարդան Գրեգորյանը⁵ («Ավրորա» մրցանակաբաշխության Համահիմնադիր), Հայաստանի առաջին Հանրապետության 1918-1919 թվականների կրթության և արվեստի նախարար Գևորգ Մելիք-Ղարաբյոզյանը, ով նաև Երևանի պե-

ապա՝ Թեհրանում, որտեղ 1928թ. հիմնել է «Կոմիտաս» երգչախումբը, որը ղեկավարել է մինչ 1969թ.: Գրել է ավելի քան 200 հայկական երգ, խմբերգ, պարերգ, արևելյան-պարսկական էսքիզներ: Արժանացել է Իրանի թագավորի ոսկե մեդալին և Կիլիկիայի թեմի առաջնորդի Մ. Մաշտոցի անվան ոսկե մեդալին: Մահացել է Թեհրանում:

⁴ Խաչիկ Բաբայան, ծնվ. 1954թ., հայտնի երաժիշտ:

⁵ «Ալիք», 1985, 5 փետրվարի, թիվ 29: 2012 թվականին հրատարակվել է «Իրանահայոց հանրագիտարան» Ժանետ Լազարյանի հեղինակությամբ: Այդ սովորադավալ գրքում, որը պարունակում է հարյուրավոր իրանահայերի անուններ ու կենսագրություններ, չի ներառվել սույն գլխում նշված ոչ մի նշանավոր դարադադու անուն, միայն շատ հպանցիկ նշում կա Թումանյանցների գործունեության մասին:

⁵ Սմբատյան, 2016, էջ 35:

տական Համալսարանի և Հայաստանի պետական պատկերասրահի Հիմնադիրներից է⁶:

Ղարադաղցի էր Իրանի լուսանկարչության Հիմնադիր Հովսեփ Խան Հովսեփյանց Աքբասաֆին: Նա ծնվել է 1875թ. Աղաղան գյուղում: Ավարտել է Թավրիզի «Արամյան» դպրոցը, ապա մեկնել է Թիֆլիս՝ լուսանկարչություն ուսանելու նպատակով: 1895թ. Հովսեփյանցը վերադառնում է Թավրիզ և Հիմնում սեփական լուսանկարչատունը: Որոշ ժամանակ անց նա նշանակվում է Թագաժառանգ Մոզաֆեր էդ Դին Միրզայի անձնական լուսանկարիչ: Նա նաև եղել է Հաջորդ Թագաժառանգի՝ Մոհամմադ Միրզայի լուսանկարիչը: Հովսեփյանցը 1928-36թթ. գործել է կինեմատոգրաֆիայի ասպարեզում: Շուրջ 38 տարի շարունակել է աշխատել լուսանկարչության բնագավառում: Թավրիզի բոլոր անվանի լուսանկարիչները աշակերտել են Հովսեփյանցի մոտ: Հովսեփ Հովսեփյանցը

⁶ Սմբատյան, 2016, էջ 35:

⁷ Ākkas (آککاس) – պարսկերեն՝ «լուսանկարիչ»:

վախճանվել է 1951թ. Թեհրանում: Նրա դին սովորաբար էր Դուլաբի պանթեոնում⁸:

Ղարադաղից դուրս՝ պանդխտության մեջ գտնվողները հիմնում էին միություններ, որոնց նպատակը ուժերի և միջոցների միավորումն ու Հայթայթումն էր՝ Հայրենի գյուղերում որևէ նախաձեռնություն կամ գործ իրագործելու համար: 1905թ. Բաքվում մի խումբ Հայրենակիցներ հիմնում են «Ղարադաղի Հայրենակցական-բարեգործական միությունը»: Միությունը անդամագրվում են Թումանյանց եղբայրները, Կապանում պղնձահանքերի սեփականատեր, Հայտնի մեծաշարուստ, Ալեքսանդր Մելիք-Ազարյանցը, այլ մեծաշարուստներ ու բազմաթիվ պանդուխտ ղարադաղցիներ⁹: Կարճ ժամանակում այդ միությունը իր մասնաճյուղերը հիմնեց Կովկասի և Իրանի մի շարք այլ քաղաքներում: Նույն տարվա հոկտեմբեր ամսին Թիֆլիսում տեղի ունեցավ այդ միության անդրանիկ Համագումարը, որը քննարկեց գործունեության նախագիծը

⁸ Յովսեփեանց Յ., Մի լուսանկարի պատմություն, (<http://alikonline.ir>, 16 Դեկտեմբերի 2012):

⁹ Մինասեան Ի., Մի ակնարկ Ղարադաղի անցեալի մասին, «Ալիք», 1949, 26 մայիսի, թիվ 115:

և ծրագիրը Հանձնեց Թիֆլիսի պարսից հյուպատոսին՝ վավերացնելու համար: Վերջինս խոստացավ ամեն կարգի աջակցություն ցուցաբերել: Նախատեված էր հիմնել գյուղատնտեսական դրամատուն (այն Հանձն էին առել Թումանյանցները), հիվանդանոցներ (ծախսերը Հանձն էր առել Ալեքսանդր Մելիք-Ազարյանցը), սպառողական ապրանքների խանութներ, զարկ տալ գյուղատնտեսությանը, մեղվաբուծությանը, շերամապահությանը, հիմնել դպրոցներ և միջոցներ ձեռնարկել Ղարադաղից արտագաղթի դեմն առնելու համար: Այս ծրագրերը դեռևս նախնական ընթացքի մեջ էին, երբ սկսվեց Համաշխարհային առաջին պատերազմը, և տակնուվրա եղավ ամեն ինչ:

1910թ. Թավրիզում բնակվող աղաղանցիները և մի շարք այլ ղարադաղցիներ ստեղծում են «Հայրենակցական միություն» և սկսում Ղարադաղում կրթական գործի զարգացման ուղղությամբ աշխատանքներ իրականացնել: 1912 թվականի հունվարից նրանք հրատարակում են «Աղաղան» ամսագիրը, որը կոչվում էր «Օրգան Ղարադաղի»: Սակայն

այս ձեռնարկը ևս դադարում է պատերազմի պատճառով:

1915 թվականին մի խոսք՝ Ղարադաղ ցեղերը Բախվոս-մ Հիմնոս-մ էն «Ղարադաղի Հայրենակցական-սպառնողական միությունը»: Վերջինիս նպատակն էր սպառողական խանութներ բացել Հայրենի Ղարադաղում և դրանցից ստացված Հասույթները տեղում ուղղել բարեգործական, կրթական նպատակներին: Այդ միությունը, բախվելով պատերազմի պատճառով առաջացած դժվարություններին, Հարկադրված իր գործունեությունը առժամանակ ամփոփում է Բաքվում: Կենսամթերքի մեծ պակաս էր առաջացել: Միությունը Հիմնականում պարսկահայերի Համար Հիմնում է մթերային մի մեծ խանութ, որն իր ժամանակին կարողանում է գնահատելի ծառայություն մատուցել: Միությունը նշանակալից գործունեություն է իրականացնում Օսմանյան զորքերի կողմից Բաքվի գրավման ժամանակ ստեղծված ճգնաժամի օրերին: Հայրենակցական-սպառողական միության շենքում, որի վրա պարզված էր Իրանի դրոշը, ապաստան են գտնում բազմաթիվ Հայեր, որոնք ազատվում են մահից: Այս միությունը

իր գործունեությունը շարունակում է մինչև 1923 թվականը և այնուհետև խորհրդային իշխանության կողմից Համարվելով ազգային կազմակերպություն՝ հարկադրաբար լուծարվում է¹⁰:

1954 թվականին Թեհրանում Հիմնվում է 'սույն՝ «Ղարադաղի Հայրենակցական միություն» անունը կրող կազմակերպություն: Այն նպատակ ուներ օժանդակելու Ղարադաղի Հայ Համայնքի կրթական գործին, սատար կանգնելու գավառի չքավոր գյուղացիներին՝ վերականգնել իրենց տնտեսությունը, ինչպես նաև՝ քաղաքներում եղած իրենց Հայրենակիցներին, որոնք ցանկություն կհայտնեն վերադառնալ Ղարադաղ: Հիմնվելուց Հինգ ամիս հետո միությունը իրականացրել է գավառի մանրամասն վիճակագրություն: Այն Թավրիզում ուներ իր մասնաճյուղը, որը Ատրպատականի առաջնորդական տեղապահ Կարապետ ավագ քահանա Մանուկյանի Հովանավորության ներքո ընտրել էր իր վարչությունն և լծվել աշխատանքի¹¹:

¹⁰ «Ալիք», 1949, 31 մայիսի, թիվ 118:

¹¹ «Ալիք», 1954, 6 հոկտեմբերի, թիվ 221:

ՀԻՇՄԻՆ ԱՄԻՒՆՑԻՒԹԷ, ՈՐՈՒ ԾԱՌԹ ՉԵՆ ԸՆԹԵՑՈՒՆԵՐԻ ԼԱՅՆ ԸՄՁԱՆՈՒ



Գ ԱՆՈՒՍ ԵՒՆԻՅԱՆ

(Տեր Սահակ քահանա)¹² (1870(71)-1922)

Կուսակցական, ազգային գործիչ, գրող, ազատագրական պայքարի մասնակից, ուսուցիչ, հոգևորական: Ծնվել է Ղարաբաղի Մումուղարուն Հայաբնակ գյուղում 1870 կամ 1871 թվականին: Հայրը՝ Միրզան, ոսկերիչ և արծաթագործ էր, բայց զբաղվում էր նաև զինագործությամբ: Երեք եղբայր էին և մեկ քույր: 1881 թվականին մանկաՀասակ Գալուստը տեղափոխվում է Թավրիզ և ծառայության անցնում մեծահարուստ Ծաղիկյանների տանը, որտեղ նա սովորում է գրել ու կարդալ: 1884 թվականին Ծաղիկյանների ընտանիքի Հեստ տեղափոխվում է Թիֆլիս: Արդեն երիտասարդ տարիքում նա Թիֆլիսի զանազան

¹² Տեր Սահակ քահանա Եգանյանի նոթագրություններից, «Ալիք», 1978, թիվ 250, 1979, թիվ 1-12:

պարբերականներում հոդվածներ և ոտանավորներ էր հրատարակում «Չարդարողլի» կեղծանվամբ:

1890/թ. սկզբին Գալուստը զանգեզուրցի (եղվարդեցի) Անդրեաս Տեր-Հարովժյունյանի միջոցով կամ ազդեցությունից ընդունվում է դաշնակցության շարքերը: Նույն Անդրեասի հորդորներով 1890/թ. վերջին վերադառնում է Ղարաբաղ՝ դպրոց հիմնելու, ինչպես նաև կուսակցական և ազգային քարոզիրականացնելու նպատակով: Սկզբում տեղավորվում է Դզմար գավառակի Սարդու գյուղում և անմիջապես մորն ու քրոջը Մումուղարունից տեղափոխում իր մոտ: Կրթական գործում Գալուստին օգնում էին Սիմոն Բաղդասարյանը և Արիս Տեր-Գրիգորյանը: Վերջինիս միջոցներով կառուցվում է Սարդուի երկսենյականոց դպրոցը: Սարդուում իր կացարանում, հիմնում է տպարան: Այդտեղ հրատարակում է իր հեղինակած «Հայկական սազ» խորագրով ոտանավորների գրքույկը: 1893/թ. կրկին անցնում է Թիֆլիս և երեք տարի անց վերադառնում Սարդու՝ կրթական գործը շարունակելու:

1897/թ. Գալուստը ամուսնանում է խանազակցի Դավիթ Մելիք-Աղաջանյանի դուստր՝ Սաթենի-

կի Հետ: 1890-ականների վերջին Վարդան Թու մանյանցի հրավերով տեղափոխվում է Ողան՝ դասավանդելու այնտեղի դպրոցում:

1910թ. Ղարադաղ են գալիս դաշնակցական գործիչներ՝ տեղի Հայերին կազմակերպելու և զինելու նպատակով: Սրանց հեռանալուց Հետո Գալուստը ստանձնում է դաշնակցության Ղարադաղի պատասխանատուի պաշտոնը:

1914թ. Անդրեաս Տեր-Հարությունյանի Հետ, օգնության հասնելով վտանգված Մզգիթին, կազմակերպում և ղեկավարում է մարտը, որն ավարտվում է Հայերի Հաղթանակով:

1917թ. Մեշափարա գավառակի Հայերի ինդրագրին բավարարում տալով Թավրիզի առաջնորդարանում Գալուստին օժում են որպես քահանա՝ շնորհելով տեր Սահակ Հոգևոր անունը և նշանակելով Մեշափարայի Հոգևոր հովիվ: Նույն թվին նա վերադառնում է Ողան:

XX դարի երկրորդ տասնամյակում ստանձնում և կազմակերպում է Ղարադաղի Մեշափարա գավառակի Հայերի ինքնապաշտպանությունը: 1920թ. առաջնորդում է մեշափարացիների գաղթը

դեպի Վինա: Մասնակցում է Ամիր Արշադի Հետ տարվող բանակցություններին:

Այս ամենին զուգահեռ Գալուստ Եգանյանը մինչև իր կյանքի վերջը մնում է իր սիրելի գործին՝ ուսուցչությանը՝ իր նվիրումով ու ժրաջանությամբ մեծ ծառայություն մատուցելով Ղարադաղի կրթական գործին:

Գալուստ Եգանյանը ուներ երեք տղա և երեք աղջիկ: Նա մահացել է 1922թ. փետրվարին: Սերունդները ներկայումս ապրում են ԱՄՆ-ում, Կանադայում, Իրանում, Հայաստանում, Ավստրալիայում: Նշանավոր այս ղարադաղցին թողել է արժեքավոր հուշագրություններ:

Գալուստ Եգանյանի ոտանավորներից պահպանվել է երկուսը¹³.

ԵՓՐՄՏ-ՏԻԳՐԻՍԻՆ

Ըստ-մ էն Ըստ-աթ չեր ակո-նիներո-մ Երեմն ասելը թեց
Ե- անմեղ ո-թեան ո- արդարո-թեան շնչով պարո-րեց,
Ըսացին այդտեղ գառը գայլի հետ մի տեղ ճարակեց,
Մարդ արարածն էլ, աստ-մ էն, այդտեղ գոյո-թեան կոշ-եց:

¹³ Սրանք մեզ տրամադրել է իր թոռը՝ ամերիկաբնակ Վազրիկ Տեր-Սահակյանը:

Մեծիցն Ասոր-աժ, աստ-մ էն, յայնժամ այտ վայրը որ Բեյ
 Երդարո-թի-նը, աստ-մ էն, չեյ մօր Գործի վերած-եյ
 Աստ-մ էն ինչպէս անաշատ Տէրն այնժամն վրդով-եյ,
 Որ մի Հասր ինչոր ո-րելո- Համար Ատամին պարտեյ:

Այս այտորեղ չէ՞ր, որ ժնո-նոր ատա- նախճիրն անլո-ր,
 Այտորեղ չէ՞ր մի՞նէ, որ սե- խորշակը ամեն-ամենո-ր
 Տարածեյ սարսափ, աՀա-որ սպանոր, արի-ն, սո-ր ո- Հո-ր
 Միլիոններ շարվով չէր պոյգ ամերով իշ-եցին, դեպ ո-՞ր:

Ո՞ր է այն խաղաղ, շինարար ազգը՝ դրախտ ժառանգաժ,
 Ձեր Ասոր-արդար պայրոյնը այժմ ինչ ո՞ւ է Հանգաժ
 Չորեաս՝ մի՞նէ չէր եղեմասորեղ ժարդարն Ասոր-աժ
 Տանէակ Հապարով մարդկանց գլո-խներ մարմնից պար-աժ:

Որվան անմեղներ անասպարներո-մ ժո-նկի շոխեցին,
 Սալալո-կ ո-մերի ե-մինչե-վերջին շո-նչ «Վարդաժ» կանչեցին
 Անմեղ մանուկներ թաց երկնի՞ր քակ ցցի Հան-եցին,
 Կանայի, աղջիկներ իր աշի՞ր ատաջ լլկեցին մե-աժ:

Ո՞ր է պարիշը ոճրագործ դաճճի՞ պալի, դի-աժին,
 Ես ժառանգո-մ էմ Հակայի նման դեմն այտ Ասոր-աժին,
 Իմ ամբողջ ո-ժով Գոռալո- Համար նրա երեւին.
 Իմ ազգը մի՞նէ՞՝ օրենի՞ր Գորդո-մ մի ինչոր շարժե՞ր:

Գալուստ (Տեր ՍաՀակ) Եգանեան 10.07.1917,
 Ողան

ՀԱՅՍՏԵՆ

Ե՛ն իմ վարդերի Հայասրան,
 Ի՞նչ ո- թշվառ մնացիր,
 Ի՞նչ Ժաղկապարտ դաշտորայի՞
 Ի՞նչ ո- անջո-ր թողեցիր:
 Թող ինձ մեջ ի՞նչն Ժաղկո-նի՞,
 Ի՞նչն ինչպիսի ո- անո-շի՞,
 Թող ինչ Լայն արտօներո-մ
 Պար թոնեն ո-լն ո- Գառնո-կ:
 Սոխակները թող երգեն
 Ի՞նչ կանաչ պարպեղներո-մ,
 Սեր, միո-թյո-ն թող Հնչեն
 Հայասրանի դաշտերո-մ:
 Թո-չնոց երամի ինձ ժոցո-մ
 Այսպիսի, անՀոգ, ինչպիսի,
 Թող ճախր ատնեն անդադրո-մ
 Այսպիսի-թյո-ն երգելով...
 Ես մանկո-թյան Հասակից
 Ի՞նչ, Հայասրան, պաշտեցի,
 Եվ իմ անպարտ վնարով
 Ի՞նչ սո-րթ սերն երգեցի:
 Անպարտ վնարիս թո-յլ Լարերը
 Տխո-ր շայնե-ր Հանելով,
 Տարածվո-մ էն դեպի ինչ
 Ի՞նչ-ր վերի՞րս Բերելով:
 Հալվո-մ, մաշվո-մ է Հոգիս
 Ի՞նչ կրաժ այտ ցավերից,
 Գիշեր ցերեկ դառն արցո-նի
 Հոսո-մ էն իմ աշի՞րից...
 Եգանյանցն էմ ես Հոգով

Քեզ նվիրված, Հայաստան,
Եվ պարտասուք էմ քե՞ն սիրով,
Բարձրանալ մինչ կախաղ ան...

ՏԻՆՈՒՅԻ ԽԱՇԻ

կամ Ծակ Խաշի¹⁴

Խանասորի արշավանքի մասնակից: Ծնվել է Ղարադաղի Միքիդի գյուղում մտավորապես 1880 թվականին: Հայրը երկաթագործ էր: Խաշին փոքր տարիքից սովորեց հոր արհեստը և որսորդությունը: 20 տարեկանում անդամագրվեց դաշնակցությանը: Խաշին նշանակվեց Թավրիզի և Ռուսահայաստանի կապի սուբհանդակը: Նա բոլորովին անգրագետ էր, միայն իր անունն էր կարողանում գրել: Նիհարակազմ էր, վտիտ, կարճաճասակ, ջրուտ, բայց այդքանով հանդերձ՝ արտակարգ ուժի տեր: Կրակոտ էր, արագաշարժ և արագախոս: Նա իրեն անվանում էր «անավետարան քրիստոնյա»:

¹⁴ Տեր Սահակ քահանա Եզանյանի նոթագրություններից, «Ալիք», 1979, 9 հունվարի, թիվ 252 (3):

Հաճախ մասնակցում էր զինված ընդհարումներին, ինչի արդյունքում երեք անգամ վիրավորվել էր: Երրորդ վիրավորումը ստացել էր Ասկերանում: Գնդակը աջ այտից մտել, ձախով դուրս էր եկել՝ թևափելով ատամները, կտրելով լեզուն և այլանդակելով դեմքը: Չինակիցները մեծ դժվարությամբ են հասցնում Հուշի, որտեղ Խաշին չորս ամսում ապաքինվում է: Մինչև այդ նրան անվանում էին Հյուզ Խաշի, դրանից հետո նա ստացավ Ծակ Խաշի կեղծանունը: Այս վերքից հետո դժվար էր խոսում, խոսքը գրեթե չէր հասկացվում: Լեզուն կտրված, բերանը ծուռ և անատամ այդ մարդը դարձավ դաշնակցության «Փայտակարանի» կոմիտեի կապի Հույան ու ապավենը և տարիներ շարունակ անխափան պաշեց այդ կարևոր օղակը:

Մի օր Խաշիին Թավրիզից նամակ է հանձնարվում, որպեսզի հասցնի Սիսիան՝ Սամսոնին: Ճանապարհին՝ դեռ Արաքսին չհասած, նա նկատում է կրակի մոտ Հանգստացող երկու զինված թուրքի: Խաշին փորձում է փոխել ճանապարհը, սակայն նկատվում է և արագորեն պատսպարվում: Թուրքերը հետապնդում են նրան: Խաշին, Հանկարծակի

Հարձակվելով իր դարանից, թուրքերից մեկին հրում է մերձակա ժայռից ցած: Նա գիտեր՝ այդ ժայռից ցած ընկնողը կենդանի չէր մնա. 50-60 մետր բարձրությունն ուներ՝ քարքարոտ հատակով: Մյուս թուրքը վազում է ձայնի ուղղությամբ, սակայն Խաչին արդեն թաքնվել էր: Արևին Հանկարծակի Հարձակվելով թաքստոցից՝ Խաչին դաշույնով երկրորդին էլ է սպանում: Վերցնելով սպանված թուրքերի զենքերը՝ նա գնում է Վինա և Հանձնում դրանք Վինայի դաշնակցության ներկայացուցչին: Հետո նոր միայն շարունակում է իր ճանապարհը դեպի Սիսիան:

Մեկ այլ դեպք այս փոքրիկ մարդու մասին: Մի օր նա Գալուստ Եգանյանի ստորագրությամբ մի կարևոր նամակ պետք է հասցներ Շուշի: Ճանապարհ ընկնելուց մեկ օր հետո անսպասելի վերադառնում է: «Երբ ինքը ներս մտավ, նկատեցի, որ չափազանց անտրամադիր է և լացակումամ, պատմում է Գալուստ Եգանյանը, - իմ Հարցին, լմ ի՞նչ է պատահել, նա երեխայի պես հեկեկալով սկսեց.

- Կես գիշերն անց Արաքսը անցա և Հասա կրորախտին: ՍաՀմանապահ զինվորները, շների Հաշոյի

վրա ինձ նկատելով, վազեցին իմ կողմը: Առաջին փորձս եղավ զենքս թաքցնել, նամակն էլ՝ ծամելով կուլ տվի: Ինձ տարան Հարցաքննելու: Ասացի, որ դարադաղցի եմ և գնում եմ Բաքու աշխատելու: Թեթև Հարցաքննելուց հետո բաց թողին, զենքս թաքստոցից հանեցի և ետ դարձա:

- Էլ ինչո՞ւ էս լալիս, Խաչի, խելոք բան ես արել:

- Ախր կերա, գնաց փորս, էն սուրբ թուղթը գնաց խառնվեց կեղտերի հետ, բա լաց չլինե՞մ, ավետարանը կեղտի մեջ, բա լաց չլինե՞մ:

- Ոչ, լացելու կարիք չկա. շատ է պատահել, որ սուրհանդակները նամակները կուլ են տվել, ինչ կա որ...

- Չէ, չէ, իմ խելքիս չի նստում, ես էդ նամակը կեղտոտել եմ, պետք է մի բան անեմ, որ էս մեղքից փրկվեմ»:

Խաչին նույն նամակը գրել տվեց, Հասցրեց Շուշի և վերադարձավ 6 օրում: Սովորաբար դա 10-12 օրվա ճանապարհ էր: «Քրչեր ցիրեկ քայլալում», - Հոխորտաց Խաչին՝ տգեղ ժպիտը տգեղ դեմքին:

Խաչին իր խիզախությամբ ու ճարակությանը սարսափ էր տարածում շրջապատում: Պատահեց էր, որ նա 10 Հոգու դեմ կռվել էր և Հաղթող դուրս եկել:

Ղարադաղի Հայերի պատուհաս Ղաչաղ Աճմադը, որին կառավարությունը որոնում էր, շատ էր վնասում Հայ գյուղացիներին: Նա նույնիսկ երկու դաշնակցականի մատնել էր ռուս սաՀմանապաճ կողակների ձեռքը, և դրանք այլևս չեն վերադարձել: Մի օր տեղեկություն ստացվեց, որ Աճմադն Հիվանդ պառկած է Ղարադաղի թրքաբնակ գյուղերից մեկում՝ իր քրոջ տանը: Դաշնակցության «Փայտակարան» կոմիտեն որոշեց նրան ահաբեկել՝ գործը Հանձնելով այդ ժամանակվա աչքի ընկնող գործիչներից մեկին՝ Կարապետին: Խաչին, լսելով այդ ամենը կից սենյակից, նույն օրը՝ առավոտյան, ձեռնամուխ է լինում ինքնուրույն ի կատար ածելու այդ որոշումը: Հասնելով նշված գյուղը և մերձակայքում Հարմար դիրք ընտրելով Խաչին Հաջողվում է սպանել Աճմադին և իր երկու որդիներին: Երեքն էլ խփվել են գլխից: «Յանի ես արժանի չիմ պահեմ էդ գործը անում», - Հանդիմանում էր Խաչին:

1910թ. Անդրկովկասից Իրան անցնելիս՝ Խաչին Արաքսի վրա խփվում է: Դիակը գտնում են թուրքերը և, իմանալով որ Հայ է, Հանձնում են Վիսայի գյուղացիներին: Վինացիները կազմակերպում են փառավոր թաղում՝ միքիդեցի Ճլուզ կամ Ծակ Խաչին Հանձնելով Հողին:

ԲԹՈՒՆՑ ԱՆԷԻ¹⁵

Ծնվել է Ողանում: Աշակերտել է Գալուստ Եգանյանին: Երեք տարի նույն դասարանում մնալուց Հեսոո այդպես ոչինչ էլ չսովորեց: Անկարգ էր, չար և անընդհատ պատժվում էր Համադասարանցիների իրերը գողանալու Համար: Մի օր փորձեց դպրոցը Հրդեհել, ինչի Համար էլ Հեռացվեց: Սաքին գնաց Բաբու, Թիֆլիս, Գրոզնի և ամեն տեղ զբաղվում էր գողությունը ու շատ ժամանակներ անցկացնում կալանավայրերում:

Եվ ահա մի օր նա Հայտնվեց Ողանում՝ երկու մոսին Հրացանով, 250 փամփուշտով, որոնք Հանձնեց Գալուստ Եգանյանին՝ Ղարադաղի՝ այդ օրերի

¹⁵ Գալուստ (Տեր Սահակ քահանա) Եգանյանի նոթագրություններից, «Ալիք» օրաթերթ, թիվ 6, 13 հունվար, 1979թ.:

դաշնակցության փաստացի ներկայացուցչին: Սաքին սկսեց պարբերաբար զենք հայթայթել և տեղափոխել Ողան, որոնցով սկսեցին զինվել Ողանի երիտասարդները: Վերջին անգամնա եկավ ռուսական գնդապետի հագուստով, 10 հրացանով, հազարավոր փամփուշտներով և 12 հատ ձեռնառումբով: Նա պատմեց, որ կաշառքով ստացել է սահմանապահների զինապահեստից: Ասադուլլա խանը լսեց այդ լուրը և սպառնաց՝ եթե իրեն բաժին չհաննու այդ զենքից, նա կհայտնի ռուսներին: Սաքին չհամաձայնվեց թուրքերին զենք տալ, մանավանդ, որ նա մի ռուս գնդապետի էր սպանել: Ինչևէ, խանը ռուսներին հայտնեց Սաքիի տեղը: Ասադուլլա խանը նախ ինքը հարձակվեց Ողանի վրա 1000 ձիավորով: Սաքին հավաքեց զինված երիտասարդներին, որոնք Գալուստ Եգանյանի կարգադրությամբ բաժանվեցին չորս խմբի, և հարմար դիրքեր ընտրեցին գյուղի մերձակայքում: Միակ գնդացիորդ Սաքին պահեց իր մոտ: Նա անձամբ իրականացրեց հետախուզում և բերեց արժեքավոր տեղեկություններ թշնամու մասին: Առավոտյան ժամը 4-ին հարձակումը սկսվեց: Նախ՝ 10 հոգանոց խմբերով, հետո՝

ավելի բազմամարդ: Սաքին խստորեն կարգադրեց, որ նախքան իր կրակելը ոչ ոք չկրակի: Նա դիրքավորվել էր կենտրոնում՝ գերեզմանաքարերի միջև: Երբ թշնամին մոտեցավ բավարար Հեռավորության վրա, մարտը սկսվեց: Սաքին իր գնդացրով բավական զոհեր պատճառեց թուրքերին, ինչից հետո հայերը անցան հակահարձակման և թշնամուն քշեցին գյուղից դուրս: Թուրքերը բազմաթիվ սպանվածներ թողեցին, որոնց զենքերը հասան ողանցիներին:

Այս դեպքերից հետո Ողանում երևացին հինգ կողակներ, որոնք որոնում էին Սաքիին և ում մեղադրում էին ռուս գնդապետի սպանության մեջ: Սաքին դուրս եկավ գյուղից և դիրքավորվեց մերձակա կիրճերից մեկում: Բախվելով կողակների հետ՝ նա մեկին սպանեց, մյուսների հետ էլ մտավ փոխհրաձգության, որը տևեց երեք օր: Փամփուշտները սպառվելուց հետո Սաքին վերջին կրակոցը ուղղում է իր գլխին: Ռուս կողակները Սաքիի դիակը հանձնում են ողանցիներին, իրենք էլ գնդապետի համազգեստը առած, հեռանում են Ողանից: Ողանցիները Սաքիի մարմինը մեծ հանդիսավորությամբ հանձնում են Հողին:

ԲԱՂԴԱՍԱՐ ՄԻՆԻՍՏՐՆԵՐ (Բաղդդիկ)

Ծնվել է 1903թ. դեկտեմբերի 10-ին Հասանով գավառակի Օղա գյուղում Հայրը՝ Խաչատուրը, շուտ մահացավ կնոջը և երեխաներին թողնելով ծայրահեղ աղքատության մեջ: Մանկական տարիքից տեղափոխվել է Թավրիզ ունևոր ազգականի տուն: Սովորել է Թավրիզի թեմական դպրոցում: Աշակերտել է Կարապետ Պիոնյանին և Հրաչյա Աճառյանին¹⁶: Որպես գերազանց սովորող աշակերտ՝ դաշնակցության կրթական ծրագրերից մեկով նրան և Հովհաննես Հախնազարյանին¹⁷ ուղարկում են Պրահա՝ ընդունվելու *Universitatis Carolinae Pragensis* (Պրահայի Կարլի Համալսարան), որտեղ նա ուսանում է «քիմիա» և «մանկավարժություն» մասնագիտությունները: 1928թ. Բաղդասարը վերադառնում է Իրան՝ բնա-

¹⁶ Փիրումեան-Մինասեան, Մինասեան, 2019, էջ 44-45:

¹⁷ Հովհաննես Հախնազարյան: Ծնվել է Ագուլիսում 1900թ.: Սովորել է Գևորգյան ճեմարանում, այնուհետև՝ Պրահայի համալսարանում: 1919թ., Ագուլիսի կոտորածից փրկվելով, մշտական բնակություն է հաստատում Թեհրանում: Շուրջ 30 տարի դասախոսել է Թեհրանի համալսարանում: Հեղինակել է «Գողթան գավառ» արժեքավոր ուսումնասիրությունը, որը հետմահու լույս է տեսել 1987թ. Անթիլիասում:

կան գիտությունների դոկտորի աստիճանով: Ուսուցչի ու տեսուչի պաշտոններ է վարում Ռաշտում, Ղազվինում, Թեհրանում և Թավրիզում միաժամանակ նվիրվելով կուսակցական աշխատանքին: 1931թ. լույս է տեսնում նրա «Մանկավարժության հիմունքներ» գիրքը: Նա ղեկավար դեր է ստանձնում դաշնակցության մեջ և Հաճախակի քաղաքական, վերլուծական հոդվածներով աշխատակցում Թեհրանի «Ալիք» և Կահիրեի «Յուսաբեր» թերթերին:

Ատրպատականի խորհրդային օկուպացիայի տարիներին էլ ավելի է բարձրանում Բաղդասար Մինասյանի դերը դաշնակցության մեջ: Այդ ժամանակամիջոցին շատ դաշնակցականներ, այդ թվում ղեկավարներ, քրում են կուսակցության շարքերը և սկսում Համագործակցել բոլշևիկների հետ: Բաղդդիկը մնում է անհողդող: Նա Ատրպատականի խորհրդային իշխանության ներկայացուցիչների հետ սկսում է պարբերաբար բանակցություններ վարել՝ Հայկական թաղամասերը Հարձակումներից պերժ պահելու, մարդկանց առևանգումներին ու ճարձանքներին վերջ տալու համար: Արդյունքում

Թավրիզի Հայկական Թաղամասերի վրա Հարձու կումները բավական քչանում են:

1944/թ. Բաղդասար Մինասյանը՝ որպես «Հակասովետական տարր», բանտարկվում է Թավրիզում, տեղափոխվում Երևան և մի քանի ամիս Հարցաքննվելուց Հետո որպես «Հակահեղափոխական լրտեսական կազմակերպության պատկանող և տեղորիստական միտումներ ունեցող»՝ դատապարտվում է 10 տարի ազատազրկման և աքսորվում Հեռավոր Նորիլսկի Համակենտրոնացման ճամբարը:

1955/թ. բավական հյուժված վիճակում վերադառնում է աքսորից և միանգամից լծվում իր սիրած մանկավարժական և կրթադաստիարակչական գործին:

1960-1971 թվականներին Բաղդասար Մինասյանը վարում է Թեհրանի «Ալիք» օրաթերթի գլխավոր խմբագրի պաշտոնը: Միաժամանակ «Քազին» և «Ատրուշանեան» կեղծանուններով վերլուծական Հոդվածներ է Հրատարակում, աշխատում երիտասարդական խմբերի Հետ, դասախոսություններ կարդում Հայ Ժողովրդի պատմության մասին:

Հաճախակի Հրավիրվում է տարբեր երկրների Հայ Համայնքներ՝ դասախոսություններ կարդալու: Նա փայլուն տիրապետում էր ֆրանսերենին, չեխերենին, գերմաներենին, թուրքերենին և ռուսերենին:

Բաղդասար Մինասյանը պարգևատրվել է Մեծի Տանն Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Տ. Տեր Խորեն Կաթողիկոս Բարոյանի կողմից «Մեսրոպ Մաշտոց» օսկե մեդալով՝ «ի գնահատանք կրթադաստիարակչական ասպարեզում իր տարիների գործունեության»: Մասնակցել է ՀՅԴ XIX (Բեյրութ) և XX (Վիեննա) ընդհանուր ժողովներին: Բաղդասար Մինասյանը մահացել է 1977/թ. Թեհրանում ազատազրկման տարիներից ձեռք բերած հիվանդության պատճառով: Նա մինչև վերջ էլ մնաց որպես խորհրդային վարչակարգի անզիջող Հակառակորդ Հոդվածներում պարբերաբար կրկնում էր այն միտքը, որ մեր առաջին թշնամին Սովետական Միությունն է, երկրորդը՝ Թուրքիան:

Թ ՈՒՄԼԵՆՅԱՆՅԵՐ

Ղարադաղի ամենանշանավոր գերդաստանը կարելի է համարել Մեշափարա գավառակի Ողան գյուղից ծագած Թումանյանց (կամ Թումանյան) գերդաստանը: XIX դարի վերջին և XX դարի սկզբին նրանց անունը հայտնի էր ոչ միայն ողջ Իրանում, այլև Ռուսաստանի և Եվրոպայի առևտրաֆինանսական համապատասխան շրջանակներում:

Այդ տոհմի մասին տեղեկություններ ունենր 1735 թվականից՝ մեղիք Սարգսից, ով ապրել է Մեշափարա գավառակի Ողան գյուղում, եղել է դարբին, ունեցել է սեփական արհեստանոց, պատրաստել է գյուղատնտեսական բազմազան գործիքներ՝ խոփ, կացին, ցաքհատ, թոխուր, պայտեր, գամեր և այլն: Երկաթագործությունը Թումանյանցների տոհմական արհեստն էր, որով զբաղվել են մի քանի սերունդ՝ մեղիք Սարգիսը, այնուհետև նրա որդի Թումանը, ապա թոռը՝ Հարությունը¹⁸:

¹⁸ Հովսեփյան, 2009, հատ. I, էջ 118-119:

Հարությունը, ով իր անվան կողքին կրում էր «Մահտեսի»¹⁹ մականունը, հիմնեց Թումանյանց առևտրային տունը: Նա ունեցել է չորս տղա՝ Սիմոն, Սարգիս, Խաչատուր և Չաքարիա:

Սիմոնի (նա նույնպես կրում էր «Մահտեսի» մականունը) զավակներն էին Համբարձումը և Իսկուհին (ամուսնու ազգանվամբ՝ Հակովբեան): Վերջինս Թավրիզի «Հայ կանանց բարեգործական միության» հիմնադիրներից էր: Նրա հուշերը 1970-ականների սկզբներին հրատարակվեցին «Ալիք» օրաթերթում և Բոստոնի «Հայրենիք» ամսագրում: Իսկուհին մահացավ 1973թ. Համբուրգում 102 տարեկան հասակում:

Սարգիսի զավակներն էին Վարդանը, Միքայելը և Եղիսաբեթը: Խաչատուրի որդիներն էին Ստեփանը և Լևոնը: Չաքարիայի որդիներն էին Գրիգորը և Արտաշեսը²⁰:

«Եղբ. Թումանյանց առևտրային տունը» իրավաբանորեն գրանցվել է Թավրիզում 1880-ական-

¹⁹ «Մահտեսի» էին անվանում Երուսաղեմ ուխտի գնացած քրիստոնյաներին:

²⁰ «Ալիք», 1976, 3 ապրիլի, թիվ 72:

ների սկզբներին: Սակայն ՄաՀտեսի Հարուժյունը առևտրային գործունեությունը սկսել էր դեռ 1840 թվականից: Նույն ժամանակաշրջանից Հարուժյունը Ղարաղաղից երկաթե պայտեր և գյուղատնտեսական գործիքներ էր փոխադրում Թավրիզ, որտեղ դրանք մեծ պահանջարկ էին վայելում: Նա շատ հագործում էր Ղարաղաղի Խանագազ գյուղի մերձակայքում առկա երկաթի հանքավայրերը: 1870 թ. նրանք կառավարության հետ Իրանի բանակի Հեծելազորին պայտեր ու գամեր մատակարարելու պայմանագիր են կնքում օգտագործելով Խանագազի երկաթահանքի հումքը²¹: Չնայած կարծիքների, որ նա այդ երկաթը ստանում էր Ռուսաստանից՝ Խուդափերինի կամրջով²²: 1880 թ. առևտրային տոները հիմնել են կամավելի ճիշտ կլինի ասել՝ իրավաբանորեն գրանցել են Հարուժյունի չորս տղաները՝ գործակցությամբ իրենց մորաքրոջ որդիների՝ Հակոբ և Ղազար Հակոբյանների: Նախնական շրջանում եռանդուն գործունեություն են ցուցաբերել ՄաՀտեսի Սիմոնը՝ Մոսկվայում, Սար-

²¹ Հովսեփյան, 2009, հատ. I, էջ 118-119:

²² «Ալիք», 1976, 3 ապրիլի, թիվ 72:

գիսը՝ Բաբվում և նրանց մորաքրոջ որդի Հակոբը՝ Թավրիզում: Վերջինս վաղաժամ մահանում է, և նրան փոխարինում է Բաղդասար Մելիք-Սարգսյանը, ով նույնպես Թումանյանցների ազգականն էր: Բաղդասարը հետագայում Մոզաֆեր Էդ Դին շահի կողմից արժանանում է չքանչանի: Իշխան Հովսեփ Արղուժյանն ու Նիկոլ Դումանը մտերիմ էին Բաղդասարի և նրա եղբոր Համբարձում Մելիք-Սարգսյանի հետ: Խանասորի արշավանքի խորհրդակցությունն ու նախնական աշխատանքները Բաղդասարի տանն էին տեղի ունենում: Համբարձում Մելիք-Սարգսյանը մասնակցեց Խանասորի արշավանքին, և այդտեղից մտերմություն ձևատատվեց նրա ու Եփրեմի միջև: Նա նաև գործուն մասնակցություն ունեցավ սահմանադրական հեղափոխությանը²³:

Դեռ 1889 թվականին Սարգիսը մեկնում է Ստոկհոլմ, պատվիրում է երկու բեռնատար շոգենավ՝ իրենց ապրանքը Պարսկաստանից Ռուսաստանի շուկաներ և ռուսական ապրանքներն էլ Պարսկաստանի շուկաներ տեղափոխելու համար:

²³ «Ալիք», 1976, 3 ապրիլի, թիվ 72:

Ընդ որում, նա արժանանում է շվեդական կատարվածության շքանշանի²⁴: Այդ շոգենավերի անուններն էին «Մուխասաղա» և «Վահան»: Մեկ շոգենավ էլ գնում են Բաքվից: Եղբայրները Բաքվի ամենաաչքի ընկնող թաղամասում կառուցում են չորս մեծ տուն:

Թումանյանց չորս եղբայրները Հայրենի Ողբում կառուցում են երկհարկանի ընդարձակ առևտրի տուն՝ Յմբարձրությամբ պարիսպով: Այստեղ Թավրիզից զանազան ապրանքներ են բերվում ու վաճառվում շրջակա գյուղերի բնակչությանը:

Նման մի երկհարկանի ընդարձակ, պարսպապատ առևտրային տուն էլ 1907թ. Հիմնում են Մինջվան գավառակի Վինա գյուղում, որը գործկ էր մինչև 1937թ.²⁵: Այս շինությունը Թումանյանցների Համար ծառայել է նաև որպես տուն-ամստանոց: Այդ շրջանում նրանք Հաճախ էին ենթարկվում տեղական իշխանությունների կամայականություններին: Գավառի ավազակ խաները Հաճախ կողոպտում էին Թումանյանցների ունեցվածքը:

²⁴ «Հայրենիք», Բոստոն, 1934, թիվ 10, էջ 137:

²⁵ «Ալիք», 1970, 19 հունվարի, թիվ 13:

«Եղբ. Թումանյանց առևտրային տան» շրջանառության մասին պատկերացում կազմելու Համար թավական է նշել, որ 1876թ. եղբայրներից մեկը՝ Սիմոն Թումանյանցը, Ռուսաստան էր արտաՀանել 90098 ռուբլու և Իրան ներմուծել 12450 ռուբլու ապրանք: Հաջորդ տարի նրա առևտրային շրջանառությունը կազմել է 88901 ռուբլի արտաՀանման և 19427 ռուբլի՝ ներմուծման գծով⁶:

«Եղբ. Թումանյանց առևտրային տունը» XIX դարի վերջին և XX դարի սկզբին խոշորագույն էր Իրանի Հայկական առևտրային տներից: Այն բացառիկ կարևոր դեր ուներ Իրանի տնտեսական կյանքի ամենատարբեր բնագավառներում: Կարճ ժամանակում դարձավ Իրանի խոշորագույն առևտրաֆինանսական Հաստատություններից մեկը: Թումանյանցները բաժանմունքներ ունեին Հյուսիսային Իրանի բոլոր խոշոր քաղաքներում՝ Թավրիզում, Ուրմիայում, Ղազվինում, ԹեՀրանում, Ռաշտում, Էնզելիում, ԲարՖոուշում, ՀաՀրուզում,

⁶ Ստեփանյան Ս. Խ., Հայ առևտրական բուրժուազիան Իրանի տնտեսական կյանքում, Հայաստանի ԳԱ հրատ., Երևան, 1992, էջ 72:

Սաբզևարում, Մաշհադում և արդեն XIX դարի վերջին միլիոնանոց առևտուր էին վարում Ռուսաստանի և արևմտյան Եվրոպայի հետ: Առևտրային տոնը մասնագիտացել էր չոր մրգի, բամբակի, մետաքսաբոժոժի արտաճանման բնագավառում: Այդ ապրանքների մի մասը Մոսկվայի, Բաքվի, Աստրախանի բաժանմունքների միջոցով արտաճանվում էր Ռուսաստան և Արևմտյան Եվրոպա: «Նրա առևտրական շրջանառությունն այնքան է աճել, որ Իրանի այսպես կոչված «ռուսական ազդեցության գոտում», առանց նրա գրասենյակի Համաձայնության առևտրական ոչ մի գործարք չի կարող կնքվել...», - նշում էր գնդապետ Ցիսը 1916թ.:

XX դարի առաջին տասնամյակը կարելի է Համարել «Թումանյանց առևտրային տան» ծաղկման և փառքի գագաթնակետը:

Ռուսաստանի հետ առևտրային գործարքները հեշտացնելու և տեղական իշխանությունների կամայականություններից իրենց ապահովագրելու Համար Թումանյանց չորս եղբայրներից երկուսը ռուսական Հպատակություն են ընդունում և Հաստատվում Բաքվում: Առևտրական տան հետագա ողջ

գործունեությունը սերտորեն կապվում է ինչպես Իրանի, այնպես էլ Ռուսաստանի հետ: Այստեղ նրանք դառնում են Նոբելի, Լիանոզուների բաժնետիրական ընկերությունների, ինչպես նաև «Դինամի» և Բաքվի նավթային ընկերության բաժնետերեր²⁷:

Թումանյանց եղբայրները զբաղվում էին նաև բամբակի արտաճանմամբ: Արտաճանումը իրականացվում էր Բանդար Գյազից: XX դարի սկզբին նրանք Բանդար Գյազում հիմնեցին և գործարկեցին բամբակազտիչ գործարան²⁸: Թումանյանցները որոշակի հետաքրքրություն էին ցուցաբերում իրենց առևտրական գործարքների հետ սերտորեն կապված վերամշակող ձեռնարկությունների շինարարության նկատմամբ:

Մարաղայի, Բինաբի, Միանդաբի շրջաններից Ռուսաստան էր արտաճանվում տարեկան 500000 փուլ չոր միրգ, ինչպես նաև՝ 120000 փուլ նուշ և ընկույզ: Այդ ծավալի մեջ ամենամեծ բաժինը պատկանում էր Թումանյանց եղբայրներին: Թուման-

²⁷ Ստեփանյան, 1992, էջ 101:

²⁸ Ստեփանյան, 1992, էջ 121:

յանց եղբայրները XIX դարի վերջին Ռուսաստան էին արտաՀանում տարեկան ավելի քան 1 մլն ռուբլու ապրանք, որից շուրջ 300000 ռուբլին կազմում էր չոր մրգի արտաՀանումը:

«Եղբ. Թումանյանց առևտրային տունը» Համարվում էր նաև Իրանի խոշորագույն մետաքս և մետաքսաբոժոժ գնող և արտաՀանողը: 1905/թ նրանք Հույն Խյալիկաոսի Հեստ միասին Գիլանում գնել են 27000 բաթման մետաքսաբոժոժ, որն այդ տարվա խոշորագույն գործարքներից էր: Մետաքսաբոժոժը Կասպից ծովով, Ռուսաստանով արտաՀանվում էր Ֆրանսիա:

«Եղբ. Թումանյանց առևտրային տունը» Ռուսաստանից Իրան էր ներմուծում շաքար: Այդ նպատակով ընկերությունը Էնզելիում կառուցեց մի պաՀեստ, որտեղ տեղավորվում էր մինչև 100 վագոն շաքար²⁹:

Առևտրային տունը XX դարի սկզբից սկսեց զբաղվել նաև թորած նավթի ներմուծմամբ՝ Ռուսաստանից Իրան: 1905/թ. Սարգիս Թումանյանյը դիմել էր Ռուսաստանի ֆինանսների նախարար

²⁹ Ստեփանյան, 1992, էջ 87-91:

Վիտտեին՝ խնդրելով Բաթումի վրայով առանց մաքսի Իրան ներմուծել թերթավոր երկաթ, որն անհրաժեշտ էր նավթի Համար թիթեղամաններ պատրաստելու Համար³⁰:

Առաջին Համաշխարհային պատերազմի նախօրյակին առևտրային տան կապիտալն Իրանում կազմում էր 3 մլն թուման և ևս 1,5 մլն թուման՝ պարտքի Հանձնառության ձևով: Հոկտեմբերյան թուլքիկյան Հեղափոխությունից Հետո Ռուսաստանում Թումանյանցների առևտրային տան ամբողջ ունեցվածքը՝ շուրջ 17 մլն ռուբլի, բռնագրավվեց թուլքիկյան կողմից:

Թումանյանց եղբայրների առևտրի զգալի մասը իրականացվում էր Կասպից ծովով, որտեղ նրանք ունեին 2 նավ 1269,5 տոննա տարողությամբ: Միայն ամենախոշոր առևտրային ընկերությունները կարող էին իրենց թույլ տալ սեփական բռնատար նավեր պաՀելը: 1902/թ. Թումանյանցները այդ նավերով Բանդար Գյազ նավահանգստով ներմուծել են 69339 փուլթ և արտաՀանել են 42910

³⁰ Ստեփանյան, 1992, էջ 98:

փուլի ապրանք³¹, ինչը ավելի շատ էր, քան Հայկական մնացած առևտրային տների՝ նույն նավահանգստով իրականացված ծովային առևտրաշրջանառությունները միասին վերցրած:

Դեռ XIX դարի վերջից Թումանյանց եղբայրների գործունեության մեջ սկսեց գերակշռել ֆինանսաբանկային գործարքները³²: Առևտրական շրջանառության արագ աճը և այն հանգամանքը, որ նրանք՝ որպես արտահանողներ, գործ էին ունենում տարբեր դրամական միավորների Հետ, Հարություն Թումանյանցի որդիներին ստիպեցին զբաղվել նաև դրամական գործառնություններով: Եվ մինչև 1890-ական թվականները նրանց գործունեության հիմքը կազմում էին առևտրական գործարքները, ապա դրանից Հետո առաջին պլան մղվեց ֆինանսական գործարքները: Իրականացնելով խոշոր առևտրային շրջանառություն և մշտապես կանխիկ դրամի անհրաժեշտություն զգալով Թումանյանցները Ռուսաստանից ձուլածո արծաթ էին ներմուծում և մատակարարում էին դրամահա-

³¹ Ստեփանյան, 1992, էջ 101:
³² Ստեփանյան, 1992, էջ 18:



ՁԱՐԴԱՅ, ԹՈՒՄԱՆՅԱՆՑ ԵՂԵՄՅԱՆՑԵՐ
ՁԱՆԻՑ: ՍՆՍՈՆ, ՍԱՐԳՍՅ, ՁԱՅԱՐԻՍ ԵՎ ԱՄՉՍՏՈՐՈ



Թումանյանց առևտրային տան գրասենյակը Ողանում




ՆՂԱՐԳ ԹՈՒՄԱՆՅԱՆՑ
18 Յ. Թ. 40



ТОРГОВЫЙ ДОМЪ
Бр. ТУМАНЬЯНЦЪ
В. №. 1840

Телефонны: „ТУМАНЬЯНЦЪ“.



Թումանյանց առևտրային տան զինանշանը

Թումանյանց առևտրային տան գրասենյակը Ողանոմ (մեր օրերում)



Թումանյանց առևտրային տան գրասենյակը Վինայոմ (մեր օրերում)



Ալեքսանդր Մելիք-Ազարյանց

Բասմա բեկ Մելիք-Մոշկամբարյան



Ավետիս Նազարբեկյան

Գևորգ Մելիք-Ղարագյուզյան



Բաղդասար Մինասյան



Սաթենիկ Մելիք-Աղաջանյան (Գ. Եգանյանի կինը)



Համբարձում Գրիգորյան



Համբարձում Առաքելյան

տարանին՝ դրա դիմաց ստանալով որոշակի քանակությամբ արծաթե դրամ: Այդ ժամանակ ընդամենը մի քանի ընկերության էր թույլատրված դրամաձատարանին արծաթ մատակարարել: Թումանյանցները դրամաձատարանին տարեկան 4000 փուլթ արծաթ էին մատակարարում, իսկ 1894 թվականից՝ 6000 փուլթ: Թումանյանցները իրենց Հաճախորդների Համար ընթացիկ Հաշիվներ էին բացում, ընդունում ավանդներ և տրամադրում վարկեր, ինչպես նաև զբաղվում էին պարտամուրհակների Հաշվառմամբ և դրամի փոխադրմամբ: Իրանում ռուսական գործերի Հավատարմատար Ա. Սոմովի վկայությամբ Շահրուդում բոլոր բանկային գործարքները գտնվում էին Թումանյանց ընկերության ներկայացուցչի ձեռքում: Ռաշտում պարտամուրհակների Հաշվառմամբ զբաղվում էին Հաշվարկային և Շահնշահական բանկերի բաժանմունքները և Թումանյանցների գրասենյակը: Ղազվինում Հիմնական վարկային Հաստատությունները Հաշվարկային բանկի գործակալությունը, Թումանյանց եղբայրները և բանկիր Հաջի Մուհամեդ Ալի Աղան էին: Թումանյանցների առևտրաֆինանսա-

կան գործարքները հյուսիսային Իրանում այնքան էին ընդլայնվել, որ գնդապետ Յիսի խոսքերով Իրանում արմատավորված կարծիքի համաձայն, ռուսական ռուբլու կուրսը հաստատվում է Թումանյանց գրասենյակի կողմից: Սակայն առևտրային տան ֆինանսական գործունեությունը չէր սահմանափակվում Իրանի հյուսիսային շրջաններով: Ընկերությունը բաժանմունքներ ուներ նաև Բաքվում, Աստրախանում, Մոսկվայում, Վիեննայում, Բեռլինում, Փարիզում, Լոնդոնում, Կ. Պոլսում և ֆինանսական գործառնություններ էր կատարում նաև Ռուսաստանի և Արևմտյան Եվրոպայի խոշորագույն առևտրաֆինանսական կենտրոններում:

Թումանյանցները զգալի կապիտալ ունեին, որը հնարավորություն էր տալիս նշանակալի վարկեր տրամադրել: Նրանց վարկերը նկատելիորեն գերազանցում էին իրանական մյուս հաստատությունների վարկային գործարքները՝ չնայած կազմում էին առևտրային տան եկամուտների ընդամենը 26 տոկոսը: Հարկ է նշել, որ Թումանյանցները վարկեր էին տալիս ոչ միայն մասնավոր անձանց, այլև իրանական կառավարությանը: Օրինակ՝ Մոզաֆեր Էյ

Ղին շահի իշխանության տարիներին կառավարության պարտքը Թումանյանցներին կազմում էր 500000 ղուան: Իրանական կառավարության պարտքը Թումանյանցներին հատկապես արագ էր աճում 1905-1911 թվականների իրանական Հեղափոխության շրջանում, երբ կառավարությունը մշտապես դրամի կարիք էր զգում: 1906թ. Հեղափոխական իրադարձությունների շրջանում, երբ պետական գանձարանը դատարկ էր, Թումանյանցները պետության կարիքների համար կառավարությանը տալիս էին օրական 10, 20, երբեմն էլ մի քանի հարյուր հազար թուման: Հետագա տարիներին ևս իրանական կառավարությունը մեկ անգամ չէ, որ դիմել էր Թումանյանցների ֆինանսական օգնությանը: 1912թ. կառավարության պարտքը Թումանյանցների առևտրային տանը կազմում էր 1500000 ղուան: Առևտրային տունը իրանական մյուս բանկային հաստատությունների հետ պայքարում այնքան ամրապնդվեց, որ սկսեց մրցակցել նաև Շահնշահական բանկի հետ: Շահնշահական բանկի և մյուս բանկային հաստատությունների հետ

Թումանյանցների մրցակցությունը կանխորոշելից նրանց դաշինքը Հաշվարկային բանկի հետ:

Թումանյանց եղբայրների առևտրական տան ֆինանսական և բանկային գործունեությունը եղակի երևույթ էր Իրանի տնտեսական կյանքում՝ Միկնույն ժամանակ, կարելի է վստահությամբ նշել, որ առևտրական ու ֆինանսական գործարքների սերտաճումն Իրանում հայ վաճառականություն գործունեության բնորոշ գծերից էր: Խորասանում, Աստրաբադում և Մազանդարանում բամբակի արտադրության դիմաց նրանք զգալի վարկեր էին տրամադրում³³:

1906թ. Իրանում որոշում էր կայացվել ազգային բանկի հիմնադրման վերաբերյալ, որի համար անհրաժեշտ գումարը պետք է հավաքվեր բաժանորդագրության միջոցով: Առաջին հինգ բաժանորդներից մեկը Հենց Թումանյանցներն էին³⁴: Նրանք Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ձեռք էին բերել նաև Իրանի որոշ առևտրային ճանապարհների շահագործման իրա-

³³ Ստեփանյան, 1992, էջ 131-139:

³⁴ Ստեփանյան, 1992, էջ 140-141:

վանքները, մասնավորապես՝ Էնզելի-Ռաշտ-Թեհրան, Մաշադիսեր-Թեհրան³⁵:

Նրանք երբեմն համագործակցում էին պարսիկ վաճառականների հետ: Օրինակ՝ 1899թ. Թումանյանց եղբայրները համաձայնության եկան Հաջի Մուհամեդ Հուսեին Էմին Էս-Չարբի, Աղա Աբդուլ Բադի Աբբասի, Հաջի Աբդուլ Ռաջապ Օսկուլիի և Հաջի Մուհամեդ Ալի Քաշիի հետ: Նրանք պայմանագիր կնքեցին Հաշվարկային բանկի հետ, որի համաձայն՝ բանկը պարտավորվում էր վերոհիշյալ վաճառականների համար Բաքվում գնել և Թեհրան ուղարկել 100000 փուլթ ցորեն: Ապրանքը ժամանակին գնվել և մատակարարվել էր³⁶: Սակայն սա հազվադեպ երևույթ էր: Սովորաբար հայ վաճառականները համագործակցում էին միմյանց հետ:

1916թ. Կապանի տարածաշրջանում տիրող սաստիկ սովն ու պարենային պակասը որոշ չափով մեղմելու նպատակով Թումանյանց առևտրային տունը Ղարադաղից 6000 փուլտ ցորեն է փոխադրում Կապանի Սևաքար, Չափնի, Ըրկենաց, Արծ-

³⁵ Ստեփանյան, 1992, էջ 144:

³⁶ Ստեփանյան, 1992, էջ 105:

վանիկ գյուղի ժողովրդին մատչելի գներով վաճառելու համար³⁷: Այդ տարիներին Կապանի տարածաշրջանի բնակավայրերը հաճախակի էին Ղարադաղից ցորեն ներմուծում: Ի դեպ, Լեոնհայաստանի անկումից և դեպի Պարսկաստան իրականացված գաղթից հետո Թումանյանցների մոտ որպես կառավարիչ աշխատել է³⁸ խլաթաղցի Գեղեոն Տեր Մինասյանը³⁹:

1919թ. Թումանյանցները Իրանի կառավարության հետ պայմանագիր են կնքում Կասպից ծովի հարավային ափերի ձկնորսարանները վարձակալելու և շահագործելու համար: Չեռնարկը, սակայն, մեկ տարուց ավել չտևեց արտազանման շուկայի բացակայության պատճառով⁴⁰ (բոլշևիկյան Ռուսաստանը այլևս Իրանից ձկնամթերք չէր ներմուծում):

³⁷ «Մշակ», 1916, 14 դեկտեմբերի, թիվ 278:

³⁸ Գեղեոն Տեր-Մինասյան (1865-1937): Հասարակական-քաղաքական գործիչ: Ծնվել է Կապանի տարածաշրջանի Խըլաթաղ գյուղում: Չանգեգուրի 1918-1921 թվականների գոյամարտի կազմակերպիչներից է: Լեոնահայաստանի կառավարության անդամ: Ձոն է գնացել ստալինյան բռնաճշմաններին:

³⁹ Հարությունյան Ա., Գարեգին Նժդեհի 1921թ. դատավարությունը, «Ազգայնական ակումբ» հրատ., Երևան, 2001, էջ 19-20:

⁴⁰ Ստեփանյան, 1992, էջ 118:

Թումանյանցները մասնակցում էին նաև հյուսիսային Իրանի անտառային ուեսուրսների շահագործմանը: Նրանք զգալի անտառային տարածքներ էին վարձակալել Մազանդարանում: Ֆրանսիացի մասնագետների կողմից իրականացված հետազոտությունը ցույց է տալիս, որ այդ տարածքում կար 185-300 հազար հասուն կաղնի ծառ: Օտարերկրյա կազմակերպությունները հետաքրքրություն էին ցուցաբերում այդ փայտանյութի գնման և արտահանման գործում: Ֆրանսիական ընկերություններից մեկը Թումանյանցներին առաջարկում էր յուրաքանչյուր քառակուսի մետր կաղնեփայտի համար վճարել 10 ռուբլի, ընդ որում, հատումը և առաքումը ընկերության հաշվին: Նախատեսվում էր վարձակալական պայմանագիրը կնքել 24 տարով⁴¹:

Թումանյանցների առևտրային տան մեծ բաժանմունքներից մեկը Մազանդարանում էր՝ 7 մասնաճյուղով, 2 բամբակի գործարանով և ընդարձակ կալվածքներով: Կենտրոնական գրասենյակը գտնվում էր Քիաքոլա գյուղում, որտեղ կար բամբակի գործարան, բոժոժ չորացնելու արտադրա-

⁴¹ Ստեփանյան, 1992, էջ 121:

մաս և նորակառույց բնակարաններ՝ գրասենյակի և գործարանի պաշտոնյաների համար: Արդտևյանց էր կացված էլեկտրական լուսավորություն, կային տեղափոխություն միջոցներ, իսկ գործարանին կից կար շուկա: Մազանդարանի կառավարիչն էր Գալուստ Սահակյանը:

«Եղբ. Թոմասյանց առե-գործային գոմեր» իր մասնակցո-թյունն է ունեցել պարսկական սահմանադրական շարժումներին՝ նյութական աջակցո-թյուն և փոխառո-թյունները պաշտոն Եփրեմ Դավթյանին և Հայ Հեղափոխականներին: Հասկանալի է, որ Մազանդար էր Թոմասյանցների գոմեր: Թոմասյանցների առե-գործային գոմն սկսանալիս վերստին պարսից կառավարո-թյան հասցի շնորհումով դրվում էր «Շիր-օ-Խորշիդ» (Նորոգված առյուծ, էփրեմ, վերստին ըստ) պարսկական խորհրդանշանը⁴²:

XIX դարի վերջից առևտրական կապիտալը ներթափանցեց գյուղ: Խոշոր ձեռնարկատերերը Հետաքրքրություն էին ցուցաբերում Հողի նկատմամբ և սկսում են գնել ինչպես Հողեր, այնպես էլ ամբողջական գյուղեր: Թումանյանները Ղարադա-

⁴² «Ալիք», 1976, 3 ապրիլի, թիվ 72:

ղում: Մազանդարանում, Գիլանում, Ղազվինում վիժխարի Հողային տարածություններ են ձեռք բերում⁴³: 1915թ. նրանք 3000 դեյաստին Հող գնեցին Սալավաթի շրջանում, չնայած շահեստների ռազմատենչ ցեղերը մշտապես Հարձակումներ էին գործում այդ շրջանի գյուղերի վրա: Առևտրական տան ներկայացուցիչ Թովմաս Թումանյանցը Թավրիզի մոտ գտնվող Գյունեյ-Արզանակի շրջանում ձեռք էր բերել 12 գյուղ, որոնց ընդհանուր արժեքը մոտ 100000 թուման էր: Հետաքրքրական է, որ Թումանյանցները վարձակալում էին նաև պետական Հողեր: Օրինակ՝ իրանական կառավարությունը տարեկան 45000 թուման վճարի դիմաց նրանց երկարատև ժամկետով վարձակալության էր տվել Մազանդարանի պետական Հողերը: Ռուսական հյուպատոսական գործակալի վկայությամբ դեպքեր էին լինում, երբ Թումանյանցները գյուղեր էին գնում ոչ թե դրամով, այլ մի քանի Հարյուր փամփուշտի դիմաց⁴⁴:

⁴³ Ստեփանյան, 1992, էջ 23, 148:

⁴⁴ Ստեփանյան, 1992, էջ 148-149:

1910-ական թվականներին Թուամանյանցների առևտրային տունը պատրաստվում էր թեևակոխելու մի նոր շրջան: Ստեղծված պայմանները նրանց ստիպում էին մղվել դեպի Համաշխարհային շուկա: Երրորդ սերնդի ներկայացուցիչները (գլխավորապես Վարդանն ու Արտաշեսը) աշխատում էին կապ հաստատել եվրոպական առևտրական և արդյունաբերական Հաստատությունների հետ: Ծրագրում էին անտառների, հանքերի շահագործման միջոցներ ստեղծել, ոմանք էլ գերադասում էին մասնակցություն ունենալ Ռուսաստանի արդյունաբերական ձեռնարկություններում՝ նավթային, բեռնափոխադրումների և այլ ոլորտներում: Ռուսաստանի բոլշևիկյան հեղափոխության հետևանքով Թուամանյանցների ամբողջ շարժական և անշարժ գույքը Ռուսաստանում բռնազավթվեց. մոտ 4000 տոննա բամբակ, շուրջ այդքան բրինձ, չոր մրգեր, այլև՝ տներ, նավթահորեր, գործարաններ, չորս բեռնափոխադրող նավ, բանկերում ունեցած դրամական միջոցներ և արժեթղթեր: Ռուբլու աղբյուրը ցամաքեց, այլևս անհնար էր Ռուսաստանից այդ ամենը ետ ստանալ: Արդյունքում Իրանում պահ առնված

դրամները վերագարձելը դժվարացավ, և ընկերությունը սնանկացավ: Իրանում գտնվող ձեռնարկությունները պարտատերերի պահանջով կալանքի տակ առնվեցին: Ուժեղ և ազդեցիկ պարտատերերը իրենց պահանջները ետ ստացան, իսկ թույլերը մնացին ձեռնունայն: Առաջին Համաշխարհային պատերազմը և ցարական Ռուսաստանի անկումը պատճառ հանդիսացան Թուամանյանցների նյութական քայքայման և անկման Համար: Եղբայրներ Թուամանյանցների առևտրային տան լուծարման գործընթացը սկսվեց մեծ ուշացումով՝ 1935թ.⁴⁵:

Հետագայում երկրորդ աշխարհամարտից հետո ընկած ժամանակաշրջանում, անանկություն գործընթացի շրջանակներում Թուամանյանցների կալվածքների վաճառքից որոշ գումարներ Հատկացվեցին ժառանգներին: Խաչատուրի որդի Լևոնին այդ գումարը բավականացրեց մի տուն գնելու համար: Իսկ Չաքարիայի որդի Գրիգորի կինը՝ Շուշանիկը, մերժեց ընդունել որոշված գումարը և երկար տարիներ դատավարության մեջ էր:

⁴⁵ «Ալիք», 1935, 6 հունիսի, թիվ 44:

Ընտանյան մասը մտնում էր մեծ-մեծ Թուրքիայի Գերբաբայանի ասպրը, որ մեկ դար առաջ ժառանգել էր լեռնային Ղարադաղում և Հեյրաբեյի բարձրանալով ու պայթածանալով՝ միասնամասնակի փայլեց երկնակամարում, բայց Հանկարծակի Ռեվոլյուցիոն-անհեթանոսական հասարակական իրադարձություններով փոխարկվեց ժողովում:

Թումանյանցները անչափ հայրենասեր ու ժողովրդասեր էին, նրանց բարերարությամբ հազարավոր հայեր ընտանիքի ու ապրուստի տեր դարձան: Թումանյանց եղբայրները երբեք չէին մոռանում իրենց ծննդավայրը: Նրանք ղարադաղահայրենիքի փրկությունը կապում էին խաների լծից ազատման հետ և այդ նպատակով իրականացնում էին Ղարադաղի հայաբնակ գյուղերի սեփականության իրավունքով ձեռքբերումը: Նրանք Ղարադաղում գնեցին 19 գյուղ, որոնցից գանձում էին չնչին հարկ: Թումանյանցների՝ Ղարադաղում ունեցած հայաբնակ գյուղերն էին՝ Ողան, Վինա, Քարագլուխ, Ամրագուլ, Գինդիման, Նեփեշտ, Մրդգիթ, թրքաբնակ՝ Բալան, Բեհրուզ, Բրզվեր, Չալանդարա, Քելեյբար, Շեխուսենլու, Ահմադյու,

Մաջիդլու, Սուլթան, Ղարադոշ, Դաշարասի, Քելիշքյանդի⁴⁶:

Հայկազյան դպրոցը 1885/թ. Թավրիզի Լիլավա թաղամասում Սբ. Սարգիս եկեղեցու բակում, Հիմնում էն Չաքարիա, Խաչատուր, Սարգիս և Սիմոն Թումանյանցները, որոնք այդ ժամանակ Թավրիզի մեծահարուստներից էին: 1887/թ. մահանում է Չաքարիայի դուստր Թամարան, ով այդ դպրոցի սաներից էր և, ի հիշատակ վերջինիս, կառուցվում է «Թամարյան» մասնաշենքը, որից հետո դպրոցը ստանում է Հայկազյան-Թամարյան անվանումը⁴⁷: Այդ դպրոցի մեծ ու փառավոր շենքը, որը կառուցվել է Թումանյանցների կողմից, դեռ 1930-ականների դրությամբ իր նմանը չունեցող Պարսկաստանում⁴⁸: 1962-1963 ուսումնական տարում այս դպրոցը ուներ 742, 1981-82/թթ.՝ 334 աշակերտ⁴⁹: Դպրոցը գործում է նաև մեր օրերում: «Մինայան» դպրոցի հիմնադիրները նույնպես Թումանյանցներն էին⁵⁰:

⁴⁶ Հովսեփյան, 2009, հատ. I, էջ 118-119:

⁴⁷ «Ալիք», 1969, 8 մայիսի, թիվ 97:

⁴⁸ «Ալիք», 1931, 11 հունիսի, թիվ 12:

⁴⁹ «Ալիք», 1962, 4 դեկտեմբերի, թիվ 263:

⁵⁰ «Ալիք», 1931, 11 հունիսի, թիվ 12:

1898թ. Վարդան Թումանյանցի կողմից կառուցվում է Ղարադաղի Մեշափարա գավառակի առաջին դպրոցը՝ Ողան գյուղի Հռիփսիմյան դպրոցը՝ ի հիշատակ իր հանգուցյալ մոր՝ Հռիփսիմեի⁵¹: Դպրոցը երկսեռ էր, ուներ չորս դասասանյակ: «Մենք այդ դպրոցին հանդիպեցինք 1904-1907թթ.,- գրում է Ժամանակի Հողվածագիրը: Թվում էր, թե որևէ քաղաքային դպրոցի աշակերտության առաջ ենք կանգնած. աշակերտ-աշակերտուհիները հագնվել էին միատեսակ, մաքուր համազգեստ, կարգապահույթունն էլ օրինակելի էր: Ողանի դպրոցի գրենական բոլոր պիտույքների մատակարարումը և, ընդհանրապես, դպրոցի բոլոր ծախսերը իրենց վրա էին վերցրել Թումանյանցները:

1911թ. Մինջվան գավառակի՝ Թումանյանցներին պատկանող Վինա գյուղում վերջիններիս կողմից բացվում է «Մարգայան» դպրոցը: Դպրոցի ծախսերը ամբողջությամբ հոգում էին Թումանյանցները:

Այդ տոհմի անսահման հայրենասիրությունը դրսևորվեց նաև Հետագա սերունդներից որոշների

⁵¹ «Ալիք», 1933, 12 հոկտեմբերի, թիվ 27:

մեջ. Սիմոն Մահտեսու որդին՝ Վարդան աղան, 1930թ. (Թումանյանց չորս եղբայրներն արդեն մահացած էին) վերադարձավ Ղարադաղ՝ իրենց սեփական Վարդանաշեն գյուղը, և ապրեց այնտեղ մինչև խոր ծերույթյուն: Նա ուներ Ռուբեն անունով որդի և մի աղջիկ, որոնք ապրում էին ԱՄՆ-ում⁵²:

Հատ հայեր, հատկապես՝ ղարադաղցիներ, Թումանյանցների առևտրային հաստատություններում աշխատել և հարստացել էին:


Երկրորդ համաշխարհային պատերազմից Հետո տիկին Հուշանիկ Թումանյանը՝ Չաքարիայի հարս, սկսեց զբաղվել Թումանյանցների պարտքի ու պահանջի հարցերով: Նրան հաջողվեց նույնիսկ 100000 թուման գանձել, սակայն շուտով տիկին Հուշանիկը կնքեց իր մահկանացուն: Ասում են՝ նա ուներ հարուստ արխիվ⁵³:

1976թ. դրությամբ՝ Թումանյանց գերդաստանից Թեհրանում ապրում էին Լևոնի աղջիկը՝ Լիլյա

⁵² Հովսեփյան, 2009, էջ 118-119:

⁵³ «Ալիք», 1976, 3 ապրիլի, թիվ 72:

Հովսեփյանը, և Իսկուհի Թումանյանի որդի՝ բժիշկ
Գալուստ Հակոբյանը⁵⁴:



Մաս 5.....



ԴԱՎԱԽԿՆԵՐ, ԿՅՈՒՆԵՐ

«Ղըրրոտաղը մին սօրի-ն քըղ ա, Խ-նդո-ր աբ-
Հա-ան ճի-րը, ողը, իբլիբլան ախարրենեն, կը-
նըշկօք իեա-շաննեբը, ղօրո-ղ արաժ ժըմակնեն
Խակի քըղ կա-իշ ալ են մակալը ասըմ շըժ,
շի-նի Օմեն մին ղըրրոտղեցե Խնիբ սօրի-ն ա
Գիտալիս, Բա Ղըրրոտաղը Հինշ ա: Ըմա դե Հինշ
կարրա, որ ղըրրոտղեն ժողովո-րըն ենշա՛ իա-
սիբ ա, ենշա՛ խեղճ ա, որ կարրմ շի Խ-րան Գի-
Լօխը ո-ո-ո-ց պարպի՛ ըրիլո- պահի: Ըսքո-ժ
ղըրրոտղեցո-ց Խնդի մին երգիբ ա քո-աժ, որ օ-
րեշնեբը օնըն ղեշ, ամա դե Հինշ կարրա, որ
ղըրրոտղեցե՛ կարրմ շըն Ըսքո-ժեն քո-աժ ետ
բօլ փեշիշաշեն անե մո-դասիբլ երօնըն»¹:

Գի-նի Տեր-Պո-ղ ո-սեանց (ՎՆՂՄՂՄՆ, Հո-լի-ն 1912թ. ՈՅ)

¹ Ինդոր - նրա, սօրին - լավ, սիրուն, արիաւան - գուլպ,
քեաւշան - դաշտ, դօրուղ - արոտ, արոտավայր, չինքի -
որովիետև, մակալ - խոսք, ուռուց - առանց, փեշքշաշ - նվեր,
մուղախըլ - օգուտ:

⁵⁴ «Ալիք», 1976, 21 ապրիլ, թիվ 87:



Խմբագրական

Սիրելի ընթերցող, մեր գրքի այս մասը նախատեսված չէր ամբողջական աշխատանքում, բայց քանի որ պահանջ կար անդրադառնալու գավառակներին և գյուղերին առանձնակի, որպեսզի հատկապես բավարարեինք ղարադաղցիների սերունդների կարոտն առ իրենց պապենական բնակավայրերը, ստիպված կազմեցինք բնապատկերներ, որտեղ պիտի հանդիպեք կրկնություններ: Ինչպես կուզեք, վերնագրեր այս մասը, թող այն լինի հավելված կամ վերահիշատակում, բայց խմբագրի խորհրդով այն մնում է մեր աշխատանքում որպես կորսված հայկականությունը՝ ապագային հիշեցնելու հայրենական դաս: Հայցելով ընթերցողի ներողամտությունը և համբերությունը՝ մենք այս հատվածն անվանում ենք «Սևասթրի պատմության համառոտություն»:

Բարի ընթերցում..



Ղարադաղը ներքին բաժանումներով կազմված է յոթ գավառակից (որոշ ուսումնասիրողներ առանձնացնում են նաև ութերորդը՝ Արաքսպար գավառակը)՝ Դղմար կամ Դիղմար, Ուզումդուլ, Հասանով կամ Հասանաբաղ, Մնջլան կամ Մինջլան, Քեյվան, Մեշափարա, Քեյեբար: XIX դարի կեսերից սկսած Ուզումդուլ, Քեյեբար, Արաքսպար գավառակներում արդեն Հայաբնակ գյուղեր չեն հիշատակվում:

Ղարադաղի հայկական բնակավայրերի վերաբերյալ մեզ հասած գրավոր առաջին տեղեկությունը գտնում ենք Ստեփանոս Օրբելյանի «Պատմություն տանն Սիսական» աշխատության մեջ: Այստեղ հետագայում գրիչների կողմից Տաթևի վանքապատկան գյուղերի ցանկում ավելացված են նաև Ղարադաղի գավառի գյուղերը²: Ցանկի տարեթվի վերա-

² Երևանի Մատենադարան, Ձեռագիր, 6271, ԺԴ, ԺԷ դարեր, 1730, 1867, 1901 (Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն տանն Սիսական, Տաթև, էջ 679-680):

բերյալ Հստակ տեղեկություններ չկան. այն վերագրվում է 1781 թվականին³: Ըստ Գ. Սմբատյանի՝ Տաթևի վանքին Հարկատու գյուղերի նոր ցուցակը կազմվել է XVII դարի երկրորդ կեսին թուրք-պարսկական պատերազմներին Հաջորդած խաղաղ շրջանում, այլ ոչ Դավիթ Բեկից Հետո ընկած ժամանակներում: Իր տեսակետը անվանի պատմաբանը հիմնավորում է այն Հանգամանքով, որ Դավիթ Բեկի ապստամբության պարտությունից Հետո Կապանի տարածաշրջանի շատ գյուղեր դատարկվել կամ քվել են և չէին կարող Հայտնվել XVIII դարի վերջին կազմված ցանկում⁴: Այդ ցանկից Հետևում է, որ XVII դարի երկրորդ կեսին Տաթևի վանքին Հարկատու էր նաև Ղարադաղը՝ 44 Հայաբնակ գյուղերով, որոնք չեն ներառվել Այոնյաց պատմիչի հիշյալ աշխատության կերտման ժամանակաշրջանի՝ XIII դարի վերջին հիշատակված Տաթևի վանքապատկան գյուղերի ցանկում: Սակայն դա չի նշանակում, որ այդ գյուղերը պատ-

³ Աբրահամյան Ա., Ստեփանոս Օրբելյանի «Ժամանակագրությունը», ՀՍՍՌ Մատենադարան, Երևան, 1942, էջ 42-43:
⁴ Սմբատյան Գ., Դարձ ի շրջանս յուր. Մինասյան-Ղուկասյան տոհմի հետքերով, Երևան, «Զանգակ» հրատ., 2016, էջ 18:

կանում էին եկեղեցուն: Նրանք միայն եկեղեցական Հարկ էին վճարում, իսկ սեփականության իրավունքը այդ ժամանակ Համայնական էր կամ խանական-մելիքական: Այդ ցուցակում նշված է նաև դանձվող Հարկի չափը: Հ. Հովսեփյանը իրականացրել է այդ ցանկի ուսումնասիրություն և գյուղերի տեղորոշում, ինչի արդյունքում այդ ցուցակը Հարստացրել է նաև գյուղերի գավառապատկանությունով⁵:

Գյուղը XVII դարի վերջում ⁶	Փոփոխված անվանումը XX դարում ⁷	Գավառակը
Խնակահն	Խանագահ	Դզմար
Տոտնի	-	Դզմար
Կրլոյի	Ղուլուղի	Դզմար
Մարի	-	Դզմար
Ուշնեպին	Ուշտուբեն	Դզմար
Քալաչու	Քավանի-Քովնի	Դզմար
Կրլոյի	-	Դզմար
Մարդու	-	Դզմար
Լումայ	-	Հասանով
Զիակու	-	Հասանով
Հոյժ	-	Հասանով
Տամուրչի քեանդն	Մուսուշեն	Հասանով
Վեղան	Ողան	Մեշափարա

⁵ Հովսեփյան, 2009, հատ. I, էջ 142-143:
⁶ Աբրահամյան 1942 էջ 42-43:
⁷ Շատերը XX դարում արդեն միայն ոչ բնակեցված գյուղատեղիներ էին:

Շափխանէն	-	Մեշափարա
Կարմնաւն	Գիրմինավուն	Մեշափարա
Մզկիթն	-	Մեշափարա
Ըրրժօն	Քրժոռն	Մեշափարա
Մաքատի	Միքիդի	Մեշափարա
Չարու	-	Մեշափարա
Վինան	-	Մինջևան
Քարագլուխն	-	Մինջևան
Փայանկտուրն	-	Մինջևան
Թաշտեն ձորն	-	Մինջևան
Ղարակիսնայ	-	Մինջևան
Խօձունի գէղն	Քիլիսա քյանդի	Քէյվան
Իսախանի շենն	Ղասումաշեն	Քէյվան
Բերդին յեղն	-	Քէյվան
Ներքի Ասրան	-	Քէյվան
Վերի Ասրան	-	Քէյվան
Նորաշինիկ	Նուրիշկին	Քէյվան
Մահմարու	Մըիդավա	Քէյվան
Ուհիդարայ	Իգի Դարա	Քէյվան
Լումահունի	Լումա	Քէյվան
Փիլիկօռ	Քէշիշ քյանդի	Քէյվան
Սուրունն	-	Քէյվան
Ներքին Էփէշտ	-	Քէյվան
Միջին Էփէշտ	-	Քէյվան
Վերին Էփէշտ	-	Քէյվան
Քիշմիրի	Քէշիշ դշլաղ	Արաքսպար
Ճանալու տներն	Ջանանլու	Արաքսպար
Խալիֆին հայերն	Խալիֆա քյանդի	Արաքսպար
Ղարաճանց տներն	-	-
Շմքոի	-	-
Նօրգէղն	-	-

1946 թվականի դրուվեցամբ նշված 44 գյուղից 42-ի համար Հ. Հովսեփյանը կազմել է վիճակագրական հետևյալ աղյուսակը.

Գավառակ	Գյուղերի թիվը	Հայաբնակ	Թուրքաբնակ	Քրդաբնակ
Քէյվան	14	6	3	5
Մինջևան	5	2	0	3
Մեշափարա	8	1	4	3
Հասանուվ	4	0	2	2
Դզմար	8	2	2	4
Արաքսպար	3	0	2	1
Ընդամենը	42	11	13	18

Ղարադաղի Հայաբնակ գրեթե բոլոր գյուղերը կառուցված էին արևաՀայաց լեռնալանջերին: Հարթ տարածուվեցան վրա շատ քիչ գյուղեր կային՝ Ղշլաղը (Դզմար), Օղան (Հասանուվ), Գիրմինավը (Մեշափարա): Տները կառուցվում էին իրար կպած, գրեթե առանց տնամերձ հողամասերի: Այգիներն ու բանջարանոցները գտնվում էին գյուղից դուրս: Միայն Վինա (Մինջվան) գյուղի տներն էին առանձին կառուցված՝ տնամերձ ընդարձակ այգիներով⁸:

Տների կառուցվածքը գրեթե համաչափ էր՝ մոտ 12մ երկարուվեցուն, 10մ լայնուվեցուն և 3մ բարձրուվեցուն: Տանիքները հարթ էին՝ կաղնու գե-

⁸ Հովսեփյան, 2009, հատ. I, էջ 266:

րանների վրա նստած: Վինա, Քարագլուխ, Սրլյին և Ղասումաշեն գյուղերում կառուցում էին տների մեկ այլ տեսակ, որոնք տեղացիները անվանում էին չարդախու (չորսանկյուն)՝ 10X10X4 չափերով: Դրանք Հենվում էին չորս անկյուններում տնկած կաղնու Հաստ գերանների վրա: Կտուրի կենտրոնում բացում էին երդիկ՝ լոցսի և ուղիղ ներքեր գտնվող թոնիրի Համար⁹: Թոնիրը գրեթե ամեն օր վառում էին:

Ընթաց Հակիրճ՝ ըստ Գավառահայերի, անդրադարձանք մեր օրերում անասնապահների, Գանձաբողների և Գերեզման պղծողների բաժին դարձած Ղարադաղի նախկին Հայկական Գյուղերին:

⁹ Հովսեփյան, 2009, հատ. I, էջ 270:



ՉՄԱՐ ԴԱՎԱԽԿ

Դզմարը իր մակերեսով Ղարադաղի մյուս 4 գավառակներից մեծ է միայն Հասանովից: Այն գտնվում է Ղարադաղի արևմտյան մասում Արաքսի ափին:

Դզմար գավառակի Հայաբնակ գյուղերի XIX դարի վերջի և XX դարի բնակչության վիճակագրությունը Հետևյալն է.

Գյուղ	1896	1904-1912	1946	1947	1954	1959	1964	1967
Խանազահ	534	576	336					
Երզուլթին	240	306	408	300	125	84	156	տ/չ
Սարդու	222	288	78					
Աղաղան	264	246	138	138				
Ղըշլաղ	150	234	186	186				
Ղուլուղի	132	204	166					

Որպես Հայերի կողմից լքված կամ Հայաթափված՝ Դզմարում Հիշատակվել են Ջաֆարաբաղ, Նամնա, Տոննի, Մարի, Քուլնի, Ուշտուբեն, Նըղլի գյուղերը:

1912 թվականին դպրոց կար Դզմարի երեք գյուղերում, իսկ 1933 թվականի դրությամբ արդեն

Դժմարի բոլոր վեց հայաբնակ գյուղերում գործում էին դպրոցներ¹⁰:

Առաջին համաշխարհային պատերազմից առաջ Դժմարի բնակչության թիվը կազմում էր մոտ 20000 մարդ, որից մոտավոր հաշվարկներով 16000 թուրք, 2000 հայ և 2000 գնչու¹¹: Վերջիններս տարվա մեծ մասը ապրում էին լեռներում՝ իրենց ցանքատարածությունները թողնելով բնության խնամքին և միայն հնձելու և հերկելու ժամանակ էին իջնում իրենց բնակավայրերը:

Գավառակի թրքաբնակ գյուղերից են Ղուլան, Միսա, Աննրդ, Քուռանդ, Ըշորբե, Նամնա, Օրբջ, Մրդրնա, Ուլի, Քրուրնգա, Ավան և այլն: Դժմարում է գտնվում նաև թրքաբնակ Եյուզալը, որը արդեն մենք մի քանի անգամ հիշատակել ենք՝ կապված Դավիթ Բեկի գլխավորած Այունիքի ազատագրական շարժման և 1921 թվականի գաղթի հետ:

Դժմարը բավական բարձրադիր, լեռնային մակերևույթ ունի: Այն իր հարաբերական բարձրությամբ Հասանով գավառակի հետ գերազան-

¹⁰ «Ալիք», Թավրիզ, 1933, 31 հոկտեմբեր, թիվ 27:

¹¹ Բակունի Բ., Դզմար, «Աղաղան», 1912, մարտ, թիվ 2, էջ 17:

ցում է Ղարադաղի մնացած գավառակներին: Հաճախ կարելի է հանդիպել այսպիսի մի տեսարանի, երբ ամպերը պատում են շրջակա գավառները, և Դժմարը հայտնվում է կղզիացած ամպերի ծովի մեջ: Ալիման բարեխառն է, և շնորհիվ իր բարձրադիր դիրքի՝ ունի լեռնային և առողջարար օդ: Տարվա մեջ հաճախակի են ամպամած և մառախլապատ օրերը: Ալիման խիստ տարբերվում է գավառակի տարբեր գոտիներում. օրինակ՝ Աղաղանում լինում է զով, մինչդեռ Հազիվ երեք ժամվա հեռավորության վրա գտնվող Ղուլանում տոթ: Արաքսի ափին ամառները ջերմաստիճանը այնքան է բարձրանում, որ, տեղացիների ասելով, «կարելի է ավազի մեջ ձուկ և փեղ»: Մերձարաքսյան այս տափաստանային գոտում բազմաթիվ են օձերի տարբեր տեսակները, կարիճները, միջատները: Ադատեղ ապրող մարդիկ դրանցից պաշտպանվելու համար իրենց մահճակալները գետնից բարձր տնկած ցցերի վրա են պատրաստում:

Ոռոգման ջրի տեսանկյունից Դժմարը բավականին հարուստ է, քան Ղարադաղի մյուս գավառակները: Դժմարում կան բազմաթիվ գետեր և գե-

տակներ, որոնք, իրար միախառնվելով, թափվում են Արաքս: Դժմարում են գտնվում Մարդանաղաակի կամ Մարդանագոմի և Նյուզալի գետերը: Այստեղ սառնորակ աղբյուրներ կարելի է գտնել գրեթե բոլոր ձորակներում և դաշտերում: Դժմարը ունի նաև Հանքային աղբյուրներ (ընդհանրապես Ղարադաղը շատ հարուստ է Հանքային ջրերով): Դրանցից ամենանշանավորը Քմա ճյուղն է¹², որը մի առատաձու աղբյուր է: Այն գտնվում է Աննրդ թրքաբնակ գյուղի մոտ՝ մի գեղատեսիլ ձորակում:

Բուսականությունը բավական փարթամ է: Նախկինում տարածքի մեծ մասը անտառներ էին ու մարգագետիններ: Մարգագետիններից յուրաքանչյուր գյուղացի իր բաժինն ուներ, իսկ արոտավայրերը Համայնքային օգտագործման էին: Անտառային ծառատեսակների մեջ տարածված են կաղնին, թխկին, Հացին և մախու (բարդի) ծառերը:

¹² Աղբյուրի անվան բացատրության վերաբերյալ ունենք մի քանի կարծիք: Հնարավոր է, որ այն քամու ջուր է կոչվել գազային պարունակության համար: Մյուս կարծիքն այն է, որ քմա բաղադրիչը կարող է լինել թուրք. kim > kime «ով» հարաբերական դերանունը, որը քիչ հավանական է: Պարսկերենում qām (قام) «քիչ, սակավ, պակաս» բառի հետ կարող էր ձևավորվել սակավաջուր անունը:

Արդեն XX դարի սկզբներից աճազանգում էին անտառների կրճատման և Հնարավոր վերացման վտանգի մասին: Դժմարցիք գյուղատնտեսական աշխատանքներից Հետո զբաղվում էին փայտածուխի պատրաստմամբ (այն Հիմնականում իրացնում էին Թավրիզում): Ողջ Ատրպատականը և Թավրիզը սպառում էր Ղարադաղի փայտածուխը: Անտառահատման արդյունքում ցամաքել են բազմաթիվ աղբյուրներ: Անտառները կրճատվում էին նաև վարելահողերի ընդարձակման արդյունքում: Անտառներում տարածված է նաև ընկուզենին, զլեռին, Հոնին: Անտառամերձ բացատները պատված են մոշի և մասուրի թփերով, որոնք Համատարած օգտագործվում են Դժմարի գյուղացիների կողմից: Մախիսն արոտներում և անտառային բացատներում հասունանում է մորին: Պտղատու ծառատեսակներից Դժմարում աճում է խնձորենին, տանձենին, կեռասենին, ծիրանենին, սալորենին: Վերջինից գրեթե բոլոր տնտեսությունները ամբողջ տարվա համար «լավաշա» էին պատրաստում, որի մի մասը իրացնում էին Թավրիզի շուկաներում:

Դզմարցիք, ինչպես Ղարադաղի ողջ Հայ գյուղացիությունը, ձմեռվա ամիսներին առավելապես զբաղվում էին որսով: Հիմնական որսի կենդանիները վայրի խոզն էր: Գրեթե չէր պատահում, երբ խոզի որսի գնացողը դատարկաձեռն գար: Խոշոր և մանր եղջերավոր անասունները ամռանը քշում էին բարձրադիր գոտիները, իսկ ձմռան ամիսներին՝ դեպի Արաքսի ափը՝ Ղուլանի կողմերը կամ մերձարաքսյան հովիտները, որտեղ ձմեռը բավական մեղմ էր: Դզմարի Հայ գյուղացիությունը զբաղվում էր նաև մեղվապահությամբ և շերամապահությամբ: Վաղուց գործածությունից դուրս եկած ծառի ճյուղերով գործված գլանաձև մեղվափեթակները Ղարադաղում դեռ երկար ժամանակ գործածվում էին: Շերամապահությունը Ղարադաղում ուներ տարիների խորքից եկող պատմություն:

Արաքսի ափի գյուղերի հիմնական զբաղմունքը այգեգործությունն էր: Աճեցնում էին խաղող, դեղձ, ծիրան, կեռաս և այլն: Հատկապես Հայտնի էին Թուրքական Ուշտուբե և Մարդանաղամ գյուղերի ընտիր խաղողը, սեխը և ձմերուկը: Դզմարի բնակչությունը տնտեսապես համեմատաբար ավելի բա-

րեկեցիկ վիճակում էր գտնվում, քան Ղարադաղի մյուս գավառակների բնակչությունը, որովհետև մոտ էր գտնվում Թավրիզին և կարողանում էր իր մթերքները հասցնել սպառման¹³:

Դզմարի լեռներում դեռ XIX դարից Հայտնաբերվել էին երկաթի և պղնձի պաշարներ, որոնք արդյունաբերական ծավալներով այդպես էլ չօգտագործվեցին: Երկաթի հումքից օգտվում էին վյուղացիները՝ գյուղատնտեսական գործիքներ պատրաստելու համար: Ոչ մեծ քանակով Հայտնաբերվել են նաև ոսկի և արծաթ:

Դզմարի Հայության ամենանշանավոր ուխտատեղին Սիլյան սարն էր, որը իր կոնաձև գագաթով Ղարադաղի ամենաբարձր սարերից մեկն է¹⁴: Լեռնագագաթին պահպանվել է հրաբխային խառնարանը, որի արևելյան կողմում քարից ու կրից կառուցված մի կիսավեր մատուռ կա: Մատուռում պահպանվում էին կավե հնամենի ճրագակալներ:

¹³ «Ալիք», Թավրիզ, 1933, 31 հոկտեմբերի, թիվ 27, Դ. Եգանե:

¹⁴ «Ալիք», Թավրիզ, 1933, 31 հոկտեմբերի, թիվ 27, Դ. Եգանե:

Դրանցից մեկի վրա մարդու ոտնաձեռք էր դրոշմված¹⁵:

Խանազազ գյուղ

Գտնվում է Դզմար գավառակի արևելյան մասում Բորզի խույթ լեռան Հարավային լանջին: Այն հիշատակվել է XVII դարի վերջին Տաթևի վանքապատկան գյուղերի ցանկում ԽնակաՀն անվամբ, այլև՝ Խանազեան կամ Խնգիկ¹⁶:

1896 թվականին գյուղը ունեցել է 89 տուն կամ մոտ 534 բնակիչ, 1912 թվականին՝ 576: 1940 թ. գյուղում կար 100 ընտանիք՝ 622 բնակչով: 1946 թ. վիճակագրական Հաշվառման Ժամանակ ունեցել է 50 ընտանիք:

1946 թվականի օգոստոսի 5-ին գյուղի բնակիչները գաղթել են Խորհրդային Հայաստան:

¹⁵ Հովսեփյան, 2009, հատ. I, էջ 16:

¹⁶ Արարատ, Գ, մարտ, Վիճակագրական. Պարսկաստանի Ղարաղաղ գաւառի հայաբնակ գիւղերը, Էջմիածին, 1896, էջ 135-137:

Գյուղը դարձել է Թրքաբնակ¹⁷: Մինչ 1916 թ. Խանազազը պատկանում էր Թավրիզի մուշտեիդին, ձեռո զավթել է ՂաՀրաման խանը: Կան տեղեկութուններ Թուրք խաների կողմից իրականացված 1911 թվականի փետրվարի, Հոպիսի, 1916 թ., 1917 թ. գարնան և 1945 թ. ավազակային Հարձակումների ու թալանների մասին:

Գյուղը ուներ ընդարձակ դաշտեր և արոտավայրեր, որոնք տարածված էին մոտ 20 կմ տարածության վրա: Գյուղի շրջակայքում Հսում եղել են յոթ Հայաբնակ գյուղեր, որոնք լքվել և վերածվել են սալերակների: Հսկայական այդ տարածքի մասին պատկերացում կազմելու Համար պետք է նշել, որ 1946 թ. դրույթյամբ այն սահմանակից էր 14 գյուղերի Հողատարածքների Հետ:

ԽանազաՀի շրջակայքի աղբյուրների թիվը Հասում էր մոտ 160-ի, որոնց ջրերը միախառնվելով կազմում էին չորս գետակ¹⁸:

Եկեղեցին (Սբ. Ստեփանոս) գտնվում է գյուղի հյուսիսային մասում: Այն ունի մոտ 12 մ երկարությ-

¹⁷ Հովսեփյան, 2009, հատ. I, էջ 66:

¹⁸ Հովսեփյան, 2009, հատ. I, էջ 63:

յուն, 5մ լայնություն, 4,5մ բարձրություն: Ինչպես
Ղարաղաղի Հայաբնակ գյուղերի բոլոր եկեղեցիները,
Սբ. Ստեփանոսը նույնպես գմբեթ չունի: Եկեղեցու
ղեցու շուրջը գտնվում է գյուղի գերեզմանատունը:
2018 թվականի դրությամբ եկեղեցին կանգուն է¹⁹:
1896 թվականի դրությամբ այստեղ Հովվություն է
արել տեր Ադամ Տեր-Սարգսյանը, 1946 թվականին՝
տեր Եզնիկը²⁰: Խանազազում կային ձեռագիր
ավետարաններ և ժամագրքեր, որոնք Ղարաղաղի
այլ եկեղեցիներում պահվող ձեռագրերի հետ մեկ
տեղ XX դարի երկրորդ տասնամյակում տեղա-
փոխվել են Էջմիածին: Դրանցից Հատկապես այդ
էր ընկնում մագաղաթյա, գեղեցիկ մանրանկարնե-
րով, սաղմոսարանով ու տոնացույցով մի ժամանակ

¹⁹ Ատրպատականի հայոց թեմի առաջնորդը Ղարաղաղի Խանազահ գիւղում (<https://alikonline.ir>):

²⁰ Տեր Եզնիկ: Բեգլար Գրիգորի Ոսկանյանը ծնվել է 1876 թվականին Խանազահում: Սովորել է գյուղի ծխական դպրոցում: Պատանի տարիքում որպես հացթուխ աշխատել է Կապանում, Շուշիում և Բաքվում, ապա վերադարձել Խանազահ 1914 թվականին համայնքի կողմից ուղարկվել է Թավրիզ և Ատրպատականի հայոց թեմում ձեռնադրվել քահանա: Ձեռնադրվելուց հետո վերադարձել է գյուղ և մինչև իր կյանքի վերջը եղել Խանազահի և Ղուլուղիի քահանա (Հովսեփյան 2009, հատ. II, էջ 579):

գիրք²¹, որը պահվում էր Բալա Մելիք-Ազարյանի մոտ: Ան գրված էր ՌՁԵ (1636) թվին Կոստանդնուպոլսում: Ժամագրքի Հիշատակարաններից վերջինը հետևյալն է. «ՌՄԼԷ (1788) այս Ատենի ժամագիրքս առի Մելիք Ազարեա Տեր Ադամ: ով որ կարթա, միօվ բերան Ած. ողորմի ասա»²²:

Հայտնի էին Խանազազցի Մելիք-Ազարյանները: Վերջիններս հստակ բավականին հողեր ու գյուղեր են ունեցել Ղարաբաղում և Ղարաղաղի Արաքսպար Հովտում: Կորցնելով սեփականատիրական իրավունքը՝ նրանց սերունդները բնակություն են հաստատել Խանազազ գյուղում:

Խանազազցի էր նաև «Ղարաղաղի Հայերը» սոցազգրական-բանահյուսական արժեքավոր գրքի հեղինակ Հովհաննես Հովսեփյանը: Ներկայումս Խանազազում մի քանի թուրք ընտանիք է ապրում:

²¹ Էջմիածնի մատենադարանում այդ ժամագիրքը հաշվառվում էր 4376 համարի տակ (Կարապետ Եպիսկոպոս 1914, էջ 183):

²² Կարապետ Եպիսկոպոս, 1914, էջ 183:

Իրգութիւն գյուղ (Ուրգութիւն, Իրգիթ, Ուրգութ)

Գտնվում է Ղչաղից արևմուտք՝ չհասած Աղաղան՝ Սիլան սարի արևելյան լանջերից մեկի վրա՝ Հիմնադրվել է 1860 թվականին: Գյուղացիները ծագումով շրջակայքի քված գյուղերից են: Աչքի ընկնող գերդաստաններն էին՝ Թունոնք, ՕՀանջանենք, Կյուքունք, Մեջնումանք, Քարամանք, Չարգարանք և այլք²³:

1896 թվականին ուներ 40 տուն, 1912թ.՝ 11 ընտանիք կամ մոտ 306 բնակիչ: Սկզբնական շրջանում գյուղը ղեկավարել են մեղիք Մուսին, Գրիգորը, Հակոբը և ուրիշներ: 1905 թվականին գյուղիստեր է դարձել միսանցի Հաջի Ռուստամխանը:

1918 թվականին՝ Աղաղանի կոտորածից 15 օր հետո, այն թալանի է ենթարկվել Ղարադաղ մտած օսմանյան զորքերի կողմից:

Իրգութիւնի գերեզմանոցում է ամփոփվել աղագային և ռազմական գործիչ, գյուտկումեցի (Կա-

րանի տարածաշրջան) Գերասիմ՝ Աթաջանյանը՝ ԼեռնաՀայաստանի Հերոսամարտի ղեկավարներից և Նժդեհի ամենավստահելի հրամանատարներից մեկը: ԼեռնաՀայաստանի անկումից և Հայաստանի խորհրդայնացումից հետո նա Հաճախակի էր անցնում Պարսկաստան և վերադառնում: 1929 թվականի օգոստոսին որդու՝ Հովիկի հետ Արաքսն անցնելիս²⁴ գետի ափին զոհվում է ռուս սահմանապահների կրակոցից: 1946 թվականին Հաջի Ռուստամխանի ժառանգները Իրգութիւն գյուղը վաճառել են ուշտուբինցի Հաջի Իբրահիմին: Նույն ժամանակ գյուղն ուներ 68 ընտանիք (մոտ 408 մարդ), որից 18-ը նույն տարում արտագաղթել են:

Գյուղն ուներ քարաշեն և փայտածածկ եկեղեցի՝ Սբ. Հողակաթ, որտեղ 1896 թվականին հովվում էր տեր Մարտիրոս Պողոսյանը, 1946թ.՝ տեր Գրիգորը:

1954 թվականին Իրգութիւնը ուներ 23 ընտանիք (125 բնակիչ), 1959թ.՝ 17 ընտանիք (84 մարդ),

²⁴ Գետանցումը իրականացվել էր Մեղրիի և Զանգելանի սահմանին մոտ հատվածից: Մոտակա հայկական գյուղը՝ հանդիպակաց ձորն ի վեր, Իրգութիւն էր: Ի դեպ, գյուղի հայկական գերեզմանոցը պահպանվել է:

²³ Հովսեփյան, 2009, հատ. I, էջ 90-91:

իսկ 1964թ.՝ 156 մարդ՝ ի Հաշիվ Հարևան Հայաստանի գյուղերի դատարկման: Այդ ժամանակ գյուղատվերը Բագրատ Բաղդասարյանն էր:

1967 թվականին Իրգուլթինի բնակիչները ամբողջությամբ տեղափոխվել են Թավրիզ²⁵: Այն Ղարաղաղ մար գավառակի վերջին Հայաթափված գյուղն է Ներկայումս ավերակ է:

Սարգու գյուղ

Գտնվում է Պիղ լեռան արևելյան ստորոտում՝ Ղարաղաղի Հին գյուղերից է²⁶: Այն Հիշատակվել է Տաթևի վանքապատկան գյուղերի՝ XVII դարի վերջին կազմված ցանկում:

Գյուղը Հայ մելիքների սեփականությունն է եղել: XIX դարում գյուղի մելիքն էր Խաչին, ով մահացել է 1910 թվականին, որից Հետո որդիները տեղափոխվել են Թիֆլիս: Մելիքություն է արել նաև

²⁵ «Ալիք», 1970, 19 հունվարի, թիվ 13:

²⁶ Հովսեփյան, 2009, հատ. I, էջ 85-86:

այս որդի Կարապետը²⁷: Հետագայում Սարգուն դարձել է Մարդանաղայի տիրոջ՝ Մահմեդ Ղուլի խանի սեփականությունը: Գյուղի Հին տոհմերն էին՝ Ղարիբանք, Մանցունք, Զհանգիրանք, Բաղունք, Միսրունք, Ազիրունք և ուրիշներ²⁸:

Գյուղի վերևի մասում է գտնվում Սբ. Գևորգ (բայց այլ աղբյուրի՝ Սբ. Սաղաթել²⁹) քարակերտ, կամարակապ եկեղեցին: Մուտքի դռնից վերև վիմագիր կա. «Սարգու գյուղը վերակառուցվել է մելիք Խաչատուրի որդի մելիք Կարապետի օրոք 1860թ.»: 1896թ. Հովվել է տեր Արիստակես Տեր-Դանիելյանը:

1896 թվականին Սարգուն ունեցել է 37 տուն կամ մոտ 222 բնակիչ: 1912թ. բնակչությունը 48 ընտանիք էր (մոտ 288 շունչ), 1946թ.՝ 13 ընտանիք (78 մարդ): 1946 թվականին գյուղի Հայկական ընտանիքները արտագաղթել է: Սարգուն ներկայումս ավերակ է, եկեղեցին՝ կիսականգուն:

²⁷ Ատրպատականի հայոց թեմի առաջնորդը Սարգու գիւղում (<https://alikononline.ir>):

²⁸ Հովսեփյան, 2009, հատ. I, էջ 85:

²⁹ Ատրպատականի հայոց թեմի առաջնորդը Սարգու գիւղում (<https://alikononline.ir>):

Գյուղից ոչ հեռու գտնվում էր Հին Մարի գյուղի ավերակները, որն ուներ շատ գեղեցիկ եկեղեցի: Այն 1896 թվականին արդեն ավերակ էր³⁰:

Մոտավորապես 1910թ. սարդուցի Մանցուղ Արշակը ամուսնացել է շիշկերտցի մի աղջկա հետ, ով Շիշկերտից իր հետ կարտոֆիլ է տարել և ցանկ Սարդու գյուղում: Փաստորեն՝ կարտոֆիլ Ղարաբաղում այդ ժամանակ գրեթե չէր մշակվում:

2019 թվականի օգոստոսին Սարդու է այցելում Ատրպատականի Հայոց թեմի առաջնորդ տեղապետ Գրիգոր եպս. Չիֆթձեանը: Այդ կապակցությամբ նա գրում է. «Գիւղի Հարաւ-արեւմտեան մասում, շուրջ շկմ հեռավորութեան վրայ, լեռան Հարթ բացատում բարձրահասակ խոտերի մէջ ծածկուած անմշակ սալատապաններ կան, որոնք գիւղի Հայոց գերեզմանատան տարածքի սահմաններն են գծում: Դրանց մեծ մասը շարժւել է իր տեղից, հովիւների կամ լաւ եւս գանձախոյզների ձեռամբ: Ո՛չ մի արձանագրութիւն չկայ շիրմաքարերի վրայ, ոչ իսկ յղկած քարի տեսք ունեցող տապանաքար գոյութիւն ունի տարածքում: Բոլորն էլ ժայռաբեկորների

³⁰ Արարատ, 1896, էջ 135-137:

անանութիւն ունեն եւ Հագիւ են զատորոշում սովորական ժայռերից, որոնց շատ ենք Հանդիպում նման բացատներում»³¹:

Աղաղան գյուղ

Իզմարի փոքր գյուղերից է, գտնվում է գավառակի արևմտյան մասում մի գեղեցիկ ձորակի մեջ: Գյուղը տեղադրված է Սիլվան սարի արևմտյան լանջին և նայում է դեպի Մարանդի կողմերը: Այն հավանաբար հիմնվել է XVIII դարի երկրորդ կեսին: Չնայած առկա է նաև կարծիք առ այն, որ գյուղը հիմնվել է 1820-ական թվերին, և հիմնադիրները երեք եղբայրներ են եղել, որոնցից երկուսի անունն է պահպանվել՝ Ջհան և Աբրահամ³²: Երկար ժամանակ գյուղում իշխել են Մելիք-Չաքարյանները: Աղաղանի հնագույն տոհմերն էին՝ Վարդանանք, Առուղանք, Ակոփանք, Լալայանք, Գեայանք և

³¹ Ատրպատականի հայոց թեմի առաջնորդը Սարդու գիւղում (<https://alikonline.ir>):

³² «Ալիք», 1979, 16 ապրիլի, թիվ 76, Մուշեղ Աթայանի հուշերից:

այլն³³: Գյուղի հողը համայնական էր, իսկ գյուղացիներին պատկանող հողաբաժինները փոխանցվում էին ժառանգաբար: 1912 թվականի դրությամբ գյուղը պատկանում էր Հաջի Ռուստամ խանին: Աղաղանի ծայրում գտնվում էր գյուղի եկեղեցին, իսկ սրան կից՝ միևնույն բակում դպրոցը³⁴:

1899-1902 թվականներին Աղաղանի դպրոցում դասավանդել է նշանավոր Եփրեմ Դավթյանը:

Գյուղը, ինչպես Ղարադաղի հայկական գրեթե բոլոր բնակավայրերը, նախկինում պարբերաբար թալանվել է թուրքերի կողմից: 1911 թվականին թուրքերը քշել տարել են գյուղի ողջ անասունները:

1896 թվականին գյուղն ուներ 44 տուն հայ բնակիչ, 1912 թ. դրությամբ՝ 43 տուն՝ մոտ 260 մարդ բնակիչ, Սբ. Հողակաթ անվամբ եկեղեցի: Յուրաքանչյուր տուն օտարության մեջ պանդուխտ ուներ, որոնք ցրված էին Կովկասի և Պարսկաստանի քաղաքներում և զբաղվում էին գլխավորապես արհեստներով և վաճառականությամբ: Արտագաղթի ծավալները պատկերացնելու համար դիտարկենք

³³ Հովսեփյան, 2009, հատ. I, էջ 93:

³⁴ «Աղաղան», 1912, հուլիս, թիվ 4, էջ 15-16:

ձեռնյալ փաստը. գյուղի պանդուխտների թիվը 60-ից անց էր, մինչդեռ գյուղը հազիվ 60 տուն ուներ: Գյուղը տնտեսապես անբավարար միճակում էր: Ելված ժամանակաշրջանում գյուղը ուներ 450 գլուխ մանր և 275 գլուխ խոշոր եղջյուրավոր անասուն: 1918 թվականին, երբ գյուղ ներխուժեցին օսմանյան զինվորները, Աղաղանը ուներ 60 տուն ընտանիք³⁵: Օսմանյան զորքի ներխուժումից Հետո Աղաղանում տեղի ունեցավ սարսափելի կոտորած (ինչի մասին ավելի մանրամասն անդրադարձել ենք նախորդ գլուխներում):

1919 թվականին աղաղանցիները գաղթում են Թավրիզ: 1920 աշնանը 18 ընտանիք վերադառնում է: Այդ ընթացքում Աղաղանում բնակվել են թուրքեր, ուլքեր քանդել են եկեղեցին, դպրոցը, գոմ ու մարագները, որպես վառելափայտ օգտագործել շինարարական գերանները: Քանի որ գյուղում այլևս անասուն չկար, գյուղի արոտավայրերից սկսեցին օգտվել հարևան գյուղերի թուրքերը: Այդ ընթացքում նրանք Աղաղանից մի աղջիկ փախցրին: 1921 թվականի գարնանը աղաղանցիները կրկին գաղ-

³⁵ «Ալիք», 1979, 19 ապրիլի, թիվ 79, Մուշեղ Աթայանի հուշերից:

Թում էն Թավրիզ, ապա վերադառնում: 1920-ականներին մոտ 22 ընտանիք էր ապրում Աղաղանում, որոնք ունեին շուրջ 800 գլուխ մանր եղջերավոր, 300 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, 30 ձի, ջորի, էշ:

1945 թվականին լուր է տարածվում Խորհրդային Հայաստանի կողմից գաղթականներ ընդունելու մասին: 1946 թվականին գյուղում ապրում էր 23 ընտանիք՝ մոտ 138 մարդ: 1947թ. մարտի 24-ին գյուղը բռնում է գաղթի ճամփան՝ տեղափոխվելով Թավրիզ: Աղաղանցիները մատչելի գնով վաճառում են իրենց ունեցվածքը՝ մտածելով, որ կգաղթեն Խորհրդային Հայաստան: Սակայն շատերին գաղթելու հնարավորություն չի տրվում և, մնալով Թավրիզի փողոցներում, ստիպված ամեն ինչ սկսում են ստեղծել այսպես ասած՝ նոր տողից³⁶:

Աղաղանի շրջակայքում կան անտառների Գյուղի երկու կողմերից անցնում են երկու արագահոս գետակներ, որոնցից մեկը մեծ է և կոչվում է Մեծ գետ, մյուսը՝ փոքր՝ Կուճի գետ: Սրանք գյուղի ծայրում միանում են իրար, ապա խառնվելով ուրիշ

գետակների, թափվում են Արաքսը: Գյուղի շրջակայքի գեղատեսիլ լեռները գյուղացիների կողմից ստացել են տարբեր անուններ. հարավում գտնվում է Սիլան սարը, արևելյան կողմում Թոնդիր Գեղիկ սարը, արևմուտքում չափազանց սրածայր Պուպիզը, հյուսիսում Մեծ և Փոքր Ղուլանները, հարավարևմտյան կողմում Նուզենդիլը: Պուպիզի ստորոտում գտնվում է մի հին գերեզմանոց, որը Աղաղանից էլ հին է: Աչքի չընկնող գերեզմանաքարերի կողքին ուշադրություն է գրավում մի տապանաքար, որին գյուղացիները կոչում էին «Դերվիշեն քարը»: Տապանաքարը զարդարված է զանազան տեսարանների քանդակներով, պարսկերեն արձանագրությունով, հրացանի քանդակով:

Աղաղանի Սբ. Հողակաթ եկեղեցում 1896 թվականին հովվում էր տեր Հովակիմ Տեր-Հովհաննիսյանը, իսկ 1946թ.՝ տեր Գրիգորը: Սիլան սարը աղաղանցիների, Դզմարի հայերի և թուրքերի համար համարվում էր սրբավայր: Հայերն այնտեղ ուխտի էին գնում Համբարձման և Վարդավառի տոներին: Սիլան լեռան գագաթը հարթ դաշտ է, որտեղ կան շատ խոշոր քարեր, և այդ քարերի մոտ

³⁶ «Ալիք», 1979, 19 ապրիլի, թիվ 79, Մուշեղ Աթայանի հուշերից:

է գտնվում՝ նույնպիսի մեծ քարերով սարքված մաստուռ: Մատուռի մեջ կա տապանաբար: Գազափչորս կողմերում կան քարակոյտեր, որոնք կարծես նախկինում ծառայել են որպես պաշտպանական դիրքեր: «Սիլվան» բառը ղարադաղցիների շրջանում օգտագործվում է նաև սաստիկ ցուրտ կամ բուք իմաստով: Հավանաբար այն ծագել է լեռան անվանումից՝ այնտեղ անընդհատ իշխող քամիների պատճառով: Նույն իմաստով բառը մինչ այժմ օգտագործվում է Կապանի տարածաշրջանում գաղթական ղարադաղցիների կողմից հիմնված կամ վերաբնակեցրած Կաղնուտ (Մոդես), Եղվարդ, Ներքին Հանդ, Սրաշեն, Ըռոտմանց (կամ Ղրղույուներկայուն քված) գյուղերի բնակիչների կողմից³⁷:

³⁷ 1920 թվականի Արցախյան 44-օրյա պատերազմի արդյունքում օկուպացվում և ավերվում են Հաղրուքի շրջանի գյուղերը, որոնցից շատերը ղարադաղցիների սերունդներով կր բնակեցված և որոնցում խոսվում էր Ղարադաղի բարբառով: Ինչպես գիտենք, բարբառը տարածքի հետ կապված երևույթ է և առանց կոնկրետ տարածաշրջանում կամ բնակավայրում ամփոփվելուց՝ այն վերանում է: Այժմ Կապանի տարածաշրջանի Կաղնուտ (Մոդես), Եղվարդ, Սրաշեն, Ներքին Հանդ գյուղերը մնում են միակ բնակավայրերը, որտեղ դեռ պահպանվում է Ղարադաղի բարբառը:

Աղաղանում կային նաև սրբադասված ծառեր: Ծառի պաշտամունքը ընդհանրապես բնորոշ էր ղարադաղցուն, և պաշտամունքային ծառեր կային Ղարադաղի գրեթե բոլոր գյուղերում: Աղաղանի արևելյան ծայրում աճում էր մի չինարի, որը գյուղացիների համար պաշտամունքի առարկա էր, և որի ճղները կտորատելը մեղք էր համարվում: Գյուղի արևմտյան մասում էր գտնվում Ծառեն սուրբը: Այդ մեծ ծառի տակ կա քարակոյտ (Հավանաբար գերեզման): Ծառեն սուրբի մոտ գյուղացիները ուխտի էին գնում Չատկի Հաջորդ կիրակի օրը (Կանաչ կիրակի) և մոմեր վառում: 2018 թվականի դրությամբ այդ ծառերը դեռ կանգուն ու կանաչ էին: Աղաղանից հարավ գտնվում է Քուռանդի կոչվող սրբատեղին:

2018 թվականին Աղաղանի տների մեծ մասը դեռ կանգուն էր: Գյուղի ավերակներում բնակվում էր մեկ թուրք անասնապահ³⁸:

«Մեր հարցին, թե ո՞վ է տեղ քեզ այս գիւղը, նա պատասխանեց, թէ գիւղը դատարկ էր եւ ինքը եկել է այստեղ, որոշ ժամանակ այս տնում է ապ-

³⁸ Ատրպատականի հայոց թեմի առաջնորդը Աղաղան գիւղում (<https://aliconline.ir>):

ղոսանք, Առաքելանք, Տեր-Վարդանանք և ուրիշ ներ⁴¹:

1947 թվականին Հաջի խանի թոռ Ղուլի խանը գյուղը վաճառում է Ուշտուբին գյուղի բնակիչ Միրվանի տղային: Այդ նույն տարի Ղլաղի Հայ բնակչությունը՝ 186 մարդ, վերջնականապես գաղթում է Թավրիզ:

Գյուղի վերջին երկու գյուղապետերն էին Բաբախանյան ՍաՀակը (պաշտոնավարել է շատ երկար) և Բաբաջան Աբրահամյանը⁴²:

Գյուղի Սբ. Հովհաննես եկեղեցում 1896 թվականին հովվում էր տեր Վարդանը, իսկ 1946թ.՝ տեր Գրիգորը:

Ղուլուղի գյուղ

Գտնվում է Խանազազից 6-7կմ հյուսիս-արևմուտք՝ Արաքսից 3-4կմ հեռավորության վրա՝ լեռնալանջի կաղնու անտառի արևաՀայաց բացա-

⁴¹ Հովսեփյան, 2009, հատ. I, էջ 86:

⁴² Մենք բոլորս քո գառներն ենք, Սրբազան (https://alikonline.ir):

տում⁴³: XVII դարի վերջին հիշատակվել է Տաթևի նոր ցանկում՝ Ղլղի անվամբ:

Նախքան 1880 թվականը գյուղը թուրքաբնակ էր: 1880թ. Մեշափարա գավառակի Մումուդարուն Հայաբնակ գյուղից մի քանի ընտանիք, հալածվելով թուրք խաներից, գալիս ու բնակվում են Ղուլուղիում, որն այդ ժամանակ պատկանում էր թուրք Ղուլի խանին: Հայերը Համոզում են թուրք խանին գյուղը չորս եզան, երկու ծնած կովի, տասը ոչխարի և մի զույգ գորգի դիմաց վաճառել իրենց՝ պայմանով, որ գյուղի անունը չի փոխվի:

1900 թվականին Ղուլուղին անվճար դառնում է Քլալա գյուղի բնակիչ Իսկանդար խանի սեփականությունը:

1911 թվականի փետրվարի սկզբին տեղի է ունենում Ղուլուղի գյուղի կոտորածը: Ղուլուղիի վրա իրենց հրոսակներով հարձակվում են Իսկանդեր, Ռահիմ և Հիդայաթ խաները: Շրջապատելով գյուղը՝ նրանք պահանջում են 400 թուման (800 ուլբլի) տուգանք: Գյուղացիները չափազանց անհանգրստացել էին՝ նկատելով, որ եկվորների մտադրութ-

⁴³ Հովսեփյան, 2009, հատ. I, էջ 97-98:

յունն ավելի չար է, սակայն խաները, փարատելով նրանց մտահոգությունը, ասել էին, թե նշված գումարով ամեն ինչ վերջանում է: Բայց կեսգիշերին, երբ ամբողջ գյուղը քնած էր, այնտեղ են թափվում խաների հրոսակները և սկսում կողոպուտն ու կոտորածը: Գյուղից փախածների մի մասը, այդ թվում երեխաները, ազատվելով սրի երախից, զոհ են դառնում ձմռան սոսկալի ցրտին: Փոքր թվով ղուլուղեցիներ փախչում են դեպի Հայաբնակ Խանագազ գյուղը, սակայն ճանապարհին ցուրտը կրկին շատ կյանքեր է խլում: Հետևելով փախչողներին՝ հրոսակները մտնում են Խանագազ, կողոպտում, տանում նաև անասունները⁴⁴:

1896 թվականին Ղուլուղիի բնակչությունը կազմել է 22 տուն (132 շունչ), 1912թ.՝ 34 ընտանիք (204 շունչ):

1913 թվականի դրությամբ Ղուլուղին արդեն տեսնում էր թուլմանյանցներին պատկանող գյուղերի ցանկում, որը, սակայն, երկար չի տևում, և 1921թ. որպես կալվածատեր՝ նշվում էր ումն Ամիրասլան:

⁴⁴ Միմոնյան, 2010, էջ 622-623, «Մշակ», 1911, թիվ 33:

1913 և 1918 թվերին գյուղը կրկին ենթարկվում է թուրքերի թալանին: 1918թ. տեղի խաները, ոգևորվելով օսմանյան զորքի ներկայությունից, սեպտեմբերի 9-ին սպանում են չորս գյուղացու, երկու աղջկա առևանգում ու բռնաբարում են, թալանում գյուղի ողջ ունեցվածքը: 1919 թվականին ամբողջ գյուղը գաղթում է Թավրիզ: 1921թ. որոշ ընտանիքներ գյուղի կալվածատեր Ամիրասլանի հորդորներից հետո վերադառնում են Հայրենի Ղուլուղի:

Գյուղի՝ Սբ. Հռիփսիմե մեծ ու գեղեցիկ եկեղեցում 1896 թվականին հովվում էր տեր Ադամ Տեր-Սարգսյանը, 1946թ.՝ տեր Եգնիկը: Ղուլուղիից երկու ժամվա հեռավորության վրա էր գտնվում Դրոնի կամ Դարանի եկեղեցու ավերակները⁴⁵:

29 ընտանիքից բաղկացած Ղուլուղիում 1938թ. դարնանը ծաղիկ հիվանդությունը զոհ է գնում 38 երեխա⁴⁶:

1946 թվականի օգոստոսին ղուլուղեցիները՝ 28 ընտանիք կամ 166 շունչ, վերջնականապես գաղթում

⁴⁵ Արարատ, 1896 էջ 135-137:

⁴⁶ Հովսեփյան, 2009, հատ. I, էջ 359:

Են Խորհրդային Հայաստան և Հաստատվում Արարատում:

Ղուլուդիում են բնակվել Մելիք-Ղարազյոյ յանների Հայտնի գերդաստանի որոշ շառավիղները:



ԱՍՆՆՈՎ ԴԱՎԱՌԸ

Հասանով գավառակը գտնվում է Դզմար և Մեշափարա գավառակների միջև ընկած Խոյնարի սարի լեռնաճանգույցի ճյուղերի փեջերում: Հասանովը Մեշափարայից բաժանվում է Խրիզնան գետով: Այն Ղարադաղի ամենափոքր գավառակն է: Հասանով գավառակի Հայաբնակ գյուղերի XIX դարի վերջի և XX դարի բնակչությունն վիճակագրությունը Հետևյալն է.

Գյուղ	1896	1904-1912	1946	1947	1954	1959	1964	1967
Նորաշեն	198	240	162	162	54			
Օղա	168	210						
Լումա	տ/չ	108	114					
Զիարու	տ/չ	90						

Որպես նախկին Հայաբնակ գյուղեր՝ Հասանովում հիշատակվել են Վերին Հուժ, Ռաշու, Շավի, Վերին Լումա, Մասուշեն գյուղերը:

1933 թվականի դրությամբ Հասանով գավառակն ուներ ընդամենը երկու Հայաբնակ գյուղ՝ Նորաշենն ու Օղան:

Հասանովը Հարուստ է արոտավայրերով՝ Շնորհիվ բարձրադիր լեռնային մակերևույթի՝ գավառակի օդը մաքուր և առողջարար է: Մմանները զով են, ձմեռները՝ խիստ ցուրտ:

Գավառակի Հայ գյուղացիությունը մշակում էր աշնանացան և գարնանացան ցորեն ու գարի, Հաճար, զբաղվում էր անասնապահությամբ: Ոռոգման տեսակետից գավառակի գյուղերը գտնվում էին բավարար վիճակում:

Հասանովում է գտնվում մի հին բերդ, որը կոչվում է Աղջկաբերդ (Ղզղալա): «Աղջաղալան զբաղեցնում է բլրան գրեթե ամբողջ կատարը, շուրջ 10 Հազար քռ. մետր տարածք, Հեռուից կիսակամար՝ աղեղաձեւ պատկեր ներկայացնելով: Նրա մուտքը Հարաւակողմն է: Աղջաղալայից այսօր մնացել են միայն եօթ աշտարակներ, իւրաքանչիւրը շուրջ 20 մետր բարձրութեամբ, եւ պարսպի մէկ բեկոր, աւելի ցածր բարձրութեամբ: Բերդը Հեռուից նշմարելի է իր 360 աստիճան շրջահայեաց դիտատեսարանով, և պատմում է իր անցեալի փառքի մասին», - գրում է Ատրպատականի Հայոց թեմի առաջնորդ Գրիգոր

Եպս. Չիֆթճեանը⁴⁷: Այստեղ է գտնվում նաև Ղարադաղում Հայտնի Հուժ վանքը, որը Հայությամբ լեցուն էր Համբարձման, Վարդավառի և այլ տոներին: Հուժը կամ Հոյժը գտնվում է Նորաշենի մոտ, մի աննկարագրելի գեղեցիկ ձորում: Իսկ Օղա Հայկական գյուղի վերևի սարում գտնվում է Ճգնավորի սրբատեղին: Իրականում այն գերեզման է, որի մոտ մի ծառ կա, ուր ուխտի էին գնում ուխտ ունեցողները, որի ընթացքում ծառի ճղներից թել կամ մի կտոր լաթ էին կապում, մոմ վառում:

Գավառակը նախկինում Հարուստ էր անտառներով, սակայն ժամանակի ընթացքում դրանք անխնայորեն սպառվել են վառելափայտի, վարելահողերի ընդարձակման, փայտածուխի ստացման արդյունքում: Հասանով գավառակը նույնպես արտահանում էր փայտածուխ, թթու լավաշա, միաշար, լոբի, հոն: Հաճախ իրացնում էին ապրանքափոխանակությամբ:

⁴⁷ Ատրպատականի հայոց թեմի առաջնորդը Ղարադաղում (<https://alikonline.ir>):

Նորաշեն - Հուժ գյուղ

Գյուղը հիշատակվել է դեռ Տաթևի վանքապատկան գյուղերի նոր ցանկում: Այն գտնվում էր անտառներով, ձորերով, ժայռերով շրջապատված արևաձայաց մի բացատում: Ժամանակին պատկանում էր Մելիք-Դոլուխանյաններին⁴⁸: Գյուղից ներքև կառուցված մի եկեղեցի կա, որին անվանում են Սբ. Գևորգ մենաստան: Էջմիածնում պահպանվում է մի ձեռագիր, որը 1655 թվականին գրվել է այստեղ⁴⁹: Հիշատակվել է գյուղի տանուտեր Աբրահամ բեկը:

1840 թվականին Հուժեցիների մի մասը, չցանկանալով այլևս տանել թուրք խաների Հալաճանյները, գաղթել է Ղարաբաղ, իսկ 20 տարի անց, մյուս գաղթական ղարադաղցիների օրինակով, շատերը ետ են վերադարձել:

Հայտնի է, որ 1890-ականներին Սբ. Գևորգի քահանան էր խանազազցի տեր Առաքել քահանա

⁴⁸ Հովսեփյան, 2009, հատ. I, էջ 102-106:

⁴⁹ «Ալիք», 1968, թիվ 116:

Առաքելյանը, տեր Ադամ Տեր-Սարգսյանը, իսկ վերջին քահանան 1940-ականներին՝ տեր Մարտիրոսը: Այս եկեղեցին կարելի է համարել Ղարադաղի ամենաձայտնի սրբավայրը:

Հուժի եկեղեցին, որը նաև ոչ վաղ անցյալում գրչության օջախ էր, իր շուրջը ուներ բավական հողատարածքներ, որոնք մշակում էին Հուժի գյուղացիները: Շրջակա հողերը եկեղեցապատկան էին, և արդյունքը փոխանցվում էր Թավրիզի առաջնորդարանին:

1870-ականներին Հուժեցիները, կրկին չգիմնասուլով թուրք խաների ավազակություններին, գաղթել են: Որոշները ցրվել են Հայաբնակ այլ գյուղերում, իսկ մի մասն էլ հիմնվել է գյուղից մոտ 10 կմ վերև, սակայն, Հալաճվելով Բզմարի խան Թաղիից, այս անգամ արդեն վերաբնակվել են Օղա գյուղի մերձակայքում: Նոր տարածքում կրկին հանդիպել են խոչընդոտների: Վերջապես 1880 թվականին Թավրիզի առաջնորդարանի օժանդակությամբ նրանք հիմնվել են Հուժից ոչ հեռու գտնվող եկեղեցապատկան մի կալվածքում՝ նոր գյուղը անվանելով Նորաշեն կամ Ներքին Հուժ: Հուժի հողերը մնում

են լքված: Դրանից օգտվելով Հասանովի խանութը բնակեցնում է թուրքերով և իր ձեռքն է առնում եկեղեցու շրջակա հողերը: Իսկ գյուղի մասցած՝ արևելյան, հյուսիսային, արևմտյան կողմի հողերը, զբաղեցնում են եղբայրներ Ղասոմ, Քերիմ, Հուսեյնալի խաները: 1888-1889 թվականներին թավրիզի թեմի առաջնորդ Ստեփանոս եպիսկոպոսը, մեծ ջանք գործադրելով, կրկին ետ է վերադարձնում կորցրած հողերը⁵⁰:

Շրջակայքի թուրք խաների կողմից գյուղը թալանվել է 1911, 1916, 1917 թվականներին: 1916 թ. Նորաշեն-Հուժը բռնագանձումների և թալանի ենթարկողը Հասանովցի Միր Մամուդ խանն էր:

1896 թվականին Նորաշեն-Հուժի բնակչությունը կազմել է 33 տուն կամ մոտ 198 մարդ, 1912 թ.՝ 40 ընտանիք (մոտ 240 մարդ): Գյուղի հնագույն գերդաստաններն էին՝ Դոլուխանյանները, Բախտամյանները, Դավթյանները, Գրիգորյանները, Խոսրովանք, Բաղդասարանք, Սահակենք և այլն⁵¹:

⁵⁰ «Նոր Դար», Թիֆլիս, 1894, 5 ապրիլի, թիվ 58:

⁵¹ Հովսեփյան, 2009, հատ. I, էջ 104:

1918 թվականին օսմանյան զորքերի՝ Ղարաղաղ մուտք գործելու ժամանակ սաստիկ ակտիվացել էին նաև տեղական խաները: Այդ օրերին վրիժառույթյան փայլուն օրինակ ցույց տվեց նորաշենցի (Հուժեցի) Էրգյան (երկար) Սարգիսը, ով, Հանկարծակի Հայտնվելով այս կամ այն վայրում, սպանում և ահաբեկում էր թուրք զինվորներին և անձեռամբ⁵²:

Ղարաղաղում ճանաչված էր նորաշենցի կույր աշուղ Հակոբը: 1918 թվականի մայիսյան Հերոսամարտերից հետո կույր Հակոբը շրջում էր Ղարաղաղի հայաբնակ գյուղերով և իր երգերով գովաբանում Հայերի Հերոսապատումները:

1946 թվականին նորաշենցիների ներգաղթը Հայաստան տեղի չի ունենում: Նրանք պետք է գաղթեին 1947 թ., սակայն քաղաքական հանգամանքների պատճառով կրկին չի ստացվում: 1947 թ. Նորաշեն-Հուժի բնակչությունը կազմել է 27 ընտանիք կամ 162 շունչ: 1948-1950 թվականներին

⁵² Գալուստ (Տեր Սահակ քահանա) Եգանյանի նոթագրություններից, «Ալիք», 1979, 18 հունվարի, թիվ 11:

Նորաշենցիները տեղափոխվում են Թեհրան⁵³: Հետագա տարիներին նրանցից շատերը բնակություն են հաստատում Հայաստանում: Լքվելուց հետո գյուղի տարածքը, դաշտավայրերը, ինչպես նաև ջրաղացը շարունակել են համարվել Թավրիզի առաջնորդարանի սեփականությունը: Վերջինիս կրպատկանում նաև նույն գավառակի Զիագու գյուղը: Ներկայումս Նորաշենը թրքաբնակ է:

Օղա գյուղ

Գտնվում է Նորաշենից 7-8 կմ արևելք: Օղայում Հայերը բնակվել են մինչև 1919 թվականի գաղթը, որից հետո այն դարձել է թրքաբնակ: Վերջիններս գյուղին տվել են Ալի Բուլաղ անվանումը⁵⁴: 1896 թ. Օղայում ապրում էր 28 ընտանիք կամ 168 շունչ, 1912 թ.՝ 35 ընտանիք կամ 210 շունչ: Գյուղի ունեեր եկեղեցի: 1896 թ. դրությամբ այնտեղ հովվում էր տեր Ադամ Տեր-Սարգսյանը: Օղայում Հայանի

⁵³ Հովսեփյան, 2009, հատ. I, էջ 104:

⁵⁴ Հովսեփյան, 2009, հատ. I, էջ 106:

էին Մելիք-Օհանջանյանները (Օհանջան, Հովսեփ, Բաղդասար), որոնց սերունդները տեղափոխվել են Խանազաճ: Օղայում է ծնվել դաշնակցական գործիչ, պատմաբան, հրապարակախոս, մանկավարժ, բիմիկոս, «Ալիք» օրաթերթի երկարամյա գլխավոր խմբագիր Բաղդասար Մինասյանը, ով նաև Հայտնի պատմաբան Ռուբինա Փիրումյանի Հայրն է:

XIX դարի երկրորդ կեսից սկսած Օղայի շրջակայքի հողերի մեծ մասը պատկանում էր Ատրրպատականի Հայոց թեմին: Հողերի մի մասն էլ թուրք խանի սեփականությունն էր:

1909-1910 թվականներին Օղային բավական նեղություններ է պատճառում Մեշափարա գավառակի Ալի խանը: 1911 թ. հուլիսին գյուղը թալանի է ենթարկվում թուրքերի կողմից:

1916 թվականին Օղան Հասանովցի Միր Մամուդ խանի կողմից թալանվում ու բռնադանձումների է ենթարկվում⁵⁵:

1918 թ., երբ Դզմար էին ներխուժել օսմանյան զորքերը, Շիրինդիլ խանն ու Հույսեյն խանը ապատակում և ավերում են Օղա գյուղը: Բնակիչնե-

⁵⁵ «Արև» Բաքու, 1916, 10 փետրվարի, թիվ 30:

րից շատերը գաղթում են Թավրիզ: Այդ ժամանակ Օղան արդեն պատկանում էր ողանցի նշանավոր Թումանյանցներին⁵⁶: 1919 թվականին օղացիները վերջնականապես գաղթում են Թավրիզ, և գյուղը դառնում է թրքաբնակ:

1945 թվականի նոյեմբերի 5-ին արդեն ավելի քան երեք տասնամյակ թրքացած Օղայի խաները՝ Ալին և ՄաՀմուդը, զինված ավազակների գլուխն անցած, Հարձակվում են Դզմարի Խանագաճ գյուղի վրա:

Գյուղի ուխտատեղիներից է Ճգնավորի լեռը, որն իր գեղեցիկ դիրքով ու ձևով նման է փոքր Մասիսին: Լեռան վրա՝ գագաթից մոտ 100մ ներքև, արևմտյան լանջին է գտնվում ճգնավորի ստորգետնյա կացարանը: 1936 թվականին Հ. Հովսեփյանը մի խումբ երիտասարդների հետ այցելում է այդ կացարանը. «Քարե աստիճաններով ցած իջանք ստորգետնյա, քարակերտ մի դաշլիճ: Քարե առաստաղներից կախված էին «քարացած ստինքներ»՝ կաթկթող բաց կաթնագույն ջրով, Հատակը

⁵⁶ Գալուստ (Տեր Սահակ քահանա) Եգանյանի նոթագրություններից, «Ալիք», 1979, 11 հունվարի, թիվ 5:

ծածկված էր կենդանիների ոսկորներով և, որքան հիշում եմ՝ պատերի վրա կային գունազեղ նկարներ: Դաշլիճի չորս կողմում կային չորս փոքր սենյակներ, Հավանաբար, ճգնավորների կացարաններ: Քարե աստիճանները մի առանձին անցքով շարունակում էին ներքև իջնել: Ներքևում էլի մի քարակերտ հրաշք դաշլիճ կար՝ չորս պատերի մեջ չորս խցիկներով: Աստիճանները շարունակում էին իջնել ցած: Տղաներից մի քանիսը հրաժարվեցին ճանապարհը շարունակել, միայն երեք հոգի՝ ուխտի դիմելով ցած իջան և անմիջապես ետ եկան, քանի որ ջաշերը հանգել էին օդի պակասություն պատճառով: Տարեց գյուղացիները պնդում էին, որ Ճգնավորից ստորգետնյա ճանապարհը դուրս է գալիս Օղա գյուղի մոտ⁵⁷:

«Երանի՜ խաղաղ ու-թյո-ն անող ներին, վասնչի անոնի Լասթո՞ որդիներ պիտի կոչվեն»
(Մաթ. 5:9)

⁵⁷ Հովսեփյան, 2009, հատ. I, էջ 107:



Լուսն գյուղ

Գտնվում է Հուժի գետակի ափին: 1840 թվականին լուսնացիները գաղթել են Ղարաբաղ: 1860 թ. նրանք վերադարձել են Ղարադաղ և մեկ այլ վայրում Հիմնել նոր Լուսն: Տաթևի նոր Հարկացուցակով Լուսնի Տաթևի վանքին վճարում էր 2200 դաշեկան պտղի Հարկ: Գյուղը ուներ եկեղեցի՝ Սյրարգիս անվամբ:

XX դարասկզբին Լուսնի պատկանում էր Ղարադաղում Հայտնի Ղահրաման խանին: Նրան Հակոակորդ Էյլասքանլուի թուրքերը 1920 թվականին Հարձակվել են Լուսնայի վրա: Հերոսության կատարյալ օրինակ է ցուցադրել լուսնացի Աղաջանը: Նա գյուղից վեր՝ մի անառիկ վայրում, որտեղից հսկվում էին Լուսնայի բոլոր մատուցյցները, դիրքավորվում է և սկսում է կրակի տակ պաշտել թուրքերի բոլոր շարժումները՝ թույլ չտալով նրանց մոտենալ գյուղին: Աղաջանին Հաջողվում է երեք օր կասեցնել Էյլասքանլուի թուրքերի առաջխաղացումը դեպի

բնակավայր, և այդ ընթացքում լուսնացիները իրենց գույքով տեղափոխվում են Հարևան թրքաբնակ, սակայն բարյացկամորեն տրամադրված Արազին գյուղը: Իր խնդիրը կատարելուց հետո՝ դիրքը քելու ժամանակ, Աղաջանը խփվում է: Գաղթական լուսնացիներին որոշ ժամանակ հետո ժամանակավորապես ընդունում են Մինջվանի Վինայի Հայերը:

Հայերը Լուսնայում ապրել են մինչև 1946 թվականի օգոստոսը, որից հետո գաղթել են Հայաստան: Այդ տարի գյուղի բնակչությունը կազմել է 19 ընտանիք կամ 114 շունչ: Լուսնացիների մի մասը բնակություն է հաստատել Կապանի շրջանում, մի մասն էլ՝ Երևանի Շահումյանի շրջանում⁵⁸: Ներկայումս գյուղի հետքն անգամ չի պահպանվել⁵⁹:



⁵⁸ Հովսեփյան, 2009, հատ. I, էջ 106:
⁵⁹ Ատրպատականի հայոց թեմի առաջնորդը Ղարադաղի Լուսն գիւղում (<https://alikonline.ir>):

Չիաքու գյուղ

Հասանով գավառակի Հայկական այս գյուղի⁶⁰ տեղեկություններ շատ քիչ են պահպանվել: Չիաքուն իր շրջակա հողերով XIX դարից մինչև առնչվազն 1920-ական թվականները եկեղեցապատկան էր. պատկանում էր Ատրպատականի Հայոց թեմին: 1912 թվականին գյուղում ապրում էր 15 ընտանիք կամ 90 շունչ: Չիաքուն պարբերաբար ենթարկվում էր թուրք-քրդական տարբեր ցեղերի Հարձակումների: 1914թ. Ատրպատականի Հայոց թեմի առաջնորդը Աբրահամ բեկ անունով մի մարդ է ուղարկել Ղարադաղ՝ Առաջնորդարանին պատկանող Նորաշեն-Հուժ, Օղա, Չիաքու գյուղերը կողոպուտներից զերծ պահելու նպատակով⁶¹:

Հիշատակվել է մեկ այլ դեպք. 1917թ. գարնանը քշել-տարել են Խանաբազի և Չիաքուի ոչխարները⁶¹: Հավանական է՝ վերջնականապես Հայաթափվել է 1919թ. գաղթի ժամանակ:

⁶⁰ Հովսեփյան, 2009, հատ. I, էջ 152:
⁶¹ «Այգ», 1917, 2 ապրիլի, թիվ 13:

ԵՇԼՓԱՐԱ ԴԱՎԱԽԼԿ

Մեշափարա գավառակը ընկած է Աղղաշ լեռնաշղթայի փեշերին: Մեշափարա գավառակի Հայաբնակ գյուղերի XIX դարի վերջի և XX դարի բնակչության վիճակագրությունը հետևյալն է.

Գյուղ	1896	1904-1912	1946	1947	1954	1959	1964	1967
Ողան	264	390	150	90	107	13		
Մզկիթ	114	240						
Գրոմրնավ	126	210						
Քրլալա	120	150						
Նեփեշտ	102	96	102	102				
Միքիդի	90							

Մինչև XX դարը արդեն քված կամ թրքաբնակ էին դարձել Նեփեշտ (մինչև XX դարասկիզբ կար Վերին և Ներքին Նեփեշտ, որից մեկը նշված շրջանում արդեն քված էր), Ղարագունա, Չարու, Հափխանե, Քրժոռն, Ալիաբադ, Շրվան, Միքիդի գյուղերը:

1933թ. դրությամբ գավառակում արդեն մնացել էր երկու Հայաբնակ գյուղ՝ Ողան և Նեփեշտ:

XX դարասկզբին գավառակի Հայաբնակ գյուղերը և թրքաբնակ գյուղերի մեծ մասը պատկանում

էին ղարադաղցի Հայտնի վաճառականներ Թումանյանցներին: Դեռ 1898 թվականին գավառակի Ողան գյուղում, որը Թումանյանցների Հայրենի գյուղն էր, Վարդան Թումանյանցի կողմից կառուցվել է Ղարադաղի Հռիփսիմյան դպրոցը: Աս դպրոցը 1930 թվականին հրդեհվել է Թուրքիայից Ղարադաղ ներխուժած հրոսակախմբի կողմից⁶²:

Մեշափարայի մակերևույթը մեծ մասամբ անտառածածկ է, ինչից էլ ծագել է գավառակի անունը⁶³: Մեշափարայի անտառները Հայտնի են իրենց Հսկայական մեծության ծառերով: Գավառակի անտառները Հասանովի կամ Դզմարի անտառների հետ Համեմատած ավելի լավ էին պահպանվել շնորհիվ Թումանյանցների, որոնք Հսկում էին և թույլ չէին տալիս գյուղացիներին օգտվելու անտառի փայտանյութից. ղարադաղցի այս նշանավոր տոհմին պատկանող գյուղերի անտառները երկար ժամանակ մնացել էին անձեռնմխելի: Միայն տների կառույց

⁶² «Ալիք», 1933, 12 հոկտեմբեր, թիվ 27:

⁶³ Պարսկերեն՝ մեշա՝ miše (میشه) «անտառ», փարե՝ pāre (پاره) «կտոր, մաս, պատառ»՝ անտառամաս:

ման Համար գյուղացիները իրավունք ունեին պահանջվածի չափ իրականացնել ծառահատումներ:

Մեշափարայում անասնապահությունը ավելի էր զարգացած, քան մյուս գավառակներում, քանի որ այստեղ են գտնվում Ղարադաղի ամենամեծ արոտավայրերն ու մարգագետինները: Գավառակում են Ղարադաղում Հայտնի Դայիր և Թուփ-խանա խոտատեղիները: Այդ արոտավայրերը գտնվում են Հայկական Մզկիթ կամ Մզգիթ (1933 թվականի դրությամբ արդեն թրքաբնակ էր) գյուղից քիչ վերև՝ սարի գագաթին փռված ընդարձակ Հարթավայրերում: Սրանք անցյալում Թումանյանցների անասունների ամառանոցն էին, և այդտեղի խոտը մատակարարվում էր նրանց ձիերի երամակներին, որոնք բուծվում էին Մեշափարայում: Հետագայում այդ արոտավայրերը կռվախնձոր են դառնում շրջակա գյուղերի Համար, իսկ ավելի վաղ՝ 1912 թվականին, դրանց տիրապետման Համար տեղի են ունեցել Հայ-թուրքական զինված ընդհարումներ⁶⁴:

Մեշափարայում են գտնվում նաև Հայտնի ուխտատեղիներ Մուսալ-լամը, Պիզ Փիրը, Ցեց

⁶⁴ «Ալիք», 1933, 5 հոկտեմբերի, թիվ 26:

Փողըրը, Մըծ Փիրը, Սբ. Հակոբի վանքը: Այստեղ են նաև Ողան գյուղի Հայտնի Քմաճյուրն ու Դեղ-նաճյուրը, ռուսների կողմից Հետազոտված պղնձի և երկաթի Հանքերը: Երկաթը տեղացիների կողմից շահագործվել է, իսկ պղինձը՝ ոչ:

Մեշափարայում բարձր լեռներ չկան: Ամենաբարձրը Աղղաշն է, որի գագաթի ձյունը մնում է մինչև հունիսի վերջերը:

Գավառակում այգեգործությունը զարգացած չէ: Մնացած գավառակներում աճեցվող այնպիսի մշակաբույսեր, ինչպիսին են խաղողը, ձմերուկը, սեխը, ծիրանը, այստեղ չեն աճում: Անտառները Հարուստ են վայրի, մրգատու ծառերով:

Ոռոգման տեսանկյունից գավառը սակավաջուր է: Ոչ բոլոր գյուղերը ունեն ջրաղացներ: Արագաչոս լեռնային գետակներ շատ կան, որոնք, սակայն, հիմնականում խոր հունների և ձորերի մեջ են, և գյուղացիները չեն կարողանում լիարժեք օգտվել դրանցից: Պատճառներից մեկը նաև դա էր, որ այգեգործությունը զարգացած չէր: Գյուղացիները ստիպված իրենց բոստանները մշակում էին ձորերում:

գետակների ափերին, որոնք շատ հաճախ ավերվում էին գետերի հորդառատության պատճառով:

Տեղացիների Համար հիմնական մշակովի կուլտուրաներն էին եգիպտացորենը, լոբին, գետնախնձորը: Կորեկի և եգիպտացորենի արտերին մեծ վնաս էին Հասցնում գավառակի անտառներում տարածված արջերն ու վայրի խոզերը: Մեշափարացիների տնտեսությունների մեջ Հատուկ տեղ էր զբաղեցնում մեղվաբուծությունը, որի Համար պայմանները գավառակում շատ բարենպաստ էին: Մեղը իրացվում էր Թավրիզի շուկաներում: Հնորհիվ թիթենիների առատության՝ զարգացած էր նաև շերամապահությունը:

Ողան գյուղ

Հիշատակվել է XVII դարի վերջի Տաթևի վանքապատկան գյուղերի ցանկում: Նշանավոր Թումանյանց գերդաստանի ծննդավայրն է: Համարվում էր Մեշափարա գավառակի կենտրոնը և պատկա-

նում էր Թումանյանցներին: Գյուղը գտնվում է Պյոլ լեռան Հարավային լանջին, կաղնու անտառով պատված մի ընդարձակ Հարթուության վրա:

1840 թվականին գյուղն ամբողջությամբ գաղթել է Ղարաբաղ: Քսան տարի անց շատերը վերադարձել են և անտառով ծածկված Հին գյուղատեղից մոտ 5 կմ արևմուտք՝ մի բացատում, նոր գյուղ են հիմնել: Կառուցել են նաև նոր եկեղեցի և այն անվանել Սբ. Մարտիրոս: Այստեղ 1896 թվականին հովվել է գիրմնավցի տեր Ներսես Տեր-Ստեփանյանը: Հին եկեղեցին Սբ. Աստվածածինն էր:

Թումանյանցները այստեղ ունեին գեղեցիկ, եռաձարկ, պարսպապատ ամառանոց, որը կանգուն է նաև մեր օրերում: Այդ շինության երկրորդ Հարկը նախագծվել էր որպես դպրոց:

1900-1921 թվականներին տեղի խաների Հետ ունեցած հողային սահմանների վեճերում ու կոտորումներում գյուղը զոհեր է տվել:

1909-1910 թվականների Մեջափարա գավառակի Ալի խանը բավական նեղուլթյուններ սկսեց պատճառել Ողանին: 1909թ. ամառը նա Ողանի դիմաց Իրանի այդ ժամանակվա ամենահարուստ

գերդաստաններից մեկի՝ Թումանյանցներին պատկանող հողատարածքում իր և իր գերդաստանի համար ամառանոց է սարքում: Ալի խանով սկսեցին զրաղվել Թումանյանցները՝ իրենց՝ Ալեքսան բեկ Հաճնազարյան կառավարչի միջոցով: 1909 թվականի օգոստոսի 11-ին Թավրիզի ռուսական կայսրից մի զորախումբ գալիս է Ահար և Ռասհիմ խանից ստանում մինչև այդ ռուսահպատակներից թալանված գույքի արժեքը⁶⁵: Թումանյանցների միջնորդությամբ այդ զորախմբից մեկ ջոկատ՝ 100 հետևակ և 20 ձիավոր կողակ, զինված վինսացի երիտասարդների Հետ շարժվում են Ողան և Հարձակվում Ալի խանի ամառանոցի վրա: Հարձակման արդյունքում սպանվում է Ալի խանի աղջիկը, քեռորդին, ծառան, իսկ եղբայրը՝ Ասադուլլան, կորցնում է աջ թևը: Ռուսական զորախումբը մինչև օգոստոսի 25-ը մնում է Ողանում:

1896 թվականին գյուղը ուներ 44 տուն կամ մոտ 264 մարդ, 1912թ.՝ 64 տուն կամ 390 մարդ, իսկ 1946թ.՝ 25 ընտանիք՝ 150 բնակչությամբ:

⁶⁵ «Մշակ», 1909, 17 սեպտեմբերի, թիվ 203:

1911/թ. թուրքերի կողմից քշվել-տարվել են 11 ղանի ողջ անասունները:

1914/թ. ողանցի գինված երիտասարդները Գալուստ Եգանյանի գլխավորությամբ, թուրքական հարձակումից փրկել են Հայաբնակ Մզգիթի գյուղացիությունը: Ողանցիները տվել են երկու զրո:

1918/թ. Ասադուլլա, Թաղի և Ազիզ խաները մի քանի հարյուր ձիավորներով ներխուժում են Ողան և թալանի ենթարկում այն: Գյուղը ավերվում է, իսկ ողանցիների մի մասը գաղթում է Թավրիզ: 65 ընտանիքից մնում է 16-ը, հիմնականում ամենաաղքատները: Գալուստ Եգանյանը այս 16 ընտանիքներին ժամանակավորապես տեղափոխում է Ասադուլլա խանին պատկանող Քլալա Հայաբնակ գյուղը⁶⁶:

1919/թ. մայիսի 28-ին Ողանում տոնվում է Հայաստանի անկախության տոնը: Ղարադաղի Հայաբնակ գյուղերից հրավիրվում է մոտ 200 մարդ:

1921/թ. Ատրպատականի թեմի առաջնորդ Ներսես Մելիք-Թանգյանի միջնորդությամբ պարսից կառավարությունը երաշխավորում է Ղարա-

⁶⁶ Գալուստ (Տեր Սահակ քահանա) Եգանյանի նոթագրություններից, «Ալիք», 1979, 18 հունվարի, թիվ 11:

դաղի Հայերի ապահովությունը, ինչից հետո Ողան գյուղից գաղթածների մի մասը վերադառնում է:

1946/թ. օգոստոսին ողանցիների մի մասը՝ 10 ընտանիք կամ մոտ 60 մարդ, ներգաղթում է Հայաստան: Գյուղում մնացած ընտանիքները (15 ընտանիք կամ 90 մարդ) 1960-1966 թվականներին գաղթում են Թավրիզ ու Թեհրան: Գյուղը դառնում է թրքաբնակ:

Գլորմընավ գյուղ

Ունի գավառակի ամենագեղեցիկ գյուղի համբավը: Գտնվում է Ողանից 6 կմ հյուսիս՝ ընդարձակ հարթության վրա, ունի խիտ անտառներ և սառնորակ աղբյուրներ⁶⁷: Գյուղը հիշատակվել է XVII դարի վերջի Տաթևի վանքապատկան գյուղերի ցանկում:

Այստեղ էին հանգրվանում Շուշիից դեպի Դերիկի վանք զենք փոխադրող Հայդուկները Աիկոլ

⁶⁷ Հովսեփյան, 2009, հատ. I, էջ 122:

Դումանը, Սևքարեցի Սաքոն, Եփրեմ Դավթյանը, Շեկոն): Նման մի դրվագի մասին մենք անդրադարձել ենք նախորդ շարադրանքում: Հիշատակիկ են գյուղի տանուտեր Սարգիսը կամ մելիք Սարգիսը, քահանա Ներսես Տեր-Ստեփանյանը:

1896 թվականին Գլըմընավը ուներ 21 տուն կամ մոտ 126 շունչ բնակչություն, 1912թ.՝ 35 տուն կամ 210 շունչ բնակչություն:

Հաշվի առնելով այն Հանգամանքը, որ գյուղի տարածքով պարբերաբար զենք էր տեղափոխվում այն 1915թ. սեպտեմբերի սկզբին Աբասղուլի խանի կողմից խուզարկության է ենթարկվում: Գյուղի քահանա Վարդան Ստեփանյանի տնից Հայտնարկվում է մոսին Հրացան՝ 500 փամփուշտներով: Գյուղը ենթարկվում է թալանի և խոշոր տուգանքի⁶⁸:

Գլըմընավը Հայաբնակ էր մինչև 1919 թվականը, որից հետո դարձել է թրքաբնակ: Ներկայումս ավերակ է: Ուներ քարակուփ եկեղեցի:

⁶⁸ «Արև», Բաքու, 1915, 25 սեպտեմբերի, թիվ 156:

Նեփեշտ գյուղ

Գյուղը Հիմնել է մելիք Ղարաբյոզը: Մելիք Ղարաբյոզի ցեղի մի ճյուղը արևելյան Հայաստանում (մասնավորապես Կապանի տարածաշրջանում և Եղվարդ գյուղում) Հայտնի Միքիդից սերվող Մելիք-Ղարաբյոզյաններն են, իսկ մյուս ճյուղը՝ մահմեդականություն էր ընդունել և շարունակել տիրել Միքիդի գյուղին⁶⁹: Տաթևի վանքապատկան գյուղերի ցանկում հիշատակվել է երեք Նեփեշտ՝ Վերին, Միջին և Ներքին: XX դարում գյուղը խառնապատկան էր:

Հիշատակվել է 1886 թվականին, երբ չեղբյան թուրքական ցեղի խաները՝ ԱՀմադ, Մահմատ, Մահմուտ, իրենց զինված ուժակներով Հարձակվել էին Մինջվան և Մեշափարա գավառակների Հայաբնակ յոթ գյուղերի վրա, այդ թվում՝ Նեփեշտի⁷⁰: Առավելապես տուժել է լեռնային մեկուսացված Նեփեշտը, որից, բացի տնային գույքից, բըվել է նաև

⁶⁹ «Մշակ», 1911, 21 հուլիսի, թիվ 155:

⁷⁰ «Մշակ», 1886, 23 դեկտեմբերի, թիվ 145:

անասունը՝ 567 գլուխ: ԱՀմադ խանի, Հայդարլուկի Մահմադ բեկի, Շահվերդի և Ռուստամ քյադխու դաների առաջնորդությամբ թուրքերի զինված բազմությունը առավոտյան Հարձակվել է գյուղի վրա: Չիերի սմբակների տակ սպանվել է 8-ամյա մի երեխա: Բնակիչները սարսափահար փորձել են պատսպարվել տներում: Գրեթե բոլորը ենթարկվել են դաժան ծեծի, բռնաբարվել են կանայք և աղջիկներ: Նույնիսկ Հղի կանայք են ենթարկվել խոշտանգումների: Որոշներին Հաջողվել է փախչել և, չնայած այդ ձմռան ցուրտ օրերին, պատսպարվել մտտակա սարերում ու անտառներում: Հետագա օրերին այդ գավառակներից մոտ 33 հոգի բողոքներով ու խնդրագրերով Հասել են Թավրիզի Հայոց առաջնորդարան՝ Ստեփանոս եպիսկոպոս Մխիթարյանից օգնություն և պաշտպանություն խնդրելու: Գաղթականներին նյութական աջակցություն ցուցարկրեցին Թավրիզի Հայ մեծաշարուստներ Սարգիս Հովնանյանը, մահտեսի Սիմոն Թումանյանը, Խաչատուր Տեր-Չաքարյանը: Թավրիզում ընթացող դատը արդյունք չտվեց, և սրբազանի նախաձեռնությամբ գործի քննությունը տեղափոխվեց Թեհ-

րան: Արդյունքում՝ Նեփեշտի Հայերը ԱՀմադ խանից միայն նյութական փոխհատուցում են ստացել:

Գյուղը ուներ եկեղեցի՝ Սբ. Հակոբ, սակայն դպրոց չուներ: XIX դարի վերջում՝ գյուղի քահանան էր տեր Բաղդասար Տեր-Ղազարյանը: Մեկ այլ կիսավեր եկեղեցի գտնվում էր գյուղից դուրս՝ անտառում, որի մոտ կար բավական ընդարձակ գերեզմանատուն: Այդ եկեղեցու մկրտության ավազանի և սեղանի վրա վիմագիր արձանագրված էր ՌՃԻ (1671) թվականը, իսկ գերեզմանատան որոշ տապանաքարերի վրա առկա էր ԺԷ (17) դարի վերջի արձանագրություններ: Նեփեշտի գյուղամեջի և անտառի մեջ գտնվող եկեղեցիները ըստ ավանդության կառուցվել են մելիք Ղարազյոզի կողմից¹¹:

1896 թվականին Նեփեշտը ուներ 17 տուն կամ մոտ 102 բնակիչ, 1912թ.՝ 96 բնակիչ, 1947թ.՝ 102 բնակիչ: 1940-ականների վերջին նեփեշտցիները վերջնականապես գաղթել են:

¹¹ Կարապետ Եպիսկոպոս, 1914, էջ 177-178:

Մզկիթ գյուղ (Մզգիթ, Մազկեար)

Հիշատակվել է XVII դարի վերջի Տաթևի վանքապատկան գյուղերի ցանկում: Հաջորդ անգամ գյուղը հիշատակվել է 1789 թվականին մի ձեռագիր ճաշոցի հիշատակարանում: «Թիւին ՌՄՄՂ էր, որ Մուստաֆայ խանն եկավ Մարաղայ, եկեղեցին թալանեց, եկեղեցուն անօթն գերի անկան, լժոսկեղէն, թէ արծաթեղէն, թէ գիրք, թէ պատկերք, թէ ապրանք, ամենեքեան գերի անկան. Այս ճաշոց գիրքս գերի էլաւ անօրինաց ձեռքն, եկավ Ղրղմառն, որ կոչի Ղարադաղ: Ես Միզկիթեցի Գասպարի որդի անարժան տիրացու Պետրոս առի է Հազար Չ. շահո»⁷²:

1896թ. գյուղը ուներ 19 տուն կամ մոտ 114 մարդ (Հայ բնակչություն), 1912թ. ուներ 40 տուն կամ 240 մարդ: XX դարասկզբին գյուղը պատկանում էր ողանցի Թումանյանցներին: Մզկիթը ուներ եկեղեցի, որի քահանան 1896թ. քլալեցի տեր Բաղ-

⁷² Ավդալբեգյան Թ. Հայագիտական հետազոտություններ, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1969, էջ 340:

դասար Տեր-Ղազարյանն էր: Գյուղի մոտակայքում կային նաև երեք ուխտատեղի-սրբավայրեր:

1909-1910 թվականներին Մեշափարա գավառակի Արի խանը բավական նեղություններ է պատճառում Մզգիթին:

1911թ. Հունիսի 22-ին Խարիլ և Գեմուրչիլար թրքաբնակ գյուղերի ամբոխը շրջապատում է Մզկիթ գյուղը և մի կողմից սկսում գնդակոծություն, իսկ մյուս կողմից՝ սիրոճում հովիվներից խլել գյուղի մերձակայքում արածող անասուններն ու ձիերը: Չորս զինված Հայ հովիվները երկար հրացանաձուլությունից հետո օգնության հասնող Ռուստամբեկ Տեր-Գրիգորյանի, Հ. Հարությունյանի և երկու ուս զինծառայողների օգնությամբ կարողանում են պաշտպանել կենդանիներին և քշել գյուղը: Թուրքերը, հանդիպելով Հայերի զինված դիմադրությունը, չեն կարողանում մտնել գյուղ:

Գյուղը հիմնաֆատակ թալանվել է 1913 թվականին Շիրինդիլ ու Հոյսեյն խաների կողմից:

Հիշատակության է արժանի նաև 1914 թվականին տեղի ունեցած Մզկիթի ճակատամարտը: Ղարադաղի Իսմայիլ խանը Հարձակվում է Մզկի-

Թում պաշվող Թումանյանցների ձիերի երամակի վրա՝ միաժամանակ ցանկանալով տիրել Մզգիթի Հարուստ և ընդարձակ արոտավայրերին: Մըզգիթի Հայերը ուժեղ դիմադրություն են ցուցաբերում: Մըզգիթի տանուտեր Բեգլարը օգնություն է խնդրում՝ նույն գավառակի ամենաՀայաշատ Ողան գյուղից: Ողանցիք 70 զինված երիտասարդներով՝ 30-ը ձիավոր՝ Գալուստ Եգանյանի գլխավորությամբ, իսկ 40-ը Հետիոտն՝ զանգեզուրցի (եղվարդեցի) Մնդրեաս Տեր-Հարությունյանի հրամանատարությամբ, շտապում են օգնության: Մարտի ժամանակ թշնամին տալիս է 8 զոհ, 14 վիրավոր: Հայերից սպանվում են Ողանի տանուտեր Բաղդասար բեկը և Մկրտիչը: Կռիվը տևում է մինչև մութն ընկնելը, որից Հետո թշնամին, Հավաքելով իր զոհերին ու վիրավորներին, Հեռանում է Մզգիթի հողերից: Ողանցիք էլ Մզգիթում թողնելով 20 զինված երիտասարդ և վերցնելով երկու դիակները, վերադառնում են իրենց գյուղ:

1918թ. օսմանյան ներխուժման ժամանակ դարադաղցի մի քանի խաներ ավերում են Մզգիթը, բնակիչները գաղթում են Թավրիզ: Գյուղը Հետո

գայում չի հիշատակվում, Հավանաբար այս գաղթը վերջնական էր: Որոշ ընտանիքներ գաղթել և Հաստատվել են Կապանի տարածաշրջանի Առաջածոր և Շիկահող գյուղերում⁷³:

Քլալա գյուղ

1896 թվականին ուներ 20 տուն կամ մոտ 120 բնակիչ, 1912թ.՝ 25 տուն կամ 150 բնակիչ: Գյուղը ուներ եկեղեցի, ուր XIX դարի վերջում հովիտում էր տեր Բաղդասար Տեր-Ղազարյանը:

1917թ. փետրվարին Ասադուլա խանի կողմից ենթարկվել է թալանի, ընդ որում, վերջինս Հենց գյուղի տերն էր: 1918թ. Քլալան ժամանակավորապես ընդունել է Հարձակման ենթարկված Ողանից 16 գաղթական ընտանիք՝ Գալուստ Եգանյանի գլխավորությամբ:

Գալուստ Եգանյանի գլխավորությամբ Քլալան Ողանից գաղթականներ ընդունել է նաև 1920

⁷³ Առաջածորում հաստատվել են Շահնազարյանները, իսկ Շիկահողում՝ Արզումանյանները (Սմբատյան, 2017, էջ 41):

Թվականի աշնանը, սակայն այս անգամ ինքն էլ է Հարձակման ենթարկվել՝ կրկին Ասադուլա խանի կողմից, ինչը ստիպել է քլալացիներին և գաղթական ողանցիներին փախչել Քլալայի մերձակայքում գտնվող Մուլթ ձոր կոչվող վայրը՝ Թողնելով իրենց ողջ գույքը⁷⁴: Որոշ ժամանակ այդտեղ մնալուց Հետո գաղթականները շարժվել են դեպի Վինայի մերձակա Պլպլան աղբյուր կոչվող վայրը: Ադ ժամանակ Վինայի մոտ ընթանում էր Մինջվանի Հայուլթյան և Ամիր Արշադի միջև կռիվը:

Հետագա տարիներին Քլալան չի հիշատակվել:

Միքիդի գյուղ

Միքիդին առկա է Տաթևի վանքապատկան գյուղերի նոր ցանկում: Գյուղը հիմնել է մելիք Ղարազոյղը (ով նաև հիմնել էր Նեփեշտը): Ըստ մեկ այլ աղբյուրի, որի հեղինակը՝ Ասծատուր Ղուկաս-

⁷⁴ Գալուստ (Տեր Սահակ քահանա) Եգանյանի նոթագրություններից, «Ալիք», 1979, 18 հունվարի, թիվ 11:

յանը, Մելիք-Ղարազոյղյանների Կապանի տարածաշրջանի Գյուտկում գյուղում հաստատված սերունդներից է, Միքիդին հիմնել է մելիք Ղարազոյղի սրապը՝ մելիք Ավլանը⁷⁵: Մելիք Ղարազոյղի ցեղի մի ճյուղը Արևելյան Հայաստանում (մասնավորապես Կապանի տարածաշրջանում և Եղվարդ գյուղում) հայտնի Մելիք-Ղարազոյղյաններն են, իսկ մյուս ճյուղը, մահմեդականութուն ընդունելով, դեռ երկար տիրել է Միքիդին⁷⁶: Մելիք-Ղարազոյղյանների շառավիղներից են նաև XIX դարի կեսերին Ղարադաղից գաղթած, սկզբնական շրջանում Շիշկերտ, այնուհետև՝ Կալերում հիմնված Մելիք-Օհանջանյանները և Գյուտկումում հիմնված Մինասյան-Ղուկասյանները⁷⁷: Հետագա ժամանակաշրջանում այս մելիքական տոհմի Եղվարդի ներկայացուցիչները տեղափոխվել և բնակություն են հաստա-

⁷⁵ Սմբատյան, 2016, էջ 18:

⁷⁶ «Մշակ», 1911, 21 հուլիսի, թիվ 155, նաև՝ Գարապետ եպիսկոպոս, 1914, էջ 179:

⁷⁷ Արաքսը անցել են Գավրիիլ Մելիք-Ղարազոյղյանը, ով սկզբնական շրջանում հաստատվել է Շիշկերտում, ինչպես նաև մելիք Մինասի որդիներ՝ Ղազարը, Ղուկասը և Առաքելը՝ ընտանիքներով, ովքեր հաստատվել են Գյուտկումում (Սմբատյան 2016, էջ 25, 41, 43):

տել Շուշիում, Երևանում, Թիֆլիսում, Բարսիլում, ինչպես նաև Ռուսաստանի, Միջին Ասիայի, Պարսկաստանի և Եվրոպայի այլ քաղաքներում⁷⁸:

Միքիդին ուներ խարխուլ, կիսազետնափոր, փայտածածկ եկեղեցի, ուր XIX դարի վերջում հովվում էր տեր Մաղաքիա Տեր-Հովսեփյանը: Գյուղի մոտակայքում է գտնվում Սեյրամա սարը, որը միքիդեցիների համար ուխտատեղի էր:

Հիշատակվել է 1886 թվականի չեկեբյան թուրքական ցեղի խաների՝ Ահմադ, Մահմատ, Մահմուտ հարձակումը Մինջվան և Մեշափարա գավառակների յոթ Հայաբնակ գյուղերի վրա, այդ թվում՝ Միքիդիի⁷⁹:

Միքիդեցի էր ձլուզ կամ Ծակ Խաչին, ով Խանասորի նշանավոր արշավանքի մասնակիցներից էր, ում մասին ավելի հանգամանորեն անդրադարձել ենք այս աշխատանքում:

1896 թվականին Միքիդին ուներ 15 ընտանիք կամ մոտ 90 շունչ բնակչություն⁸⁰: Արդեն 1904/թ. և

⁷⁸ Սմբատյան, 2016, էջ 23, 36:

⁷⁹ «Մշակ», 1886, 23 դեկտեմբերի, թիվ 145:

⁸⁰ Արարատ, 1896, էջ 135-137:

դրանից հետո Միքիդին Հայաբնակ գյուղերի ցանկում այլևս չի հիշատակվում: Հավանաբար այն Հայաթափվել է 1890-ականների վերջում: Գյուղում բնակվող վերջին Հայ ընտանիքները տեղափոխվել են Դզմար գավառակի Հայկական գյուղերը⁸¹: «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանում» նշված է, որ Միքիդին մինչև 1930-ականները Հայաբնակ էր՝ 15 տուն բնակչով, ինչը, ինչպես ցույց տվեցին ուսումնասիրության շրջանակներում դիտարկված վիճակագրությունները, այդպես չէ⁸²: Ներկայումս գյուղը թրքաբնակ է:

⁸¹ Կարապետ Եպիսկոպոս, 1914, էջ 179:

⁸² Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան III, էջ 835:



ԻՆՉՎԱՆ ԴԱՎԱԽԿ

Մինջվան (Մինջևան, Մընջվան) գավառակը ընկած է Մեջափարա և Քելթան գավառակների միջև: Գավառակը ձգվում է Քելթաբար գետի ակունքներից՝ ձախ ափով մինչև Արարս գետի այն հատվածը, որտեղ Հանդիպակաց ափին Ողջի գետը խառնվում է Արաքսին: Մինջվանը փոխված է Աղդաշի լեռնահանգույցի վերջավորության փեշերին: Մինջվան գավառակի Հայաբնակ գյուղերի XIX դարի վերջի և XX դարի բնակչության վիճակագրությունը հետևյալն է.

Գյուղ	1896	1904-1912	1946	1947	1954	1959	1964	1967
Վինա	450	468	588	396	431	447	417	419
Ամրաղուլ	198	240	132	132	135	91		
Քարազուխ	138	210	270	228	248	215	180	160
Սևահող	120	150	78	78	61			
Վարդանաշեն	տ/չ	138	72	72	76	30	18	տ/չ

Այս գավառակից նախկինում հիշատակվել են նաև Փալանկտոր, Թաշտեձոր, Ղարուկինա Հայաբնակ գյուղերը:

Գավառակի անվան ծագման հետ կապված է մի սխևնդագրույց, համաձայն որի՝ XVIII դարի վերջին այդ գավառակում Հայ մելիքների և տեղական բնակչության միջև կռիվ է տեղի ունեցել, և մելիքները, հազարի չափ երիտասարդ կոտորելով, տիրել են այդ վայրերին: Այդտեղից էլ գավառակի անունը մտում է «Մին ջավան» (հազար երիտասարդ):

Հատկանշական է, որ ի տարբերություն Ղարաղաղի մնացած գավառակների՝ 1954 թվականի դրությամբ Մինջվանի հինգ Հայաբնակ գյուղերից ոչ մեկը ամբողջությամբ չէր արտագաղթել: Մինչև 1930-ականների սկիզբը գավառակի հինգ Հայաբնակ գյուղերից չորսը պատկանում էին Թումանյանց եղբայրներին, իսկ մեկը՝ Բաբարեկ Մելիք-Մուշկամբարյանին (1867-1930): Նախքան Թումանյանցների կողմից Վինային տիրելը այնտեղ տանուտերի կարգավիճակով էին Մելիք-Մուշկամբարյանները⁸³: Հայտնի է նաև, որ Մելիք-Մուշկամբարյանները XIX դարի երկրորդ կեսին տանուտիրություն են արել նաև Մեջափարա գավառակի Հայաբնակ Յուսուֆլու գյուղում:

⁸³ «Մշակ», 1911, 21 հուլիսի, թիվ 155:

Հայերից, թուրքերից ու քրդերից բացի ապրում էին նաև շամլուներ գլխավորապես Դաշուսի և Ղարաղոչ գյուղերում: Սրանք վաղուց մուսուլմանացել են իրենց լեզուն և խոսում են թուրքերեն, սակայն հավատով մահմեդական չեն, այլ շատ մասն են եզդիներին և բավական հարգանքով էին վերաբերվում թե՛ Հայերի և թե՛ Հայկական սրբավայրերի նկատմամբ: Շամլուներ ապրում էին նաև Մեշուս փարա գավառակի Շեյխ Հասանլու գյուղում⁸⁴:

Մինջվանում, բացառությամբ Սևահող գյուղի պտուղը սակավ է, իսկ հացահատիկը՝ առատ: Մինջվանցիները հիմնականում մշակում էին աշտանացան և գարնանացան ցորեն, աշնանացան և գարնանացան գարի, հաճար: Ոռոգովի հացարույթներ չէին մշակվում, քանի որ ջրի պակասություն կար: Մինջվանի Վարդանաշեն գյուղը Հայտնի էր իր ցորենով: Գյուղի նախկին անունն էր Գեանդխանան⁸⁵, և թուրքերն ու պարսիկները հենց այդ անունով էին կոչում գյուղը:

⁸⁴ Հովսեփյան, 2009, էջ 55:

⁸⁵ Պարսկերեն՝ gāndom (گندم) «ցորեն», nan (نان) «հաց» ցորենու հաց:

Առհասարակ ոռոգման տեսանկյունից շատ աննախանձելի վիճակում էր Մինջվանը, հատկապես Վինա գյուղը, ուր անասուններին ստիպված էին օրվա մեջ հանդից բերելու գյուղի աղբյուրը՝ ջրելու: Անձրևային օրերին Մինջվանի գյուղերում յեկսի ամբողջ լճեր էին գոյանում, իսկ Վինայում ցեխը այնքան շատ էր լինում, որ աղբյուրից ջուրը ձնարավոր էր լինում տանել միայն ձիերով:

Գավառակի Արաքսամերձ տարածքի կլիման շատ շոգ ու տափաստանային է, ինչի պատճառով այնտեղի գյուղերի (բոլորը թրքաբնակ) բնակչությունը՝ բժշկական օգնությունից զուրկ, խիստ տառապում էր: Այդտեղ՝ Արաքսի մոտակայքում, շատ տարածված են թունավոր օձերը, կարիճներն ու դանազան միջատները:



Վինա գյուղ

Մինչվան գավառակի կենտրոնն էր և ամենա
Հայաշատ գյուղը: Այն նաև Ղարադաղի ամենատու
կոն, կազմակերպված և զինական առումով ամե
նամարտունակ Հայկական բնակավայրն էր:

Ըստ գյուղի տարեց մարդկանց՝ գյուղի իսկա
կան անունը եղել է Բինա⁸⁶: Այն եղել է Ղարաբաղի
մի քանի Հայաբնակ գյուղերի ունևորների ձմեռա
նոցը⁸⁷: Հիշատակվել է XVII Տաթևի վանքապատ
կան գյուղերի ցանկում Վինան անվամբ:

1896 թվականին Վինան ուներ 75 տուն կամ
մոտ 450 շունչ, 1912թ.՝ 78 ընտանիք կամ 468 շունչ,
1946թ.՝ 98 ընտանիք (588 շունչ), 1954թ.՝ 70 ընտա
նիք (431 շունչ), 1959թ.՝ 69 ընտանիք (447 շունչ),
1964թ.՝ 417 շունչ, 1967թ.՝ 60 ընտանիք (419 շունչ):

Գյուղի Հնագույն տոհմերից էին՝ Նարինյաննե
րը, Գյուլբուդաղյանները, Բաբախանյանները, Միր
զոյանները, Սոփոնք: Վինան Ղարադաղի ամենա

⁸⁶ Արաբերեն՝ binā (بِنَا) «շենք, կառուցվածք, կալվածք»:

⁸⁷ Հովսեփյան, 2009, էջ 124-127:

գեղեցիկ գյուղերից մեկն էր ոչ միայն իր դիրքով,
այլև կառուցապատմամբ: Գյուղը տարածված էր
ընդարձակ, պայտաձև ձորաՀարթակին և շրջակա
լեռնալանջերին: Տները կառուցված էին առանձին,
կրի շաղախով, կային նաև Հնաձև «չարսու» տներ,
որոնք իրենց կառուցվածքով եզակի էին Ղարադա
ղի Հայաբնակ գյուղերում: Գյուղին առանձին գե
ղեցկություն էին տալիս տների բակերում աճող
թթենիները (ընդՀանրապետ թթենիներ բնորոշ էին
Ղարադաղի բոլոր գյուղերին թե՛ նախկինում և թե՛
մեր օրերում): Թթենիների առկայությամբ էր պայ
մանավորված նաև գյուղում տարածված շերամա
պահուստները: XX դարի սկզբին վինացի Մղղու
սոնց ազգը մեծ Հարստության տեր էր դարձել մե
տաքսի առևտրով: Վինայի ձմեռանոցի ձորում
նրանք թթենու մեծ այգի են ունեցել, զբաղվել են
շերամապահությամբ և ստացված մետաքսը արտա
Հանել Գանձակ⁸⁸:

Վինան աղքատ է արոտավայրերով, ինչի
պատճառով անասունների ձմեռվա պաշարը չէին

⁸⁸ Հովսեփյան, 2009, էջ 230-231:

կարողանում կուտակել և անասուններին ձմեռնելը ուղարկում էին Արաքսի ափը:

Գյուղն օգտվում էր կենտրոնում գտնվող միակ սառնորակ ու վճիտ աղբյուրից: Ուներ նաև Հանքային աղբյուր, որը Հայտնի էր ողջ Մինջվանում: Այն գտնվում էր Վինա գյուղի մերձակա ձորակում և կոչվում էր Տաք ջուր: Այս ջուրը պարունակում է գլխավորապես աղ և ծծումբ: Վինայից մի ժամ հեռավորության վրա է գտնվում մի քարայր, որը կոչվում է «Սրժնատոն»: Այստեղ նույնիսկ ամառները լինում են սառույցի Հաստ շերտեր, որոնցից օգտվում են տեղացիները: Քարայրի ջուրը, ներսից դուրս գալով, սառչում և հրաշալի ապակենման թափանցիկ սառույց է դառնում:

Վինայից դեպի Արևելյան Հայաստան մեծ գաղթ է տեղի ունեցել Թուրքմենչայի պայմանագրի կնքումից հետո ընկած ժամանակաշրջանում՝ 1829-1832 թվականներին: Գաղթական վիճեցիներին իշխանությունները բնակեցրել են Կապանի տարածաշրջանում, որտեղ նրանք վերաբնակեցրել են Եղվարդ գյուղը և Հիմնել (գաղթական քարագլխեցիների հետ միասին) Ներքին Հանդ ու Մողես գյուղե-

րը: Այս գյուղերում դեռ կարելի է լսել Ղարադաղի բարբառը:

Մելիք-Մուշկամբարյանները Վինայում տանտիրություն են արել և՛ նախքան Թումանյանցների կողմից Վինային տիրելը⁸⁹, և՛ դրանից հետո՝ Հանձինս Մելիք-Ստեփանյանների: Վերջիններս Մելիք-Մուշկամբարյանների մի ճյուղն են՝ փոխված ազգանունով:

Թումանյանցները Վինայում կառուցել են մի հսկա առևտրային տուն: Թումանյանց եղբայրների առևտրային տունը գտնվում է գյուղի արևմտյան կողմում: Այն կառուցվել է 1907 թվականին և գործածվել է Թումանյանցների կողմից թե՛ որպես առևտրային տուն, թե՛ որպես բնակարան: Ադառևտրային տնից օգտվել են Մինջվանի Հայ գյուղացիները՝ ապահովելով իրենց կարիքները: Առևտրային տունը գործել է մինչև 1937թ., ինչից հետո այդ հսկա շենքը քվել և ամայացել է: Այն պարսպապատ երկհարկանի գեղեցիկ շինություն է. «Հեռուից նշմարեցինք, որ դղեակը անցած անգամանից մինչև այսօր մեծ վերանորոգումների էր ենթարկվել

⁸⁹ «Մշակ», 1911, 21 հուլիսի, թիվ 155:

այս յետամնաց գիւղում, երկրի մշակութային մասնագութիւնների պետական հիմնարկութեան նախաձեռնութեամբ: Ծածկել էր դրա տանիքը, պատշգամբների փայտե սիւները աւելացել էին, ինչպէս նաեւ տանիքը ձիւնից եւ անձրեւների խոնաւութիւնից պաշտպանել էր թիթեղեայ ծածկով», - գրել է 2018թ. Վինա այցելած Գրիգոր Էպո Չիֆթճեանը⁹⁰:

Գյուղից մի քանի հարյուր մետր հարաւ կադնու անտառի մի ժայռոտ բացատում, գտնվում է Սբ. Հովհաննէս եկեղեցին: Կամարակապ եկեղեցին կառուցված է սպիտակ քարից, առջևում կա երկու տապանաքար: Աստեղ ուխտի էին գալիս նաև Քեյվան գավառակի հայերը և թուրքերը: Հոգեկան խանգարում կամ այլ անբուժելի հիվանդութիւններ ունեցողներին տանում էին Սբ. Հովհաննէս: Եկեղեցում առկա սրբի տապանաքարի վրա աղ էին լցնում, հիվանդը պառկում էր քարին և լիզում աղը: Եկեղեցին կառուցել են Սուփոնց նախնիները: Անօձել են Տաթևից հրավիրված վարդապետները:

⁹⁰ Ատրպատականի հայոց թեմի առաջնորդը Վինա գիւղում (<https://alikonline.ir>):

2018թ. դրուծյամբ ծածկը ավերված է, պատերն ու կամարը՝ կանգուն: Վինայից մոտ 1 կմ արևմուտք է գտնվում Ալամա Սբ. Խաչ կիսավեր մատուռը⁹¹: Գյուղում է գտնվում Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին (որոշ տվյալներով Սբ. Մարիամ): Այն ունի շինարարական արձանագրութիւն: Ներկայումս վերածվել է մզկիթի:

Այդ երկու եկեղեցիների սպասավորը XIX դարի վերջին եղել է տեր Մաղաքիա Տեր-Հովսեփյանը, այնուհետև՝ մոտ երեք տասնամյակ՝ Խորեն Տեր-Ստեփանյանը (1864-1952), ով 1920 թվականին Վինա գաղթած գիրմնավցի տեր Ներսէս Տեր-Ստեփանյանի որդին էր: Բացի այդ երկու եկեղեցիներից, գյուղում կար տուն, որտեղ պահվում էր մի խաչ: Գյուղացիները այդ տունն անվանում էին Սբ. Նշան և ամեն շաբաթ այդտեղ մոմ էին վառում: Նախկինում այդ Սբ. Նշանին Հանգանակված գումարները գնում էին Սուփի Բաղալին: Վինայից մոտ

⁹¹ Ալամա արաբերեն *alam* (آلم) բառից է, որ նշանակում է «նշան, խորհրդանիշ», ըստ այդմ՝ հավանական է, որ մատուռը պետք է ունեցած լինէր Սուրբ Խաչ նշան անունը, որ հետագայում օտարների կողմից աղավաղվել է, և մատուռի անվան բաղադրիչներից մեկը մնացել է Ալամա:

10 կմ հեռավորության վրա՝ մի լերկ բլրին է վում թրծած աղյուսից կառուցված համենի բերդը: Այն ունի օղակաձև պարիսպներ, իսկ ներսում չի նույնությունների ավերակներ են: Տեղի թուրքերը բերդը անվանում են Գյավուր դալա: Բերդի մոտ հայկական գերեզմանոց կա:

1906 թվականին Վինա է այցելել Իրանի սահմանադրական հեղափոխության առաջնորդներից, Իրանի ազգային Հերոս Սաթթար խանը, ով ծագումով դարադաղցի էր: Վինայում նրա պատվին «Պեպո» թատերական ներկայացումն է բեմադրվել թուրքերենով⁹²:

Նախկինում հիշատակվել են գյուղի վրա թուրք խաների հարձակման դեպքեր, սակայն ի տարբերություն Ղարադաղի այլ հայաբնակ գյուղերի, այստեղ նրանք միշտ հանդիպել են դիմադրության և շատ ժամանակ նույնիսկ ջարդվել են:

1886 թվականի ձմռանը չելեբյան թուրքական ցեղի խաները՝ Ահմադ, Մահմատ, Մահմուտ, իրենց զինված խմբերով հարձակվել են Մինջվան և Մե-

⁹² Խաչատուր Գրիգորյանի հուշերից, «Ալիք», 1977, 21 մայիսի, թիվ 109:

յախարա գավառակների յոթ հայաբնակ գյուղերի վրա, այդ թվում Վինայի:

Գյուղը ուներ բավական ակտիվ և զինված երիտասարդություն, ինչի պատճառով թուրքերը խուսափում էին Վինայի վրա ոսնձգություններ իրականացնելուց: 1909 թվականին Թումանյանցներին պատկանող Ողանում վրանավորված թուրք խանի վրա հարձակմանը մասնակցել են նաև Վինայի երիտասարդները: Այս ընդհարումից հետո խանի կողմնակից թուրքական ցեղերը հավաքվում են և հարձակվում Վինայի վրա: Վինացիները լավ դիմադրություն են ցույց տալիս թուրք հրոսակներին: Ընդհարումը տևում է մի քանի օր, ինչից հետո հայերը անցնում են հակահարձակման և ցարուցրիվ անում խաների հրոսակախմբերը: Խաները հաշտություն են առաջարկում, սակայն վինացիները մերժում են և կռիվը շարունակում մինչև վերջնական հաղթանակ⁹³:

Առաջին աշխարհամարտի ժամանակ, ոգևորվելով օսմանյան թուրքերի հորդորներից և կոչերից,

⁹³ Գալուստ (Տեր Սահակ քահանա) Եգանյանի նոթագրություններից, «Ալիք», 1979, 10 հունվարի, թիվ 253 (4):

ակտիվանում են նաև տեղական թուրքերը: Իսկ թվականին Շիրինդիլ և Ռուստամ խաները Հարձակվում են Մինջվան գավառակի վրա, գլխավորապես՝ Վինայի: Թումանյանցների առևտրային տան կառավարիչ Ալեքսան բեկ Մելիք-Շահնազարյանը անձամբ անցնում է զինված վինացիների ղեկավարմանը և վարում մարտը, որը տևում է մեկ շաբաթ: Խանական հրոսակները, չկարողանալով ներթափանցել Մինջվանի Հայկական գյուղերը, հետ են նահանջում:

1920 թվականին Ղարադաղի ամենաազդեցիկ խանը՝ Ամիր Արշադը, միջցեղային ընդհարումների ժամանակ 10000 զորքով դուրս է գալիս Ուզունդուլի տափարակից և շարժվում դեպի Մինջվան: Արշադը բանակը բաժանում է երկու Հավասար մասի. 5000-ը իր Համհարզներից մեկի՝ Ղահրաման խանի գլխավորությամբ շարժվում է Հասանով գավառակ, իսկ մյուս 5000-ը իր գլխավորությամբ շարժվում է դեպի Քելեյբար: Ճանապարհին ընկած էին Մինջվանի հինգ Հայկական գյուղերը: Մինջվանի Հայությունը, չընկրկելով այդ հզոր բանակին, զինվում, Հավաքվում է Վինայում և ցույց տալիս

կատաղի դիմադրություն: Չկարողանալով կոտրել Մինջվանի Հայերի դիմադրությունը՝ Արշադը ինդրում է դադարեցնել հրաձգությունը և իր զորքին ճամփա տալ դեպի Քելեյբար: Մինջվանցիք ընդունում են Արշադի առաջարկը: Արշադն էլ մի քանի հարյուր ձիավորներով մոտ մեկ շաբաթ Հանգրվանում է Վինայում: Այդ օրերին Արշադը Վինայում հրապարակայնորեն գնդակահարում է իր կողմից պատանդառված իր Հակառակորդների Հասանովի Քարիմու Դզմարի Ռահիմ խաներին:

1926 թվականին Վինայում Ղարադաղի բոլոր 33 Հայաբնակ գյուղերի ներկայացուցիչների մասնակցությամբ գումարվում է ժողով՝ նախկին Ատրրպատականի Հայոց թեմի առաջնորդ Ներսես արք. Մելիք-Թանգյանի ծննդյան վախճանամյակին և գործունեության քառասունամյակին: Ժողովը ղեկավարում էր հեղափոխական մարտիկ, տարոնցի Միհրան Գրիգորյանը: Ընտրվում է հոբելյանական Հանձնախումբ: Հանգանակվում է գումար դպրոց բացելու համար⁹⁴: Հիմնական միջոցառումները, սակայն, կազմակերպվեցին Թավրիզի առաջ-

⁹⁴ «Ալիք», 1936, 3 նոյեմբերի, թիվ 254:

նորդարանում, որտեղ իրենց մասնակցությունը նեցան նաև Ղարադաղի գրեթե բոլոր հայաբնակ գյուղերից ընտրված ներկայացուցիչները:

1946 թվականի գաղթի ժամանակ Վինայի 96 ընտանիքից գաղթել են 32-ը: Գյուղացիների թիվը 588-ից կրճատվել է 396-ի:

1952 թվականին Վինա գյուղի մի քանի բնակիչներ ու մի քանի թուրքեր ընկերություն են կազմակերպում, որը շարժիչի միջոցով Արաքսից ջուր էր մղում դեպի Նովբանդի սարահարթը, և այնտեղ մշակում են բամբակ, ծխախոտ⁹⁵:

1940-ականների վերջին ողջ Ղարադաղում մնում էր միայն մեկ քահանա՝ տեր Խորենը, ով սպասարկում էր միայն Վինային և Քարազվսին Նա հիվանդության և ծերության պատճառով արդեն չէր կարողանում սպասարկել գավառակի մնացած գյուղերին⁹⁶: Վերջիվերջո տեր Խորենն էլ իր մոտ մնացած կրտսեր որդու՝ Ստեփանի ընտանիքի հետ գաղթում է Թեհրան: Նա մահացել է 1952 թ. և

⁹⁵ Հովսեփյան, 2009, հատ. I, էջ 187:

⁹⁶ «Ալիք», 1954, 6 հոկտեմբերի, թիվ 221, 1955, 15 փետրվարի, թիվ 37, 1955, 6 հոկտեմբերի, թիվ 218:

ժողովել Թեհրանի Դուլաբ գերեզմանատանը⁹⁷: Նրա տապանաքարին արձանագրված է. «Այանչը մի վառ ճրագ է, որի Լո-յաը բարի գործն է»⁹⁸:

Ստեփան Մելիք-Ստեփանյանը (Մելիք-Մուշկամբարյան) 1925-1969 թվականներին՝ շուրջ 44 տարի, եղել է Վինայի գյուղապետը կամ, ինչպես այն ժամանակ էին ասում, քյոխվան: Ծնվել է 1897 թ.: Բազմանդամ ընտանիքի ալիսոց որդին էր⁹⁹: Եղել է Դրոյի զինվորներից և 1918 թվականին մասնակցել է ազատագրական կոխսերին: Այնուհետև վերադարձել է Իրան, հաստատվել Վինայում: Եղել է Վինայի դպրոցի հոգաբարձության նախագահը: Իր ազգանվեր գործունեության հիմնական

⁹⁷ Տեր Խորենը ուներ երեք որդի՝ Ներսես, Ավետիս, Ստեփան: Ներսեսը 1940-ականներին ընտանիքով տեղափոխվել է Գորիս, և նրա սերունդները ներկայումս ապրում են Գորիսում և Կապանում, Ավետիսը տեղափոխվել է Բաքու և տարվել բոլշևիկյան գաղափարներով: Կրտսերը՝ Ստեփանը, տեղափոխվել է Թեհրան: Տարիներ հետո (1985) Ստեփանի սերունդները գաղթել են ԱՄՆ: Այս տեղեկությունը մեզ սիրահոծար տրամադրել է Ստեփանի թոռը՝ ԱՄՆ Կալիֆորնիա նահանգում բնակվող, Ղարադաղով ապրող Վահե Տեր-Ստեփանյանը:

⁹⁸ Վարք քահանայաց, Թեհրանի հայոց թեմ, «Ալիք», հրատ., 2010, էջ 42:

⁹⁹ 8 երեխա էին՝ 5 որդի՝ Ստեփան, Սոկրատ, Արտեմ, Սմբատ, Սուրիկ, 3 դուստր՝ Գոհար... (Սուրիկ Մելիք-Ստեփանյանի կնոջ եղբոր՝ Վահե Դերստեփանյանի հետ զրույցից):

ցուցանիշը կամ արդյունքը այն էր, որ իր տանրուլթյան ժամանակաշրջանում Վինայից համեմատաբար քիչ էին գաղթում: Մեծ հարգանք էր վայելում գավառակում, այդ թվում թուրք բնակչությանը և խաների շրջանում¹⁰⁰: Նա մահացել է 1969 թվականի հուլիսի 18-ին Վինայում: Ստեփան Մելիք-Ստեփանյանի հուղարկավորությունը, բացի շրջակա գյուղերի հայերից, մասնակցեցին նաև Հարևան թուրքական գյուղերի բնակիչներն ու խաները¹⁰¹: Հաջորդ տարի՝ 1970 թվականին, Վինան դատարկվեց: Հետագա տարիներին գործում էր միայն գյուղի գերեզմանատունը, որտեղ դեռ շարունակում էին հուղարկավորել գյուղից հեռացած ու օտարության մեջ մահացած գյուղացիներին: Գյուղի հայկական գերեզմանոցում վերջին հուղարկավորությունը կատարվել է 1980 թվականին:

Վինեցիները 1970 թվականին գաղթեցին հիմնականում Թեհրան և Թավրիզ: Գաղթական վիճակների զգալի մասը հետագա տարիներին տեղափոխվեցին ԱՄՆ:

¹⁰⁰ «Ալիք», 1969, 17 սեպտեմբերի, թիվ 207:

¹⁰¹ «Ալիք», 1969, 17 սեպտեմբերի, թիվ 207:

2006 թվականի մարդահամարի արդյունքներով Վինայում ապրում էր 32 ընտանիք կամ 141 լուսն թուրք բնակչություն¹⁰²:

Քարազլուխ գյուղ

Գյուղը գտնվում է Վինայից մոտ 5 կմ հարավարևմուտք: Այն առաջին անգամ հիշատակվել է Տաթևի վանքապատկան գյուղերի ցանկում: XX դարասկզբին գյուղը պատկանում էր Թումանյանց նշանավոր ընտանիքին:

Քարազլուխի դեպի արևելյան Հայաստան մեծ գաղթ է տեղի ունեցել թուրքամենչայի պայմանագրի կնքումից հետո ընկած ժամանակաշրջանում՝ 1829-1830 թվականներին: Գաղթական քարազլուսեցիներին իշխանությունները բնակեցրել են Կապանի տարածաշրջանում, որտեղ նրանք (որոշ վիճակների ընտանիքների հետ միասին) հիմնել են Մողես և Ներքին Հանդ գյուղերը:

¹⁰² Census of the Islamic Republic of Iran, (2006), 1385 (Իրանի Իսլամական Հանրապետության մարդահամար):

Գյուղին շատ բնորոշ անուն էին տվել. այն ղարադաղ է երկու ձորակների միացման ժայռոտ լեզվակի վրա: Քարագլխեցիներին ջուր տվող միակ խղճուկ աղբյուրը գտնվում էր գյուղից դուրս արևմտյան կողմում: Աղբյուրը այնքան սակավաջուր էր, որ գիշեր ու ցերեկ կժերը հերթի էին դրված¹⁰³: Ի՞նչն էր ստիպել գյուղացիներին ապրել նման քարաքարոտ, սակավաջուր տարածքում, իրենք էլ չգիտեին, չնայած այն բանի, որ շրջակայքում հողաշատ ու ջրառատ հայկական գյուղատեղեր շատ կային:

1886 թվականին գյուղը ենթարկվել է չեչեբյան թուրքական ցեղի հարձակման:

Այդ իրադարձությունը նկարագրելիս պարբերականը գյուղի անվանումը հիշատակել է թուրքական Դաշբաշի անվանումով, որը հայերի շրջանում չէր գործածվում: 1896 թվականին Քարագլուխն ուներ 23 տուն կամ մոտ 138 շունչ բնակչություն, 1912թ.՝ 35 տուն կամ մոտ 210 շունչ, իսկ 1946թ.՝ 45 տուն կամ 270 շունչ, 1947թ.՝ 228 շունչ, 1954թ.՝ 36 տուն կամ 248 շունչ (աճը պայմանավորված է Քեյվանից մի քանի ընտանիքի տեղափոխմամբ),

¹⁰³ Հովսեփյան, 2009, հատ. I, էջ 129:

1959թ.՝ 38 տուն կամ 215 շունչ, 1964թ.՝ 180, 1967թ.՝ 160 շունչ:

Ղարադաղում բնակչության հետ գաղթում էին նաև հոգևոր սպասավորները, իսկ առաջնորդարանի կողմից նշանակված շատ հոգևորականներ հրաժարվում էին տեղափոխվել Ղարադաղ: Քարագլուխը ուներ եկեղեցի՝ Սբ. Հովհաննես, որի սպասավորը XIX դարի վերջին տեղի Մաղաբիա Տեր-Հովսեփյանն էր, XX դարի 20-ական թվերին՝ տեր Հովսեփը¹⁰⁴, այնուհետև՝ տեղի Այտրեն Տեր-Ստեփանյանը: Սբ. Հովհաննեսը ներկայումս վերածվել է մզկիթի, իսկ մուտքի վերևի արձանագրությունը մաքրվել է¹⁰⁵:

¹⁰⁴ Տեր Հովսեփը բավական սրամիտ մարդ էր. Ներսես արք. Մելիք-Թանգյանի 60-ամյակին նվիրված տոնակատարություններին Ղարադաղի յուրաքանչյուր գյուղ պետք է ներկայացուցիչ ուղարկեր Թավրիզ (ինչպես նաև մեկական գառ): Ներսես արքանը, իր հերթին տիրապետելով հումորի ուժեղ զգացումի և նկատելով, որ տեր Հովսեփը առանց գառ է եկել, դիմում է տեր Հովսեփին.

- Տե՛ր Հովսեփ, ու՛ր է բերածդ գառը:

- Մրբազա՛նն ապրած կենա, մուք սաղըս բու կյառներըս ըբպատասխանում է տեր Հովսեփը:

¹⁰⁵ Ատրպատականի հայոց թեմի առաջնորդը Քարագլուխ գիղում (<https://alikonline.ir>):

«Գիւղի եկեղեցին իր Հարաւային կողմում կառուցուեց 1946 թ. սեպտեմբերի 1-ին, որն իր դուռը, ունի փոքրիկ ցանկապատ և ծառեր, ծառ մետր մեծությամբ: Եկեղեցին քարաշէն է, անտաշ լեռնային քարով կերտած կառույց, ունի 4 մետր բարձրությամբ եւ ներքին 12x4 մետր տարածք: Փաստօրէն երկար-բարակ մէկ սրահ է, որի արեւելեան կողմում կայ խորանի բեմը:

Գիւղից մէկ կիլոմետր Հարաւ, բարձունքի վրայ է գտնւում Հայոց գերեզմանատունը, բազմաթիւ խաչաքանդակ եւ Հայերէն արձանագրութեամբ քարերով: Թէ՛ Քարագլուխ գիւղում վարպետ քանդակագործներ են եղել, փաստ է, որովհետեւ խաչաքանդակների արւեստագիտական ճաշակը եւ խորապէս Հայկական զարդանախշերը այդ են յուշում դիտողին: Դրանց մէջ ամենից փոքրը 80x60 սմ մակերես ունի եւ 50 սմ Հաստութիւն: Ունանց կողքի մասերն էլ քանդակած են, սակայն ընդհանրապէս միայն քարի մակերեսի վրայ են գտնւում նախշերը եւ արձանագրութիւնը: Գերեզմանաքարերից ունանք մէկ մետր բարձրութիւն եւ մէկ մետր երկայնք ու 30 սմ լայնք ունեն, ոտքի կանգնած դիրքով, ու

որնք աւելի Հին դարաշրջանների են պատկանում», - գրել է Գրիգոր Եպս. Չիֆթճեանը¹⁰⁶:

1946 թվականի գաղթի ժամանակ Քարագլուխը քել են 7 ընտանիք կամ 42 մարդ:

1953 թ. Խնժեներ-ճարտարապետ Սոկրատ Նավասարդյանը գյուղում բացում է չորսամյա դպրոց՝ Հոգալով դպրոցի շէնքի վերանորոգման, կաՀավորման ծախսերը, ֆինանսավորելով Հարցուր աշակերտի գրենական պիտույքները, գրքերը, 20 առավել կարիքավոր ընտանիքների երեխաների Հագուստները, նաև՝ ուսուցչի աշխատավարձը:

1964 թվականի դրութեամբ Քարագլխի գյուղապետն էր Խաչատուր Դավթեանը¹⁰⁷, իսկ գյուղի դպրոցի ուսուցիչը՝ Լուսիկ Վարդանյանը: Այդ տարի դպրոց էր Հաճախում 42 երեխա, որոնց մի մասը՝ Հարեան գյուղերից:

¹⁰⁶ Ատրպատականի հայոց թեմի առաջնորդը Քարագլուխ գիւղում (<https://alikonline.ir>):

¹⁰⁷ Քարագլխի Դավթեանների մի ճյուղը 1946 թվականի գաղթի ժամանակ վերաբնակվել է ԱՄՆ-ում և Կապանում: Կցանկանայինք հիշատակել անվանի դերձակ Արարատ Դավթեանին, ՀՀ թիվ 3 հատուկ դպրոցի երկարամյա տնօրէն Ռիտա Դավթեանին:

Գյուղը Հայաբնակ էր մինչև 1970 թվականը, որինչից Հետո քարագլխեցիները գաղթում են Թավրիզ ու Թեհրան: Գյուղը ներկայումս թրքաբնակ է:

2006թ. մարդահամարի արդյունքներով Քարագլխում (արդեն՝ Դաշբաշի) ապրում էր 10 ընտանիք կամ 41 մարդ¹⁰⁸:

Վարդույ գյուղ

Գտնվում է Վինայից մոտ 10կմ, Քարագլխից մոտ 5կմ Հարավ մի գեղատեսիլ, անտառապատ բլրի լանջին: 1896 թվականին գյուղը ուներ 33 տուն կամ մոտ 198 բնակիչ, 1912 թվականին՝ 40 տուն կամ մոտ 240 բնակիչ, 1947թ.՝ 22 տուն կամ 133 բնակիչ, 1954թ.՝ 24 տուն կամ 135 բնակիչ, 1959թ.՝ 15 տուն կամ 91 բնակիչ: XX դարասկզբին գյուղը պատկանում էր Թումանյանց ընտանիքին:

Գյուղը ուներ երեք ուխտատեղի և մեկ եկեղեցի՝ Սբ. Հռիփսիմե: Եկեղեցին կառուցվել է 1905

¹⁰⁸ Census of the Islamic Republic of Iran, (2006) 1385 (Իրանի) Բալախանի Հանրապետության մարդահամար):

1910 թվականներին: Մինչ այդ ուներ շատ խարխուլ ու գետնափոր մեկ այլ եկեղեցի, որի տեղը կառուցվեց նորը: Այստեղ XIX դարի վերջին հովվել է տեր Ներսեսը: Նոր եկեղեցին, ի տարբերություն Ղարադաղի շատ գյուղական եկեղեցիների, բավական ընդարձակ է՝ 15մX8մ: «Մուտքը կամարակապ բարով Հիւսւած է, որի վերեւ կայ եկեղեցու շինութեան վիմագիր արձանագրութիւնը: Կամարածէրարի երկու կողմերում քանդակած խաչեր կան», - գրել է Տ. Գրիգոր եպս. Չիֆթձևանը: Գերեզմանատունը բավական պահպանված է, տապանաքարերից շատերը փորագրված են և դարդաքանդակված:

Գյուղի Հին լինելու մասին խոսում է այն, որ շատ տապանաքարեր թվագրված են 1800-ականների սկզբին: «Բոլորի միջից մեր ուշադրութիւնը գրաւեց մեկ կտրիճ Հերոսի տապանաքարը, որը պատկանում է Պետրոս բեգ Մելիք-Իսքանտարեանի: Նա ծնւել էր 1860-ին եւ նաՀատակւել 1921-ին, Օսմանական բանակի դէմ անՀաւասար մարտի ընթացքում: Պետրոս բեգի տապանաքարի վրայ կարդում ենք Հետեւեալ ներբողային վկայութիւնը.

«ՊԵՏՐՈՍ ԲԷԳ՝ ՄԵԼ[ԻՔ-]ԻՍԻԿԱՆ/ՏԵԼԻՍ 1860-1921/ ԵՂԵՆԱԿԱՆ/ ՄԱՀՈՎ ՄԵԼԻՍԿԱՆ/ ԿՏՐԻՃ ԷՐ՝ ՈՒ ԱՆՎԱԽ»¹⁰⁹:

Ամրադուլը դպրոց չունեց, ինչի պատճառով երեխաները սովորում էին մոտակա Քարազրուխ գյուղում: Եկեղեցին ներկայումս վերածվել է մզկիթի:

Ամրադուլի բնակիչները վերջնականապես գաղթել են 1961 թվականի գաղթի ժամանակ: Հավանաբար տեղափոխվել են Սովետական Հայաստան: Ժամանակի պարբերականներում գյուղը գրեթե չի հիշատակվել:

ՍևաՀող գյուղ

Գտնվում է Վինայից մոտ 12 կմ հարավ-արևելք՝ Ամրադուլի մոտ՝ մի գեղատեսիլ անտառապատ լեռնալանջի վրա: Ղարադաղի գյուղերից ՍևաՀողը այն քչերից էր, որ 1888-1905 թվականների ժամանակահատվածում, շնորհիվ իր զինված երի-

¹⁰⁹ Ատրպատականի հայոց թեմի առաջնորդը Ամրադուլ գիւղում (<https://alikonline.ir>):

տասարդությանը, ոչ մի խանի կամ բեկի հարկատու չի դարձել: Ինքնապաշտպանություն կազմակերպման գործում ազդեցիկ դեր են ունեցել Մելիք-Մուշկամբարյանները, Հատկապես՝ աղա Ավետիսը, իսկ Հետագայում տանուտեր Արսենը¹¹⁰: Ի դեպ, համաձայն 1890 թվականի «Նոր Դար» պարբերականում հրատարակված մի հոդվածի՝ ՍևաՀողից են ծագել Կապանի տարածաշրջանի Եղվարդ գյուղի ազնվականները, որոնք այդ ժամանակ ութ տուն էին կազմում, և որոնք այդտեղ են տեղափոխվել 1828թ. գաղթի արդյունքում¹¹¹: Խոսքը, անշուշտ, Եղվարդ գաղթած Մելիք-Մուշկամբարյանների մի ճյուղի մասին է, չնայած բացի վերջիններից, Եղվարդում հաստատվել էին նաև Միքիդիից այնտեղ գաղթաց Մելիք-Ղարաբյուրյաններից: Մելիք-Մուշկամբարյանների մի ճյուղն էլ ինչպես արդեն նշել ենք, Վինայի Մելիք-Ստեփանյաններն են:

1896 թվականին ՍևաՀողն ուներ 20 տուն կամ մոտ 120 բնակիչ, 1912թ.՝ 150 բնակիչ, 1946-1947թ.՝ 78, 1954թ.՝ 61 բնակիչ: Գյուղն ուներ եկե-

¹¹⁰ Հովսեփյան, 2009, հատ. I, էջ 129:
¹¹¹ «Նոր Դար», 1890, 20 փետրվարի, թիվ 20:

ղեցի՝ Սբ. Սարգիս: Դպրոց չունենալու պատճառով գյուղի երեխաները սովորում էին մոտակա Քարագլուխ գյուղում: Եկեղեցին կառուցվել է 1890-ականների վերջին, սկզբում հովվում էր տեր Մաղաքիա Տեր-Հովսեփյանը:

Մինչև 1930 թվականը գյուղը պատկանում էր Բաբա բեկ, Դադաշ և Ավետիս Մելիք-Մուշկամբարյաններին: Բաբա բեկը (նաև՝ Բաբա խան) ծնվել է 1867թ. Սևահողում: Նա Թավրիզում կառուցել է Հայկական դպրոց, գրադարան, եկեղեցի և մի շարք այլ շինություններ: Թավրիզի «Գյուղփոխբանկի» Հիմնադիրներից էր: Ատրպատականում Մելիք-Մուշկամբարյաններին են պատկանել երկու տասնյակից ավել գյուղեր¹¹²: Բաբա բեկը նաև եղել է Մանթաշովի Հաշվապահը: Բաբա բեկ Մելիք-Մուշկամբարյանը մահացել է 1930 թվականին¹¹³:

¹¹² Թավրիզի առաջնորդարանն ապօրինի առք ու վաճառք է իրականացրել, «Հրապարակ» կայք, 2017, 5 դեկտեմբերի (<https://hraparak.am>):

¹¹³ Գալուստ Եգանյանի նոթագրություններում մի ողբերգական դեպք է նկարագրված՝ կապված Բաբաբեկի ընտանիքի հետ Ողանից մի քանի զինված դաշնակցականներ գնում են Սևահող և հյուրընկալվում Բաբա բեկի տանը: Մի օր վերջինիս մայրը սրանց անկողիններում գտնում է ձեռնառումը և, մտածելով թե մոտ է, պատրույզը վառում է: Պայթյունից ծեր կինը

Նրա մարմինը ամփոփվել է Սևահողի եկեղեցու բակում: 2000 թվականի դրությամբ տապանաքարը դեռ պահպանվում էր: 1946-1947 թվականների գաղթի ժամանակ Բաբա բեկի ընտանիքը տեղափոխվել է Երևան: Կինը՝ Նարինգյուլը, մահացել է Երևանում 1969 թվականին¹¹⁴:

Դադաշ և Ավետիս Մելիք-Մուշկամբարյանների սերունդները ներկայումս ապրում են Պարսկաստանում և տնօրինում են մինչ օրերս Հասաժ Մելիք-Մուշկամբարյանների հողերը¹¹⁵:

Մի ժամանակ Սևահողի վրա Թումանյանցների և Մելիք-Մուշկամբարյանների միջև վեճ կար:

կտոր-կտոր է լինում: Բաբաբեկը մտածում է, թե քանի որ սրանք կապ են ունեցել Գալուստ Եգանյանի և Վինայի տանուտեր Հովհաննես քոխվայի հետ (սա այն քոխվան է, ով սպանվել էր Սմիր Արշաղի հետ բանակցության ժամանակ), որոնք Թումանյանցների մտերիմն էին, ուրեմն սա կազմակերպվել է վերջիններիս կողմից՝ տարիների խորքից եկած թշնամանքի պատճառով: Վեճն ու թշնամանքը երկար կձգձգվեր, եթե չմիջամտեր Ներսես արք. Մելիք-Թանգյանը («Ալիք», 1979, 15 հունվարի, թիվ 8):

¹¹⁴ ՀՀ քաղաքացին դիմում է Իրանի նախագահին, «Առավոտ» (<https://www.aravot.am>):

¹¹⁵ ՀՀ քաղաքացին դիմում է Իրանի նախագահին, «Առավոտ» (<https://www.aravot.am>):

ՍևաՀողը Մինջվան գավառակի միակ Հայաբնակ գյուղն էր, որ չէր պատկանում Թումանյանցներին:

«Հայաստանի և Հարակից շրջանների տեղափոխումների բառարանում» նշված է. «ՍևաՀողի բնակիչները 1918թ. Հեռացել էին Իրանի խորքերը, իսկ 1940-ական թվերի վերջերին՝ ներգաղթել Խորհրդային Հայաստան»¹¹⁶, ինչը անշուշտ վրիպակ է: ՍևաՀողցիները 1946 թվականին Հայաստան չեն ներգաղթեցին, այլ 1956թ. տեղափոխվեցին Թավրիզ ու Թեհրան:

ՍևաՀողը ներկայումս ավերակ է: Գյուղատեղին տեղացի թուրքերը անվանում են Ղարաթուրփախ: Ավերակ է նաև գյուղի եկեղեցին: Համեմատաբար պահպանվել է գերեզմանոցը՝ բազմաթիվ արձանագրված և զարդաքանդակված տապանաքարերով:



¹¹⁶ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան IV, էջ 575:

Վարդանաշեն գյուղ (Գինդիման)

Գտնվում է Վինայից Հարավ-արևմուտք՝ անտառային գոտում՝ լեռնալանջի վրա: Գյուղը Հիմնրվել է 1899 թվականին՝ Քեյվան գավառակից գաղթած մի քանի ընտանիքների կողմից: Գյուղը պատկանում էր Թումանյանց եղբայրներին և կոչվում էր այնտեղ բնակվող Վարդան տղա Թումանյանցի անունով: Առաջին անգամ՝ Հիշատակվել է 1904 թվականին Հենց Վարդանաշեն անվամբ:

Գյուղը ուներ եկեղեցի՝ Սբ. Հովհաննես: Ներկայումս Հիմնովին ավերված է:

1904թ. գյուղը ուներ 20 տուն բնակիչ, 1912թ.՝ 138 շունչ, 1947թ.՝ 72 շունչ, 1954թ.՝ 76 շունչ, 1959թ.՝ 30 շունչ, 1964թ.՝ 18 շունչ: Ղարադաղի վերջին գաղթած Հայաբնակ գյուղերից է՝ 1969-1970 թվականներ:

Գյուղը կա նաև մեր օրերում, այն թրքաբնակ է և կոչվում է Վարդանաբաղ:



ԵՅՎԱՆ ԿՎԱՆԿ

Քեյվան գավառակը զբաղեցնում է Ղարադաղի արևելյան մասը և Մինջվան գավառակից բաժանվում է Քելեյբար գետով:

Քեյվանը Ղարադաղում ամենաՀայաշատ գավառակն էր: Քեյվան գավառակի Հայաբնակ գյուղերի XIX դարի վերջի և XX դարի բնակչությունը վիճակագրությունը Հետևյալն է.

Գյուղ	1896	1904-1912	1946	1947	1954	1959	1964	1967
Մըղըն	տ/չ	600	372	336	92	51		
Ղասումաշեն	324	360	210	168	68	104	42	տ/չ
Գեոգդարա	192	360	102	66				
Ասրան	192	300						
Բերդ	228	240	138					
Սուրուն	132	180	114					
Նորաշեն	տ/չ	120	72	72				
Աշրափ	տ/չ	120	78	62				
Մըհդավ	35	120	60	60	42	54	42	տ/չ

Նախկինում Հիշատակվել են նաև այլ Հայաբնակ գյուղեր՝ Խոջանագեղ, Ոհի դարա, Փալիկոս: 1900-1905 թվականներին Քեյվանի Հայաբնակ գյուղերին ապօրինաբար տեր են դառնում թուրք

խաները: Սկզբնական շրջանում նրանց դեմ պայքարում են Աշրափի և Դուգավդարայի (կամ Գեոգդարա) Հայերը, սակայն՝ ապարդյուն:

XX դարի սկզբին Գեոգդարան, Նորաշենը, Աշրափի կեսը պատկանում էին ՌաՀիմ խանին, Աշրափի մյուս կեսը՝ Աբդուլ Սամեդ խանին, Սուրուն, Ղասումաշենը, Բերդին Ետքը, Սըղըն, Մըհդավը՝ Քերիմ խանին, Հայապատկան էր միայն Ասրան, որը պատկանում էր ՋՀանգիր բեկ Մելիք-ՋՀանյանին՝ մինչև 1915 թվականը¹¹⁷:

Քեյվանը թերևս Ղարադաղի ամենամեծագույն գավառակն էր: Այն Հաճախակի ենթարկվում էր Հարձակումների, թալանի ավերածությունների, իրանի տեղահանությունների: Մասնավորապես Հիշատակվել են 1884, 1885, 1911, 1912, 1915, 1917, 1918 թվականների ասպատակությունները, որոնց մենք անդրադարձել ենք նախորդ գլուխներում:

1923 թվականին թուրք խաներին պատկանող սրուշ գյուղեր՝ Գեոգդարա, Աշրափ, Մըհդավու, Նորաշեն և Ասրան պետականացվել են¹¹⁸:

¹¹⁷ «Մշակ» 1911, թիվ 135:
¹¹⁸ Հովսեփյան, 2009, հատ. I, էջ 375:

Քեյվանում ապրում էին Հայեր և Թուրքեր։ Կային նաև Թափառական խաչնարած ցեղեր։ Այստեղ են գտնվում նշանավոր Խուդափերինի կամուրջները։ Քեյվանի ժողովուրդը առևտրով Հիմնականում կապված էր ԱՀար քաղաքի Հետ, քանի որ Քեյլեբար գետի հովտով անցնող ճանապարհը այն ավելի Հասանելի էր դարձնում, քան Թավրիզը։ Տվյալ դեպքում ճանապարհ ասելով պետք է Հասկանալ խճուղիներ, որոնցով երթևեկում էին ջորիներով, ձիերով և էշերով։ Իսկ ավտոմոբիլային ճանապարհները Ղարադաղում Հայտնվել են XX դարի 60-ականներին, մինչ այդ ավտոմեքենայով Ղարադաղ կարելի էր Հասնել մինչև ԱՀար գյուղաքաղաքը։

Քեյվանը իր մակերևույթով Մինջվանից ցածր է (ինչպես նկատել է ուշադիր ընթերցողը, Ղարադաղի մակերևույթի բարձրությունը արևմուտքից արևելք աստիճանաբար նվազում է. առավել բարձրադիր են արևմտյան գավառակները)։ Չնայած դրան՝ օդը առողջարար է, կլիման՝ չոր։ Ամառներն ու ձմեռները մեղմ են։ Այստեղի գյուղերի Հիմնական զբաղմունքը այգեգործությունն է։ Քեյ-

վանում բավական բարձր բերքատվությամբ աճում են այնպիսի մրգեր և պտուղներ, որոնք մնացած գավառակներում լավ չէին աճում սեխ, ձմերուկ, ծիրան, դեղձ։ Ոռոգման ջրի պակաս գավառակում չկար։ Քեյվանցիները օգտվում էին և՛ Արաքսի ջրից, և՛ Քեյլեբար գետի ու դրա վտակների ջրերից։ Այս Հանգամանքը Հնարավորություն էր տալիս գավառակում մշակել նաև բրինձ ու բամբակ։

Քեյվանը բուսականությամբ Հարուստ է, ունի նաև անտառներ, ընդարձակ արոտավայրեր, մարդագետիհններ։ Քեյվանի ոչխարը, կովը, եզն ու ձին աչքի են ընկնում իրենց գեր ու առույյգ տեսքով։

Քեյվանում է գտնվում Գյարմանդուզի նշանավոր տաք ջուրը, որից բխում է մի ջրաղաց շարժելու չափ աղբյուր և Թափվում ավազանը։ Այդտեղ կան նաև մանր-մունր շատ աղբյուրներ։ Թուրքերը այն կոչում են «լողման»։ Այստեղի տաք ջրի մեջ Հնարավոր չէ երկու վայրկյանից ավել ձեռքը պահել։ Ջրի ջերմաստիճանը բավարար է Հինգ րոպեում ձու եփելու Համար։ Այդ ջուրը օժտված է նաև մաքրելու Հատկությամբ, ինչի շնորհիվ այստեղ լվացք էին անում առանց օճառի։ Տարածաշրջանից Գյարման-

դուզի տաք ջուր էին գալիս Հողերի, ոսկորնւրի, մաշկի և այլ հիվանդութիւններ ունեցող մարդիկ: Գյարմանդուզի տաք ջուրը իր առողջարար հատկութիւններով մեծ հռչակ է վայելում թավրիզցիների մոտ: Չուրը պարունակում է ածխածին, երկաթ, ազոտ, աղ, ծծումբ: Ափերին և շրջակայքում առկա են աղի և ծծմբի նստվածքներ: Դեռ երկրկիլոմետրից զգացվում է ծծմբի հոտը, իսկ ձմեռվացուրտ ամիսներին Հեռվից երևում է ձյան հալոցքից առաջացող գոլորշին:

Քեյվանի կանանց հիմնական զբաղմունքներից էր կտավագործութիւնն ու շերամապահութիւնը: Վերջինից ստացած թելից գործում էին Ղարադաղի Հայտնի «աբրեշումից չարս[չ]ավր» (մետաքսե ծածկոցը): Տարածված էր նաև մեղվաբուծութիւնը: Քեյվանում էլ, ինչպես Ղարադաղի մնացած գավառակներում, առկա են երկաթի և պղնձի պաշարներ:

Քեյվանի գյուղացիները Ղարադաղի մնացած գավառակների բնակչութիւն համեմատ տնտեսապես բավարար տնտեսական դրութիւն մեջ էին գտնվում չնայած տեղական խաների, գլխավորապես՝ Քերիմխանի ասպատակութիւններին:

Քեյվանցիներն էլ բոլոր ղարադաղցիների նման էին՝ և՛ ավանդապաշտ, և՛ հավատացյալ, և՛ սնտոխապաշտ: Այստեղ կային սրբավայրեր, որտեղ ժողովուրդը պարտադիր ուխտի էր գնում Տրնդեղին, Բարեկենդանին, Վարդավառին, Համբարձման տոնին:

Քեյվանում են կենտրոնացված եղել Ղարադաղի Հայ մելիքները, որոնք Հետոհետե անցել են Մինջվան: Հնում Ղասումաշենին օիրել է Մելիք-Իսախան-Ղասում տոհմը, Մըհդալիս, Նորաշենիկ, Ասրան գյուղերը եղել են Մելիք-Չհանյանների սեփականութիւնը: Ասրանում Չհանգիր բեկը ունեցել է մեծ ապարանք, որը մելիքութիւն վախճանի Հետ կործանվել է: Ասրանը 1918 թվականից դարձել է թրքաբնակ:

Բերդին Ետք գյուղից վերև գտնվող սարի վրա կան բերդի ավերակներ, ինչից և գյուղը ստացել էր իր անունը: Տեղացիները գյուղը կոչում էին Բերթին Եթքը (Բերդի Ետքը): Այդ բերդը, որ հսկա քարերով է կառուցված, Հայ մելիքների փառավոր անցյալի մի կանգուն հիշատակն է:

Սըղըն գյուղ

Քելվան գավառակի կենտրոնն էր և գտնվում էր նրա հարավում: Գյուղը ուներ երկու եկեղեցի՝ մեկը փայտածածկ, որի անունը չի հիշատակվում մյուսը Սբ. Սարգիս անվամբ: Գյուղի հին ու ազդեցիկ տոհմերից էին Միրզոնք, Սարգիսանք, Մեկրոնանք, Կարապետանք և Սարգիսբեգանք, որոնք մեծ դեր են ունեցել գավառակի ինքնապաշտպանության գործում¹¹⁹:

Սըղընի բնակչությունը 1912 թվականին 600 մարդ էր, 1946թ.՝ 372, 1947թ.՝ 336, 1954թ.՝ 91, 1959թ.՝ 51: XIX դարի վերջին Սբ. Սարգիսում հովվում էր տեր Սարգիս Տեր-Մանայանը, իսկ 1946թ.՝ տեր Հովսեփը: Սըղընից իրականացված ամենամեծ գաղթը եղել է 1947թ.:

Առաջին տեղեկությունը Սըղընի վերաբերյալ հանդիպել ենք 1876 թվականի «Մշակ» օրաթերթում: «1876թ. դրությամբ Ղարաղաղի Քելվան

գավառակի ամենահայաշատ Սըղըն գյուղի համար պարսկական արքունիքի սահմանած հարկը կազմել է 25 թուման (70 ռուբլի): Սակայն գյուղի տերը՝ Բաղըր խանը, բռնությամբ գանձել էր 2550 ռուբլի և պահանջում էր ևս 1800-ը: Ծեծ ու ջարդը, ազատագրվումը մինչև վերջին կաթիլը քամված գյուղացուց արդյունք այլևս չէին տալիս: Սուրբ ծննդյան օրը, երբ գյուղի ժողովուրդը հավաքված է վնասված եկեղեցում, խանի զինված մարդիկ ներխուժում են եկեղեցի: Նրանք ջարդովիշուր են անում խաչերը, եկեղեցական գույքը, ծեծում քահանային և գյուղացիներին, սպառնում են մորթել բոլորին Հենց եկեղեցու մեջ, եթե չվճարեն խանի պահանջած դուրմարը: Իրագործելով թուրքին բնորոշ սրբապղծություններ, խանի մարդիկ բանտարկում են քահանային և ծերերին: Չմեռվա այդ ցուրտ օրերին Սըղընի տղամարդիկ գնում են Թավրիզ բողոքելու: Չսպասած, որ ճանապարհին շատերը սառչում են, այնուամենայնիվ 51 սըղընցի համնում է Առաջնորդարան, և ողջ եղելությունը պատմում Անդրեաս արքեպիս-

¹¹⁹ Հովսեփյան, 2009, հատ. I, էջ 132:

կոպոսին, որն էլ իր Հերթին բողոքը Հղում է Վարպատականի կառավարիչ՝ ՍաՀաբ դիվանին»¹²⁰:

1885 թվականին գյուղի կառավարչությունը (ինչպես Քեյվանի մնացած ութ Հայաբնակ գյուղերի) շահի կողմից Հանձնվում է Սարգիս բեկ Մելիք-Ջհանյանին: XX դարի սկզբին Սըղընը արդեն պատկանում էր Քերիմխանին:

Քեյվանի թուրք խաների կողմից գյուղը Հաճախակի էր Հարձակման և թալանի ենթարկվում սպանվում էին մարդիկ: Մասնավորապես Հիշատակվել են 1884թ., 1885թ., 1911թ., 1912թ. ավազակային Հարձակումներն ու սըղընցիների Հարկադիր գաղթերը:

Սըղընի Հայ գյուղացիները վերջնականապես գաղթել են 1961 թվականին Սովետական Հայաստան:



¹²⁰ «Մշակ», 1876, 4 փետրվարի, թիվ 4:

Ղասումաշեն գյուղ

Գավառակի երկրորդ մեծ գյուղն էր, գտնվում էր Սըղընից 3-4կմ արևելք՝ Տաք ջուր տանող ճանապարհին¹²¹: Եղել է մելիքանիստ: Պատկանել է մելիք Իսախանին և կոչվել է Իսախանի շեն: Տաթևի վանքապատկան գյուղերի ցանկում Հիշատակվել է Իսախանի շեն անվամբ: Հետագայում վերանվանվել է նրա ծոռներից մեկի՝ Ղասումի անունով: 1926 թվականի դրությամբ Ղասումաշենում սրանց սերունդների մոտ դեռ պահպանվում էին 1840թ. Էջմիածնից գրված մի քանի կոնդակներ՝ մելիք Ղասումի անունով¹²²: Այս տունից Հիշատակման արժանի է Ջհանգիր Հայրապետի Ղասումյանը, ով երկար ժամանակ պայքարել է թուրք խաների դեմ:

1885 թվականին գյուղի կառավարչությունը շահի կողմից Հանձնվել է Սարգիս բեկ Մելիք-

¹²¹ Հովսեփյան, 2009, հատ. I, 132-133:

¹²² Ալիք, 1982, 20 հունվարի, թիվ 15, Միրզայան Վ. Պ., Ղարաղաղ (Պասպատունիք):

ՋՀանյանին: Սակայն XX դարի սկզբին Ղասումաշենը արդեն պատկանում էր Քերիմխանին:

1896 թվականին Ղասումաշենի բնակչությունը կազմել է 54 տուն կամ 324 մարդ, 1912թ.՝ 360 մարդ, 1946թ.՝ 372, 1947թ.՝ 336, 1954թ.՝ 68, 1959թ.՝ 104, 1964թ.՝ 42:

Գյուղը Հաճախակի էր Հարձակման և թալանի ենթարկվում Քեյվանի թուրք խաների կողմից: Մասնավորապես Հիշատակվել են 1884թ., 1885թ., 1911թ., 1912թ. ավազակային Հարձակումները: Ընդ որում, 1911թ. ամառվա Հարձակմանը ղասումաշենացիները զինված դիմադրություն են ցույց տվել թուրք խուժանին պատճառելով կորուստներ:

Ղասումաշենը ուներ եկեղեցի՝ Սբ. Հովհաննես: XIX դարի վերջում այնտեղ հովվում էր տեր Դավիթ թը, իսկ 1946թ.՝ մեկ այլ տեր Դավիթ (Հավանաբար՝ թուրք): 2018թ. դրությամբ Սբ. Հովհաննեսը դեռ կանգուն էր:

Ղասումաշենը Մըհաբիբ Հետ միասին Քեյվանի վերջին Հայաբնակ գյուղերից էր և ամբողջ Ղարադաղի վերջին Հինգ Հայաբնակ գյուղերից մեկը: Վերջին Հայերը գյուղից գաղթել են 1970 թվական

նին¹²³: Ներկայումս թուրքաբնակ է՝ մոտ 100 բնակչությամբ:

Մըհաբիբ գյուղ

Մըհաբիբը Հիշատակվել է XVII դարի վերջի Տաթևի վանքապատկան գյուղերի ցանկում Մաշ-մարու անվամբ: Փոքրիկ ու շատ գեղեցիկ դիրքով գյուղ էր: Մըհաբիբը Ղարադաղի նշանավոր մելիքական տներից մեկի՝ Մելիք-ՋՀանյանների Հայրենի գյուղն է եղել: Գյուղի եկեղեցին շինել է մելիք Սարգսի (մելիքության տարիներ՝ 1885-1896(97)) Հայր մելիք ՋՀանը և Հենց եկեղեցու մոտ էր գտնվում Մելիք-ՋՀանյանների պապական տու-

¹²³ 2019թ. ամռանը Ատրպատականի հայոց թեմի առաջնորդը այստեղ պատահամբ հանդիպում է հայկական մի ընտանիք: Ջրուցելիս պարզվում է, որ թեհրանաբնակ են, արմատներով ղասումաշենցի և ամեն ամառ ընտանիքով հյուրընկալում են իրենց պապական տանը, որը ներկայումս ինչ-որ թուրքի է պատկանում, և այցելում են գյուղի հայկական գերեզմանատուն (Ատրպատականի հայոց թեմի առաջնորդը Ղարադաղի Ղասումաշեն գյուղում (<https://alikonline.ir>):

Նը¹²⁴: XX դարի երկրորդ տասնամյակի դրուվյալները ՄըՀդավում դեռ ապրում էին մելիք Սարգսի որդիների¹²⁵: ՄըՀդավի եկեղեցում ԺԵ դարի ձեռագիր, առանց Հիշատակարան ավետարան կար, որը Համարվում էր մելիք ՋՀանի ժամանակներից մնացած: Ավետարանը հետագա տարիներին Ղարադաղից Հավաքված այլ ձեռագրերի հետ մեկտեղ Հանձնվել է Մայր Աթոռի մատենադարան¹²⁶:

XX դարի սկզբին գյուղը պատկանում էր Քերիմ խանին: Գյուղը Հաճախակի ենթարկվում էր Քերիմ խանի և այլ խաների թալաններին և բռնագանձումներին: 1923 թվականին գյուղը պետականացվում է:

Հիշատակվել են 1884 և 1885 թվականների Հարձակումները ՄըՀդավի վրա: 1911 թվականի ամռանը իրականացված Հարձակման ու թալանի արդյունքում բնակիչները իրենց Հոտերով ստիպված քաշվել են թուրքաբնակ Ավարսին և Նիժ գյուղերը:

¹²⁴ Կարապետ եպիսկոպոս, 1914, էջ 180:

¹²⁵ Կարապետ եպիսկոպոս, 1914, էջ 181:

¹²⁶ Կարապետ եպիսկոպոս, 1914, էջ 180:

1896 թվականին ՄըՀդավում ապրում էր ընդամենը 5-6 ընտանիք՝ մոտ 30-35 մարդ, 1912թ.՝ 120 մարդ, 1946-47թթ.՝ 60 մարդ, 1954թ.՝ 42, 1959թ.՝ 54, 1964թ.՝ 42: Գյուղը ուներ եկեղեցի: XIX դարի վերջերում Հովվում էր տեր Դավիթը:

ՄըՀդավը Ղասումաշենի հետ միասին Քեյվանի վերջին Հայաբնակ գյուղերից էր և Ղարադաղի վերջին հինգ Հայաբնակ գյուղերից մեկը: Վերջին Հայերը գյուղից գաղթել են 1970 թվականին:

Աշրափ գյուղ

1912 թվականին Աշրափում ապրում էր 120 մարդ, 1946թ.՝ 78, 1947թ.՝ 60 մարդ: Գյուղը ուներ եկեղեցի, որը ներկայումս ավերակ է: XIX դարի վերջում Հովվում էր տեր Դավիթը:

1900-1905 թվականներից գյուղի մի մասի տերը ապօրինաբար դառնում է Ռահիմ խանը, մյուս մասինը՝ Աբդուլ Սամեդ խանը: Սկզբնական շրջա-

Նում աշրափցիները դիմագրութիւն էին ցուցելու, Հաճախակի լինում էին զինված ընդհարումներ:

1911 թվականին Քեյվանի մնացած Հայաբնակ գյուղերի հետ մեկտեղ թալանի ու ավերածութիւն է ենթարկում նաև Աշրափը: Հիշատակվել է նաև 1917 թվականի Հարձակումը, որի ժամանակ կրկին կողոպտվում է գյուղը, բնակիչների մի մասը գաղթում է Ղարաբաղ¹²⁷:

1923 թվականին Աշրափը պետականացվում է:

Գյուղը վերջնականապես Հայաթափվել է 1940-ականների վերջին տարիներին: Ներկայումս թուրքաբնակ է:

Նորաշեն գյուղ

Նորաշենը (Քեյվանի) հիշատակվել է XVII դարի վերջի Տաթևի վանքապատկան գյուղերի ցանկում Նորաշենիկ անվամբ: 1912 թվականին Նորաշենում ապրում էր 120 մարդ, 1946-47 թվա-

կաններին՝ 72: Գյուղը ուներ եկեղեցի: XIX դարի վերջում հովվում էր տեր Դավիթը:

XX դարի սկզբին Նորաշենը պատկանում էր Ռահիմ խանին: Ենթարկվել է Հարձակումների և ժամանակավոր արտագաղթների 1884, 1885, 1911 թվականներին: 1923թ. Նորաշենը պետականացվում է:

Նորաշենցիները վերջնականապես քել են Նորաշենը 1940-ականների վերջերին:

Գեոգղարա գյուղ (Դուգեյդարա)

1896 թվականին գյուղը ուներ 30-32 տուն կամ մոտ 192 մարդ, 1912թ.՝ 360 մարդ, 1946թ.՝ 102, 1947թ.՝ 66: Գյուղը ուներ եկեղեցի՝ Աբ. Գրիգոր: XIX դարի վերջում հովվում էր Սարգիս Տեր-Մանայանը:

1900-1905 թվականներից գյուղի տերը ապօրինաբար դառնում է Ռահիմ խանը: Սկզբնական

¹²⁷ «Մշակ», 1917, թիվ 213:



Ողանցիներ, 1932թ. («Ալիք», ԹԵՀրան, 1985թ., N28)



ԽանազաՀցիներ («Ալիք», ԹԵՀրան, 1985թ., N30)



Ավաքեմուց Անդու և դերեց Հայրիկի աղջկա սրտակը
(Վարսիկ Բաղդասարյանի անձնական արխիվից)



Ղարադաղցիների Հարսանիք ԹԵՀրանում



Քաճանայի այցը Վինա, 1965թ. (Վարսիկ Բաղդասարյանի անձնական արխիվից)



Վինեցի տղամարդիկ ծառի ստվերում ճաշելիս (Վարսիկ Բաղդասարյանի անձնական արխիվից)



Քաճանայի այցը Վինա, 1965թ. (Վարսիկ Բաղդասարյանի անձնական արխիվից)



Քաճանայի այցը Վինա, 1965թ. (Վարսիկ Բաղդասարյանի անձնական արխիվից)



Վինա, 1965թ., Թումանյանցների առևտրային տոնը
(Վարսիկ Բաղդասարյանի անձնական արխիվից)



1946թ. Խորհրդային Հայաստան (Արենի) գաղթած
ողանցիներ



Վարազի որս (Հ. Հովսեփյանի նշված
աշխատությունից)



ԽանադաՀցի տեր
Եյնիկը (Հ.
Հովսեփյանի նշված
աշխատությունից)



Վինայի գյուղապետի
որդին՝ ԱրտեմՄելիք-
Ստեփանյանը իր
ընտանիքի հետ, 1968թ.
(լուսանկարը՝ Հաբիբ
Ֆարշաֆի, «Ալիք»,
2019թ., թիվ 117)



Վինա, Իսաջանը և Աննա
Մարիամը՝ գյուղի
տատմայրը (լուսանկարը՝
Հաբիբ Ֆարշաֆի, «Ալիք»,
2019թ., թիվ 117)



Քարագլխեցիներ (Վարսիկ Բաղդասարյանի անձնական արխիվից)



Ալիաբադ գյուղը Արասբարան (Արաքսի բերան) լեռնային շրջանում



Աղաղան գյուղը ներկայումս (27.06.2018թ., լուսանկարը՝ Ատրպատականի թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Գրիգոր Ս. եպս. Չիֆթճեանի)



Իրգուլթին գյուղի ավերակները (17.08.2019թ., լուսանկարը՝ Ատրպատականի թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Գրիգոր Ս. եպս. Չիֆթճեանի)



Մարդու գյուղատեղին ներկայումս (27.08.19թ., լուսանկարը՝ Ատրպատականի թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Գրիգոր Ս. եպս. Չիֆթճեանի)



Հասանով գավառակի Աղջկաղալ բերդը (10.06.2018թ., լուսանկարը՝ Ատրպատականի թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Գրիգոր Ս. եպս. Չիֆթճեանի)



Գրքի Հեղինակի՝ Սերգեյ ԶՀանգիրյանի գերդաստանը



Մի Համայնապատկեր Մեշափարա գավառակից



Գրբմընավ գյուղը մեր օրերում



Նորաշեն գյուղը ներկայումս (10.06.2018թ., լուսանկարում՝ Ատրպատականի Հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Գրիգոր Ս. եպս. Չիֆթճեանը)



Վինայի Ալամա Սբ. Խաչ մատուռի բլուրը, տեսարան դեպի Արաքսի Հովիտը (30.06.18թ., լուսանկարը՝ Ատրպատականի թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Գրիգոր Ս. եպս. Չիֆթճեանի)



Նեփեշտի Սբ. Հակոբ եկեղեցին մեր օրերում



Քարագլուխ գյուղը (լուսանկարը՝ Ս. Կարապետյանի)



Քարագլուխ (18.07.2018թ., լուսանկարը՝ Ատրպատականի թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Գրիգոր Ս. Եպս. Չիֆթճեանի)



Քարագլխի գերեզմանատունը (18.07.2018թ., լուսանկարը՝ Ատրպատականի թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Գրիգոր Ս. Եպս. Չիֆթճեանի)



Տապանաքար Քարագլխում (18.07.2018թ., լուսանկարը՝ Ատրպատականի թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Գրիգոր Ս. Եպս. Չիֆթճեանի)



Ամրադուլի եկեղեցին (11.08.2018թ., լուսանկարը՝ Ատրպատականի թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Գրիգոր Ս. Եպս. Չիֆթճեանի)



Տապանաքար ՍևաՀողի գերեզմանատանից (26.08.2018թ., լուսանկարը՝ Ատրպատականի թեմի առաջնորդ գերշ. Տ. Գրիգոր Ս. եպս. Չիֆթճեանի)



Քեյվան և Մինջվան գավառակները իրարից բաժանող Քեյեյբար գետը (Քեյվանի ափից)



Սըղըն գյուղը (04.08.2019թ., լուսանկարը՝ Ատրպատականի թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Գրիգոր Ս. եպս. Չիֆթճեանի)



Սըղընի Հայկական գերեզմանոցը (04.08.2019թ., լուսանկարը՝ Ատրպատականի թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Գրիգոր Ս. եպս. Չիֆթճեանի)




Գեոգրարան ներկայումս (12.09.2019թ., լուսանկարը՝ Ատրպատականի թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Գրիգոր Ս. եպս. Զիֆթճեանի)



Խանագաճի Սբ. Ստեփանոս եկեղեցին և գերեզմանատունը



Խանագաճի Հայկական դպրոցի մուտքի արձանագրությունը, որ պահպանված է մինչև մեր օրերը



Իրգուլթին Հայկական գյուղի ավերակները



Այսպես էր տեսել Իրգուլթինը Ա. Հախնազարյանը (1970-ականների սկզբներ)



Իսկ այսպես տեսավ Իրգուլթինը Ս. Կարապետյանը (2017թ., ամառ)



Ողանի եկեղեցին, որ քանդվել է գանձախույզներից



Այսօր քանդված է Ողանի եկեղեցու բարավորը, ինչպես Սևասարը Հայոց Համար



Ամրադուլի եկեղեցու մուտքի մոտ



Քաճանան և Ստեփան քյոխվան, 1965թ.



Հարադադի լեռները Արաքսի ափից



Հեռվում՝ Սևասարի Հայկական գյուղերն են



Եվս մեկ պատկեր Հայոց Սևասարից



Ղարադաղի սարերը Հեռվից միշտ էլ սևին են տալիս



Ղարադաղի անտառները

դարի վերջին հովվում էր տեր Սարգիս Տեր-Մանայանը:

1911 թվականի ամռանը Քեյվանի գյուղերի վրա իրականացված Հարձակման ժամանակ սուրունցիները (ղասումաշենցիների Հեսո մեկտեղ) Հերոսական դիմադրություն են ցույց տալիս Քերիմխանի Հրոսակներին:

Սուրունցիները վերջնականապես գաղթում են 1946 թվականի գաղթի ժամանակ:

Բերդ գյուղ (Բերդին Ետք)

Բերդին Ետք գյուղը հիշատակվել է Տաթևի վանքապատկան գյուղերի ցանկում Բերդին Յետեն անվամբ:

Ենթարկվել է թուրք խուժանի Հարձակումներին 1884թ., 1885թ., 1911թ.: XX դարի սկզբին պատկանում էր Քերիմխանին:

1896 թվականին ուներ 38 տուն կամ մոտ 228 բնակիչ, 1912թ.` 240 մարդ, իսկ 1946թ.` 138: Գյուղ-

ղը ուներ եկեղեցի՝ Սբ. Հակոբ, որտեղ XIX դարի վերջին հովվում էր տեր Սարգիս Տեր-Մանայանը: Եկեղեցին ներկայումս վերածվել է մզկիթի¹²⁹:

Բերդինետքցիները վերջնականապես գաղթել են 1946 թվականին: Ներկայումս թուրքաբնակ է կոչվում է Ղալալու:

«Ի դեպ, մեր այցելութեան օրը գիւղը էլեկտրական հոսանքով էր օժտուում...: Սիւները գցել էին եւ էլեկտրական ընկերութեան բանտրները բարձրացել էին դրանց վրայ եւ լարեր քաշում մէկից միւսը: Մեր հարցին թէ մինչեւ հիմա ինչպէ՞ս էին ապրում... նկատի ունենալով 21-րդ դարի պայմանները աշխարհում, նրանք մեզ զարմացրին ասելով, որ յատուկ սարքեր են տեղադրել իրենց կտուրներում, արեւի ճառագայթներից օգտուելու եւ գիւղը գիշերատեն լուսաւորելու նպատակով», - գրել է Ատրպատականի Հայոց թեմի առաջնորդը 2019թ. այստեղ եղած ժամանակ¹³⁰:

¹²⁹ Ատրպատականի հայոց թեմի առաջնորդը Բերդ գիւղում (<https://alikonline.ir>):

¹³⁰ Ատրպատականի հայոց թեմի առաջնորդը Բերդ գիւղում (<https://alikonline.ir>):

Ասրան գյուղ

Տաթևի վանքապատկան գյուղերի ցանկում հիշատակվել են երկու Ասրաններ՝ Վերին և Ներքին:

1896 թվականին Ասրանը ուներ 32 տուն կամ 192 մարդ, 1912թ.՝ 300 մարդ: Գյուղը ուներ եկեղեցի: XIX դարի վերջին հովվում էր տեր Դավիթը:

Բազմիցս ենթարկվել է թուրքերի հարձակումներին ու թալանին՝ 1884թ., 1885թ., 1911թ., 1915թ.:

XIX դարի վերջին և XX դարի սկզբին՝ ընդհուպ մինչև վերջնական Հայաթափումը, գյուղը պատկանում էր Ջհանգիր բեկ Մելիք-Ջհանյանին (մելիքության տարիները՝ 1896(97)-1909(10), և այստեղ էր գտնվում վերջինիս մելիքական ապարանքը:

1915 թվականին Ասրանը թալանվում և ավերվում է: Ասրանցիները Խուդափերինի կամրջով գաղթում են Շուշի¹³¹: Խուդափերինից մինչև Հայկական բնակավայրերը Հասնելը գաղթականները

¹³¹ «Մշակ», 1915, 19 սեպտեմբերի, թիվ 205:

անընդհատ թալանվում ու անարգվում էին Կարիա-
գինոյի ու Ջեբրահիլի թուրք խաների ու բեկերի կող-
մից: Որոշ ընտանիքներ վերադառնում են, սակայն
գյուղում երկար բնակվելը արդեն անհնար էր: 1923
թվականին Ասրանը պետականացվում է: 1918
թվականից մինչ այսօր գյուղը թուրքաբնակ է:



**ՂԱՐԱԴՐԱԴՂԻ ՀԱՅԱԲՆԵԿ ԳՅՈՒՂԵՐԻ
ԲՆԵԿԶՈՒԹՅԱՆ ՄԼՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
ԸՍՏ ՏԱՐԵԹՎԵՐԻ**

Գավառ	Գյուղ	1896	1904-1912	1946	1947	1954	1959	1964	1967
Դզվար	Խանազահ	534	576	336					
	Իրգուրթին	240	306	408	300	125	84	156	տ/չ
	Սարդու	222	288	78					
	Աղաղան	264	246	138	138				
	Ղրշլաղ	150	234	186	186				
	Ղուլուղի	132	204	166					
Հասանով	Նորաշեն	198	240	162	162	54			
	Օղա	168	210						
	Լումա	տ/չ	108	114					
	Զիաքու	տ/չ	90						
Մեշափարա	Ողան	264	390	150	90	107	13		
	Սզկիթ	114	240						
	Գրորնալ	126	210						
	Քրլալա	120	150						
	Նեփեշտ	102	96	102	102				
	Միքիլի	90							

Մինջվան	Վինա	450	468	588	396	431	447	417	419
	Ամրաղուլ	198	240	132	132	135	91		
	Քարագլուխ	138	210	270	228	248	215	180	160
	Սևահող	120	150	78	78	61			
	Վարդանաշեն	տ/չ	138	72	72	76	30	18	տ/չ
Քեյվան	Մղրն	տ/չ	600	372	336	92	51		
	Ղասումաշեն	324	360	210	168	68	104	42	տ/չ
	Գեոգդարա	192	360	102	66				
	Ասրան	192	300						
	Բերդ	228	240	138					
	Մուրուն	132	180	114					
	Նորաշեն	տ/չ	120	72	72				
	Աշրափ	տ/չ	120	78	62				
Մըհդավ	35	120	60	60	42	54	42	տ/չ	
Ընդհանուր		7194	4126	2648	1439	1089	855	730	

«Ինչպես նկարագրեմ Ղարադաղը շափար է թորվի բերանում...» Ս. Ջ., Հենց իմացեք ամեն տնից մեկ Հոգի մեռել էր և տանում էն. լաց, կոծ, մարդ, կին, երեխա, Հարևան թուրք գյուղի ծանոթներ, որ եկել էին խառնվել մեզ, լաց էին լինում: Այժմ 32 տարի է, որ մեր Հարազատների շիրիմներն այնտեղ մնացել են անտեր, ոչ քաշանա, ոչ խոնկ չենք ծխում՝ նրանց գերեզմանների վրա, միայն Հեռվից Հեռու ասում ենք՝ աստված ձեր Հոգին լուսավորի, անտեր Հայ ննջեցյալներ †††» Մոռել է Մանյան, աղ աղ անցի ††† («ԼՂԻՎ» 21 ապրիլ, 1979թ. թիվ 80)

†վե՛՞՞†

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

-ՍԿՉԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ-

- Աբրահամ Կրետացի, Պատմություն, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., Երևան, 1973
- Մանուհա Շիրակացի, Մատենագրություն, «Սովետական գրող» Հրատ., Երևան, 1979
- Առաքել Դավրիժեցի, Պատմություն, «Սովետական գրող» Հրատ., Երևան, 1988 ^{Դավրիժեցի 1988}
- Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, «Հայաստան» Հրատ., Երևան, 1971
- Զաքարիա Ագուլեցու Օրագրությունը, ԽՍՀՄ ԳԱ Հայկական ֆիլիալ, «Արմֆանի» Հրատ., Երևան, 1938 ^{Զաքարիա Ագուլեցու օրագրությունը 1938}
- Թովմա Արծրունի և Մանոն, Պատմություն Տանն Արծրունեաց, «Մագաղաթ» Հրատ., Երևան, 2006
- Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, «Սովետական գրող» Հրատ., Երևան, 1982 ^{Գանձակեցի 1982}
- Կորյուն, Վարք Մեսրոպ Մաշտոցի, «Հայաստան» Հրատ., Երևան, 1994 ^{Կորյուն 1994}
- Ղևոնդ, Պատմություն, «Սովետական գրող» Հրատ., Երևան, 1982

Ղուկաս Սեբաստացի, Դավիթ Բեկ կամ պատմություն Ղափանցոց, Երևանի Համալսարանի Հրատ., Երևան, 1992^{Սեբաստացի 1992}

Ստեփանոս Օրբեղյան, Սյունիքի պատմություն, «Սովետական գրող» Հրատ., Երևան, 1986^{Օրբեղյան 1986}

Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, «Հայաստան» Հրատ., Երևան, 1968

Dasxuranci Movses, The History of Caucasian Albanians, London, Oxford university press, New York-Toronto, 1961,

Ptolemy, Asiae tabula tertia, V

Strabo

Товма Мецопеци, История Темурленга и его приемников, изд. «Наири», Ереван, 2005

-ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ-

Աբրահամյան Ա., Ժամանակագրություն Ստեփանոս Օրբեղյանի, ՀՍՍՌ Մատենադարան, Երևան, 1942^{Աբրահամյան 1942}

Ալիշան Ղ., Սիսական, «Հայագիտակ» Հրատ, Երևան, 2011^{Ալիշան 2011}

Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, Երեւանի Համալսարանի Հրատ, Հատ. III, Երեւան, 1926

Ավդալբեգյան Թ., Հայագիտական Հետազոտություններ, Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի Հրատ., Երևան 1969

Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, ՀԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2005^{Բայբուրդյան 2005}

Բայբուրդյան Վ., Ստեփաննոս Երեց Տերտերյանի (Հազարջրիբեցու) «Պատմագիրքը» («Հանգիտագիրքը»)՝ որպես սկզբնաղբյուր XVII-XVIII դարերի Իրանի և իրանահայության պատմության, ԵՊՀ Հրատ., Երևան, 2020

Բոռնազյան Ս. Վ., Հայաստանը և սելջուկները XI-XII դդ., Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., Երևան, 1980

Գեորգեան Վ., Լեոնահայաստանի Հերոսամարտը 1919-1921 թթ., «Ազատ խոսք» Հրատ., Երևան, 1991

Գորոյեանց Ն. Յ., Պարսկաստանի Հայերը (Պատմական, տեղագրական եւ վիճակագրական Համառօտ տեղեկություններ Պարսկաստանի Հայերի մասին՝ ամենաՀին ժամանակներէն մինչեւ 1898 թ.), «Մողերն» տպ., Թեհրան, 1968

Գրիգորյան Վ. Ռ., Երևանի խանությունը 18-րդ դարի վերջում (1780- 1800 թթ.), ՀՍՍՌ ԳԱ Հրատ., Երևան, 1958

Դավթյան Շ., Սիսիանի բնակավայրերի պատմությունը, Հրատարակչություն ՊԶ, Երևան, 1997

Եղիազարյան Ա. Ս., Հայ Բագրատունիների տերությունը 885-908 թթ. (պատմաաշխարհագրական ուսումնասիրություն), ԵՊՀ Հրատ., Երևան, 2011

Երեմյան Ս. Տ., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Հայկական ՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտ, Երևան, 1963 ^{Երևան 1963}

Ջոհրաբյան Է. Ա., Սովետական Ռուսաստանը և Հայ-իրանական Հարաբերությունները, Երևանի Համալսարանի Հրատ., Երևան 1985 ^{Ձոհրաբյան 1985}

Թեհրանի Հայոց թեմ, Վարք քահանայաց, Ալիք Հրատ., Թեհրան, 2010

Ժե դարի Հայերեն ձեռագրերի Հիշատակարաններ, մաս II, ՀՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտ, Երևան, 1958
Լեո, Երկերի ժողովածու, Հատ. I, II, III, IV, «Հայաստան» Հրատ., Երևան, 1966-1984 ^{Լեո}

Կոսիցյան Ս., Չանգեզուրի Հայերը, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., Երևան, 1969 ^{Կոսիցյան 1969}

Կարապետ եպիսկոպոս, Նիւթեր Հայ մելիքութեան մասին, Բ պրակ, Դօփեանք և Մելիք Հահնազարեանք, Ելեքթրաշարժ տպ. Մայր Աթոռայ, Ս. Էջմիածին, 1914 ^{Կարապետ եպիսկոպոս 1914}

Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ. Տ., Բարսեղյան Հ. Խ., Հայաստանի և Հարակից շրջանների տեղանունների բառարան, հատ. 1-5, Երևանի Համալսարանի Հրատ., Երևան, 1986-2001 ^{Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան}

Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, Հատ. I, Երևանի Համալսարանի Հրատ., Երևան, 1981

Հայ ժողովրդի պատմություն, Հատ. I-VI, VIII, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., Երևան, 1970-1984 ^{Հայ}

Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի Հիշատակարաններ, Հատ. Գ, (1641-1660), ՀՍՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտ, Երևան, 1984 ^{Հակոբյան 1984}

Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ Խանի Անդրկովկասյան արշավանքի մասին (աշխատասիրությամբ՝ Ռ. Տ., Տիտանյանի) ՀՍՍՀ ԳԱ Հրատ., Երևան, 1981 ^{Հայկական աղբյուրները 1981}

Հայկական սովետական Հանրագիտարան, Հատ. XII, «Հայ սովետական Հանրագիտարան» Հրատ., Երևան, 1986

Հայոց պատմություն, Հատոր II, գիրք առաջին, ՀՀ ԳԱ Պատմության ինստիտուտ, «Չանգակ» Հրատ., Երևան, 2018 ^{Հայոց պատմություն II}

Հարությունյան Ա., Գարեգին Նժդեհի 1921թ. Թավրիզի դատավարությունը, «Ազգայնական ակումբ» Հրատ., Երևան, 2004 ^{Հարությունյան 2004}

Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման Համակարգն ըստ «Աշխարհացոյցի», Երևանի Համալսարանի Հրատ., Երևան, 2001 ^{Հարությունյան 2001}

Հեյդարով Ն., Չանգեզուրի լեռներում, «Հայաստան» Հրատ., Երևան, 1977

Հովսեփյան Հ., Ղարադաղի Հայերը (Ազգագրություն, բանահյուսություն), Հատ. I-II, ՀՀ ԳԱ Հնագիտության

- և ազգագրության ինստիտուտ, «Գիտություն» Հրատ., Երևան, 2009^{Հովսեփյան 2009}
- Մանանդյան Հ., Երկեր, Հատ. Բ, Գ, Ե, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., Երևան, 1978, 1977, 1984^{Մանանդյան}
- Մանանդյան Հ., Քննական տեսություն, Հատ. Ա, ՀՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտ, Երևան, 1945
- Մովսիսյան Ա., Հայոց Պատմության աշխարհակալությունները, ԵՊՀ Հրատ., Երևան, 2008
- Յուշամատեան Ներսես Մելիք Թանգեան արքեպիսկոպոսի, կազմեց՝ Ա. Մամեան, ԹեՀրան, 1968^{Յուշամատեան Ներսես Մելիք Թանգեան արքեպիսկոպոսի 1968}
- Սիմոնյան Ա., Զանգեզուրի գոյամարտը 1920-1921թթ., Երևանի Համալսարանի Հրատ., Երևան 2000^{Սիմոնյան 2000}
- Սիմոնյան Հ., 1905-1912թթ. պարսկական Հեղափոխությունը և Հայերը, ԵՊՀ Հրատ., Երևան, 2017
- Սիմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք 3,4, ԵՊՀ Հրատ., Երևան, 2009, 2010^{Սիմոնյան 2010}
- Սմբատյան Գ., Դարձ ի շրջանս յուր, Մինասյան-Ղուկասյան տոհմի Հետքերով, «Զանգակ» Հրատ., Երևան 2016^{Սմբատյան 2016}
- Սմբատյան Գ., Սյունիք, պատմություն և Հիշողություն, «Անտարես» Հրատ., Երևան, 2019
- Սմբատյան Գ., Սյունիքը փարձուկյան մեջ: Հայ-թաթարական բախումները, «Անտարես» Հրատ., Երևան 2017^{Սմբատյան 2017}

- Սողոմոնյան Ս. Գ., Քաղաքացիական կռիվները Զանգեզուրում, «Հայպետհրատ», Երևան, 1958
- Ստեփանյան Հ., Հայ ժողովրդի պայքարը թաթար-մոնղոլական լծի դեմ, Հայկական ԽՍՀ ԳԱ Հրատ., Երևան, 1990
- Ստեփանյան Ս. Խ., Հայ առևտրական բուրժուազիան Իրանի տնտեսական կյանքում, Հայաստանի ԳԱ Հրատ., Երևան, 1992^{Ստեփանյան 1992}
- Վրացյան Ս., Կյանքի ուղիներով, Հ. Ա. տպ. «Յուսաբեր», ԳաՀիրե, 1955
- Փիրումեան-Մինասեան Ռ., Մինասեան Բ., Թաւրիզից ստալինեան գուլագ. ընդհատված պատմութիւն, ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտ, Երևան, 2019^{Փիրումեան-Մինասեան, Մինասեան 2019}
- Адонцъ Н., Армения въ эпоху Юстиниана, Типография императорской академии наук, С.Петербургъ, 1908
- Арутюнян Н. В., Биайнили, АН АССР, Институт археологии и этнографии, Ереван, 1970^{Арутюнян 1970}
- Саркисян Г. Г., Население Восточной Армении в 19-начале 20вв., Изд. «Гитутюн» НАН РА, Ереван, 2002^{Саркисян 2002}
- Энциклопедия Армянский Вопрос, Главная редакция Армянской энциклопедии, Ереван, 1991

- ՊԱՐԲԵՐՎԱՆՆԵՐ -

- «Ալիք», ԹեՀրան,
1931 (12, 16), 1933 (20, 26, 27, 28), 1935 (44), 1936 (254), 1937 (337), 1949 (112, 113, 114, 115, 118), 1950

(117), 1952 (71, 181, 182), 1953 (87, 240), 1954 (221), 1955 (37, 218), 1957 (168, 177), 1959 (285), 1962 (263), 1964 (27, 29, 30, 32, 37, 49, 55, 187), 1966 (38), 1967 (160), 1968 (116), 1969 (97, 207), 1970 (13), 1976 (72, 87), 1977 (109, 110), 1978 (250), 1979 (1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 76, 77, 78, 79, 80, 250, 251, 253), 1982 (15), 1984 (28, 29), 1985 (28, 29, 30), 2001 (162), 2019 (117)

«Ախուրեան», Ալեքսանդրապոլ

1911 (34)

«Աղաղան», Թավրիզ

1912 (1, 2, 3, 4)

«Այգ», Թավրիզ

1915 (156), 1916 (30, 76), 1917 (11, 13)

«Արարատ», Էջմիածին, Գ, մարտ, 1896

«Արև», Բաքու,

1915 (156), 1916 (15, 30, 39), 1917 (102, 171)

«Արևելք», Թավրիզ

1945 (12)

«Արոր», Թիֆլիս,

1911 (5-6)

Գիտական ընթերցումներ (Հոդվածների ժողովածու), N1, Արցախի պետական Համալսարան, Ստեփանակերտ, 2016

«Ժայռ», Թիֆլիս,

1911 (48)

Հայագիտություն Հարցեր, 1 (7), Երևան, 2016 Հակոբյան 2016

«Հայրենիք», Բոստոն,

1924 (2), 1925 (3), 1934 (10)

«Ղարադաղ», Թավրիզ

1914 (1, 5, 6, 7, 10, 11, 12)

«Մեղու Հայաստանի», Թիֆլիս,

1884 (83, 90), 1885 (99)

«Մշակ», Թիֆլիս,

1872 (27, 31), 1876 (4), 1886 (25, 53, 145), 1887 (49, 142), 1900 (120), 1909 (203), 1911 (33, 135, 154, 155), 1915 (205), 1916 (278), 1917 (213)

«Նոր Դար», Թիֆլիս,

1885 (9), 1887 (107), 1888 (66), 1890 (20), 1891 (175), 1892 (6), 1894 (58, 116)

-ՀՈՒՇԱԳԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ-

Ատրպատականի թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Գրիգոր Ս. եպս. Չիֆթճեանի ճոմփորդական նոթագրությունները, www.alikonline.ir

Գալուստ (Տեր ՍաՀակ քահանա) եգանյանի
նոթագրություններից, Ալիք, Թեհրան, 1978, N250 - 1979,
N12

Խաչատուր Մինայանի Հուշերից, Ալիք, Թեհրան, 1949,
N 112, 113, 114, 115, 118

Հրանտ Աճեմյան, «Իեպի Ղարադաղ», Ալիք, Թեհրան,
1967, N160

Մուշեղ Աթայանի Հուշերը, Ալիք, Թեհրան, 1979, N76-80

Յ. Սարո «Ատրպատականի գոյամարտը», Ալիք, Թեհրան,
1964, N27-55

Սամսոնի (Ստեփան Թադևոսյան) Հուշերը, Հայրենիք,
Բոստոն, 1923, N10

-ԶԵՌԱԳԻՐ ՄԱՏՅԱՆՆԵՐ-

Ձեռագիր ավետարան, N4316, գրիչ՝ Մինաս աբեղա,
վայր՝ Յոյժ:

Ձեռագիր N6271, ԺԴ, ԺԷ դարեր, 1730, 1867, 1901թթ.,
Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն Տանն Սիսական,
վայր՝ Տաթև

-ԲԱՆԱՎՈՐ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ-

Վահե Տեր-Ստեփանյանց, տեր Խորենի թողը (ԻԻՀ,
Թեհրան - ԱՄՆ, Կալիֆորնիա, Լա Կրեշենտա),

Վազրիկ Տեր-ՍաՀակյան, Գալուստ եգանյանի թողը
(ԻԻՀ, Թեհրան - ԱՄՆ, Կալիֆորնիա, Գլենդել,
Կինեմատոգրաֆիայի բնագավառի աշխատակից,
ռեժիսոր, Պարսկաստանում ճանաչված թարգմանիչ
(անգլերեն-պարսկերեն)):

-ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐ-

Census of the Islamic Republic of Iran, (2006) 1385,
(Իրանի Իսլամական Հանրապետության մարդահամար,
www.amar.org.ir):

Ատրպատականի Հայոց թեմի առաջնորդը Աղաղան
գիւղում, 27.06.2018, (www.alikonline.ir)

Ատրպատականի Հայոց թեմի առաջնորդը դարձյալ
Ղարադաղում, 11.08.2018, (www.alikonline.ir)

Ատրպատականի Հայոց թեմի առաջնորդը Ղարադաղի
Բերդ գիւղում, 14.07.2019, (www.alikonline.ir)

Ատրպատականի Հայոց թեմի առաջնորդը Ղարադաղի
Լումնա գիւղում, 01.12.2019, (www.alikonline.ir)

Ատրպատականի Հայոց թեմի առաջնորդը Ղարադաղի
Խանազազ գիւղում, 14.06.2018, (www.alikonline.ir)

Ատրպատականի Հայոց թեմի առաջնորդը Ղարադաղի
Ղասումաշեն գյուղում, 21.07.2019, (www.alikonline.ir)

Ատրպատականի Հայոց թեմի առաջնորդը Ղարադաղի
Վինա գյուղում, 30.06.2018, (www.alikonline.ir)

Ատրպատականի Հայոց թեմի առաջնորդը Ղարադաղի Քարագլուխ գիւղում, 18.07.2018, (www.alikonline.ir)

Ատրպատականի Հայոց թեմի առաջնորդը Ղարադաղում, 10.06.2018, (www.alikonline.ir)

Ատրպատականի Հայոց թեմի առաջնորդը Սարգու գիւղում, 27.08.2019, (www.alikonline.ir)

Թավրիզի առաջնորդարանն ապօրինի առք ու վաճառք է իրականացրել, «Հրապարակ» կայք, 2017, 5 դեկտեմբերի (<https://hraparak.am>)

ՀՀ քաղաքացին դիմում է Իրանի նախագահին, «Առավոտ» (<https://www.aravot.am>)

Մենք բոլորս քո գառներն ենք, Սրբազան՝ Հրանդ Աբրահամեանի մեկյուշը՝ Մելիք-Թանգեան Սրբազանից, 17.03.2019, (www.alikonline.ir)

Մի լուսանկարի պատմություն, Յովսեփեանց Յովսեփ, 16.12.2012, (www.alikonline.ir)

Ստրաբոն, (<https://www.encyclopedia.am>)

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

աշխատանքում տեղ գտած լուսանկարների վերաբերյալ

-Ներդիր 2-

1. Սամսոն Թաղևոսյան - Ստեփան Թաղևոսյան, ագուլիսցի, Քրիստափոր Միքայելյանի քրոջ որդին, արժեքավոր հուշագրությունների հեղինակ:
2. Գալուստ Եզանյան - Վագրիկ Տեր-Սահակյանի անձնական արխիվից:
3. Բաղդասար Մինասյանը կալանավայրում - Ռ. Փիրումյանի նշված աշխատությունից:
4. Վինայի գյուղամեջի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու մոտ, 1965թ. - նկարում՝ Անդրանիկ, Արամ, Եղիշ, Սմբատ Մելիք-Ստեփանյաններ, Լևոն, Մելիքսեթ, Հրաչ Միրզայաններ, Թաղևոս դայի, Արսեն դայի, Մարգիս Գոլբոդադյան, Մարդուց Վարդան, Բագրատ դայուց Եղիշ, Միմոն Ղահրամանյանց, Արշակ և ուրիշներ:
5. Խանազադեի խանի զինվորները հայ ընտանիք են տանում գյուղից - «Ալիք», Թեհրան, 1985թ., N29:
6. Սկառուները Խուդափերինի կամրջի մոտ - «Ալիք», Թեհրան, 1985թ., N30:
7. Ստեփան Մելիք-Ստեփանյան (Մելիք-Մուշկամբարյան), 1965թ. - Թեհրանաբնակ վիենցի Վարսիկ Բաղդասարյանի անձնական արխիվից:

-Ներդիր 3-

1. Վահան Միրզայան - դարադաղցի, Ղարադաղի վերաբերյալ արժեքավոր հուշագրությունների և վիճակագրության հեղինակ:
2. Միհրան Գրիգորյան - տարոնցի, հեղափոխական մարտիկ, Ղարադաղի դպրոցների տեսուչ:
3. Երեմ Սարուխանյան - 1924 թվականից Աղաղանի դպրոցի ուսուցիչ:

4. **Խաչատուր Գրիգորյան** - ազգային, հասարակական գործիչ, մանկավարժ: Ծնվել է 1889 թվականին Հասանով գավառակի Նորաշեն գյուղում: Մեծ հեղինակություն էր վայելում դարադաղցիների մոտ: Նրան անվանում էին «Ղարադաղի կոնսուլ»:
Ատրպատականի Խորհրդային օկուպացիայի տարիներին (1941-1946թթ.) շուրջ երկու տարով բանտարկվում է Խորհրդային իշխանության կողմից (Արաքում և Անգալիում): Բանտից ազատվում է անկոտրուն, սակայն հյուծված և առողջությունը ի սպառ կորցրած վիճակում, ինչի արդյունքում մահանում է 1947թ. փետրվարի 19-ին՝ հիսունութ տարեկան հասակում («Ալիք», 2001թ., N162):

5. **Բագրատ Հարությունյան** – Աղաղանի դպրոցի ուսուցիչ:

6. **Հովհաննես Հովսեփյան** – «Ղարադաղի հայերը» ազգագրական արժեքավոր աշխատության հեղինակը, Խանազահի դպրոցի վերջին ուսուցիչը:

7. **Սահակ քին. Եղիկայան (Մարուգե Եղիկյան)** – Նորաշենի «Մելիք-Թանգյան» դպրոցի ուսուցիչ, ալեքսանդրոպոլցի:

-Ներդիր 4-

1. **Սաթենիկ Մելիք-Աղաջանյան (Գ. Եգանյանի կինը)** – Վազրիկ Տեր-Սահակյանի անձնական արխիվից:

2. **Բաղդասար Մինասյան** - Ռ. Փիրումյանի նշված աշխատությունից:

3. **Համբարձում Գրիգորյան** - երգահան: Ծնվել է Թավրիզում՝ դարադաղցի գաղթականների ընտանիքում: Գրել է ավելի քան 200 հայկական երգ, խմբերգ, պարերգ, արևելյան-պարսկական էսքիզներ:

-Ներդիր 5-

1. **Տեր Խորեն Տեր-Ստեփանյանը իր ընտանիքով, 1945թ.** - Կապանի տարածաշրջանի Գեղի գյուղի դպրոցի տնօրեն Խորեն Տեր-Ստեփանյանի անձնական արխիվից:

2. **Ավաքեմուց Անդու և դերեց հայրիկի աղջկա պսակը** - Վարսիկ Բաղդասարյանի անձնական արխիվից:

3. Ատրպատականի թեմի թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Գրիգոր Ս. եպս. Չիֆթճեանի լուսանկարները հրապարակվել են www.alikonline.ir կայքում:

4. **Ամրադուլի եկեղեցու մոտ** - Վարսիկ Բաղդասարյանի անձնական արխիվից:

5. **Քահանան և Ստեփան քյոխվան, 1965թ.** - Վարսիկ Բաղդասարյանի անձնական արխիվից:

Աշխատանքում տեղ գտած «Ղարադաղի հայկական բնակավայրերը» քարտեզի վերաբերյալ՝

1. **Խանազահ** - գյուղը տեղորոշվել է «Earth.google» համակարգով, գյուղի «Khangah» մինչ օրս պահպանված անվանման միջոցով:

2. **Իրգութին** - գյուղատեղը տեղորոշվել է «Earth.google» համակարգով, սույն աշխատանքի ստեղծման ընթացքում Իրգութինի տեղադրման վայրի վերաբերյալ հավաքագրված տեղեկությունների և Տ. Գրիգոր Ս. եպս. Չիֆթճեանի Իրգութինի վերաբերյալ իրականացրած նոթագրությունների և լուսանկարների միջոցով: Հ. Հովսեփյանի «Ղարադաղի հայերը» ազգագրական,

¹ Քարտեզագրման աշխատանքները իրականացրել ենք <https://e-arth.google.com> համակարգի միջոցով: Նախկին հայաբնակ գյուղերի տեղորոշման հարցում օգտվել ենք համակարգի ընձեռած արբանյակային տեսապատկերներից (նշված օտարալեզու գյուղանվանումներով), սույն աշխատանքի ստեղծման ընթացքում գյուղերի տեղադրման վայրերի վերաբերյալ հավաքագրված տեղեկություններից, Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Գրիգոր Ս. եպս. Չիֆթճեանի ճանապարհորդական նոթագրություններից (www.alikonline.ir), ինչպես նաև Հ. Հովսեփյանի «Ղարադաղի հայերը» ազգագրական, բանահյուսական գրքում գետնից ված քարտեզից:

բանահյուսական գրքում գետեղված քարտեզում Իրգութինը տեղադրված է Ուշտուբինի գետակի աջ ափին, մինչդեռ այն գտնվում է ձախ ափին՝ լեռան արևելյան լանջին:

3. **Սարդու** - գյուղատեղը տեղորոշվել է Տ. Գրիգոր Ս. եպս. Չիֆթճեանի Սարդուի վերաբերյալ իրականացրած նոթագրությունների և լուսանկարների, Հ. Հովսեփյանի «Ղարադաղի հայերը» ազգագրական, բանահյուսական գրքում գետեղված քարտեզի միջոցով:

4. **Աղաղան** - գյուղը տեղորոշվել է «[Earth.google](#)» համակարգի արբանյակային լուսանկարների, սույն աշխատանքի ստեղծման ընթացքում Աղաղանի տեղադրման վայրի վերաբերյալ հավաքագրված տեղեկությունների և Տ. Գրիգոր Ս. եպս. Չիֆթճեանի՝ Աղաղանի վերաբերյալ իրականացրած նոթագրությունների և լուսանկարների միջոցով:

5. **Ղըշլաղ** - գյուղը տեղորոշվել է «[Earth.google](#)» համակարգով, գյուղի «Qeshlaq-e Aramaneh» մինչ օրս պահպանված անվանման միջոցով:

6. **Ղուլուղի** - գյուղատեղին (գյուղը չի պահպանվել) տեղորոշվել է Հ. Հովսեփյանի «Ղարադաղի հայերը» գրքում գետեղված քարտեզի և «[Earth.google](#)» համակարգի արբանյակային լուսանկարների միջոցով:

7. **Նորաշեն** - գյուղը տեղորոշվել է «[Earth.google](#)» համակարգով, գյուղի՝ «Tazeh Kand» մինչ օրս պահպանված անվանման միջոցով:

8. **Մբ. Գևորգ** - եկեղեցու վայրը տեղորոշվել է «[Earth.google](#)» համակարգում Մբ. Գևորգ եկեղեցու վերաբերյալ առկա նշումով: Հ. Հովսեփյանի քարտեզում Մբ. Գևորգը տեղադրված է իրական վայրից մոտ 8կմ դեպի հարավ-արևմուտք:

9. **Օղա** - գյուղը տեղորոշվել է սույն ուսումնասիրության արդյունքում բացահայտված գյուղի նոր անվանման՝ «Ali Bolaghi», և «[Earth.google](#)» համակարգի միջոցով:

10. **Լումա** - գյուղը տեղորոշվել է «[Earth.google](#)» համակարգով, գյուղի՝ «Lomeh» մինչ օրս պահպանված անվանման միջոցով: Հ.

Հովսեփյանի քարտեզում Լուման տեղադրված է իրական վայրից մոտ 4,5կմ դեպի հյուսիս:

11. **Զիաքու** - գյուղատեղին տեղորոշվել է Հ. Հովսեփյանի «Ղարադաղի հայերը» գրքում գետեղված քարտեզի միջոցով:

12. **Ողան** - գյուղը տեղորոշվել է «[Earth.google](#)» համակարգի, ինչպես նաև համակարգում առկա գյուղի նկարների (Թումանյանցների՝ Ողանի առևտրային տան) միջոցով:

13. **Սզկիթ** - գյուղը տեղորոշվել է սույն աշխատանքի ստեղծման ընթացքում Սզկիթի տեղադրման վայրի վերաբերյալ հավաքագրված ստույգ տեղեկությունների, ինչպես նաև Հ. Հովսեփյանի քարտեզի միջոցով:

14. **Յուսուֆու** - գյուղատեղին տեղորոշվել է «[Earth.google](#)» համակարգով, գյուղատեղի՝ «Yusoflu» մինչ օրս պահպանված անվանման միջոցով:

15. **Գըրմընավ** - գյուղատեղին տեղորոշվել է «[Earth.google](#)» համակարգում գյուղատեղիի վայրում կցված ավերակների լուսանկարների և սույն աշխատանքի ընթացքում ձեռքբերված Գըրմընավի գյուղի ավերակների լուսանկարների համադրության միջոցով:

16. **Քըլալա** - գյուղատեղին տեղորոշվել է Հ. Հովսեփյանի «Ղարադաղի հայերը» ազգագրական, բանահյուսական գրքում գետեղված քարտեզի և «[Earth.google](#)» համակարգի արբանյակային լուսանկարների միջոցով:

17. **Նեփեշտ** - գյուղատեղին տեղորոշվել է «[Earth.google](#)» համակարգում գյուղատեղիի վայրում կցված Նեփեշտի եկեղեցու լուսանկարների և Տ. Գրիգոր Ս. եպս. Չիֆթճեանի Նեփեշտի վերաբերյալ իրականացրած լուսանկարների միջոցով:

18. **Միքիդի** - գյուղը տեղորոշվել է «[Earth.google](#)» համակարգով, գյուղի՝ «Makidi» մինչ օրս պահպանված անվանման միջոցով:

19. **Վինա** - գյուղը տեղորոշվել է «[Earth.google](#)» համակարգով, գյուղի՝ «Vinaq» մինչ օրս պահպանված անվանման միջոցով:

20. **Ամրադուլ** - գյուղը տեղորոշվել է «[Earth.google](#)» համակարգով և սույն ուսումնասիրության ընթացքում գյուղի

տեղադրման վայրի վերաբերյալ ձեռքբերած հստակ տեղեկություններով:

21. **Քարագլուխ** - գյուղը տեղորոշվել է «[Earth.google](#)» համակարգով և սույն ուսումնասիրության ընթացքում գյուղի տեղադրման վայրի վերաբերյալ ձեռքբերած հստակ տեղեկություններով:
22. **Սևահող** - գյուղատեղը տեղորոշվել է «[Earth.google](#)» համակարգով, սույն աշխատանքի ստեղծման ընթացքում Սևահողի տեղադրման վայրի վերաբերյալ հավաքագրված տեղեկությունների և Տ. Գրիգոր Ս. եպս. Չիֆթճեանի Սևահողի վերաբերյալ իրականացրած նոթագրությունների միջոցով:
23. **Վարդանաշեն** - գյուղը տեղորոշվել է «[Earth.google](#)» համակարգով, գյուղի՝ «Vardanabad» մինչ օրս պահպանված անվանման միջոցով: Հ. Հովսեփյանի քարտեզում գյուղը տեղադրված է իրական տեղադրման վայրից մոտ 3կմ դեպի արևմուտք:
24. **Սըղըն** - գյուղը տեղորոշվել է «[Earth.google](#)» համակարգով, գյուղի «Segin» մինչ օրս պահպանված անվանման միջոցով:
25. **Ղասումաշեն** - գյուղը տեղորոշվել է «[Earth.google](#)» համակարգով, գյուղի «Kasim Qend» մինչ օրս պահպանված անվանման միջոցով: Հ. Հովսեփյանի քարտեզում այն տեղադրված է Սըղընից մոտ 2կմ դեպի հյուսիս-արևմուտք, մինչդեռ այն գտնվում է Սըղընից 3կմ դեպի արևելք:
26. **Գեոզդարա** - գյուղը տեղորոշվել է «[Earth.google](#)» համակարգով, գյուղի՝ օտարալեզու «Dugi Darag» մինչ օրս պահպանված անվանման միջոցով: Հ. Հովսեփյանի քարտեզում այն տեղադրված է իրական տեղադրման վայրից մոտ 8կմ հյուսիս:
27. **Ասրան** - գյուղը տեղորոշվել է «[Earth.google](#)» համակարգով, գյուղի՝ «Asiran» մինչ օրս պահպանված անվանման միջոցով: Հ. Հովսեփյանի քարտեզում այն տեղադրված է իրական տեղադրման վայրից 9-10կմ հյուսիս:
28. **Բերդին Ետք** - գյուղը տեղորոշվել է «[Earth.google](#)» համակարգով, գյուղի՝ օտարալեզու «Qalehlu» անվանման և Տ.

- Գրիգոր Ս. եպս. Չիֆթճեանի Բերդի (կամ Բերդին Ետքի) վերաբերյալ իրականացրած նոթագրությունների միջոցով:
29. **Սուրուն** - գյուղը տեղորոշվել է «[Earth.google](#)» համակարգով, գյուղի «Siran» մինչ օրս պահպանված անվանման միջոցով:
30. **Նորաշենիկ** - գյուղատեղին տեղորոշվել է Հ. Հովսեփյանի քարտեզի միջոցով:
31. **Աշրափ** - գյուղը տեղորոշվել է Տ. Գրիգոր Ս. եպս. Չիֆթճեանի Աշրափի վերաբերյալ իրականացրած նոթագրությունների, լուսանկարների և Հ. Հովսեփյանի քարտեզի միջոցով:
32. **Մըհդավ** - գյուղատեղին տեղորոշվել է Տ. Գրիգոր Ս. եպս. Չիֆթճեանի Մըհդավի վերաբերյալ տրված հստակ տեղորոշման և «[Earth.google](#)» համակարգի միջոցով: Հ. Հովսեփյանի քարտեզում այն տեղադրված է Սըղընից մոտ 3-4կմ դեպի հյուսիս, մինչդեռ գյուղատեղին գտնվում է Սըղընից մոտ 3կմ դեպի արևելք:

ԱՆՎԱՆԱՅԱՆԿԵՐ

Անձնանուններ

Ա

Աբաս Միրզա 69, 72, 73, 74, 75
 Աբաղուլի խան 173, 400
 Աբբասյաններ 34
 Աբդ ալ Մալիք 32
 Աբդու Սամեդ (Աբդիլ-Սամեդ) խան 154, 155, 443, 455
 Աբովյան Խաչատուր 113, 282, 286
 Աբուլ-Սամիտ (չեղեբյան) 96
 Աբուլ-Ֆետ 73, 74
 Աբրահամ (աղաղանցի) 363
 Աբրահամ (աստապատցի) 63
 Աբրահամ բեկ (քյոխվա Նորաշեն-Հուժի) 380
 Աբրահամ Կրետացի 18
 Աբրահամ Մահտեսի 286
 Աբրահամ (նեփեշտցի) 171
 Աբրահամ (սուրիանդակ) 176
 Աբրահամեան Հրանդ 476
 Աբրահամյան Աշոտ 15, 342, 343, 466
 Աբրահամյան Բաբաջան 372
 Ադի Գյոզալ բեկ 63
 Ազիզ խան 191, 398
 Ազիրունք 361
 Աթա կուճի 148, 152
 Աթայան Մուշեղ 190, 363, 365, 366, 464, 474
 Աթաջանյան Գերասիմ 359
 Աթաջանյան Հովիկ 359
 Ալեքսան 125
 Ալեքսան (ուսուցիչ) 151
 Ալեքսանդր (կայսր) 71
 Ալեքսանդր Մակեդոնացի 24
 Ալի Ագուլի խան 171
 Ալի Էհսան փաշա 187
 Ալի խան 144, 145, 146, 177, 397
 Ալի խան (Օղայից) 223, 386
 Ալի Մուրադ խան 137
 Ալի-Մուրադ շահ 66
 Ալիսալան 38

Ակոփանք 364
 Ահմադ խան (քուրդ) 259
 Ահմադ (ղաչաղ) 304
 Ահմադ (չեղեբյան) 99, 102, 401, 402, 403, 410, 422
 Աղա Աբդուլ Բադի Արդաբի 327
 Աղա Մոհամմադ Խան 63, 64, 71, 469
 Աղաբեկով Գեորգի 118
 Աղաջան (լումեցի) 197, 198, 388
 Աղասի (ղաջնակցական) 150
 Աղբայան Նիկոլ 204
 Աճառյան Հրաչյա 33, 308, 466
 Աճեմյան Հրանտ 241, 244, 474
 Ամիր Արշաղ 153, 182, 183, 184, 196, 197, 198, 199, 200, 201, 202, 203, 207, 297, 408, 424, 425, 439
 Ամիրասլան խան 209, 374, 375
 Ամիրզատ (զավառապետ) 98
 Անահիտ (Եփրեմի կինը) 129, 266
 Անանիա Շիրակացի 10, 11, 14, 465
 Անդոկ 6
 Անդրեաս արքեպիսկոպոս 96, 449
 Աննա Մարիամ (վինեցի) ներդիր 5
 Աշոտ Ա Բագրատունի 35
 Աշոտ Բագրատունի (իշխան) 32
 Աշուղանք 364
 Աշյան Թորգոմ ներդիր 5
 Առաքել Դավրիժեցի 52, 53, 465
 Առաքելանք 372
 Առաքելյան Համբարձում 287, ներդիր 4
 Ասադուլլա 146, 175, 177, 178, 191, 192, 306, 397
 Ասլանյան (սպա) 205
 Ավագ (ղարաղաղցի) 122, 123
 Ավագյան Բշխան 234
 Ավագյան Լևոն 235
 Ավագյան Միքայել 151
 Ավաքեմուց Անդի ներդիր 5
 Ավետիս (զանգեզուրցի) 181

Արաթուն Զարեհ հավելված 2
 Արաթուն Մարտիկ հավելված 2
 Արաթուն Նարինե հավելված 2
 Արգիշտի Ա 19, 21, 23
 Արգիշտի Բ 24
 Արզումանյան 277
 Արզումանյաններ 407
 Արիստակես Լաստիվերցի 37, 465
 Արծրունիներ 30
 Արդուրյան Հովսեփ 315
 Արշակ (Խուլիզան, սյունեցի) 147
 Արշակ Բ Արշակունի
 Արշակ (զանգեզուրցի) 148, 149, 151, 182, 184
 Արշակ քահանա (Բագրատ Գավաֆյան) 267
 Արշակ (վինեցի) 477
 Արշակունիներ 13, 14, 27
 Արսեն դայի (վինեցի) 477
 Արտաշես Ա 24
 Արտաշես Արշակունի 30
 Արտաշեսյաններ 26
 Արտաշիր Սասանյան 13
 Արտավազ Բ 25
 Արտավան Արշակունի 13
 Արտեմ (ղաջնակցական) 150
 Արտեմ (զանգեզուրցի) 182
 Աֆշին 34

Բ

Բաբախանանք 371
 Բաբախանյան Սահակ 372
 Բաբախանյաններ 416
 Բաբայան Բաղդասար (բեկ) 161, 168, 169, 406
 Բաբայան Խաչիկ 288
 Բաբեկ (նաև Բաբան) 34, 40
 Բաբիկ 6
 Բագրատ դայի (վինեցի) 477
 Բագրատունիներ 30, 33, 35, 41, 467
 Բաղունք 361
 Բաթու խան 44
 Բալասան (նեփեշտցի) 171

Բախշի 147, 148, 149, 151
 Բախտամյան Գ. 273
 Բախտամյաններ 382
 Բակունի Բ. 136
 Բաղդասար (աշուղ) 285
 Բաղդասար (նեփեշտցի) 171
 Բաղդասարանք (հուժեցի) 382
 Բաղդասարանք (ղշլաղեցի) 371
 Բաղդասարյան Բագրատ 240, 360
 Բաղդասարյան Սիմոն 260, 295
 Բաղդասարյան Վարսիկ ներդիր 5, 477, 479
 Բաղր (Բաղր) խան 132, 449
 Բաղիրով Միրջաֆար 220
 Բայրուրյան Վահան 221, 252, 467
 Բայինդուր 59
 Բաղասներ 47
 Բարխուդարյան Մակար 86
 Բեզլար (տանուններ, մզկիթցի) 167, 406
 Բեզլար (քարագլխեցի) 148
 Բոյուզ խան 153
 Բորոյան Սմբատ (Մախլուտո) 204

Գ

Գասպար-Դիվլիկ (աշուղ) 285
 Գավաֆյան Բագրատ 267
 Գեորգի Լաշա 41, 42
 Գեորգյան Խաչատուր 164
 Գևայանք 364
 Գևորգ արք. Սուրենյանց 157
 Գևորգ եպիսկոպոս 91, 252
 Գիղատես խան 206
 Գյուլբենկյան Գալուստ 248, 278, 281
 Գյուլբուդայան Բաբա 148
 Գյուլբուդայաններ 416
 Գյուտ 16, 17
 Գուրդայան Սարգիս 477
 Գորոյենց Նազար 88, 467
 Գուրտոյ բեկ 180, 181
 Գրեգորյան Վարդան 288
 Գրիբոեդով 80
 Գրիգոր (վինեցի) 148
 Գրիգոր քյոխվա (իրգուրինցի) 358

Գրիգոր (Արշաղի հետ բանակցողներին) 200
 Գրիգորյան Լևոն 287
 Գրիգորյան Խաչատուր 219, 288, 478
 Գրիգորյան Հակոբ 271
 Գրիգորյան Համբարձում 287, ներդիր 4
 Գրիգորյան Հենրիկ 288
 Գրիգորյան Միհրան 267, 425, 477
 Գրիգորյան Ռուբիկ 288
 Գրիգորյան Սանդուխտ 269, 270
 Գրիգորյան Վ.Ռ. 65, 467
 Գրիգորյան Վահան 164
 Գրիգորյաններ 382

Դ

Դադյան Մարտիրոս 164
 Դանիելյան Առաքել (տեր Առաքել, խանազահցի) 144, 145, 151, 380
 Դավթյան Արարատ 433
 Դավթյան Եփրեմ (Եփրեմ խան) 121, 123, 125, 127-129, 138, 139, 140, 142-144, 150, 265, 315, 330, 364, 400
 Դավթյան Խաչատուր 240, 433
 Դավթյան Շչորս 115, 467
 Դավթյան Ռիտա 433
 Դավթյաններ 382
 Դավիթ Բեկ 59, 60, 61, 187, 342, 348, 466
 Դարբինյան Ռուբեն 204
 Դեմիրճյան Վ. Ծայր. Վրդ. 239
 Դերսահակյան Նարե հավելված 2
 Դերսահակյան Ռուբեն հավելված 2
 Դերսահակյան Վահան հավելված 2
 Դեմիրճեան Վարդան 239
 Դուրվանյաններ 382
 Դովունց Հարութ (վինեցի) 257
 Դրո 207, 243, 427
 Դոփեանք 262, 468

Ե

Եգան, մումուդարունցի հավելված 2
 Եգանյան Ալեն հավելված 2
 Եգանյան Անահիտ հավելված 2
 Եգանյան Անուշ հավելված 2

Եգանյան Անրի հավելված 2
 Եգանյան Աստղիկ հավելված 2
 Եգանյան Արամայիս հավելված 2
 Եգանյան Արուսյակ հավելված 2
 Եգանյան Արփիկ հավելված 2
 Եգանյան Բալասան հավելված 2
 Եգանյան Գալուստ (տեր Սահակ) 133, 146, 148, 151, 162, 167, 169, 177, 178, 191, 192, 198, 200, 201, 260, 261, 269, 294-298, 302, 305, 306, 398, 474, 475, հավելված 2
 Եգանյան Գոհար հավելված 2
 Եգանյան Դանիել 261, հավելված 2
 Եգանյան Էդո հավելված 2
 Եգանյան Էմմա հավելված 2
 Եգանյան Բարայել հավելված 2
 Եգանյան Լիդա հավելված 2
 Եգանյան Լիլիթ հավելված 2
 Եգանյան Խաչատուր հավելված 2
 Եգանյան Հայկ հավելված 2
 Եգանյան Մարգարիտ հավելված 2
 Եգանյան Միրզա 294, հավելված 2
 Եգանյան Նվարդ հավելված 2
 Եգանյան Շուշանիկ հավելված 2
 Եգանյան Սոնա հավելված 2
 Եգանյան Վաչե հավելված 2
 Եգանյան Քրիստ հավելված 2
 Եկատերինա II 64
 Եղիկյան Մարուգե (տեր Սահակ) 273, ներդիր 3
 Եղիշ (վինեցի) 477
 Երեմյան Սուրեն 11, 17, 27, 468
 Երիցակ 16, 17
 Երմուղով Ա. 76
 Երվանդ 147, 148
 Երվանդ (մեշափարացի) 151

Զ

Զախարով 177
 Զարգարանք 358
 Զարեհ 24
 Զաքարիա Ազուլեցի 211, 212, 465
 Զաքարյան Զաքարե 41, 42

Զաքարյան Իվանե 41, 42
 Զաքարյան Վահրամ Գազեցի 42
 Զաքարյաններ 30, 41, 42
 Զոհրաբյան Է. Ա. 195, 202, 210, 468
 Զուլումար (պաւսեցի Հովհաննես) 140

Ը

Էրատոսթենես Կիրենացի 4

Ը

Ըոքոյան Զոհրաբ 5

Թ

Թադևոս դայի (վինեցի) 477
 Թահմազ 60
 Թաղի խան 178, 191, 202
 Թաղիաղյան Մեսրոպ 112, 286
 Թամամ 151
 Թամանյան Ալեքսանդր 204
 Թեմուր խան (իբրիդցի) 234
 Թեյմուր խան 212
 Թեյմուրազ 62
 Թիշիբի 23
 Թոխթամիշ 45, 46
 Թովմա Արծրունի 36, 37, 465
 Թորգոմ (ուսուցիչ) 267
 Թորոս իշխան 58
 Թուման (ողանցի) 312, հավելված 1
 Թումանյան Արտավազդ 186
 Թումանյան Հովհաննես 186
 Թումանյանց Արտաշես 313, 332, հավելված 1
 Թումանյանց Գրիգոր 313, հավելված 1
 Թումանյանց Եղիսաբեթ 313, հավելված 1
 Թումանյանց Զաքարիա 313, 333, 335, 337, հավելված 1
 Թումանյանց Թամարա 335, հավելված 1
 Թումանյանց Թովմաս 331
 Թումանյանց Լևոն 313, 337, հավելված 1
 Թումանյանց Խաչատուր 313, 333, 335, հավելված 1
 Թումանյանց Համբարձում 313,

հավելված 1
 Թումանյան Կարապետ 313
 Թումանյանց Միհրայել 313
 Թումանյանց Շուշանիկ 333, 335
 Թումանյանց Ռուբեն 337, հավելված 1
 Թումանյանց Սարգիս 313, 315, 335, հավելված 1
 Թումանյանց Սիմոն 101, 313, 337, 402,
 Թումանյանց Ստեփան 313, հավելված 1
 Թումանյանց Վարդան 268, 296, 313, 332, 336, 337, 441
 Թումանյանցներ 113, 135, 145, 161, 166, 171, 172, 245, 268, 269, 270, 276, 286, 288, 312, 313, 315-326, 328-331, 333-337, 374, 386, 392, 393, 396, 397, 404, 419, 423, 424, 429, 439, 440, 441, 481, հավելված 1
 Թունոնք 358

Բ

Բրրահիմ-Խալիլ խան 63, 68, 70, 72
 Բսահակյան Նորայր 204
 Բսաջան (վինեցի) ներդիր 5
 Բսկանդար (Բսկանդեր) խան 153, 373
 Բսմայիլ խան (իբրիդցի) 234
 Բսմայիլ խան 167, 405
 Իվան Կարապետ 59

Լ

Լազարև (Լազարյան) Լազար 80, 81
 Լալայանք 364
 Լենկ Թեմուր 46-49
 Լեո 7, 31, 33, 52, 57, 58, 62, 66-68, 71, 72, 75, 76, 79, 81, 83, 84, 114, 468
 Լեո Կամսար 204
 Լիանոզով 319
 Լիսիցյան Ստեփան 73, 74, 468

Խ
 Խալդ 21, 23
 Խալիլ (սպա) 188
 Խալիլ փաշա 180
 Խալիկանո 320
 Խաչատուր (զինագործ) 148
 Խաչատուր (մարաղացի) 270
 Խաչատրյան Հարություն 164
 Խաչի զարդար (սրղընցի) 149
 Խաչի ճյուղ (կամ Օակ) 300-305, 410
 Խաչիկ (թնդանոթաձիգ) 201
 Խաչիկյան Լ., Ս. 46
 Խեչո (Խաչատուր Ամիրյան) 139
 Խոսրովանք 382

Օ
 Օադիկյաններ 294

Վ
 Վարա Յուսուֆ 48
 Վարապետ ավագ քահանա
 Մանուկյան 293
 Վարապետ եպիսկոպոս Տեր-
 Մկրտչյան (Վարապետ եպիսկոպոս)
 110, 158, 409, 468
 Վարապետ (դաշնակցական) 304
 Վարապետանք 448
 Վարո 148, 149, 151
 Վիրակոս Գանձակեցի 42, 43, 465
 Վյուբունք 358
 Վորբուլոն 26, 27
 Վորյուն 15, 16, 29, 465
 Վուկունյան Սարգիս 138
 Վուռո (Թարխանյան) 211

Հ
 Հախնագարյան Ա. ներդիր 5
 Հախնագարյան Հովհաննես 308,
 Հակոբ 147, 148
 Հակոբ (դաշնակցական) 168
 Հակոբ (դզմարցի) 151
 Հակոբ (խանազահցի) 176
 Հակոբ (նեփեշտցի)
 Հակոբ ուստա (վինեցի) 257
 Հակոբ քյոխվա (իրգուրիցի) 358

Հակոբ (աշուղ, նորաշենցի) 383
 Հակոբյան Գալուստ 338, հավելված 1
 Հակոբյան Էմիլ (Յակոբեան Էմիլ)
 226, 249
 Հակոբյան Հակոբ 314, 315
 Հակոբյան Ղազար 314
 Հակոբյան Վ. 54, 469
 Հակովբեան-Թումանյանց Իսկուհի
 313, հավելված 1
 Համբարձումյան Կոստի 186, ներդիր
 2
 Համդալլահ Ղազվինի 5
 Համգա խան (իբրիդցի) 234
 Համզե աղա 180, 181
 Հաջի Աբդուլ Ռաջապ Օսկուլի 327
 Հաջի Իբրահիմ (ուշտուրիցի) 359,
 372
 Հաջի Մուհամեդ Ալի աղա 323
 Հաջի Մուհամեդ Ալի Քաշի 327
 Հաջի Մուհամեդ Հուսեյն Էմին Էս-
 Ջարբ 327
 Հաջի Ռուստամ խան 163, 164, 359, 371
 Հաջի-Չելեբի խան 62
 Հարություն բեկ (քլալեցի) 89
 Հարություն (դաշնակցական) 168
 Հարություն (մեշափարացի) 151
 Հարությունյան Ավագ 205, 328, 469
 Հարությունյան Բաբկեն 3, 11-14, 469
 Հարությունյան Բագրատ 267
 Հարությունյան Հ. 161
 Հեյդար խան 62
 Հեյդար Նազարով 212, 469
 Հերակլ կայսր 31
 Հերակլ Բագրատիոն 62, 64
 Հեքիմ խան 209
 Հիդայաթ խան 153, 373
 Հովասափյանց Ե. 132
 Հովհան Ռրոտնեցի 45
 Հովհաննես (մինջվանցի) 148
 Հովհաննես (քյոխվա, վինեցի) 200, 439
 Հովնանյան Սարգիս 101, 159, 402
 Հովսեփյան Բալասան 100

Հովսեփյան Լիլյա 337, հավելված 1
 Հովսեփյան Հովհաննես 86, 87, 90,
 120, 180, 193, 194, 209, 214, 217, 224,
 226, 343, 345, 346, 356, 357, 371, 399,
 469, 470, 480
 Հովսեփյանց Հովսեփ խան 289
 Հուլավու խան 43
 Հուսեյն խան 162, 171, 405
 Հուսեյնալի խան (հասանովցի) 382
 Հուսեյն-Ղուլի 75
 Հոիփսիմե 268
 Հոիփսիմե (նեփեշտցի) 100
 Հրանուշ (ուսուցիչ) 267

Ղ
 Ղազարոս 151
 Ղազի Համբարձում 125
 Ղազիխանյան Օսաննա հավելված 2
 Ղահրաման բեկ (Նորաշենի տեր)
 274
 Ղահրաման խան 147, 159, 174, 175,
 197, 257, 355, 371, 388
 Ղահրաման խան (իբրիդցի) 234
 Ղահրամանյանց Միմոն 477
 Ղաջարներ 50, 67, 77, 213
 Ղասում խան (հասանովցի) 382
 Ղասումյան Ջհանգիր Հայրապետի
 451
 Ղարիբանք 361
 Ղևոնդ 15, 32, 465
 Ղևոնդ Ալիշան 7, 55, 466
 Ղուլի խան 372, 373
 Ղուկաս Սեբաստացի 18, 59, 466
 Ղուկայան Ասծատուր 408
 Ղուկայան Արամ 215
 Ղուկայաններ 409

Ս
 Մադաթյան Ռոստոմ 76
 Մադաթով Վալերիան 76
 Մահմադ բեկ (չելեբյան) 99, 401, 410,
 422
 Մամադ Ղուլի 83
 Մահմեդ Ղուլի խան 361

Մահմետ-Վելի (չելեբյան) 96
 Մահմուդ խան (Օղայից) 223, 386
 Մահմուտ խան (չելեբյան) 98, 99,
 401, 410, 422
 Մամադ խան 162
 Մամադ խան (հասանովցի) 209
 Մամեան Ա. 47, 470
 Մամիկոնյան Վասակ 39
 Մամուս խալիֆ 34
 Մանանդյան Հակոբ 26, 27, 31, 43, 45,
 470
 Մանգասար (նեփեշտցի) 171
 Մանգու խան 43
 Մանթաշով 438
 Մանուկ (խանազահցի) 176
 Մանուկյան Ալեքսան 125
 Մանցունք 361
 Մանցուց Արշակ 362
 Մատթեոս Բ Իզմիրյան 109
 Մարգար Վարժապետ 255
 Մարգարիտ (ուսուցիչ,
 սալմաստեցի) 267
 Մարդուց Վարդան 477
 Մարիամ (նեփեշտցի) 100
 Մարկոս Անտոնիոս 25
 Մարկոս Իւելիդոս 25
 Մարության Օհանջան 151
 Մարությաններ ներդիր 5
 Մարտիրոսյան Արիստակես 223
 Մարտիրոսյան Բարայել 268
 Մարտիրոսյան Դաֆիկ 247, 278
 Մելիք Ազարիա (զանձառիեցի) 89
 Մելիք Ավան 409
 Մելիք Ջաբարիա (զանձառիեցի) 89
 Մելիք Ջաբարյաններ 363
 Մելիք Բասիան (ղասումաշենցի) 89,
 447, 451
 Մելիք Խաչատուր (քուրդ Խաչի,
 քելվանցի) 104
 Մելիք Խաչատուր (սարդուեցի) 89
 Մելիք Խաչի (սարդուեցի) 360
 Մելիք Կարապետ (սարդուեցի) 89, 361

Մելիք Ղասում 451
 Մելիք Ղարազույց (միքիդեցի) 89, 286, 376, 401, 403, 408, 409, 437
 Մելիք Ղարազույցյան Առաքել 409
 Մելիք Ղարազույցյան Ղազար 409
 Մելիք Ղարազույցյան Ղուկաս 409
 Մելիք Ղարազույցյան Սինաս 409
 Մելիք Շահնուր 286
 Մելիք Ջհան (ղասումաշենցի) 89, 104, 453, 454
 Մելիք Սարգիս (գիրմնավցի) 89, 128, 400
 Մելիք Օհանջան (օղայեցի) 89
 Մելիք Օհանջանյաններ 409
 Մելիք Ֆրանգյուլ 58
 Մելիք-Ազարյան Ազա 255
 Մելիք-Ազարյան Բալա 357
 Մելիք-Ազարյաններ 89, 90, 256, 286, 357
 Մելիք-Ազարյանց Ալեքսանդր 256, 290, 291, ներդիր 4
 Մելիք-Ալավերդյաններ 89
 Մելիք-Աղաջանյան Դավիթ 295
 Մելիք-Աղաջանյան Սաթենիկ 478, ներդիր 4
 Մելիք-Աղաջանյաններ 90
 Մելիք-Ասլանյան Է. 288
 Մելիք-Բաղդասարյաններ 89
 Մելիք-Դոլուխանյաններ 380
 Մելիքիշվիլի 21
 Մելիք-Իսրայելյաններ 89
 Մելիք-Իսքանտարեան Պետրոս բեկ 435
 Մելիք-Խաչատրյաններ 89
 Մելիք-Հովսեփյան Արիստակես 260
 Մելիք-Ղազարյաններ 90
 Մելիք-Ղասումյաններ 89
 Մելիք-Ղարազույցյան 90, 376, 401, 409, 437
 Մելիք-Ղարազույցյան Գավրիիլ 409
 Մելիք-Ղարազույցյան Գևորգ 288, ներդիր 4

Մելիք-Ղարազույցյան Եփրեմ բեկ 125
 Մելիք-Մերքումյաններ 89
 Մելիք-Միրզայանցներ 90
 Մելիք Մուշկամբար 286
 Մելիք Մուսի (իրգուֆինցի) 358
 Մելիք-Մուշկամբարյան Աղաջան 259
 Մելիք-Մուշկամբարյան Ավետիս աղա 437, 438, 439
 Մելիք-Մուշկամբարյան Արսեն (տանուտեր) 437
 Մելիք-Մուշկամբարյան Բաբա բեկ 413, 438, 439, ներդիր 4
 Մելիք-Մուշկամբարյան Դադաշ 438, 439
 Մելիք-Մուշկամբարյան Նարինգյուլ 439
 Մելիք-Մուշկամբարյաններ 89, 243, 413, 419, 437
 Մելիք-Մուսայան Աշոտ 199
 Մելիքշահ 10, 38
 Մելիք-Շահնագարյան Իլիկո 122
 Մելիք-Պետրոսյաններ 89
 Մելիք-Ջհանյան Աբրահամ 158, 262
 Մելիք-Ջհանյան Ջհանգիր բեկ 105, 136, 154, 157-159, 172, 262, 443, 447, 461
 Մելիք-Ջհանյան Սարգիս (բեկ) 98, 99, 103, 104, 105, 450, 451, 453
 Մելիք-Սարգսյան Բաղդասար 315
 Մելիք-Սարգսյան Համբարձում 315
 Մելիք-Սարգսյաններ 89
 Մելիք-Ստեփանյան Անդրանիկ 477
 Մելիք-Ստեփանյան Արամ 477
 Մելիք-Ստեփանյան Արտեմ 427
 Մելիք-Ստեփանյան Գոհար 427
 Մելիք-Ստեփանյան Եղիշ 477
 Մելիք-Ստեփանյան Մմբատ 477
 Մելիք-Ստեփանյան Սոկրատ 240, 246, 427
 Մելիք-Ստեփանյան Սուրիկ 427
 Մելիք-Ստեփանյան Ստեփան (քյոխվա) 240, 243, 248, 249, 427, 428, 477, ներդիր 2, ներդիր 5

Մելիք-Օհանջանյան Բաղդասար 385
 Մելիք-Օհանջանյան Հովսեփ 385
 Մելիք-Օհանջանյան Օհանջան 385
 Մելիք-Օհանջանյաններ 90, 385
 Մելքոնանք 448
 Մեհտի Ղուլի 70, 74
 Մեհտի Ղուլի խան 159
 Մեջնումանք 358
 Մեսրոպ Մաշտոց 16, 28, 29
 Մելիք Ազարեա Տեր Աղամ 357
 Միհրան Միհրևանդակ (նան՝ Վահրամ Զուբին) 31
 Մինաս աբեղա 111
 Մինասյան Անդրանիկ (նորջուղայեցի) 242
 Մինասյան Բաղդասար (նան՝ Բաղդիկ) 218, 219, 308-311, 471, 477, 478, ներդիր 2, ներդիր 4
 Մինասյան Խաչատուր 259, 288, 474
 Մինասյան Խաչատուր (օղայեցի) 308
 Մինասյան Հարություն 288
 Մինասյաններ 342, 409, 470
 Միսրունք 361
 Միր Մահմուդ 55
 Միր Մամուդ խան (հասանովցի) 174, 382
 Միրզա Ալի (իբրիդցի) 234
 Միրզա Մուստաֆա խան 101
 Միրզա (մումուդարունցի) 294, հավելված 2
 Միրզայան Լևոն 477
 Միրզայան Հրաչ 477
 Միրզայան Մելիքսեթ 477
 Միրզայան Վ.Պ.
 Միրզոյան Վահան 134, 187, 233, ներդիր 3, 477
 Միրզոյաններ (Միրզայան) 477
 Միրզունք 448
 Միրվան 372
 Միքայելյան Քրիստափոր 128, 477
 Մխիթար սպարապետ 60, 61
 Մկրտիչ (սափրիչ) 168

Մկրտիչ (ուսուցիչ, սավաստեցի) 267
 Մկրտչյան Խաչատուր 164
 Մղրուսենք 417
 Մոզաֆեր Էդ Դին 104, 289, 315, 324, 330
 Մոհամեդ Ալի շահ 141
 Մոհամմադ Միրզա 289
 Մովսիսյան Ռաֆայել 256
 Մորիկ 31
 Մութալիբ (Մութալիմ) խան 201, 202, 206
 Մութասիմ խալիֆ 34
 Մուհամմադ 32
 Մուհամմադ Ափշին 35
 Մուշե 29
 Մուշեղ (Ա.Եգանյանի որդին) հավելված 2
 Մուշեղյան Ա. 182
 Մուսթաֆա խան 63
 Մուրադ Դ (սուլթան) 54
 Մուրադ (սեբաստացի) 115
 3
 Յակոբ կաթողիկոս 111
 Յեղիազարյան Ա. Ս. 33, 467
 Յորդանյան 276
 Յուսիֆյան Անահիտ հավելված 2
 Յուսիֆյան Հրայր հավելված 2
 Յուսիֆյան Շաքե հավելված 2
 Յուսիֆյան Սեդա հավելված 2
 Յուսիֆյան Վարդգես հավելված 2
 Ն
 Նադիր շահ 18, 61
 Նազարբեկյան Ավետիս 287, ներդիր 4
 Նազարբեկյան Բաբաջան 267
 Նազարյան Համբարձում 162, 168
 Նազարյանց Ստեփանոս 286
 Նալբանդյան Հովսեփ 269
 Նապոլեոն 73
 Նասր օլ Մոլք 156
 Նասրեդդին շահ Ղաջար 91, 99
 Նավասարդյան Սոկրատ 277

Նարինյաններ 416
 Ներսես Աշտարակեցի 80, 114
 Ներսես արք. Մելիք-Թանգյան 114-120, 194, 219, 264, 273, 274, 398, 431, 439, 476, 470, ներդիր 2, 3
 Նժդեհ 199-202, 205, 207, 328, 359, 469
 Նիկոլ Դուման 123, 126, 128, 400
 Նոբել 319
 Նոյ 10
 Նոյեմբար 10

Շ

Շահ Աբբաս 51, 53
 Շահ Իսմաիլ Մեֆյան 50
 Շահնագարանք 371
 Շահնագարյան Ալեքսան բեկ 145, 151, 173, 397, 424
 Շահնագարյաններ 407
 Շահռուխ 49
 Շահվերդի խան 62
 Շահվերդի (քյաղխուղա) 100
 Շամս աղ-դին Ելտկուզ 39
 Շանթ Լևոն 204
 Շապուհ Երկարակյաց 39
 Շեկո 126, 127, 128, 400
 Շիվինի 23
 Շիրինդիլ խան 173, 385, 405
 Շիրվանշահ Բբրահիմ 47
 Շողոյան Լևոն 183, 184

Չ

Չաղաթայաններ 46
 Չեռնոզուբով 181
 Չինգիզ խան 43, 44, 46
 Չոբանյան Մելիք Աշրաֆ 44
 Չոբանյաններ 44, 45

Պ

Պապ 6
 Պարգյան 260
 Պարսկնիչ 81, 83
 Պետրոսյան Աղաջան 164
 Պետրոս (որդի Գասպարի, միզգիթեցի) 404
 Պիոնյան Կարապետ 308

Պողոս վրդ. Ղարաղաղցի 113, 285
 Պողոսանք 371
 Պոմպեոս Տրոգոս 26
 Պոպովյան 277
 Պոստոմկին Գ. 65
 Պոստոմկին Պ. 65
 Պտղոմեոս IV Փիլոպատոր 4
 Պտղոմեոս Կլավդիոս 27

Ջ

Ջանիբեկ խան 44
 Ջեբրաիլ Շիրին օղլի 212
 Ջելախյան Ուվեյս 45
 Ջելախյաններ 44, 45
 Ջեկսոն Հենրի 221
 Ջհան (աղաղանցի) 363
 Ջհանգիրանք 361
 Ջհանգիրյան Սերգեյ ներդիր 5
 Ջհանշահ 49

Ռ

Ռահիմ խան 141, 142, 143, 145, 150, 151, 154, 201, 373, 397, 457
 Ռահիմ խան (ղզմարցի, Վինայում գնդակահարված) 425
 Ռաշիդ ուլ Մուլք 159
 Ռավադյաններ 35
 Ռիմսկի-Կորսակով Ն. 287
 Ռոլեն Շեքմեն 87
 Ռոստամ խան 158
 Ռոստոմ 122
 Ռոստամ (քյաղխուղա) 100, 402

Ս

Սաթթար խան 422, ներդիր 2
 Սաթունյան Ս. Եպիսկ. 112
 Սալարյաններ 35
 Սահաբ դիվան 96
 Սահակենք 382
 Սահակյան Գալուստ 330
 Սահլ Մմբատյան 34
 Սամսոն (Թաղևոսյան Ստեփան) 122, 142, 211, 301, 474, 477
 Սայաթ-Նովա 67
 Սանտայան Արշակ հավելված 2

Սանտայան Շանթ հավելված 2
 Սանտայան Պարույր հավելված 2
 Սանտայան Սևակ հավելված 2
 Մաջաններ 35
 Մառաճենց 46
 Մարգիս 147, 148
 Մարգիս (Գիրմանավի գյուղապետ) 125, 128, 400
 Մարգիս (մեշափարացի) 151
 Մարգիս (Էրզրան, նորաշենցի) 191, 383
 Մարգիսանք 448
 Մարգիսբեգանք 448
 Մարգսյան Արշակ 151
 Մարգսյան Գասպար 265
 Մարգսյան Նիկալա 151
 Մարգսյան-Իրանյան Վաղինակ 288
 Մարդուրի Բ 19, 21, 22, 23, 24
 Մարիբեկ (խմբապետ) 183
 Մարո Յ. 180, 182, 183, 185, 188, 474
 Մարուխանյան Երեմ 267, ներդիր 3
 Մաքի Քոթունց 305, 306, 307
 Մաքո Սեքարեցի (Օովանյան) 123, 124, 125, 400
 Մերեոս 10
 Մելիգ Բաբա Թաիր աղա 172
 Մելեկյաններ 24
 Մելչուններ 10, 38, 39, 467
 Մելյրան (աշուղ, աղաղանցի) 285
 Մերոբ Աղբյուր 140
 Մեֆյան շահ Հուսեյն 60
 Մեֆյաններ 40, 48, 50, 55, 62
 Մըմլը 181, 182, 183, 210, 211, ներդիր 2
 Միմոնյան Արամ 196, 199, 204, 206, 209, 470
 Միմոնյան Հովան 90, 243
 Միմոնյան Հրաչիկ 106, 110, 143, 154, 155, 157, 374, 470
 Մմբատ Ա. Բագրատունի 35
 Մմբատյան Գրիշա 131, 132, 168, 288, 289, 342, 407, 409, 410, 470
 Մողոմոնյան Ս. Գ. 208, 471
 Մոմով Ա. 323

Մուշա ուլ Մեմալիք 171
 Մուրալ խան 171
 Մովիլ Բադալ 421
 Մովոնք 416
 Մտեփան 147, 148, 149, 151
 Մտեփանյան Ա. 182
 Մտեփանյան Թևան 204, 207
 Մտեփանյան Հ. 42, 471
 Մտեփանյան Ս. Խ. 317, 319-322, 326-329, 331, 471
 Մտեփանյան Վարդան (քահանա) 173, 400
 Մտեփանոս Եպիսկոպոս Մխիթարյանց 101, 263, 402
 Մտրաբոն 4

Վ

Վազգեն (Տիգրան Տերոյան) 126
 Վազգեն առաջին կաթողիկոս 110
 Վահան (ուսուցիչ) 267
 Վահե (Ա.Եգանյանի որդին) հավելված 7
 Վահրամ Չուբին 31
 Վասակ իշխան 34
 Վարանոյան Միքայել 114
 Վարդան (Խանասորի, Մեհրաբյան Մարգիս) 124, 126
 Վարդան Օձնեցի 63
 Վարդանանք 363
 Վարդանյան Գ. 209
 Վարդանյան Լուսիկ 240, 433
 Վիտտե 321
 Վոանշապուհ Արշակունի 28, 29
 Վրացյան Սիմոն 204, 471

Տ

Տեր Աղամ Տեր-Սարգսյան (Աղամ քահանա) 356, 375, 381, 384
 Տեր Առաքել Առաքելյան 144, 147, 151, 380
 Տեր Ավետիս 61
 Տեր Արիստակես Տեր-Դանիելյան 361
 Տեր Արտակ Հովհաննիսյան (աղաղանցի) 188, 189

Տեղանուններ

Ա

Ագարակ 168
 Ագուլիս 211, 212, 286, 308, 465, 477
 Ագչայ, Ակչայ, Աղչայ 12
 Ադրբեջան 34, 195, 196, 219- 221
 Ալադաղ 43
 Ալաշկերտ 52
 Ալևան 4, 11, 12, 14, 18, 28
 Ալեքսանդրիա 27
 Ալիաբադ 134, 391
 Ալլի Բուլաղ 384
 Ակորգ (նան՝ Նակորգան) 17
 Ահար 45, 46, 53, 62, 63, 72, 129, 141, 145, 150, 151, 158, 159, 213, 233, 235, 444
 Ահմադլու 334
 Ահվանլի 98
 Աղահեճք 5
 Աղաղան 120, 129, 188, 189, 190, 224, 264, 266, 267, 272, 289, 291, 347, 358, 363, 365, 366, 367, 369, 370, 462, 464, 475, 480
 Աղանդոտ գետ 12
 Աղավնո գետ 17
 Աղբակ 52
 Աղդաշ լեռ 391, 394, 412
 Աղձնիք 28
 Աղվանք 32
 ԱՄՆ 221, 222, 250, 261, 276, 297, 337, 427, 428, 474, 475
 Ամրադուլ 232, 238, 412, 434, 436, 463
 Այրարատ 10, 41
 Անդրկովկաս 36, 38, 54, 56, 63, 65, 67, 68, 73, 74, 75, 135, 305, 469
 Անգալի 478
 Անի 40, 44
 Աննըղ 188, 348, 350
 Աշրափ (նան՝ Էշրեֆ) 98, 107, 135, 154, 159, 225, 230, 442, 443, 455, 456, 463, 483
 Ապարան 52, 82

Առաջածոր 407
 Ասլանդուզ 72, 73
 Ասկերան 301
 Ասորիք 27
 Աստրաբադ 326
 Աստրախան 318, 324
 Ասրան 98, 107, 135, 154, 155, 159, 172, 225, 344, 442, 443, 447, 461, 462, 463, 482
 Ասրան ներքի 344
 Ասրան վերի 344
 Ավան 348
 Ավարսին 155, 156, 454
 Ավետարանոց 76
 Ատրպատական 7, 18, 25, 31-33, 35, 38-46, 48-51, 53, 57, 60, 65, 70, 81, 82, 91, 96, 108, 109, 111, 112, 115, 117-121, 135, 140, 14, 143, 150, 158, 169, 174, 179, 184-186, 192, 194, 206, 208, 209, 215, 217, 219-220, 230, 236, 239, 247, 249, 251-253, 255, 260, 264, 268, 272, 273, 274, 277, 278, 293, 309, 356, 361, 363, 369, 370, 378, 379, 389, 390, 420, 431, 433, 436, 450, 453, 460, 473-476, 478, 479
 Արագին 198, 389
 Արասբարան 72
 Արարատյան դաշտ 52, 123, 193
 Արաք 478
 Արաքս (նան՝ Երասխ) 4-9, 11, 12, 13, 16, 31, 32, 38, 47, 51, 53, 55, 57, 60, 68, 72-75, 77, 78, 81, 102, 131, 142, 144, 150, 160, 178, 187, 194, 195, 199, 203, 206, 207, 246, 301, 302, 305, 347, 349, 350, 352, 367, 409, 412, 415
 Արաքսպար 344, 345, 357
 Արդաբիլ (նան՝ Արդեբիլ, Արտավիլ) 24, 42, 56, 77, 112, 141
 Արծվանիկ 58, 327
 Արմինիա նահանգ 32
 Արմինիան անցք 5

Արտաշատ 26
 Արտաշիր 14
 Արտավանյան 4, 11, 13, 14, 18, 28
 Արցախ 3, 5, 8, 18, 30, 34, 40, 41, 43, 45, 46, 56, 70, 71, 72, 75, 86, 89, 123, 124, 145, 195, 207, 285, 368, 472
 Աֆղանստան 43, 55
 Բ
 Բաբելի ամրոց 34, 40
 Բադդ 34
 Բաթում ներդիր 5
 Բալա 161, 334
 Բաղդադ 45, 54, 183, 184
 Բաղք մյուս 5
 Բաղք-Քաշունիք 5
 Բայազետ 54
 Բանդար Գյազ 319, 321
 Բաչավ 104
 Բասուտա գետ 58
 Բասրա 184
 Բարանդուզ 112
 Բարգուշատ 57, 58, 60, 74
 Բարֆուշ 317
 Բաքու 66, 86, 164, 174, 193, 207, 385, 400
 Բելգիա 186
 Բեհրուզ 334
 Բեռլին 132, 324
 Բերդին-Եսր (նան՝ Բերդ, Բերդին յեղն) 107, 135, 149, 154, 156, 225, 226, 344, 442, 447, 459, 460, 463, 482, 483
 Բըզվեր 334
 Բիայնիլի 19, 22, 23, 24
 Բինա 416
 Բինաբ 319
 Բինեաթուր 86
 Բոսորուպեղա 12, 24
 Բոստոն 316, 473
 Բորոդին 76
 Բուլղարիա 76
 Բոնակոթ 114
 Գ
 Գանձակ 40, 62, 75, 82, 193, 285, 417

Գանձադի 76
 Գաննի 52
 Գարագունե 172
 Գեանդիման 334, 414, 441
 Գեարմանլու 99
 Գեղամա 52
 Գեղանուշ 371
 Գեղարքունիք 34
 Գեոզդարա (նան՝ Դուգավդարա, Դուգեդարա, Դոբեդերե) 98, 107, 135, 154, 176, 225, 230, 442, 443, 457, 458, 463, 482
 Գեորգիևսկ 64, 65
 Գըրմընավ (նան՝ Գիրմնավ, Գիրմընավուն) 89, 99, 107, 120, 124, 134, 160, 173, 190, 199, 225, 270, 285, 287, 345, 391, 396, 399, 400, 421, 462, 481
 Գիլան 66, 331
 Գյանջա 73
 Գյարմանդուզ 445, 446
 Գյուտկում 358, 409
 Գյուլիստան 73
 Գյունեյ-Արզանակ 331
 Գողթն (նան՝ Գողթան) 3, 16, 32, 56, 61, 63, 122, 308
 Գորիս 427
 Գուգարք 28
 Դ
 Դայիր 393
 Դաշարասի 335, 414
 Դաշբաշի (նան՝ Քարագլուխ) 99, 430, 434
 Դավրեժ (նան՝ Թավրիզ) 39
 Դարակըզ 272
 Դարան (նան՝ Դրոն) 375
 Դարաշամբ 230
 Դեղնաճյուր 394
 Դեմուրչիլար 161, 405
 Դերբենդ 32, 56, 66, 73
 Դզմար 11, 60, 87, 89, 101, 106, 114, 133, 134, 148, 151, 153, 160, 164, 174, 187, 190, 191, 201, 203, 204, 208, 209,

212, 223-225, 230-232, 237, 240, 255,
256, 260, 265, 286, 295, 341, 343, 345,
347-354, 360, 363, 367, 377, 381, 385,
386, 392, 404, 411, 425, 462

Դիզակ 5, 207

Դիզափայտ 6

Դիլման 169, 181, 184

Դինավոր 223

Դյուզալ 60, 61, 187, 204-206, 350

Դուգավդարա (նաև՝ Դուգեդարա,
Դոքեդերե) տես Գեոզդարա

Դուլաբ գերեզմանատուն 290, 427

Դուլեն 104

Դվին 40, 44

Դրոն 375

Դրունք հայոց 5

Ե

Եաս 155

Եզիպտոս 4, 27, 222

Ելիզավետապոլ 75, 103

Եղեգնաձոր 52

Եղվարդ 58, 79, 125, 131, 167, 368,
401, 406, 409, 437

Եռանդ 16

Եվրոպա 262, 312, 318, 324, 332

Երասխ (տես՝ Արաքս)

Երևան 52, 56, 66, 67, 71, 74, 75, 77,
79, 82, 123, 288, 389, 410, 439

Երիցավանք 17

Եփրատ 297

Զ

Զաղի լեռ (նաև՝ Կայա) 20

Զանգեզուր 7, 73, 125, 131, 139, 149,
167, 181, 182, 194, 196, 201, 207, 208,
209, 212, 246, 295, 328, 406, 468-471,

Զանգիբասար 82

Զանգիլան 212

Զարևանդ (նաև՝ Զարավանդ) 16

Զարիշատ 52

Զիաքու (նաև՝ Զիագու) 175, 180, 390,
107, 134, 225, 343, 377, 384, 390, 462,

481

Զիլբիրչայ 13

Է

Էլենդ գետ 12

Էկբատան 39

Էյլասքանլու 196, 197, 198, 388

Էնգելի 317, 320, 327

Էշրենֆ (նաև՝ Աշրափ) 98

Էջմիածին 81, 111, 114, 115, 118, 119,
356, 357, 380, 451

Էփեշտ միջին 344, 391

Էփեշտ ներքին 344, 391

Էփեշտ վերին 344, 391

Ը

Ըշտըրբե 348

Ըռոտմանց 79, 368

Ըրըժոն 344

Ըրկենաց 327

Թ

Թագաքենդ (Թագաքյանդ) 99, 153

Թալիշ 73

Թաշտենձոր (Թաշտեն ձոր) 344, 412

Թավրիզ (նաև՝ Դավրեժ) 9, 10, 21, 39,
40, 42, 43, 44, 45, 47, 48, 50, 51, 53, 54,
56, 57, 61, 66, 69, 80, 81, 87, 91, 93, 96,

97, 98, 101, 105, 108, 109, 112, 113,
115, 116, 118, 123, 128, 132, 135, 141,
147, 150, 154, 158, 159, 162, 175, 176,
183, 187, 191, 193, 205, 208, 209, 210,
213, 215, 217, 220, 223, 226, 231, 235,
236, 240, 241, 246, 250, 253, 254, 262-

266, 268, 274, 278-281, 284, 286, 287,
289, 291, 294, 296, 300, 308, 310, 313-

316, 324, 331, 335, 351, 353, 355, 356,
360, 365, 366, 372, 375, 381, 382, 384,
386, 395, 397-399, 402, 406, 425, 428,
431, 434, 438, 440, 444, 446, 449

Թարթառ 104

Թեհրան 67, 77, 91, 97, 99, 102, 105,
140, 203, 215, 227, 228, 236, 250, 259,
261, 279, 284, 288, 290, 293, 308, 309,
310, 311, 317, 327, 337, 384, 399, 402,
426, 427, 428, 440, 467, 468

Թզենու գետ 17

Թիֆլիս 56, 75, 76, 80, 92, 95, 113, 114,
131, 139, 145, 179, 193, 256, 262, 268,
270, 285, 286, 289, 290, 291, 294, 295,
305, 360, 410, 472, 473

Թոնդիր Գեաղիկ լեռ 367

Թուրքմենչայ 77, 78, 86, 108, 111, 418,
429

Թոփ-խանա 393

Ի

Իբրիդ 233, 234

Իգդիր 132

Իզի Դարա 344

Իսախանի շեն

Իտալիա 4

Իրան 5, 31, 34, 38, 44, 54, 60, 64, 66,
67, 68, 74, 87, 108, 109, 121, 122, 129,
136, 138, 139, 140, 143, 147, 162, 174,
195, 213, 217, 219-222, 227, 228, 238,
240, 243, 250, 252, 274, 275-277, 287,
288, 290, 297, 305, 308, 312, 314, 317,
318, 320, 324, 325, 326, 328, 329, 331,
332, 422, 427, 435, 440, 467, 475, 476

Իրաք 183, 186, 222

Իրգութին (նաև՝ Իրգիթ, Ուրգութին,
Ուրգութ) 106, 120, 134, 163, 164, 190,
230, 231, 232, 236, 237, 239, 240, 265,
272, 347, 358, 359, 462, 479, 480

Իրիզնան գետ 377

Լ

Լևազ 61

Լիբանան 222

Լիբլիունի 21-23

Լիլավա 112, 113, 335

Լոնդոն 324

Լոռի 49, 65, 70

Լումա 106, 134, 147, 197-199, 224,
226, 343, 344, 377, 388, 389, 462, 480

Լումահունի 344

Խ

Խալիֆա քյանդի 344

Խալիֆին հայերն 344

Խանազահ (նաև՝ Խնակահն, Խնգլիկ)
89, 91, 106, 114, 120, 134, 145, 147,
154, 160, 164, 175, 176, 216, 223-225,
230, 255-258, 272, 295, 314, 343, 347,
354, 355, 356, 357, 372, 374, 380, 385,
386, 390, 462, 475, 477-479

Խանասոր 123, 124, 126, 128, 139, 300,
315, 410

Խարականց 183

Խարիլ 161, 405

Խլաթ 140

Խլաթաղ 328

Խնակահն (տես՝ Խանազահ)

Խնգլիկ (տես՝ Խանազահ)

Խոյ 10, 44, 52, 54, 66, 77, 112, 140, 183,
185, 187, 251

Խոյնար լեռ 377

Խոջակունիք 32

Խորասան 38, 62, 326

Խողափերին (նաև՝ Խողափերին,
Հողափերին) 5, 68, 75, 87, 97, 103,
125, 172, 195, 196, 207, 314, 444, 461,
477

Խուստուփ ներդիր 2

Խրամ 32

Խոճունի գեղն 344

Ս

Սաղկունք 52

Վ

Վալեր 409

Վալիֆորնիա 427, 474, 475

Վահիրե 309, 471

Վաղզվան 52

Վաղնուտ (նաև՝ Մողես) 79, 368, 418,
429

Վայա լեռ 20

Վապարդվկիա 26

Վապան 57, 59, 60, 70, 74, 167, 186,
342, 358, 389, 409

Վապուտան (նաև՝ Ուրմիա) 27

Վասարքենդ (նաև՝ Ղասումաշեն) 155

Կասպից ծով 26, 56, 320, 321
 Կարբիբասար 82
 Կարին 139
 Կարճնան 83
 Կարմիր գետ 12, 13
 Կարմնան (նան՝ Գըրմընավ) 344
 Կարիագինո 212
 Կարս 41
 Կեն 126
 Կենսերայ 98
 Կզլչայ 12
 Կըրխբուլաղ 82
 Կիլիկիա 288, 311
 Կիրենա 4
 Կոստանդնուպոլիս 54, 286, 357
 Կովկաս 75, 76, 78, 113, 140, 166, 195, 218, 219, 364
 Կոտայք 52
 Կոտոր գետ 12, 13
 Կոտուրի լեռնաշղթա 12
 Կորդուք 28
 Կուճի գետ 366
 Կուշչի 182
 Կոտուրաշ 126

Հ

Հարանդ 16
 Հադրուք 86, 207, 368
 Հադրութավան 86
 Հալիձոր 60
 Համադան 39, 57, 186
 Հանգաչիման 52
 Հայաստան 26, 32, 35, 39, 41, 51, 82, 121, 179, 184, 195, 210, 215, 221, 222, 366, 376, 418, 440
 Հայկական լեռնաշխարհի 6, 12, 47, 48, 50
 Հայկական լեռներ 4
 Հայկական մարզ 80
 Հայկական Տավրոս 4
 Հայոց Ձոր 183
 Հաշտասար 4
 Հասանով (նան՝ Հասանբաղ) 11,

106, 120, 130, 133, 134, 151, 162, 174, 175, 191, 197, 201, 208, 219, 224, 225, 226, 230, 232, 237, 273, 276, 308, 341, 343, 345, 347, 348, 377, 382, 385, 392, 424, 462, 478
 Հեռասար 246
 Հեր (նան՝ Խոյ) 10, 12
 Հնդկաստան 9
 Հորադիզ 12
 Հուժ (նան՝ Հոյժ, Յոյժ) 54, 110, 111, 117, 133, 174, 180, 343, 377, 379, 380, 381, 382, 383, 390, 474
 Հուժ վերին 377
 Հունաստան 4, 216, 222
 Հոռո 4, 7, 25-28

Ղ

Ղազվին 5, 170, 287, 309, 317, 323
 Ղալա 108, 112
 Ղալալու 460
 Ղասումաշեն (նան՝ Ղասըմաշեն, Կասըմքենոյ) 89, 107, 120, 135, 150, 154, 155, 156, 159, 225, 230, 233, 237, 239, 240, 249, 276, 279, 344, 346, 442, 443, 447, 451-453, 455, 459, 463, 475, 482
 Ղարագունա 134, 391
 Ղարադաղ (նան՝ Սևասար) 3, 4, 6, 7, 8, 10, 11, 14, 16-20, 24, 40, 49, 51-55, 57-60, 62-69, 71-76, 81-83, 85-96, 98, 102, 104, 106, 109, 111-114, 116, 120-124, 128-130, 132, 134-138, 140, 141, 143, 146-148, 151, 152, 155, 157, 159, 162, 163, 166, 167, 170, 172-174, 176, 179, 180, 182, 183, 187, 190, 193-196, 199, 201, 202, 207, 208-214, 216, 220, 223-224, 225, 226, 228-231, 233, 236-239, 241, 242, 249, 250, 251, 253-255, 257, 260, 261, 263, 264, 269, 271, 272, 273, 276-279, 281, 283-297, 300, 304, 312, 314, 327, 328, 334, 336, 337, 339-342, 345-347, 349-354, 356-358, 362, 364, 368, 369, 377, 379, 380, 381, 383,

388, 389, 392, 393, 398, 404, 406, 413, 416, 422, 424, 425, 426, 431, 436, 441-444, 446, 447, 448, 452-455, 462, 469, 473, 475, 476, 477-481
 Ղարակինոյ 344, 412
 Ղարադոշ 335, 414
 Ղարաճանց տներն 344
 Ղարաչիչակ 82
 Ղարուկինա 344, 412
 Ղափան (նան՝ Կապան) 18, 56, 59
 Ղեկեմի 98
 Ղզլչայ 12
 Ղըլլի (նան՝ Ղուլուղի) 343, 373
 Ղըշլաղ 106, 120, 134, 224, 230, 258, 345, 347, 358, 371, 372, 462, 480
 Ղըրրուլու 368
 Ղշլաղ (Ասկերանի) 123
 Ղուբա 73
 Ղուլան 348, 349, 352
 Ղուլուղի (նան՝ Ղըլլի) 106, 120, 134, 153, 160, 191, 209, 224, 225, 343, 347, 372, 373, 374, 375, 462, 480
 Ղուշչիլար 86, 182
 Ղրիմ 115

Ճ

Ճանալու տներն 344
 Ճղպորու արտ 189

Մ

Մագանդարան 56, 66, 326, 329, 330, 331
 Մակու 52, 112, 187, 251
 Մահմարու 344, 453
 Մամնաղ-Խանլու 196, 197
 Մաշաղխներ 327
 Մաշիաղ 318
 Մաջիլու 335
 Մաախ 386
 Մասուշեն (նան՝ Մասուշեն) 343, 377
 Մավերանահր 46
 Մարաղա 43, 259, 267, 270, 404,
 Մարանդ գավառ 3, 15, 16, 29, 45, 363
 Մարանդ գետ 12

Մարանդ քաղաք 10, 42, 56, 45
 Մարաստան 24, 25, 26
 Մարաց անուր աշխարհի 28
 Մարաց կողմեր 15, 16, 29
 Մարդանաղամ (Մարդանագոմ) 111, 352
 Մարդպետական տիրույթ 13
 Մարի 120, 343, 347, 362
 Մարտանաղում (նան՝ Մարդանաղում) գետ 111, 350
 Մաքատի (նան՝ Միքիլի) 344
 Մեծ գետ 366
 Մեծ Հայք 3, 13, 25-28, 30, 35, 58, 469
 Մեծ Ղուլան լեռ 367
 Մեղրի 7, 59, 60, 72, 79, 103, 187, 199, 201, 202, 203, 359
 Մեշափարա 99, 101, 107, 120, 130, 133, 144, 148, 161, 162, 173, 175, 176, 177, 191, 198, 224, 225, 232, 237, 238, 259, 270, 287, 296, 312, 336, 341, 343, 344, 345, 391, 393, 394, 401, 410, 412, 422, 422, 462
 Մզգիթ (նան՝ Մզկիթ) 107, 134, 144, 161, 162, 167, 168, 169, 190, 191, 225, 296, 334, 344, 391, 393, 398, 404, 405, 406, 462, 481
 Մըծ Փիր 394
 Մըհլավ (նան՝ Մըհլավա, Մըհտավու, Միտավու) 107, 135, 154, 156, 159, 225, 233, 237, 239, 240, 249, 279, 442, 443, 447, 452-455, 463, 483
 Միանդաք 230, 251-253, 319
 Միաքիտի (նան՝ Միքիլի) 99
 Մինջվան (նան՝ Մինջևան, Մընջվան) 12, 33, 87, 102, 107, 120, 130, 134, 142, 147, 148, 149, 152, 173, 197-201, 209, 224, 230, 232, 234, 237, 238, 241, 243, 245, 249, 259, 270, 272, 276, 316, 336, 341, 344, 345, 389, 401, 408, 410, 412-416, 419, 424, 425, 440, 444, 447, 463
 Միջագետք 27, 39, 54

Միջին Ասիա 9, 47, 50, 410
 Միսս 348, 358, 371
 Միրավ 234
 Միքիլի (նաև՝ Մաքատի, Միաքիտի)
 89, 99, 107, 134, 300, 305, 344, 391,
 401, 408, 409, 410, 411, 437, 462, 481
 Մոզոլիստան 46
 Մոդես (նաև՝ Կադունոս) 79, 368, 418,
 429
 Մոսկվա 217, 314, 318, 324
 Մոսուլ 184
 Մուժամբար 205
 Մուղան 18, 43
 Մումուդարուն 294, 295, 373,
 հավելված 2
 Մուշկուն 53
 Մուսալ-լամ 393
 Մուսեյուն 4
 Մրդընա 348

Յ

Յուսուֆլու 259, 270, 413, 481

Լ

Լախիջևան 10, 13, 32, 56, 57, 62, 74,
 77, 79, 184, 344
 Լակորգան (նաև՝ Ակորգ,
 Լխկորգան) 5, 6
 Լամնա 133, 347, 348
 Լերքին Հանդ 368, 418, 429
 Լեփեշտ (նաև՝ Էփեշտ) 100, 102, 107,
 134, 137, 171, 224, 334, 344, 391, 401,
 403, 462, 481
 Լեփեշտ ներքին (նաև՝ Էփեշտ
 ներքին) 134, 344, 391, 401
 Լեփեշտ վերին (նաև՝ Էփեշտ վերին)
 134, 344, 391, 401
 Լըդլի 343, 347
 Լիժ 156, 454
 Լյու Յորք 241
 Լյուսա 4
 Լովբանդի սարահարթ 426
 Լոր Առաքյուլ 86
 Լոր Շիրական 28

Լորաշեն (Արցախ) 86
 Լորաշեն (Հասանով, նաև՝ Թագա
 քյանդ) 89, 100, 101, 102, 106, 117, 120,
 134, 153, 160, 165, 174, 175, 180, 191,
 219, 224, 230, 232, 233, 236, 237, 258,
 272, 273, 276, 377, 379-384, 390, 462,
 478, 480
 Լորաշեն (Քելվան, նաև՝
 Լորաշենիկ) 107, 135, 154, 225, 442,
 443, 447, 456, 457, 463, 483
 Լորիլակ 310
 Լուգենդիլ լեռ 367
 Լուրիշկին 344
 Լորգեղն 344

Շ

Շահումյանի շրջան 389
 Շահրուդ 317
 Շաղախ 86
 Շամախի 67, 71
 Շամխոր (նաև՝ Շամքոր) 75
 Շամշադին 65, 73
 Շավլի 133, 162, 377
 Շարապխանե 52
 Շարուր 50
 Շափխանե 344, 391
 Շաքի 73, 76
 Շեխհուսենլու 334
 Շեյխ Հասանլու 414
 Շիկահող 407
 Շիշկերտ 362, 409
 Շիրաք 272
 Շիրակ 41, 70, 75
 Շիրակավան 52
 Շիրվան (նաև՝ Շրվան) 38, 62, 73, 76
 Շմբոի 344
 Շորագյալ 70, 73
 Շումլա 76
 Շուշի 67, 68, 75, 92, 97, 102, 114, 122,
 123, 125, 172, 301, 302, 303, 356, 399,
 410, 461
 Շուջայմամուլե 197
 Շվեյցարիա 287

Ո

Ոհի դարա 442
 Ողան (նաև՝ Վեղան) 107, 120, 125, 134,
 144-146, 161, 167-169, 176-178, 191, 198,
 224, 232, 233, 237, 238, 268, 269, 272,
 279, 281, 296, 298, 305-307, 312, 314, 334,
 336, 343, 386, 391, 392, 394-399, 404,
 406-408, 423, 438, 462, 481
 Ողջի գետ 11, 58, 73, 77, 412
 Որոտան 45
 Ուզումդուլ 130, 341, 424
 Ուժանիս 131
 Ուլի 348
 Ուհիդարայ 344
 Ուշնեպին 343
 Ուշտուրեն 343, 347, 359, 372, 480
 Ուչ-Թարին 202
 Ուրծաձոր 52
 Ուտիք 28, 40
 Ուրգուք (նաև՝ Իրգուքին) 358
 Ուրդուվար (նաև՝ Օրդուբադ) 211
 Ուրմիա լիճ 13, 48
 Ուրմիա քաղաք 52, 77, 112, 180, 181,
 182, 185, 187, 251

Չ

Չալանդարա 334
 Չավնդուր 58, 59, 74
 Չարու 134, 172, 344, 391
 Չափնի 327
 Չինաստան 9

Պ

Պաղեստին 222
 Պարթևստան 26
 Պարսկահայաստան 28
 Պարսկաստան 9, 24, 28, 30, 40, 51,
 55, 61, 62, 67, 73, 77-79, 81, 86-88, 91,
 103, 106, 114, 131, 139, 144, 166, 169,
 222, 269, 315, 328, 330, 335, 364, 410,
 439, 467
 Պարսպատունիք 10, 11, 12, 24, 134,
 187, 233, 451
 Պիզ լեռ 396

Պիզ Փիր 393
 Պիճան 3
 Պլպլան աղբյուր 198, 199, 408
 Պուլպիզ լեռ 367
 Պրահա 287, 308

Ջ

Ջանանլու 344
 Ջաֆարաբադ 247
 Ջեբրահիլ 72, 462
 Ջիլան 86
 Ջուլֆա 179, 187
 Ջուղա հին 13, 32
 Ջուղա նոր 242, 261
 Ջրական 72

Ռ

Ռաշլու 133, 165, 377
 Ռաշտ 124, 228, 309, 317, 323, 327
 Ռևանդուզ 139
 Ռումինիա 222
 Ռուսաստան 55, 56, 64-66, 70, 74, 79,
 102, 108, 119, 145, 153, 169, 176, 312,
 318, 319, 320, 322, 324, 328, 332, 333, 468

Ս

Սարգևար 318
 Սարվաթ 331
 Սարվաստ 52, 54, 77, 112, 122, 123,
 126, 183, 187, 251, 252, 267
 Սախալին 138
 Սային Կալա 184, 186
 Սարանլի 98
 Սարդարաբադ 82
 Սարդու 106, 120, 214, 224, 225, 260,
 262, 295, 343, 347, 360-363, 371, 462,
 476
 Սարի-Դարա 171
 Սարիդամիշ 139
 Սելրամա լեռ 410
 Սևահող 79, 107, 134, 136, 214, 224, 232,
 277, 280, 412, 414, 436-440, 463, 482
 Սևասար (նաև՝ Սև Սար, Ղարադաղ)
 3, 4, 7, 8, 9, 15, 17, 18, 19, 25, 27-33, 35,
 38, 40, 41, 42, 49, 60, 72, 85, 187, 340

Սևաբար 327
 Սևբար 124
 Սեբենդել 20
 Սգներ Վերին 89
 Սըղըն (նաև՝ Սըղընդուլ) 20, 21, 22, 95, 96, 98, 107, 120, 135, 142, 149, 156, 159, 225, 233, 237, 238, 262, 279, 346, 442, 448, 449, 450, 463, 482, 483
 Սըղընդուլ (նաև՝ Սըղըն) 21, 23
 Սիահ Կուհ 17
 Սիբիր 138, 219
 Սիլյան կամ Սիլյանսար 6, 367, 368
 Սիսական 7, 341, 466, 474
 Սիսիան 24, 70, 114, 115, 301, 302, 467
 Սիրիա 222
 Սիւրուն (նաև՝ Սուրուն) 155
 Սյունիք 3, 5, 6, 8, 15, 17, 18, 30, 34, 40, 41, 45-47, 49, 58, 60, 70, 71, 75, 82, 115, 131, 147, 168, 195, 200, 206, 207, 342, 348, 466, 470
 Սումա 210
 Սոուջբուլաղ 112
 Սորբոն 287
 Սուլթան 335
 Սուլդուզ (նաև՝ Սուլդուզ) 112, 210, 251, 252
 Սուրմալու 82
 Սուրուն (նաև՝ Սիւրուն, Սուրունն) 107, 135, 142, 154, 155, 156, 159, 225, 226, 344, 442, 443, 458, 459, 463
 Սպահան 66
 Ստոքհոլմ 315
 Սրաշեն 79, 368
 Սօտգին 155

Վ

Վաղարշապատ 28
 Վայոց Ձոր 82
 Վան 123, 126, 138, 139, 183, 186
 Վանանդ 16
 Վանավա 142
 Վանի թագավորություն 19, 22
 Վանստան 14

Վասպուրական 3, 10, 11, 12, 14, 18, 123, 186
 Վարանդա 207
 Վարդանակերտ 3
 Վարդանաշեն (նաև՝ Վարդանաբաղ) 107, 224, 232, 237, 239, 240, 249, 277, 337, 412, 414, 441, 463, 482
 Վարզաբան (նաև՝ Վարժական) 20
 Վեդիբասար 82
 Վեդան (նաև՝ Ողան) 343
 Վինենա 311, 324
 Վինա (նաև՝ Վինան) 79, 99, 107, 120, 127, 134, 142, 145, 146, 148, 173, 177, 198, 200, 201, 207, 224, 230, 232, 233, 237-249, 257, 259, 270, 271, 272, 279, 280, 302, 304, 305, 316, 334, 336, 344, 346, 397, 408, 412, 415-429, 434, 436, 437, 439, 441, 463, 477, 481
 Վիրք 32
 Վրաստան 64, 65, 71, 73, 80

Տ

Տազ (նաև՝ Տյաք) 86
 Տաթև 55, 94, 111, 114, 115, 285, 341, 342, 354, 360, 373, 380, 388, 395, 399, 401, 404, 408, 416, 420, 429, 451, 453, 458, 459, 461, 474
 Տամուրչի քեանդն 343
 Տավուշ 124
 Տաք ջուր 418, 445, 451
 Տիգրանակերտ 27
 Տիգրիս 297
 Տյաք (նաև՝ Տյաք) 86
 Տուշպա 22
 Տոնի 347

Ը

Ըանգ Մուլք 153

Ց

Ցեց Փաղրը 393

Փ

Փալանկտոր (նաև՝ Փալանկտորն) 344, 412
 Փամբակ 65, 70, 73, 75

Փայտակարան 3, 11, 12, 14, 18, 28, 226, 249, 301, 304
 Փիլիկոն (նաև՝ Փալիկոն) 344, 442
 Փուլուաղի 19, 21, 22, 23
 Փոքր Սսիա 4, 36, 43
 Փոքր Ղուլան լեռ 367

Ք

Քալաչու 343
 Քաշունիք 5
 Քավանի-Քովնի 343, 347
 Քարազուխ 99, 107, 120, 134, 148, 230, 232, 234, 235, 237, 238, 241, 247, 249, 270, 277, 281, 334, 344, 346, 412, 429, 430, 431, 432, 433, 434, 436, 438, 476, 482
 Քարազուխ (Արցախի) 86
 Քարավազի (նաև՝ Խուդափերինի) կամուրջ 5
 Քարթլի-Վախթի 64
 Քելեյբար գավառ 130, 142, 341
 Քելեյբար գետ 412, 442, 444, 445
 Քելեյբար գյուղաքաղաք 33, 40, 142, 171, 197, 199, 201, 334, 424, 425
 Քելվան 12, 87, 95-99, 103, 104, 106, 107, 120, 135, 146, 148, 149, 151, 154, 156, 157, 159, 160, 175, 209, 225, 226, 230, 232, 235, 237, 249, 262, 263, 279, 285, 344, 345, 420, 430, 441, 444, 446, 448, 450, 456, 463
 Քեշիշ դըլաղ 344

Քեշիշ քյանդի 335, 344
 Քերիմխանլու 209
 Քերմանշահ 56
 Քզլայ 12
 Քըժոն 344, 391
 Քըլալա 89, 107, 134, 175, 190, 192, 225, 373, 391, 398, 404, 407, 408, 462, 481
 Քըռնգա 348
 Քիարուլա 329
 Քիլիսա քյանդի 344
 Քիշմիրի 344
 Քիրման 99
 Քմա-ճյուր (նաև՝ Քմաճյուր) 350, 394
 Քոնեկեան 3
 Քոհրուզի 161
 Քովնի 347
 Քուռանդ 348, 369

Օ

Օղա 89, 106, 120, 134, 144, 160, 162, 165, 174, 180, 191, 219, 223, 225, 258, 308, 345, 377, 379, 381, 384-387, 390, 462, 480
 Օրավ 89
 Օրդուբադ 56, 57, 59, 77, 79, 211
 Օրըջ 348

Ֆ

Ֆրանսիա 287, 311, 320, 329

Бийниги 19, 471

Սերգեյ Միշայի ՋՀանգիրյան

Պարադադ-Վեստար

Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը

Խմբագիր՝ Միտր Զոմունց
Տեխն. խմբագիր՝ Արարատ Թովմասյան



Անտարես

Տպագրվել է «Անտարես» հրատարակչատանը
Երևան 0009, Մաշտոցի 50ա/1
Հեռ.՝ +(374 10) 58 10 59, 56 15 26, 58 76 69
antares@antares.am
www.antares.am

